

3 Surf

00 AUG 2010

7 3 R3



ՀԱՆԴԵՍ ՄՇԱԿՈՅԹԻ ԵՒ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ



ՄԱՅԻՍ - ՅՈՒՆԻՍ

Փ Ա Ր Ի Զ

1936

“V E M,”

REVUE BIMESTRIELLE ARMÉNIENNE
Directeur : S. VRATZIAN

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՎԱՀԱՆ ՄԻՆԱՆՈՐԵԱՆ. — Արհաւիրքի օրեր	1
ՏՕՔԹ. ՎԱՀՐԱՄ Յ. ԹՈՐԳՈՄԵԱՆ. — Յուշատետրէս	20
ԳԱՌՆԻԿ ԳԻԻԶԱԼԵԱՆ. — Մեծ Յոբէլեանի առթիւ	25
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԿԱԶԱՆՁԵԱՆ. — Համեմատութիւն մը Հոռմի Ս. Պետրոս եւ Վառարշապատի Ս. Հովսէփի մէկեղեցիներուն յատկագրածներու միջեւ	38
Վ. ՓԱՓԱԶԵԱՆ. — Համաշխ. պատերազմը եւ Տարօնի աշխարհը	44
ՓԱՅԼԱԿ ՍԱՆԱՍԱՐ. — Թուրքիոյ պատմութիւնը	55
ԱՐ. ՍԱՖՐԱՍՏԵԱՆ. — Բանաժողովի ուղեգրի մը Հայաստանի միջով	64
ՅՈՎԱԿ ՍՏԵՓԱՆԵԱՆ. — Անդրանիկը Սիւնեաց երկրում	70
ՀԱՅ-ՀԱՅԱԿԱՆ ԲԱՆԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ	81
Հին Թուրքեր. — Շիրվանգաղէի նամակները	93
ԱՆՅԵԱԼԻ. — Աղասի Խանջեան, Ա. Խ. — Յովհաննէս Արեւելեան	101
Ա. Խ. — Բարգէն Կաթուղիկոս (Կիւլէսէրեան), Վ.	101
ԿԵԱՆՔ ԵՒ ՄՇԱԿՈՅԹ. — Սայեաք Նովայի մահուան շուրջը, Ա. Խ. — Հայ Կրթակ. երկու հիմնարկներու 100-ամեակը, Վ. Փ. — Վերաբանութիւններ խորհրդանշայ գրականութեան մասին, Ա. Խ.	110
ԳԻՐԳ ԵՒ ՄԱՄՈՒԼ. — «Նոր Գիրք» եւ «Նոր Էջ» պարբերակ. Փ.	120
ԳՐԱՆՕՍԱԿԱՆ. — Ա. Սարուխան, «Ֆիրդուսի եւ Մովսէս Խորենացի», Յ. Զ. — Արման Կոթիկեան, «Ֆիրդուսի Թուսի եւ իր Շահնամէն», Յ. Զ.	121
ՅԱՆԵԼԻԱԾ. — Վահրամ Եպ. Մանկունի, «Գեորգ Գ. եւ իր ժամանակը»	209

ՆՈՐ ՏԱՐԻԱՅ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ամերիկա, Բրիտ. Կայսրութիւն, Եգիպտոս, Իտալիա՝ տարեկան 70 փրանկ
Ֆրանսա եւ մնացեալ երկիրները, տարեկան՝ 60 փրանկ
Ռումանիա, Բուլղարիա, Յունաստան Սիրիա, եւ Պարսկաստան՝ , , 50 փրանկ
ՆԱԽՈՐԳ ՏԱՐԻՆԵՐԻ ԻԲՐԱՔԱՆՁԻՐ ՏԱՐԻՈՅ 6 ԳԻՐԳԸ՝ 25 ՖՐ. Հասցէ՝ նամակների, դրամի, յօդածների եւ ուրիշ ամէն տեսակ առաքումների համար. —
S. VRATZIAN — 13, Rue des Platanes, Cité Jardins de Plessis-Robinson (S.)


Gérant : V. Hampartzoumian

Imp. ARTISTIQUE, 12, Rue de la Jonquière, PARIS (14)

24 .09. 2015

00 AUG 2010

433



ԵՐԿԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԵՍ
ՄՇԱԿՈՅԹԻ ԵՒ
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Խմբագիր՝ Ս. ՎՐԱՏՅԱՆ

Դ ՏԱՐԻ, ԹԻԻ 3

1936

ՄԱՅԻՍ - ՅՈՒՆԻՍ

ՎԱՀԱՆ ՄԻՆԱՆՈՐԵԱՆ

ԱՐՅԱԻԻՐՔԻ ՕՐԵՐ


V

ՄԱՀԻԱՆ ՍՊԱՍՈՒՄՆԵՐ

Ո՞ւր էինք դնում, ի՞նչ պիտի լինէր եւ ի՞նչ կարող էի անել — այս խնդիրները պէտք է որ պարզէի: Եւ ինքս ինձ ասում եմ — «Մտածի՛ր, լա՛ւ մտածի՛ր»: Ու գտնում եմ, թէ լաւ չեղաւ, որ դեղնագոյն հաղուստներով ձերբակալեցի, որովհետեւ բոլորից զատւում եմ: Առաջին պատահած ջարդարարը կարող է ինձ ասել. «Դո՛ւ, դու, որ հագել ես դեղին հագուստ», — եզրակացնում եմ ես, ու մնացած հարցերը մնում են առկա . . .

Երկինքը պարուրող թանձր խաւարը քիչ-քիչ մոխրանում ու պարզւում էր: Քարանձառայի պատի տակից հասնում էին ինձ անհաշիւ խուլ ձայներ: Կարծես թէ պարապ եկեղեցու մէջ, քնաթաթախ, Սաղմոս էին կարդում: Եւ թւում էր, թէ դեռ դնում ենք: Ու դրդողով սլանում են սայլերը: Եւ հեռու, շա՛տ հեռու աղաղակում են սայլապանները: Զիբը կարծր սմբակներով թմրկահարում են դեռ տինը . . . Ինձ համակած թմրութեան մէջ յանկարծ կաթաճահարի պէս ցնցեցի: Սուր, կերկրուն, հարածից փշրող ու խորտակող զանգի ձայնի պէս մի ճիւղ, որ խիստ մօտ ու ծանօթ թւաց ինձ, ձեղքեց դաշտի խաւար լուսնին ու մարեց: Ապա լուսնին խեղդամահ եղող մէկի օգնութեան աղաղակները, ինչ որ ձայներ, որոնք նման էին զլորւող տակառների աղմուկին: Դրանց անմիջապէս յա-

8736-79



510-2001

Ջորդեյնի դասված ճիչեր ու կցկտուր ձայներ — «Բըլբըլբըլ» . . .
Դողը ինձ բռնեց ու ես վեր կացայ պառկած տեղիցս։ Այժմ
լսում էի աղմուկ ու թմրիթմիոց . . . Կռիւ էր, համր, ինքնագի —
տակ մի կռիւ, երբ էլ ժամանակ չի լինում ձայն տալու։ Կիսախառա-
րի մէջ մարդիկ դասված խուղոցով, անտառի մէջ հրդեհի բռնած
գաղանների պէս, ցատքում էին դէս ու դէն։ Լսում էի շխշխկոցով
վազվառուր, կանաց իրարու ընդմիջող ձայներ, մօտեցող սայլերի
ձոխչ, ձիերի ոտքերի դոփիւն . . . Եւ մէկ ակնթարթի մէջ չըր-
ջապառը, հողի հետ միասին ծառս ելած, կուպրի մի հսկայական
կաթսայի պէս սկսեց բլրլալով եռալ . . . Հեղեղատի պէս դէպի
մեզ շարժող ժխորից մորթա ծիւծիւ փշաքաղեց։ «Ելի՛ր, փա-
խի՛ր» . . . Բայց ծունկերս ընդարմացած էին, ժխորի մէջ էի
արդէն . . .

— Ի՞նչ է . . .

— Որո՞ւ . . .

— Տարա՞ն . . .

— Ո՞ւր . . .

— Ախ—վա՛յ . . .

Արտակ Բէլէճեանը, մօտս կղկղած, չնչահեղձ ասում է, թէ եղ-
բայրը՝ Արմենակը գնաց։

— Ո՞ւր գնաց . . .

— Հո՛ն, հոն . . .

Ու դիմացից անցնող սայլերի վրայով ցուցնում է աղջամուղջի
մէջ մարող ձայների ուղղութեամբ։ Ելայ տեղիցս, բայց թէ ինչ ա-
նելու՝ չգիտեմ։ Մի քանի վարանոտ քայլերից յետոյ, չըջան արեւ,
սայլերից խուսափելու համար։ Ընկայ մի փոսի մէջ, դուրս ելայ,
բայց շատ առաջ գնալու պէտք չեղաւ. ճամբու միւս կողմին ընկած
առաջին իսկ խմբերին արդէն յայտնի էր դէպքը։ Երկու սայլապան-
ներ փորձել էին դեռատի կոյսին խմբի միջից դուրս քաշել ու փախ-
ցնել։ Բայց ընկերուհու դիմադրութեան շնորհիւ չէին յաջողել եւ
հարեւան կանանց իրարանցման վրա՝ թողել փախել էին։ Սայլա-
պանները տարիքոտ կոյսի թեւը ոլորել ու ջարդել էին. դեռատի
կոյսի բերանը թաշկինակ կոխելով պատուել էին։ Ասում էին, որ,
երբ թէ, վրա հասնող պահակները սայլապաններից մէկին բռնել ու
տարել էին դէպի վար . . .

Դիմացը խժժող հասարակութեան մէջ դեռ խուլ իրարանցում
կար։ Քաջութիւն չունեցայ այդ տեսարանին մօտենալու . . .

Արմենակը վերադարձել էր։ Արտակը այժմ սրտապնդւած կա-
տաղութեամբ, հայերէն, թուրքերէն խառնխուռն, ծանր խօսքե-

րով նրան նախատում էր, «ամէն տեղ նետելու» համար։ Անցնող
մի ժանդարմ, ենթադրելով թէ նախատինքները ուղղւած են իրեն,
յարձակւում է Արտակի վրա եւ սկսում է նրան ծեծել։ Մեծ դժուա-
րութեամբ յաջողւում է թիւրիմացութիւնը պարզել։ Ժանդարմը տա-
րակուսանքով հեռանում է։

Սակայն դեռ գնում էին։ Աղջամուղջի մէջ ձիերը կամարածեւ
ոլորում էին բաշերը, չորս ոտքերը մէկ կծիկ անում, դաշտից դէպի
ճանապարհ մաղլցելու համար։ Անդին՝ նեղ շերտերով նշմարող ճամ-
բու վրա՝ տարածւում էր իրարու կից ընթացող սայլերի խուլ դղըր-
դոցը։ Ճամբու եզրով, դաշտի բովանդակ երկարութեամբ, նշմար-
ւում էին պահակներ։

Գարեգինը, կինը, հարեւանները վաղուց արդէն ելած, նստած,
կանգնած էին։ Քույս կծկտած տիկին Հիւսիսեանը ինչոր բան էր ա-
սում Կարապետ Էֆէնտու հեռատեսութիւնների մասին. իմաստն այն
էր, թէ ինքն էլ պէտք է գնացած լինէր Բաթում։ «Ինչ կըլլայ, ինչ
չըլլար, չի գիտցւիր», ասել էր Կարապետ Էֆէնտին։ Այնինչ ինքը
ցանկացել է, որ Կարապետ Էֆէնտին նախ դործ սկսի այնտեղ, ապա
ինքն էլ տունը, տեղը հաւաքի ու նրա մօտ գնայ։

— Հիմա միս—մինակս, երկու պղտիկներով ես ի՞նչ կրնամ ընել,
միւսիւ վահան, — ասում էր նա, չորացած ձեռքերով աչքերը սրբե-
լով։ Աղջիկը, դպրոցի թանձրահիւսք մագերով սանուհիներից մէկը,
պահել էր պատի մօտ դարուած անկողինների տակ։ Մայրը նրա
մագերը չէր կտրել. ի դուր, բոլորովին ի դուր։ Մանչը՝ Սուրբիկը,
դպրոցի նաղախմբի եռանկիւնահարը, պահակի պէս, առերեւոյթ
անտարբեր, կանգնել էր քրոջ թաղստոցի դիմաց։ Մի քիչ դէպի վար՝
երեք—չորս տարեկան մի աղջնակ անկերջ ճչում էր, թէ «երթանք
տուն»։ Պատի անկիւնում նստածների մէջ ինչոր մի մարդ, «պոռա-
ղանի» պէս թրթռացնելով, աղօթում էր թուրքերէն։ Ճաթրտած «Ալ-
լահ», «Ալլահ» դռները ապշեցնում էին Աստուած նշանակելու պատ-
ճառով . . .



Լոյսի առաջին ճառագայթների տակ պարզւում էր դաշտը։ Ըն-
դարձակ տարածութեան վրա խժժում էին ինչոր խմբեր։ Դիմացը,
դէպի աջ, բաւական մեծ հեռաւորութեան վրա նկատելի էին եղան
սայլեր, որոնք ինչպէս ասում էին, հասել էին Ամասիայի չըջանի
գիւղերից, տարադիրներին տրամադրելու համար։ Սայլերից դէպի
ձախ, դրեթէ մինչեւ ճանապարհը, բոլորածեւ սուերանում էին ինչ
որ շէնքեր։

Դաշտը բառիս բուն առումով, հեծեծում էր: Լուսաբացին պատահած դէպքը ցնցել էր բոլորին: Այժմ բոլորն էլ հասկանում էին, որ շատ մօտ է պատուհասը: Բայց միաժամանակ, մարդկանց համակել էր մի զարմանլի համակերպութիւն, որի միակ յայտարարը հրաշքի ակնկալութիւնն է: Հանրութեան մէջ անձնական գոյութեան խնդիրը տարրալուծւել, նոյնացել էր ընդհանուր ցաւի հետ: Ձգալիօրէն թուլացել էր մարդկանց ինքնապաշտպանութեան բնազդը: Հոսանքն է վար դնում էր, կամ պէտք է դնար ամէն մարդ: Այս արդէն ճշդւած էր ու տարակուսանք չկար այլեւս: Դրա հետ միասին, շատ հեռունները մտածելու էլ հնարաւորութիւն չկար: Ընթացիկ հոգսերն ու ցաւերը այնքան էին շատ, որ գալիքի մասին մտածելու ժամանակ չէր մնում: Մէկի երեխաներն էին հիւանդ, միւսի՝ կինը, հայրը, մայրը: Ժողովուրդի մի խոշոր մասի պարենը արդէն սպառւել էր. մէկը հաց չունէր, միւսը միայն ալիւրի մնացորդներ ունէր, բայց հաց պատրաստելու հնարաւորութիւն չկար: Այս պարագաներում մի պոռտ կաթը, մէկ հատ «սուլֆաթօն» աւելի արժէք էին ըստանում, քան այն, ինչոր լինելու էր . . .

Արեւն ելաւ ու մեր թիկունքից սկսեց շօշափել դաշտը, ցրիւ ճառագայթներով: Հեռուից հեռու, իրենց տեսքով, շարժման մէջ մտած խմբերը, դաշտի ընդարձակ տարածութեան վրա թափւած իրերի հետ միասին, թողնում էին հազարաւոր վերստեր անցած հալածականների տալաւորութիւն: Կարծես, թէ «Ժողովուրդների մեծ տեղափոխութիւն» էր ու, պատմութեան յետագարձ մի առասպելական թռիչքով, բնկել էինք գոյութեան կուրի հնազոյն շրջանը: Աճապարանք, իրարանցում եւ այդ ոչ այնքան մարդկանց շարժումների մէջ, որքան նրանց դէմքի վրա: Իրենց վայրերից դուրս մղւած մաշդիկ եկել հասել էին այստեղ ու, կարծես թէ, գօտեպնդւում էին գրնալու մինչեւ Կատալաունի դաշտերը, Ատտիլայի հետ չափելու համար: Իրականի մէջ եղածը կմախքների մի գաղթ էր. ճակատագիրը իր խօսքն ասել, վերջացրել էր. կեանքը ձեւական հանգամանք ունէր այլեւս եւ մարդիկ, իրենց զաղափարների մղումով, գիտակցարար դնում էին դէպի մահ, հողիները աւանդ ձգելով ողջերին . . .

Մեկնելու վրա էինք: Ձանիկի շրջանը այստեղ վերջանում էր: Միւթէսարիք Նէջմի-Բէյը իր գործը կատարել վերջացրել էր: Մըտնում էինք նոր շրջան, ուր այլեւս ամէն բան «օտար» էր: Ըստ էութեան ոչինչ արժող այս պարագան մեծ նշանակութիւն ունէր: Այստեղ քակւում, կտրտւում էին անցեալի հետ միացնող կապերը: Սամ-

սոնը այլեւս հեռու մի աշխարհ էր: Անգամ Ձախալին երազ էր թւում: Տուն, թաղ, քաղաք, շրջան եւ այլուր — այսպէս էր ծաւալում դադլթը: Այլեւս ոտքով պիտի գնայինք. իրերի համար տրամադրւած սայլերը այնքան քիչ էին, որ 10-15 ընտանիքի հազիւ բաժին էր ընկնում մէկ հատ:

Գարեգինը հարեւանների հետ միասին արդէն վարձել էր մի սայլ եւ զբաղւած էր իրերը կապկպելու, սայլում տեղաւորելու հոգսերով: Ես դորժ չունէի անելու, եւ միտքս անցել էր կոյսերին, որոնք այլեւս չկային: Դարձայ Արմենակին, որ ամէն բան դիտէր: Ասաց, որ լուսաբացին նրանց տարել են պաշտօնատուն. ցոյց տւեց դաշտի միւս ծայրին մի սպիտակ շէնք ու յարեց, որ հիմա նրանց ուր լինելը չգիտէ: Քայլերս ուղղեցի դէպի այդ շէնքը: Ի՞նչ պիտի ասէի այդ անօգնական կանանց, եթէ դէմ դիմաց դայինք՝ չգիտեմ: Դաշտում մարդիկ գործի վրա էին՝ որը կապում էր, որը դարսում, որը բարձում: Ծանր էր յատկապէս այն ընտանիքների վիճակը, որոնք փոքրեր, անկարներ, հիւանդներ ունէին: Վերջինների թիւը շատ շատ էր. դրեթէ տուն չկար, որ հիւանդ չունենար: Վարը դէմս ելաւ «քէալլաճի» Սարգիսը (աղբանունը մոռացել եմ): Թաղի մէջ հարեւան էր. համեստ, լռակեաց մի մարդ, բայց երբեմն խմում ու բորբոքւում էր: Ձեռքս թոթեց ու լճացած աչքերով նայեց դէմքիս.

— Ներեցէք, տխուր միջադէպը մոռցէք. ի՞նչ դիտնայի թէ ասանկ պիտի ըլլար . . .

Բոլորովին մոռացել էի, թէ ինչի մասին է խօսքը:

— Թաղին մէջ ատրճանակ պարպելու համար, դիմով էի, մոռցէք . . .

Սըտանց երանի տւի մարդուն, որ դեռ անցեալից մի բան յիշում էր: Որքան էի հեռացել նրանից՝ չգիտեմ, երբ յանկարծ, վրա հասաւ Արմենակը եւ շնչահեղձ գոչեց.

— Միւսիւ Վահան, փախէ՛ք . . . մի տեղ թաղնեցէք . . . պահակները միւսիւ Ալթունեանին ձերբակալեցին եւ ձեզ կը փնտռեն . . .

Յանկարծակիի եկայ: Ակնթարթի մէջ այդ վայրում եղած մարդ, կին, երեխայ շրջապատեցին մեզ: Գարեգինի ձերբակալման պատճառի մասին Արմենակը ոչինչ չգիտէր. իսկ իմ մասին ասում էր, որ հարցնում են, անունս տալով: Փախչելու կամ հասարակութեան մէջ թաղնելու մասին մտածելը աւելորդ էր: Տարակուսանքով համակւած՝ յետ դարձայ դէպի մեր կայանը: Մի ժանդարմ, մէկ փոլիս կանգնած էին Գարեգինի մօտ, իսկ Տիկին Ռեբեկան ինչոր բան էր

ղարկել: Մանրադննին շօշափելով օձիքս, նա անցաւ ծոցիս գրպաններին: Դուրս հանեց սեւ հեղուկով լեցած մի փոքրիկ գլանաձեւ սրահ, որ առաջին առիթով ինձ էլ զարմանք պատճառեց . . . աղօտ կերպով յիշեցի, որ սրահը խլել էի Կապտանեանից Չախալլիում: Միւս գրպանից հանեց ակնոցներս տուիր. բացեց, նայեց պարապ տուիր, հասկացաւ նշանակութիւնը, յետ տուաւ ու սկսեց փնտռել, քրքրել գօտիս: Այնտեղ խնամքով պահել էի արծաթ ժամացոյցս, ոսկէ շղթայով: 1913-ի դաշտահանդէսին այդ ժամացոյցը նէր էի ստացել թաղական խորհուրդից: Ինչպէս բոլոր մրցանակները, նոյնպէս եւ այդ ժամացոյցը հանդիսաւորապէս բաշխել էր միւթէսարի՞ Նէշմի-Բէյը, որ դաշտահանդէսի պատուոյ նախագահն էր: Ճերմակեղէնիս գօտիի մէջ, դեռ Սամսոնում, կարել էի երեք ոսկի եւ երկու թուղթ լիրա: Բացի դրամապանակիս մէջ մնացած մանրուքներից, այդ էր իմ ամբողջ հարստութիւնը: Անգղադէմ պահակը ժամացոյցը գտաւ, դուրս քաշեց: Երբ ոսկի հաստ շղթան դուրս ելաւ, միւս պահակը, որ մինչեւ այդ անտարբեր նայում էր, շարժում արաւ, ժամացոյցը խլելու: Եւ տեղի ունեցաւ ըստ հուլիանանկարեւոր մի դէպքի, որը սակայն այնուհետեւ երբեք չկարողացայ մոռանալ:

— Մայիցա կա'ցօ (սպասիր, ա'յ մարդ) — բոլորովին պարզ, մաքուր վրացերէնով դռնէն անգղադէմ պահակը, գրպանելով ժամացոյցը: Ծանօթ բարբառը սիրտս թունդ հանեց, կարծես թէ երազ էր . . . Սակայն հասկացայ, որ պահակները վրացախօս թուրքեր են: Թերեւս այդ դէպքն էր պատճառը, որ անգղադէմ պահակը կարւած դրամները չգտաւ, թէեւ նա խուզարկում էր մեծ փորձառութեամբ, աւելի հմուտ, քան հռչակաւոր «Ռոստովսկի կոնվոյը» Կովկասից Սիրեր մեկուղներին: Մնացած գրպաններս մէջ բան չկար, բացի դրամապանակից, որը նոյնպէս խլացրեց:

Անցաւ Գարեգինին, եւ նոյն ձեւով, օձիքից սկսելով, խուզարկեց մինչեւ ոտքերը: Բայց Գարեգինի մօտ ոչինչ գտաւ, ինչոր մարդուն բոլորովին անհասկանալի եւ անհաստատ չէր թւում: Նա, ըստ երեւոյթին, ենթադրում էր, թէ Գարեգինը թաղցրել է ահագին հարստութիւն, մինչդեռ ինքը ոչինչ չի կարողանում գտնել: Անյաւանց, ցատկոտ հայեացքով վերէն-վար չափեց Գարեգինին ու ապա, ընդհուպ գրկի մէջ առնելով զայն, սկսեց խուզարկել ծոծրակը, մէջքը: Ոչ մէկ արդիւնք: Նորից յետ քաշեց, դէմքը թեւով սրբեց եւ այժմ աւելի համբերատար՝ սկսեց խուզարկել նախկին ձեւով: Ձեռքերը խոթած Գարեգինի ծոցերը, նա երբեմն կանգ էր առնում ու

բերանաբաց մտածում: Այնքա՛ն ուշիմ ու կեղբոնացած էր մարդու դէմքը, որ կարծես թէ ուղում էր ոչ միայն շօշափել, այլ եւ լսել «գանձերի» զննոցը: Մարդը գրգռւած պահանջեց Գարեգինից բերանը բացել: Նայեց: Բան չկար: Յանկարծ նա յետ քաշեց ու մի վայրկեան լրջօրէն մտածեց. երեւի հասկացաւ, որ ամէն բան կնոջ մօտ է: Նա դարձաւ ու խենթի պէս սանդուխքներով վար վազեց: Նրան կրնկակոխ հետապնդեց ընկերը:

Շղթայած՝ մենք նորից մօտեցանք փլած պատուհանի խոռոչին: Վարը մարդ չկար: Դիմացը, ճամբու բովանդակ լայնութեամբ, դեռ գնում էին անհաշիւ մարդիկ: Հեռում, շատ հեռում հագիւ հազ նշմարւում էին տարազւորների առաջին շարքերը: Կարծես թէ ճամբի վրա ընկած մացառներ էին եւ ոչ թէ մարդիկ: Վարը, դէպի մեզ, հասարակութիւնը նման էր երերուն լաւայի: Աւելի որոշ էին հեծեալ պահակները, երբեմն նաեւ՝ երերուն սայլերը: Էլ աւելի վար, ընդարձակ տարածութեան վրա, երկարում էր դէպի մեզ մի թանձր փոշի: Բախման ձգտող ամպի պէս նա պարուրում էր իր մէջ տարագիրները շարքերը: Այժմ, կարծես թէ, ոչ թէ նրանք էին գնում, այլ ճանապարհն էր մազլցում:

Գարեգինը, համակ տեսողութիւն դարձած, փակչել էր խոռոչին ու, դէս ու դէն ընկնելով, դիտում էր հեռուն: Նրա հանդարտ դէմքը այժմ նման էր արեան հոտ առած վազրի դէմքի: Յանկարծ, նա բարձրացրեց իմ եւ իր շղթայած ձեռքերը: Թւաց, թէ ուղում է վար ցատքել: Բայց կքեց, ինձ նայեց ու դէմքը միւս թեւով ծածկելով զսպւած ցնցումներով յետ քաշեց: Քիչ անցած փոշին այնքան տարածեց, որ այլեւս ոչինչ չէր կարելի տեսնել:

Ճանապարհը հեռուններում մոխրագոյն աւազի մի շերտ էր դարձել այլեւս: Աչքերս արձայնում, անհաշիւ մանր սեւ կէտերի մէջ խժմըժում ու մերթ ընդ մերթ խաւարում էին: Գարեգինը քարացած կանգնած էր մօտս: Ի՛նչ մեծ թշուառութիւն եղաւ նրա համար իմ ընկերակցութիւնը, Տէ՛ր Աստուծո՛ւ, — մտածում էի ես, մահաւան չափ ընկճւած մի վիճակով:

— Տիկին Ռերեկան այնտե՞ղ էր . . .

— Այո՛:

— Շարժումներից մի բան հասկացա՞ր . . .

— Ոչ:

— Ի՞նչ էր անում Ռերեկան:

— Չգիտեմ:


— Դեռ վա՛րժամ . . .

Յանկարծ տունը ցնցեց. մարդը դուռը սոսկալի շրկոցով վըրան դարձրեց ու սանդուխդները դղրդացնելով գլխապատառ վազեց վար: Կապալի առաջ մեզ հանդիպող ժանդարմների պետն էր այդ մարդը, որի կոտորակով քայլերու վրա անմեղութեամբ խնդացել էր Գարեգինը:

Քունքիս իջած մտրակի հարածը մասամբ շոշափել էր նաեւ ձախ աչքս, որը այժմ արնակալել, ուռել ու փակւել էր: Գարեգինը, ամէն բան զանց առած, խիստ մտահոգւած էր այդ առթիւ: Նա հարկադրում էր ինձ փակել միւս աչքս, ձախի կողերը բացելով եւ իրարու վրա հարցնում էր, թէ տեսնո՞ւմ եմ, արդեօք. մշուշ էր, բայց տեսնում էի:

Ոչ թէ ցաւի, այլ ծեծով անպատուած լինելու դառնութիւնն էր, որ համակել էր մեզ: Դրան միանում էր այն զգացման ստուգութիւնը, թէ բոլորը դնացին, մնացինք մենք: Յետ մնացինք կարաւանից, հարազատների խմբից: Եթէ թոյլ տային, դեռ վազելով կարող էինք հասնել: Իսկայ էլ յոյս չկար: Որքան ժամանակ էր, արդեօք, անցել . . . Դժար էր հասկանալ:

Ժանդարմների պետի անհետանալուց յետոյ երեւի անցել էր մէկ կամ երկու ժամ, երբ դուռը յանկարծ բացեց եւ ներս մտաւ մեզ ձերբակալող փոլիսը: Նա քակեց մեր ձեռքերի շղթան ու ամբարտաւան մի ձեռով հրամայեց հետեւիլ իրեն: Գարեգինը առաւ թախտի վրա ընկած կապոցը, որ տւել էր Արմենակը, եւ աճապարանքով վար իջաւ: Նրան հետեւեցի ես: Դռան մօտ կանգնած մեղամաղձոտ ժանդարմը միացաւ մեզ: Քիչ վարը, արեւի ճառագայթների տակ, աչքիս կծկծոցը սաստկացաւ: Վայրը ճանաչելու կարողութիւններս այլեւս թուլացել էին: Արդէն մէկ աչքով, առանց ակնոցների, որը անկարող էի գործածել, լաւ չէի տեսնում: Դրա հետ միասին ամէն բան, կարծես թէ շուռ էր եկել: Եւ այն, ինչ առջեւ էր՝ ընկել էր յետեւ, իսկ ինչ յետեւ էր՝ գտնուում էր առջեւում: Գնում էիք տնից, բայց կարծես թէ այնտեղ պիտի գայինք եւ առհասարակ, գնում ենք, թէ գալիս ենք, չէի կարողանում հասկանալ: Անցնում էինք ինչոր կիսաքանդ շինութիւնների մօտով, որոնք, կարծես թէ, առաջին անգամն էի տեսնում: Մեր ձախ կողմը պէտք է որ լինէր քարաւանսարան, որի պատի տակ զիջերեցինք, բայց այնտեղ տարածւել էր մի ընդարձակար: Աւելի վար, մեր դիմաց կային մարաղներ, ախոռներ, որոնք գուցէ ունէին նաեւ քարաւանսարանների հանգամանք: Անցանք ու, թեքւելով դէպի ձախ, մտանք դաշտ: Այստեղ ու այնտեղ թափթրի-



ՍԱՐԴԱՐԱՆԻ ԳՊՐՈՅԻ ԱՌԱՋԻՆ ԳԱՇՏԱՀԱՆԳԻՍԻ ՄՐՅԱՆԱԿԱՆ ՈՐՆԵՐԸ
(Չափեց այ՝ 1. Սրապովան, 2. . . . 3. Սեմ. Բեման, 4. Արմենակ Գեյշեման, 5. . . . 6. Զարեն Պոլսեան, 7. Արսապոյ Մանեկեան, 8. . . . 9. — 10. Փանոսեան, 11. Պարոյր Պաշկեան, 12. Յովն. Տիւրքիկեան, 13. Վ. Միլախովան):

ւած էին ճմլւած, բղքուած անհաշիւ թղթերի կտորներ: Զուգահեռ,
չըջանաձեւ անցնում, դառնում էին ծանր անիւների հետքեր: Աջ եւ
ձախ, գեղնած, կիսադալար կանաչներ փակել, նոյնացել էին գետնի
հետ: Այստեղով, նշանակում է, անցել էին դանդաղներ: Դիմացը,
արեւի տակ ոսկու պէս փալիւղում էին ջարդուած ապակու կտորներ:
Իսկ վերը, դաշտից դուրս, երկարում էր ճանապարհը: Պարպ էր,
ոչ մի անցուղարձ կար: Ճամբուց վար, դէպի աջ տարածւում էին շի-
նութիւններ . . . Սպիտակ չէ'նքը . . . պաշտօնատունը Զէ՞ որ
եւ այնտեղ էի գնում. եւ իրաւ, այդ չէ'նքից ուղիղ դժով դաշտի միւս
ծայրին ընկած էր մեր խարխլած քարանսարան: Պարզ էր, որ մեզ
տանում էին այնտեղ: Ու մտածեցի, . . . որ պարսկահապատակ եմ, կա-
րաջադադի շրջանի Ահեր գիւղից: Ամիր-Վահան Ղահրամանեան Յով-
հաննէսեան: Ամիր-Վահան:

— «Ոչ մի կապ չունեմ» . . .

— «Ուսուցչութեամբ, միայն, միմիայն ուսուցչութեամբ» . . .

— «Զգիտեմ» . . .

Յիմա'ր . . . Տօթ էր, անտանելի տօթ: Հասանք ու կանգ առանք
չէ'մքի մօտ: Փոլլուր ներս գնաց, ապա յետ դարձաւ ու առաջնորդեց
մեզ: Մաքուր, քառակուսի միջանցքը տանում էր մի սենեակ, որի
դուռը բաց էր: Ներս մտանք ու մնացինք չէ'մքի մօտ կանգնած: Բա-
ւական մաքուր, ընդարձակ սենեակի խորքում կար մի սեղան, որի
վրայ դրած էին գինու եւ օղիի շիշեր, ուտելիքներ, մրգեր, բաժակ-
ներ եւ այլն: Սեղանի մօտ նստած էր ժանդարմների պետը: Ծխում
էր, բերանից ծուլօրէն բաց թողնելով ծուխը: Նրա գիմաց, մէջքը
դէպի մեզ, նստած էր մի դուռնի մարդ, սովորական հագուստով եւ,
գլուխը քաշ, բռնում էր: Պատերի մօտ կային աթոռներ, մէկ երկու
կլոր սեղաններ: Ձախ կողմից, պատի տակ, սեղանից ոչ հեռու, կար
դորդով յարդարւած մի թախտ: Աջ կողմից, դէպի ճանապարհը նա-
յոդ լուսամուտների մօտ՝ մի դրասեղան: Սենեակը ընդհանրապէս ոչ
թէ պաշտօնատան, այլ մասնաւոր բնակարանի տպաւորութիւն էր
թողնում: Եւ կարգ ու սարքը, ներքին ինչոր տպաւորութիւններով,
այնքա՛ն ծանր ազդեց վրաս, որ սիրտս ճմլեց . . .

Ժանդարմների պետը ոտքի ելաւ: Պղնձադոյն դէմքը հանդարտ
էր ու խոհուն: Նա վարանոտ մի շարժումով հրաւիրեց մեզ սեղանի
մօտ: Միայն Թուրքիոյ մէջ հնարաւոր է պաշտօնական եւ անպաշտօն
հանդամանքների նման մի շրջադարձ: Զգացի, որ կացութիւնը այլ
էր, եւ մի բան մեզ գերադանց վիճակի մէջ է գնում, որից սակայն
օգտւելը հնարաւոր չէ: Եւ զուսպ շնորհակալութեամբ հրաժարեցի:
Գարեգինը լուռ կանգնած էր: Ժանդարմների պետը հրաւիրեց նստել

պատի մօտ եղած աթոռներին: Կրկնեցի շնորհակալութիւնս եւ մնացինք կանգնած: Այն ժամանակ նա երկու բաժակ օղի ձեռքերին մօտեցաւ մեզ եւ առաջարկեց: Ես շնորհակալութեամբ մերժեցի, Գարեգինը նոյնպէս:

— Գուցէ կարծում էք, թէ թունաւորւած են. ահաւասիկ, նայեցէք, փորձում եմ, — ասաց նա բաժակներից մի մի ումալ խմելով:

Միայն դառն ժպիտ յարուցեց իմ մէջ նրա այդ խօսքերը, որոնք ներքնապէս անյարիր մի վիճակի արդիւնք էին:

— Նա թոյնից վախ չունի, սեղից վեր ելնելով ասաց միւս մարդը, որին անմիջապէս ճանաչեցի:

— Այս սրեակը, եթէ հիմա իրեն տաս, հաճոյքով կը պարպի, որովհետեւ, երբ բանը բանից անցնում է, կեանքն էլ արժէքազուրկ է լինում:

Ձարմանքով տեսայ, որ Կապտանեանից խած սեւ հեղուկով լի սրեակը այժմ նրա ձեռքումն էր: Եւ մտքերիս կծիկը ինքնին քակւել սկսեց . . .

Պօսողը Սամսոնի Իստիհասատականների պետ դոկտոր Ստիկին էր: Ապրում էր հայ-թուրք թաղերի միացման շրջանում: Հայկական շրջաններից իրեն կղզիացած էր պահում: Բայց, ինչպէս ժամանակի բոլոր Իստիհասատականները, համարւում էր «հայասէր»: Լուրջ, խոհուն, իրազեկ մարդու համբաւ ունէր եւ միակ պակասութիւնը դէպի ոգելից ըմպելիները ունեցած թուլութիւնն էր: Ես նրա հետ ընդամէնը մէկ անգամ էի պատահել, էրզրումի Հ. Յ. Դաշնակցութեան ընդհանուր ժողովին մեկնելու նախօրեակին: Այն ժամանակ նա խօսում էր հայ-թուրք համագործակցութեան մասին: Բարենորոգութիւնների խնդիրը համարում էր հասունցած մի հարց, բայց դժգոհ էր զրոսի միջամտութիւններից: Իրազեկ էր, արդեօք, որ էրզրումի ժողովը մի ծուղակ էր հայ յեղափոխականներին ամէն տեղից ի մի հաւաքելու, գլխատելու՝ չգիտեմ: Ամէն պարապայի տակ, արդուութեամբ վերջիւնելով էրզրումի մէջ անցած դարձածը, հասկցայ, որ իմ «հաշիւը» փակւած է ու դրա հետ միասին աննախընթաց խաղաղութեան ու բացարձակ անտարբերութեան մէջ ընկայ:

Ստիկին դանդաղ մօտեցաւ մեզ, ձեռքերը գրպաններում կանգ առաւ եւ գինուց կարմրած աչքերը վրաս յառեց.

— Ահա, թէ մինչեւ ուր հասցրիք դուք մեզ. բոլոր այս թշուառութիւնների մեղքը ձերն է, միայն ձերը . . .

Ուռած դէմքի զոռոզ արտայայտութիւնը յանկարծ կարեկցութեան փոխեց.

— Այսօր այստեղից անցան հարիւրաւոր մարդէկ. ի՞նչ էր այն . . .

Սրա՞ համար էր մեր բարեկամութիւնը, սրա՞ համար էին մեր անվերջ ընդառաջումները . . .

Մօտը կանգնած ժանդարմների պետը հաւանութեան հայեացք նետեց նրա վրա ու քաշեց սեղանի մօտ:

— Ամենից բարեկիրթ ու յառաջադէմ ժողովուրդը համարեցինք մենք ձեզ եւ աւելի յառաջադիմելու բոլոր հնարաւորութիւնները տւինք: Ձեր դպրոցները, վանքերը, եկեղեցիները, ընթերցարաններն ու աղումները թիւ ու համար չունէին մեր երկրում: Պետական տնտեսաբար պաշտօնների տէր դարձրինք ձեզ: Երկրի ղեկն անգամ վստահեցանք ձեզ եւ ի՞նչ . . .

Նա գլուխն օրօրում էր վրաս.

— Դրամ, արհեստ, առեւտուր, դիտութիւն ամէ՛ն բան ձեզ տուինք. ո՞ր երկրի մէջ այդքան իրաւունքներ ունէիք . . . Ռուսաստանում . . .

Նրա դէմքի կարեկցական արտայայտութիւնը չքացաւ եւ նախկին զոռոզ, ամենազէտ շեշտով շարունակեց.

— Անտես առի՞ք ձեզ տրւած բոլոր բարիքները, որովհետեւ առաջին մէկ օրից միտք չունէիք մեզ հետ իրրեւ բարի դրացիներ ապրելու. միտք չունէիք հաւաքարար ընդհանուր հայրենիքի շահերին ծառայելու: Յեղափոխութեան մեղքալոյսին հազար ու մի բարի ցանկութիւններ յայտնեցիք. ընդհանուր շահին ծառայելու հանդիսաւոր երդումներ արիք: Թէեւ դիտէինք, որ այդ բոլորը կեղծ են, բայց կարեւորութիւն չտւինք. երկիրն այնքան մեծ վտանգի մէջ չէր դեռ եւս: Միւս կողմից, խորհեցանք, թէ դուք էլ վերջի վերջոյ խելքի կը դառնայիք: Բայց ի՞նչ միամտութիւն . . . Ամէն տեղ սկսեցիք դաւել: Բարենորոգութիւնների պատրւակով Ռուսաստանում, Անգլիայում, Ֆրանսիայում սկսեցիք արտաքին միջամտութիւններ առաջ բերել. փորձեցիք օտար հակակշոր տակ առնել մեր պապերի երկիրը միայն թէ . . .

Նա ցատումից կծկւեց, ապա համր բարկութեամբ ձեռքերը բռնունցքաձեւ սկսեց ճօճել օղի մէջ: Նրա դէմքն այնպէս էր այլայլւել, որ, կարծես թէ, կեանքի ու մահւան կուռի էր պատրաստւում: Փողկապը տեղից չըջւել էր, օսլայած օձիքից քրտնած կզակը ծալւել ու կախւել էր:

— Հաշիւ չէիք առել մէկ բան. այն, որ Սուլթան Բայազիդների, Սելիմների, Մուհամմէդների, Մէջիդների թուրքիան, անգամ իր «հիւանդ» վիճակով, կոչւած է մե՛ծ, համաշխարհային պետութիւն դառնալու: Եւ հաշիւ չէիք առել նաեւ այն, որ մեր հի՛շ, հերոսական ցեղը կը ջարդի ու կը ջախջախի բոլոր, բոլո՛ր արգելքները եւ յաղթական կը լինի. . .

— Նա ինքն իրենից դո՛ւ մի շարժում չէր արձակում։

— Դարերի հարեաններ էինք, բայց անցեալը, պատմութիւնը, ապրած դառն օրերը, թէ՛ ձեր, թէ՛ մեր քաջածները արժէք չունեցան ձեզ համար . . . Ու հիմա ժամանակը հասած համարեցիք մեզ վերջնականապէս կործանելու . . . Դաւաճանեցի՛ք . . . Վանում, Գարահասարում ապստամբութիւններ սարքեցիք, Կովկասում ուս զօրքերին թեւ ու թիկունք եղաք, Էրզրումում համաձայնութեան գալու բոլոր հնարաւորութիւնները ժխտեցիք, անմիտ, տղայական պատճառներ բերելով։ «Աղանա՛ն», ո՞ր երկրի մէջ տեղի չեն ունենում նման յետադիմական շարժումներ։ «Բարենորոգութիւնների ձգձը-դո՛ւմ», ե՞րբ ժամանակ եղաւ դործադրելու։ «Գաւառի տխուր դըժ-տութիւններ», ո՞վ էր նրանց ծնունդ տալիս . . . :

Նա գնալով նորից սկսել էր բորբոքել։

— Եւ դաւաճանեցիք այնպիսի մի շրջանում, երբ Դարդանելից, Միջագետքից, Պաղեստինից, Կովկասից, ամէն կողմից ազգերը, մեզ վրա թափւած, ուղում են մեզ բղքտել, «հիւանդ մարդու» ժառանգութիւնը իրենց մէջ բաժանել . . . Օ՛, ինչպէս չէ, անշուշտ նաեւ ձեզ բաժին հասնել . . .

Նա կատաղութեամբ եւս մէկ քայլ արաւ դէպի մեզ ու առամեն-րը կրճատեցնելով կանգ առաւ։ Ապա ձեռքը տարաւ ծոցի զրպանը, դուրս քաշեց մի փոստկարտ ու բոլորովին մօտենալով ինձ, ցոյց տւեց։

— Մանօթ է . . .

Այնտեղ նկարւած էր «Հայկական ազատամարտը»։

— Մանօթ է, չէ՞ . . . Այս չէ՞ ձեր ուղածը . . . Է՛, ինչ կայ որ, երկիրը մե՛ծ, հողը շա՛տ . . . Գնացէք հիմա ձեր «էրմէնիս-տան»ը ստեղծեցէք Մուսուլի մէջ . . .

Կարծես, թէ փայտով հարւած տւին դիւիս . . . «Մոսո՛ւլ» . . .

— Իսկ եթէ այնտեղ էլ անյաջողութեան հանդիպէք, մեղադրե-ցէ՛ք ձեզ. մենք այլեւս մեր կրծքի վրա օձեր պահելու միտք չու-նինք . . .

Նա մօտեցաւ սեղանին, իրարու վրա երկու բաժակ օղի պարպեց ու խոպոտ ձայնով ինքն իրեն շարունակեց։

— Այս անգամ ամէն բան վերջացաւ. չարիքն արմատով դուրս քաշեց ու դէն նետւեցաւ . . .

Ապա դանդաղ դէպի մեզ գալով, յարեց։

— Թէ՛ մեր, թէ՛ ձեր տառապանքները յաւիտեանապէս վերջ դը-տան։ Հասկացա՞ք . . .

Նրա զսպւած կատաղութիւնը այս անգամ չափ չունէր. բոլորն ատելութեան բովանդակ թափով ու դառն հեղնանքի շեշտով նա ա-սաց։

— Դուք, ի հարկէ, յոյս ունէք, որ ուսմանը պիտի դան։ Բայց մինչեւ այդ քար քարի վրա չի մնայ . . . Կը վրիւ, կը ջախջախի ամէն բան . . . Եւ ձեր ուսմանը լաւագոյն դէպքում կանցնին այնպիսի՛ աւերակների միջով, որոնց տեսքը սարսափ կազդէ նրանց՝ անգամ ե-րազի մէջ . . .

Յանկարծ նա լռեց այնպիսի մի ձեւով, որ, կարծես թէ, շատ կարեւոր բան յիշեց։ Ապա ինքն իրեն հաւաքեց եւ աչքերը բերիւ մէջ յառած, զսպւած կատաղութեամբ շնչաց։

— Այս բոլորը ձեզ համար ոչինչ են, այնպէս չէ՞ . . . Ձեզ հա-մար այժմ ամէն բան միեւնոյն է, այնպէս չէ՞ . . . Իսկ հազարաւոր մարդի՞կ, որոնք ձեզ նմանների պատճառով այժմ տառապում են ճանապարհին. կանա՞յք, աղջիկնե՞ր, որոնք յանցանք չունին. երե-խանե՞ր . . .

— Հերի՛ք է, — ինձ համար էլ բոլորովին անսպասելի կերպով դո՛ւ չեցի ես . . .

Նա կարծես թէ շանթաւար եղաւ եւ հազիւ կարողացաւ առամ-նների միջից շնչաւ։

— Ի՞նչ ասացիք . . .

Ժանդարմների պետը ոտքի ելաւ ու յամր անցաւ դէպի մեզ։

— Դուք ասացիք «հերի՛ք է» . . .

Ես դրականապէս թօթեցի դուիս։

— Դուք ուզո՞ւմ էք, որ հիմա տեղնուտեղը ձեր «հաշիւը» փա-կեմ . . .

Ես դարձեալ շարժեցի դուիս։

Կարմրած աչքերը, կոպերի թանձր ծալքերից դուրս դալով, կախ ընկան, վզի հաստ երանները ցցւեցին։ Աջ ձեռքը դրպանի մէջ դար-ձնելով, նա կանգնած տեղը բարկութիւնից խեղդւում էր։ Նրա գունդ ուսերը բարձրանում, կուրծքը նկատելի կերպով ուռում էր։ «Եւս մի ակնթարթ», անցաւ դիւիս . . .

Բայց յանկարծ նա փուքսի պէս բաց թողեց չունչը, յետ քաշեց ու հազիւ զսպւած յուզումով սպառնադին ասաց։

— Շատ լաւ . . . հերի՛ք է . . . այս անգամ հերի՛ք է . . .

Ապա մէկ քայլ առնելով դէպի չէմքը ձայն տւեց։

— Իբրահիմ . . .

Ներս մտաւ փոխիս եւ դուրս տանելով մեզ, յետ դարձաւ։

Դուան մօտ նստած ժանդարմը մեղ հետ ինչ անելը չգիտէր, բայց չուտով յայտնեց փոլիսը եւ կատաղած, ձեռքով նշան արաւ, որ գնանք: Վերջացա՞ւ, արդեօք, ամէն բան, թէ դեռ կարող էր երկարել՝ այդ վայրկեանին չգիտէի: Ամէն պարագայի տակ, այդ միտքը, մէկ երկու վայրկեան անց, ելաւ գլխիցս: Բայց դրա փոխարէն քրքրում էին ուղեղս դռնոր Ստեփի ասածները եւ ամենից շատ՝ «Մոսկովը» . . .

Լուռ ու մունջ, Գարեգինի հետ կողք կողքի դնում էինք. աւելի ճիշդ, լարւած մեքենաների պէս շարժւում էինք: Գլխիս մէջ իրարու հրմշտկող մտքերը այնքան խառնեցին, որ վերջ ի վերջոյ խշխր դարձան: Ու նորից չգիտեմ. առաջ թէ՞ յետ ենք գնում: Ի՞նչ մեծ դժբախտութիւն էր այս երկու ուղղութիւնները չփոթելու . . . Ճամբայ չկայ, նշանակում է յետ ենք գնում: Դաշտն է, դա՛շտը: Ահաւասիկ ախոռները: Ուրեմն, նորից մեր խարխուլ արդեւարանն ենք գնում: Բայց երբ մօտեցանք ախոռների շրջանին, փոլիսը ճամբան ծռեց եւ մտանք մի բակ: Բարձրադիր պատեր, բակի մէջ մի երկանիւ, քառակուսի սայլ, դիմացը, պատի տակ աղբից սեւացած ու չորացած տախտակներ: Բակի աջ ու ձախ կողմերին կային բաց ու փակ դռներով ախոռներ: Փոլիսը ներս արաւ մեղ բակի աջ կողմում եղած ախոռներից մէկի մէջ ու կողոպէք անցնելով, փակեց: Մութ, ցեխով ու աղբով լի մի տեղ էր: Օդը այնքան հեղձուցիչ էր, որ գլուխս ծանրանում էր եւ զգում էի, որ կարող եմ վայր ընկնել: Դուռն ի վար սահելով նստեցի: Միաժամանակ կողպէքին միացած դռան կեռը թեթեւ շխկոցով յետ գնաց ու երկու, երեք մատնաչափ մի ձեղք բացեց դէպի դուրս: Յամբաքայլ մի ոտնաձայն հասաւ մեղ ու մարեց, ապա ձեղքից աչքս ընկաւ մեղմադճոտ ժանդարմի աչքին: Առաւօտից մինչեւ հիմա այս մարդը ոչ մի ձայն չէր հանել ու հիմա էլ նայեց, նայե՛ց, գլուխը կախեց ու անցաւ: Դրսում լուռ թիւն էր տիրում. այնպիսի մի լուռ թիւն, որ կարծես թէ չըջապատը դարան էր մտել մեր դէմ: Յանկարծ ախոռի միւս ծայրից լուեց մի ձիու ղնդային, խնդրական, մեղմ ու խուլ խրխնջոց: Գարեգինը, որ դեռ կանգնած էր, տեղ բռնեց իմ դիմաց: Ի՞նչ էր մտածում. արդեօք հաշտե՞լ էր մահաւան հետ, թէ դեռ փրկութեան յոյս ունէր . . . Լուռ էր, ծայր աստիճան ամփոփւած, իսկ ես խօսք չէի գտնում մի բան ասելու: Դէմքից պարզ էր, որ ձգնում է ինչոր խնդիրներ ճշգրէլ:

— Ո՞ւր կ'իյնայ մերիներու ճամբան դէպի Մոսկով . . . յան-

կարծ հարց տւեց նա այնպիսի մի ձեռով, որ, կարծես թէ, աշխարհադրութեան դաս էր հարցնում դպրոցում:

— Ամասիա, Թոկատ, Սվաղ . . . Արաբկիր, Խարբերդ . . . Տիգրանակերտ եւ անապատներով Մոսկով . . .

— Այո, այո . . . կը յիշեմ . . . Շատ քիչերը կրնան տեղերին հասնիլ . . . հեռու է . . .

Իր գլխով լրացնելուց առաջ դերեղման իջնելու հարկադրւած դիտնականի տեսք ունէր Գարեգինը: Խրոխտ, հպարտ Գարահիսարի բնութեան պէս ջինջ ու խոհուն էր նրա դունատ դէմքը: Եւ ո՞րտեղից էր միշտ լուռ ու մունջ Գարեգինի մէջ այդքա՛ն անհասանելի մի ներքին ուժ՝ դժւարանում եմ ըմբռնել: Դուան ձեղքից լոյսի ցուրը՝ փայլուն, երերուն թրի պէս՝ ընկել էր նրա դէմքին: Նա բացել էր Արմենակի տւած կապոցը եւ գնում էր պարունակութիւնը: Խնամքով դարձնում ու ցուրի տակ աչքի էր անցնում փաթեցի տեղ ծառայող թղթերը: Գարեգինին դրադեցնող բան չկար դրւած այնտեղ . . . տետրից սլուած սովորական թղթեր էին: Անդին՝ կապոցի մէկ ծայրին՝ հաց, պանիր, կտրտած ապուխտ, մէկ օճառ, երկու երեսի սրբորիչներ եւ երկու ասեղնագործ անձեռոցիկներ . . . Վերջինները մանրաղնին քննութեան առնելով, Գարեգինը, հաղիւ նշմարելի կերպով, օրօրում էր գլուխը: Դէմքը խապաւ իջել էր կրծքին: Լոյսի ցուրը այժմ խաղում էր նրա գանկի նօսրացած մաղերին . . .

Բեկգրադ

(Շարունակելի)

ՏՈՒԹ. ՎԱՀՐԱՄ Յ. ԹՈՐԳՈՄԵԱՆ

ՅՈՒՇԱՏԵՏՐԷՍ

Բ.

Օրագրութեանս անցնելէ առաջ հարկ կը համարեմ, ինչպէս նախորդ գրութեամբս խոստացայ, ներկայացնել մի քանի նամակներ եւս, եւ նախ՝ Յակոբ Քոչարեանինը, Հայաստանի պատուիրակութեան այդ աշխոյժ եւ ժիր քարտուղարին, որ յոգնիլ չէր գիտեր եւ որու հետ կը սիրէի ժամեր անցունել:

Համեստութեան իսկական տիրար մըն էր ան. ունէր հաճելի ու հրապուրիչ խօսակցութիւն, լի հայրենասիրական անկեղծ եռանդով. միշտ յուսալից կըլլար յուսատու ուրիշներու, ամենափայլուն ապագայ մը գուշակելով Հայաստանի համար աւա՛ղ որ վաղաժամ հրաժեշտ տուաւ աշխարհի, բայց զոնէ տարագրութեան մէջ չմեռաւ ան, եւ կըցաւ երթալ Հայաստան, ուր իր ներկայութիւնը արդիւնաւոր ըլլալ կը խոստանար:

Իրեն ալ ուղղած էի նամակ մը, խնդրելով որ իր կարծիքը յայտնէր՝ Հայաստանի նորածին հանրապետութեան եւ անոր ապագայի մասին: Ահա իր փոքրիկ պատասխանը, որ կը կրէ 31 Հոկտ. 1918 թւականը.

« Սիրելի Բժիշկ Թորգոմեան,

« Հայ ժողովրդի վերջին երկունքն է, որին մենք այժմ վկայ ենք եւ միանգամայն մասնակից: Ամենածանր եւ դաժան չըջանը « արդէն անցած է եւ ես հաւատում եմ, որ մօտ է, չա՛տ մօտ՝ ազատ « ու մեծ Հայաստանի պայծառ արշալոյսի ծագումը:»

31 Հոկտ. 1918, Կ. Պոլիս

Յակ. Քոչարեան

Դժբաղդաբար խեղճ Քոչարեանի այս ոսկեայ երազ մարգարէութիւնը չկատարեցաւ այն ատեն, երբ ամէնքս ալ կազմ ու պատրաստ

կը մնայինք, երթալ Այրարատի հոգեպարար շունչը ծծելու: Թողունք սակայն այս կէտը:

Ահաբոնեան պատուիրակութիւնը, Կ. Պոլիս անցուցած կարճ ժամանակամիջոցին մէջ չի մոռցաւ նիւթական օժանդակութիւններ ընել կարգ մը թերթերու, եւ իմ միջոցաւ ալ Խասգիւղի Գալֆայեան Որբանոցին, Պ. Յ. Ճ. Սիրունիի, որոնց մասին ունիմ հետեւեալ գիրերը.

I

République Arménienne
Délégation de Paix
No 221

« Յարգելի Բժիշկ Թորգոմեան,

« Հայկական պատուիրակութիւնը խնդրում է Ձեզ ներդրին « քաջել յանձնել ներփակեալ մի հարիւր (100) լիքա հասգիւղի Հա- « յոց Որբանոցի վարչութեանը: Պատուիրակութիւնը ցաւում է որ « ինքը վերջին օրերը շատ գրաւած լինելով հնարաւորութիւն չունե- « ցաւ այցելութիւն տալու Որբանոցին:

« Կ. Պոլիս, 28 Հոկտ. 1918

Պատուիրակութիւն

« Ա. Քարտուղար՝ Յակ. Քոչարեան

II

« Գալֆայեան Աղջկանց Որբանոց

« Հաստատուած 1866

« Խասգիւղ, Հալլը՝ Օղլու

« Հայկական Պատուիրակութեան կողմէ հասգիւղի Գալֆ. Որ- « բանոցի նուիրում 100 օսմ. ոսկի Ազն. Տոֆթ. Թորգոմեանի ձե- « ումբ ստացայ:

« Խասգիւղ 16-29 Հոկտ. 1918

Աղաւնի Մայրապետ Կ. Քէօսէեան »

III

« Յարգելի Բժիշկ Թորգոմեան

« Ա. Ահարոնեանի յանձնարարութեամբ յատուկ խնդրում եմ

« Երկուսից կրել յանձնել Երվանկ մի հարիւր (100) լիքա պարոն Սի-
« բունեանին :
3 արգանքներով

Կ. Պալիս 28 - 10 1918

Ձեր Յակ. Քոչարեան

IV

« Ստացայ Բժիշկ Թորգոմեանի ձեռամբ հարիւր օսմ. ոսկի,
« տրամադրուած պ. Ահարոնեանի կողմէ :
29 Հոկտ. 1918

« Վարսամ »

Աւելորդ չըլլար ըսել հոս, թէ սոյն ստացադրին ներքեւը դրած
« Վարսամ » անունը, կը վերաբերի Յ. Սիրունիի, որովհետեւ ինքը
կապրէր թաքնած եւ այդպէս ալ ապրեցաւ, մինչեւ որ ընդհանուր
պատերազմին զինադադարը կնքեցաւ եւ յետ այնու՝ ամէն ոք ար-
ձակ համարձակ չըլլի սկսաւ, թաքստոցներէ դուրս ելնելով :

Սակայն, մինչեւ այն ատեն, Յ. Տ. Սիրունի քանիցս գիշերով ե-
կաւ իմ տունը եւ պ. Ահարոնեանի հետ ունեցաւ երկար տեսակցու-
թիւններ :

Պրն. Ահարոնեանի հետ որոշած էինք, որ Օգոստոս 15-ի օրը այ-
ցելութեան գնայինք Կոմիտաս Վարդապետին, որ 1917-էն ի վեր
դրած էր Շիրազի Փրանսական հիւանդանոցը եւ իմ յատուկ յանձնա-
րարութեամբ կը դարձանէր հոն՝ յայտնի յոյն ջլախտադէտ - բժիշկ
Տոքթ. Կոնստէ :

Մեր այս որոշումը հարկ եղաւ թողուլ ուրիշ օրւան, ինչպէս կը
յայտնէ Քոչարեանի հետեւեալ գիրը.

« Յարգելի Բժիշկ Թորգոմեան,

« Դէպքերը այնպէս դասաւորւեցին, որ վաղը առաւօտեան պ.
« Ահարոնեան զբաղւած լինելով, չպիտի կարողանա՞մ գալ հիւանդա-
« նոցը այցելութեան. շտապում եմ՝ համաձայն խոստմանս հաղոր-
« դել Ձեզ այս մասին : Խնդրեմ իմաց տա՞մ, քէ ուրիշ օր ե՞րբ է յար-
« մար գնալու այցելութեան. երեւի կը մնայ յաջորդ շաբաթ : Բարեւ-
« ներ ձեր ընտանեացը : »

Բերա 14 Օգոստ. 1918

Ամենայն յարգանքով Ձերդ՝
Յակ. Քոչարեան »

Քանի մը օր վերջ տեղի ունեցաւ մեր այցելութիւնը. Կոմիտաս
Վարդապետ Ահարոնեանը տեսնելուն պէս, վաղեց վրան ու զայն

համբուրելով՝ « Ի՞նչ կը բերես մեր հայրենիքէն, Կաթողիկոսը լա՞ւ
է », ըսաւ, ու զրեթէ քսան վայրկեան, կատարեալ առողջ մտքով տե-
սակցեցաւ հետը. բայց ըիջ յետոյ սկսաւ զառանցանքի մէջ իյնալ,
թշնամիներ երեւակայել իր մօտը եւ ինձ հետ վարւել կատաղի խըս-
տութեամբ, բարեբաղդաբար պահապանին ներկայութիւնը զինքը
զսպեց ու մենք թողուցինք եւ մեկնեցանք տրամութեամբ :

Շատեր, զիտնալով, որ Ա. Ահարոնեանի հետ իմ տեսակցութիւն-
ներս սերտ էին յաճախակի, կուզէին որ ես անձամբ զիրենք ներ-
կայեցնէի. աւելորդ է ըսել, թէ միշտ գոհացում կուտայի ամենուն,
եւ Ահարոնեան շա՛տ սիրալիբ վերաբերում ցոյց կուտար իր մօտը
զացող այցելուներուն :

Հարկ կը համարեմ յիշել հոս, թէ իմ պատանեկութեան աչա-
կերտակից ընկերներէս, յայտնի գրող Յարութիւն Մամբեան, որ
նիւթապէս ալ անբաղձալի գրութեան մէջ էր, ուղեց որ յանձնարա-
րեմ զինքը պ. Ահարոնեանի, ինչոր կատարեցի անիմջապէս, եւ հե-
տեւեալ օրը ստացայ իրմէ գիր մը, որ է հետեւեալը.

« Պատուակամ

« Տոքթ. Թորգոմեան,

« Պ. Ահարոնեանին հետ խանդավառ տեսակցութիւն մը ունե-
« ցայ, շատ ձիրքեր նկատեցի վրան : Իրեն յանձնած եմ մէկ քանի
« ժամանակի կարեւոր ձեռագիրներս. մօտեքս պիտի մեկնի. խնդրեմ
« այդ ձեռագիրները ուստիայոց գնելու համար քելադրէ՞մ իրեն օր
« առաջ :

Շնորհակալութիւն,

Յ. Գ. Մամբեան »

14 Հոկտ. 1918

Երկրորդ անգամ մ'ալ Մամբեան զնացած էր Ահարոնեանի մօտ,
եւ այդ առթիւ կը գրէր ինձ.

« Ազնիւ Տոքթ. Թորգոմեան,

« Ահարոնեանի վերջին տեսութիւնս ըրի, բայց գործս չգնեց
« եւ իրաւունք ունի. այն տեղի վիճակն ալ աղէկ չէ : Երբ պատգա-
« մաւորութեան մէջ հարուստ մէկը 8-10 ոսկի մը վնարէ Ձեզի՝ այդ
« գործերէն մին հոս իրեն անուամբ կը տպենք ու ես ալ քիչ մը շունչ
« կառնեմ :

Քոչդ

Հոկտ. 19 1918

Յ. Գ. Մամբեան

Ահարոնեան ու ես՝ շատ ջանացինք Մրմրեանի բաղձանքին գոհացում տալ, բայց կարելի չեղաւ, թէ եւ երկուքս ալ չխնայեցինք իրմէն մեր երբեմնակի օժանդակութիւնը:

Մրմրեան գերազանցապէս հմուտ մայրենի լեզւին, սքանչելի կերպով կը գրէր գրաբառը, թողած է բաւական թւով աշխատութիւններ, տպագիր եւ ձեռագիր:

Ահարոնեան կը ցաւէր որ Մրմրեանի պէս հուժկու գրիչ մը գրեթէ չլքած կապրէր. մտադիր իսկ եղաւ դայն հետը տանիլ Հայաստան, սակայն յանկարծ դէպքեր արգելք եղան. Ահարոնեան իր ընկերներով թողուց Կ. Պոլիսը 1918 նոյեմբեր 1-ին:

Անցնինք ուրեմն դիտել Օրադրութեանս կարեւոր կէտերը. զորս պիտի ներկայացնեմ յաջորդին:

Փաբիգ

ԳԱՌՆԻԿ ԳԻՒԶԱԼԵԱՆ

ՄԵԾ ՅՈՐԵԼԵԱՆԻ ԱՌԹԻԻ

VII

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԵԱՆ ԵՒ ԼԵԶԻԻ ԴԵՐԸ

ՀԱՅՈՒԹԵԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՄԷՋ

Երբորդ դարի վերջերին հայ ղեկավարութիւնը որոնում էր մէկ ուսմունք, որ իր գոյութեան հիմքը լինէր, հակադրէր Պարսից պետականացած կրօնին, մէկ դաւանանք, որ նոյնքան ցայտուն լինէր, նոյնքան որոշ, որքան հակառակորդինն էր: Ինչպէս Սասանեան ազգայնականութիւնը գտել էր իր ինքնութիւնը պետականացած զրադաշտականութեան մէջ, այնպէս էլ հայութիւնը, որպէս մշակութային պատմական միաւոր, պիտի կառուցւէր նոր կրօնի վրա: Նոր կրօնը դառնում էր հասարակական անհրաժեշտութիւն: Բայց ո՞ւր որոնել այն. հայոց հեթանոսութեան մէջ: Շատ հաւանական է, որ Տրդատը, որպէս շարժման գլուխ կանգնած մէկը, այդպէս էլ ըմբռնում էր. նոր հայութիւնը կառուցանել հայոց հեթանոսական կրօնի վրա: Հայոց Անահիտ դիցուհին նրա գուրգուրանքի առարկան էր. նա ամէնէն ազգայնացած աստուածուհին էր. «Փառք ազգիս՝ մերոյ եւ կեցուցիչ», «մայր ամենայն զգաստութեանց»: Ըստ Ագաթանգեղոսի, հայ երկու մեծ գործիչների ողբերգական հանդիպումը սկսւում է Ոսկեմայր Անահիտի պաշտամունքի շուրջը ունեցած տարակարծութիւնից: Հաւանական է, որ Արեւելքում տեղի ունեցող կրօնական շարժումները անդրադառնում էին եւ Հայաստանում ու Անահիտի պաշտամունքը, մեծարանքը մէկ փորձ էր՝ վերանորոգելու, կենդանութիւն տալու հին աստուածներին: Բայց ինչպէս երեւում է, հայոց կրօնը այն զօրութիւնը չունէր, որ յենարան դառնար արքայական հարստութեան եւ կաղապարէր հայոց ազգային միութիւնը: Նա իրանական ազդեցութեան տակ շատ բան էր կորցրել իր անհատական ինքնութիւնը նկարագրից: Իսկ ինչ որ իրանական էր, պարսկական՝

ստեղծւած պայմաններում չէր կարող հովանաւորել հայ Արշակունիներին: Թերեւս կար եւ այն, որ հայ հեթանոս աստուածները իրենց շուրջը չէին համախմբում ներկածների սոււար բազմութիւն, որի պատճառով էլ հասարակական դեր խաղալու համար պիտանի լինել չէին կարող:

Ինչ էլ որ լինի՝ հայ քաղաքական մտածողները կանգ չառան հայոց հեթանոսական կրօնի վրա: Նրա վրա չէր կարելի կառուցանել նոր հայութիւնը: Մի գուցէ այդ գործի համար պիտանի լինէին կայսրութեան փոքր-ասիական նահանգներում տարածւած կրօնները: Բայց նրանցից շատերը կորցրել էին իրենց ազգային հիմքերը, դարձել միջազգային պաշտամունքի առարկայ եւ, որ գլխաւորն է, կորցրել էին իրենց գոյութիւնը, շատերը դարձել էին ծէս: Արեւելեան կրօնների համախառնումը, ասիական եւ յունա-հռոմէական մըշակոյթների միացումով՝ չբարձրացրեց ասանդական կրօնները հոգեւոր մեծ արժէքների աստիճանին: Մի քանիսը միայն, ինչպէս օր. Միթրայինը, Իգիսինը դարձան համատարած, բայց լաւադոյնները միտիք ընդթ ունէին՝ կաւած հաւատացողի խորհրդապաշտ նկարագրի հետ: Մինչդեռ միտիք կրօնները՝ հաստատութիւններ, մեծ եկեղեցիներ չեն ստեղծում, ծէսը եւ ներքին ապրումները էական են եւ բաւական նրա համար: Միտիքիցմի վրա հիմնւած կրօնը անհատական է եւ շատ քիչ հասարակական-քաղաքական արժէք ունի: Յունա-հռոմէական աշխարհի մի քանի կրօններն էլ դադարում էին կրօն լինելուց, դառնում էին փիլիսոփայական դրութիւններ՝ փոքրիկ խմբակցութեանց բաւարարող եւ կրօնապէս ապրող մարդկանցից հեռու: Բոլոր այս կրօնների մէջ պակասում էր բարոյական տարրը, գալիք, հանդերձեալ կեանքի մտապատկերը:

Յունա-հռոմէական աշխարհը՝ դադափարների, հաստատութիւնների, օրէնքների, լեզուների, կրօնների մի քառս էր, որին կայսրութիւնը փորձում էր ձեւ տալ, կարգաւորել եւ որոշ դրութեան տակ դնել: Քրիստոնէութիւնն էլ այդ կրօնական ձեւաւորումներից մէկն էր որ իր մէջ խտացրել էր արեւելեան կրօնական փորձի լաւագոյն տարրերը եւ յունական փիլիսոփայութեան բարոյական սկզբունքները. նա նոր կրօն էր, թարմ, ընկերային ողորմածութեան դադափարներով, հանդերձեալ կեանքի ուսմունքով: Երբորդ դարում նա Մերձաւոր Արեւելքի բազմազգեան բնակչութեան մէկ զգալի մասի, ըստ ոմանց կէսի կրօնն էր: Սակայն, իր գոյութիւնը պաշտպանելու համար՝ կայսերական պետական մեքենայի եւ հասարակութեան հալածանքների դէմ նա կազմակերպւեց՝ դարձաւ մեծ հաստատութիւն, եկեղեցի, որ երբորդ դարում ամենէն մեծ ոյժն էր հռոմէական կեդրո-

նացած իշխանութեան դէմ: Եկեղեցին ընդօրինակեց աշխարհիկ իշխանութեան վարչաձեւը, մանր համայնքների միութիւնից անցաւ եպիսկոպոսական մեծ միութիւններին, ասյա պատրիարքութեանց: Ներքին կեանքում կայսրութիւնը չունէր իր դէմ աւելի կազմակերպւած, աւելի ուժեղ հակառակորդ, քան քրիստոնեայ եկեղեցին: Մանաւանդ որ երբորդ դարում նա հասարակական գիտակից խաւերի, մտաւորական եւ քաղաքական դասի կրօնն էր: Ճիշդ է նոյն երբորդ դարում նա ոչ միայն հանդուրժող կրօն չէր, այլ եւ հալածական, սակայն, ըստ ամենայնի կրօնական դադափարների դարձացումը տանում էր երկու հակադիր ուժերի՝ կայսրութեան եւ եկեղեցու՝ մօտեցման, համադրութեան: Կեանքի, քաղաքականութեան բոլոր խնդիրների վերաբերմամբ հակադիր տեսակէտներ ունեցող այս երկու ուժերը եւ հաստատութիւնները ձգտում են իրար հետ գործակցել. կայսրութեան պէտք էր արդէն ամուր կազմակերպւած քրիստոնեայ եկեղեցին. եկեղեցուն հարկաւոր էր կայսրութիւնը, որպէս զի յենեւով փաղափակում ուժի վրա, ի կատար ածէր իր պատմական առաքելութիւնը, դառնար միակ կրօն եւ նւիրէր հոգիների փրկութեան, ստեղծէր նոր կարգ այս աշխարհում: Պակաս արժէքաւոր չէր նոր կրօնի կենսունակութեան տեսակէտից այն, որ նրա հիմնադիրը կենդանի, զգացող եւ կամեցող մարդ էր եղել, ապրել էր, քարոզել, մեռել իր դադափարների համար:

Անշուշտ քրիստոնէութեան դադափարների շարժման, յարաճուն ծաւալման, նրա կենսունակութեան ու յարատեւ մղած պայքարին եւ ամրակուռ հաստատութիւն լինելուն ծանօթ էին հայ քաղաքական դեկավարները, որոնցից մէկը՝ Տրդատը կրթւել էր Հռոմում, հեթանոսական ասանդութեանց այս դասական հայրենիքում, միւսը Կեսարիայում՝ քրիստոնէութեան վարդապետութեան մեծագոյն որդաններից մէկում: Կար եւ այն հանդամանքը, որ անկախ Հայաստանում քրիստոնէութիւնը վաղուց մտած էր՝ հարաւից եւ արեւմուտից: Եւ հայութեան քրիստոնէացման մէջ ոչ միայն օտար՝ ասորի եւ յոյն քարողիչներն են դեր խաղացել, այլ եւ հայ ծագում ունեցող քրիստոնեաները, որոնք ապրում էին Միջագետքի դիւխաւոր քաղաքներում, Փոքր Հայքում, ուր բնակչութիւնը, մանաւանդ Փոքր Հայքում, մեծ մասամբ հայկական էր: Կայսրութեան մէջ կրօնապէս եւ մշակոյթի տեսակէտից բարձր կանգնած հայը՝ գալիս էր իր պարտքը կատարելու Մեծ Հայաստանի իր ազգակիցների հանդէպ՝ նոր ուսմունք, նոր կրօն քարոզելու: Դժւար է ասել, թէ ինչ տարածում ունէր քրիստոնէութիւնը Հայաստանում, բայց արդէն երբորդ դարում Մեծ Հայաստանում ուրոյն եպիսկոպոսութիւն գոյութիւն ու-

նէր: Եթէ Մեծ Հայաստանում, որ անկախ պետականութիւն էր, քրիստոնէութեան ծաւալումը մեծ չէր, ապա կայսրութեան վարչա-
ձեւի տակ գտնուող հայերը՝ Փոքր Հայքում, Միջագետքի քաղաքնե-
րում զանգուածօրէն յարել էին նոր կրօնին: Այս ամենը՝ նոր ծաւա-
լումը կայսրութեան մէջ, հայ տարրի միանալը նրան՝ Հայաստանից
դուրս, հայ եւ օտար քաղաքացիների աշխատանքը երկրի ներսում, եւ,
գլխաւորն է, քրիստոնէութեան կուռ կազմակերպութիւնը որպէս ե-
կեղեցի, հաստատութիւն՝ ունեցաւ որոշիչ նշանակութիւն հայ քա-
ղաքական գործիչներին մղելու դէպի նոր կրօնը: Նրանք տեսնում էին
որ, չնայած առերեսով հալածանքներին՝ կայսրութիւնն ինքն է հակ-
ւում դէպի քրիստոնէութիւնը. եւ այդ ոչ թէ նրա գաղափարների, այլ
կազմակերպութեան համար. քրիստոնէայ եկեղեցին պէտք էր ունենալ
իր հետ եւ ոչ թէ իր դէմ: Ինչպէս հին կայսրութիւնը Հռոմում ունէր
հեթանոսական հիմքեր, այնպէս էլ նորը Բիզանդիոնում պիտի ու-
նենար քրիստոնէական հիմք: Հայերը տեսնում էին, որ ճիշդ այդ-
պիսի հիմքերով կառուցւել է իրենց հարեւան Սասանեան պետութիւ-
նը, ազդեցիկացնելով մազդէականութիւնը: Հռոմը դիմում էր դրան՝
պետականացնելու քրիստոնէութիւնը: Հայութեան պէտք էր մէկ
կրօն, որ լինէր հիմքը եւ հայ պետականութեան, եւ արքայական
տան, եւ ազգութեան: Տւեալ պայմաններում այդ կարող էր լինել
այդքէն եկեղեցի դարձած քրիստոնէութիւնը: Հայ քրիստոնէական ե-
կեղեցին պէտք է հակադրէր Սասանեան մազդէականութեան: Եր-
կուսի մէջ էլ կրօնի բարոյական կողմը չէր, այլ հաստատութիւն լի-
նելն էր մեծ արժէք ստանում:

Վերին աստիճանի նշանակալից փաստ է, որ քրիստոնէութիւնը
յոյնա-հռոմէական աշխարհում չէ, որ նախապէս պետական կրօն է
հռչակուում, թէպէտ դրա համար այնտեղ կային շատ աւելի նպաս-
տաւոր պայմաններ: Հելլենական մշակոյթը նախապատրաստել էր
մտքերը, կերտել էր նոր, աւելի բարձր բարոյական ըմբռնումներ.
այնտեղ մշակութային-կրթական մակարդակը շատ աւելի բարձր էր:
Ապա ստեղծւել էր մի մեծ խաւ, մտաւորականութեան քաղաքացիակ
տարրը, որ ապրում էր այդ գաղափարական մթնոլորտի մէջ: Այ-
սուհանդերձ Հայաստանի մէջ է, որ քրիստոնէութիւնը պետականաց-
ւեց, թէպէտ նրա մտաւոր եւ բարոյական մակարդակը շատ վար էր:
Հելլենականութիւնը, որպէս ուրոյն մտածելակերպ, ապրում ու կեն-
ցող՝ այստեղ խոր արմատներ չէր ձգել՝ չնայած Արտաշէսեան հա-
րժստութեան կրկնակի փորձերին: Հայաստանում չկար այս խաւը՝
քաղաքն ու քաղաքացիական տարրը, որոնք Մերձաւոր Արեւելքում հել-
լենականութիւն կրողն էին: Այս մի ապացոյց է, որ քրիստոնէու-

թիւնը հայոց միջավայրից վեր բարձրացող հոսանք չէր, այլ վերե-
ւից պարտադրւած փաղափակաւ անհրաժեշտութիւն:

Քրիստոնէութիւնը մեզ մօտ հասարակական մի ուժեղ գէնը էր իշ-
խանութեան ձեռքին՝ իրկելու համար նրանով Արշակունեաց հարձա-
տութիւնը եւ նրա վրա կերտելու նոր հայութիւնը: Նա հետեւանք չէր
հայ զանգուածների կրօնա-բարոյական հասունութեան, այլ այն քա-
ղաքական տաղանակին, որին ենթարկւած էր հայութիւնը: Եւ այդ
տաղանակն ու նրա լուծելու կարիքը զգում էին հայ արքունիքը, հայ
մտաւորականութիւնը, որ կրթւած էր փոքր-ասիական մտաւոր կե-
դրոններում: Դրանցից մէկն էր եւ Անակի որդի Գրիգորը ինչպէս եւ
այն նախարարները, որոնք մօտ էին Արշակունիներին: Քրիստոնէու-
թիւնը ստացաւ մեր երկրում տիրող դասակարգի՝ նախարարութեան,
արքունիքի գումաւորումը, եւ միայն նրանց վրա կոթնած դարձաւ
պետական կրօն: «Հասարակ» այդքան նրբութիւններ չէր ըմբռնում,
զիւստապիտութիւն անել չգիտէր, ուստի եւ կատարւածի իմաստը
չէր հասկանում. նա հոգու խորքում հաւատարիմ էր իր հին աստ-
ւածներին: Սրա հետեւանքով քրիստոնէութիւնը մտցրեց հայ գործի,
մտածութեան եւ զգացումի մէջ մէկ երկուքիւն, որ առաջ էլ գոյու-
թիւն ունէր դասային եւ կենցաղային հիմքերով եւ այժմ ստացաւ
կրօնական եւ քաղաքական դիմաշրջումի բնոյթ:

Քրիստոնէութեան պետականացումը մեր պատմութեան մեծա-
դոյն փաստերից մէկն է. նա փակում է մեր անցեալ հեթանոսական
պատմութեան վերջին գլուխները եւ իրենով պայմանաւորում դարիք
պատմութեան ընթացքը եւ իր կնիքը դնում հայութեան ապագայի
վրա: Քրիստոնէութեան պետական կրօն դառնալը հետեւանք է Ար-
շակունիների լաւապէս ըմբռնւած քաղաքական եւ ազգային շահերի:
Նրանք հասան իրենց նպատակին՝ անջատեցին ընդմիջտ հայութեան
նախադրիքը, նրա պատմական ուղիները Պարսկաստանից: Այս
բանը Սասանեանների պարտութիւնն էր, որոնց կրօնական եւ քաղա-
քական անհանդուրժողութիւնը նետեց հայերին, սկզբում Հռոմի
դիրքը, ապա քրիստոնէութեան ծաւալման նպատեց: Պարթեւ Ար-
շակունիների մշակած վարչաձեւը, կառավարելու ապակեդրոն եղա-
նակը, կրօնական, լեզական լայնախոհութիւնը նպաստեցին հայ-
պարթեւական մշակութային-քաղաքական գործակցութեան: Սասանե-
անների վերբերումը վերջ տւեց այդ բոլորին: Սկսեց հայ-պարս-
կական յարաճուն պայքարը մինչեւ Սասանեան Պարսկաստանի վախ-
ճանը՝ քիչ ընդհարումներով: Եւ երբ հետագայում Պարսկաստանը
քաղաքական պարտութեան հետեւանքով ընդունեց մահմետականու-
թիւն, այդ անջատումը աւելի խորացաւ, վերածւեց երկու կրօնական

միութեանց թշնամութեան: Եթէ քրիստոնէութիւնը մէկ նոր ձեւն էր հելլենականութեան, մահմեդականութիւնը մէկ նոր ձեւ էր իրանականութեան, որի հիմքերի մշակման վրա աշխատել էին Մերձաւոր Արեւելքի բոլոր ժողովուրդները եւ որը համադրեց Աքամենեան Պարսկաստանում՝ ստանալով իրանականութիւն անունը:

Եթէ քրիստոնէութիւնը մի նոր ձեւն էր հելենականութեան, յունա-հռոմէական բարձր մշակոյթի քրիստոնէացած ձեւը, ապա մեր երկու մեծագոյն գործիչները՝ Տրդատը եւ Գրիգորը գիտակցօրէն հայութիւնը մղում էին դէպի արեւմտեան մշակութային հոսանքը: Այս տեսակէտից նրանք շարունակողն են այն գործի, որին նւիրած էին Արտաշէսեան հարստութեան լաւագոյն ներկայացուցիչները՝ Արտաշէս Ա. եւ Տիգրան Մեծը: Նրանք է, որ գիտակցօրէն հետապնդեցին հայութեան հելլենականացման եւ այդ ըմբռնեցին որպէս յոյն լեզուի, գրականութեան, կրօնի, արւեստների եւ դադթականութեան պատւաստում մեր երկրում: Հայերը մենակ չէին այդ գործի մէջ: Դա հայացի արտայայտութիւնն էր այն պրոցեսի, որ տեղի էր ունենում ամբողջ Մերձաւոր Արեւելքում. ամենուրեք պատւաստում էր տնտեսութեան, վարչութեան եւ մտածութեան աւելի բարձր ձեւը: Յոյն եւ հրեայ տարրերի զանգւածային դադթը Տիգրան Մեծի օրով, Հայաստանը առեւտրա-արդիւնաբերական տեսակէտից պիտի մտցնէր Մերձաւոր Արեւելքի տնտեսութեան շրջանակի մէջ, իսկ մշակութային տեսակէտից պիտի պատւաստէր մեր երկրում ժամանակի ամենից ծաղկած եւ ճոխ քաղաքակրթութիւնը: Հայութիւնը, որպէս պատմամշակութային միութիւն, պիտի կառուցէր հելլենականութեան վրա: Թէ՛ Արտաշէսը, թէ՛ Տիգրան Մեծը, թէ՛ Տրդատն ու Գրիգոր Պաղարը հայութիւնը ստեղծողներն են, կերտողները. առաջինները՝ հեթանոսական, իսկ վերջինները քրիստոնէացած հելլենականութեան վրա: Ու եթէ Արտաշէսեան հարստութեան փորձը անյաջող անցաւ՝ ուժեղ քաղաքարնակ խաւի չգոյութեան եւ արտաքին՝ քաղաքական պարտութեանց պատճառներով, Արշակունիների գործը յաջողեց, որովհետեւ պետական իշխանութիւնը դարձաւ նրան յենարան:

Երկու հարստութիւններն էլ ջանում էին հայութեան գոյութեան հիմքերը ներքին, ամուր պատանդանի վրա կառուցանել: Այս գործի համար աւելի բարձր եւ ուժեղ ծառայում էր որպէս ընդօրինակման առարկայ, ինչպէս բոլոր դարերում եւ բոլոր ժողովուրդների մօտ տեղի է ունենում: Ինչպէս 19րդ դարի մեր հոգեւոր վերածնութիւնը տեղի ունեցաւ եւրոպական եւ ռուսական դադափարների, մշակութային բարձր ձեւերի ազդեցութեան տակ, այնպէս էլ

հին դարերում հայոց հոգեւոր վերածնութիւնը տեղի ունեցաւ հելլենականութեան եւ հելլենացած քրիստոնէութեան հիմքով: Ինչպէս այն ժամանակ հայոց ազգայնացման գլուխը կանգնած էր հայ քաղաքական ոյժը, այնպէս էլ նոր ժամանակներում՝ ազգային դարձման գործը հայ աշխարհիկ մտաւորականութեան ջանքերի պրոցեսն է: Մեր երկու հարստութիւնների լաւագոյն ներկայացուցիչները մեր առաջին արեւմտականներն են, Արեւմուտքի միջոցով հայութեան ինքնուրոյն կեանքի կոչողները:

Հայոց քրիստոնէացումը կամ քրիստոնէութեան պետականացումը մեր երկրի առաջին մեծ յեղափոխութիւնն էր, որի սուր ծայրը ուղղւած էր պարսիկներին: Թէ՛ նա քաղաքական նպատակներ էր հետապնդում, երեւում է նաեւ այն բանից, որ նոր կրօնը արագօրէն կազմակերպեց որպէս հաստատութիւն եկեղեցի՝ ունենալով իր ամուր նիւթական հիմքերը, կալւածները, որոնք տրւում էին թագաւորի եւ հայ նախարարների կողմից: Շատ շուտով նա կազմակերպեց իր նւիրապետութիւնը՝ յարեւմտեան աւատապետական Հայաստանին: Այս ձեւով միայն նա դարձաւ ոյժ հանրային կեանքի մէջ, դեկալար գեր ունեցաւ, ինչոր Արշակունիներին պէտք էր: Այդ գործակցութիւնն էր, անշուշտ, որ ի նկատի ունէին նրա երկու մեծ հիմնադիրները: Եւ հասկանալի է, որ նրանք գործում էին ձեռք ձեռքի տւած: Կարճէք հայոց քրիստոնէայ նւիրապետութիւնը ստեղծւած էր հակազդելու Սասանեան բիւրոկրատիք շրջանակներում կազմակերպւած մադդեղական նւիրապետութեան, որ այնքան առաջնակարգ դեր էր խաղում պետութեան մէջ: Եթէ քրիստոնէութիւնը արագօրէն հաստատուեց Հայաստանում, դրա պատճառներից մէկն էլ այն էր որ նա իւրացրեց հայոց հեթանոսական կրօնի կազմակերպութիւնը եւ նրա վարչական գրութիւնն ու նւիրապետութիւնը: Կազմակերպչօրէն նա ազգայնացաւ: Հայ քրիստոնէութեան պետականացնողները աշխատեցին դէպի նոր կրօնը գրաւել հին կրօնի սպասաւորներին՝ քրմական դասը, որ, ի վերջոյ յաջողեց: Քրմութիւնը իր ժամանակի մտաւորական դասն էր, ունէր կազմակերպութիւն, գիտութիւն փորձ. մասամբ նրա շրջանակումն էր մշակւել հայ լեզուն, դարձել կրօնական լեզու. նա կալւածատէր էր: Նրա անդամները դուրս էին գալիս հայ ազնական դասից, որի հետ կենցաղով, ճաշակով եւ շահերով մօտ էին. նա կառավարել գիտէր, ուժի եւ իմացականութեան տէրն էր: Այս դասն է, որ աստիճանաբար տեղ էր գրաւում քրիստոնէութեան նոր կառուցող նւիրապետութեան մէջ, բերում էր իր փորձը, գիտութիւնն ու հեղինակութիւնը: Նրա երկ-տասարդութեան առաջ բացւում էին նոր ասպարէզներ. յոյն եւ ա-

նից, այնքան քրիստոնէութիւնը մնալու էր մեկուսացած, կրթւած, դիտակից մարդկանց սեփականութիւն, հետեւապէս հասարակականօրէն անարժէք: Նա կը դառնար մեր կեանքի մեծադոյն յեղափոխութիւնը, եթէ դառնար հոգեկան յեղաշրջում: Հին եւ նոր կենցաղի, կենսահայեցողութեան բաղխումն է չորրորդ դարի մեր պատմութիւնը: Եթէ քրիստոնէական կենցաղի, բարոյական ըմբռնումների նւազդոյն տարրերի կրողը հայ հոգեւորականութիւնն էր, որի գլուխը կանգնած է Գրիգոր Լուսավորչի տունը, ապա հին հեթանոսական կենցաղը, կարգը զարգանում էր հայ Արչակունինների արքունիքում. նրանց վարք ու բարքը ոչինչ չունէր քրիստոնէական, նրանք իրենց կեանքը անց էին կացնում խնձոյքների, զւարճութիւնների, խարդաւանանքների, կոիւնների եւ արբեցութեան մէջ: Հայ աշխարհիկ եւ հոգեւոր իշխանութեանց պայքարը ոչ միայն քաղաքատնտեսական հիմքեր ունէր, այլ եւ երկու հակադիր կենսահայեցողութեանց պայքարն էր: Լուսավորչի տան կաթողիկոսները յանդիմանում էին թագաւորներին, նախարարներին իրենց հեթանոսական կենցաղի համար, իսկ թագաւորները դանակոծում եւ ըսպանում էին կաթողիկոսներին:

Այս պայքարի մէջ հայ նոր ստեղծող կղերականութիւնը ոչ միայն մեկուսացած պիտի մնար, այլ եւ վտանգւած՝ աշխարհիկ իշխանութեան դէմը՝ եթէ լայն յենարաններ չունենար: Բայց ի՞նչ միջոցներով... միայն եւ միայն քրիստոնէութիւնը ազգայնացնելով. միայն այդ դէպքում հայ եկեղեցին կը հաւաքէր իր շուրջը հայ լայն գանգաձմերը, կը լինէր առանցքը նոր կերտող հոգեւոր միութեան եւ այդ ձեւով կը փրկւէր հիմքը: Հայ Արչակունիները պետականացրին քրիստոնէութիւնը, նրանց այդ էլ պէտք էր, սակայն, այդ քիչ էր - քիչ էր եւ արտաքին վտանգին դէմ պատնէչ ունենալու տեսակետից, քիչ էր եւ կրօնը հայկական դարձնելու համար: Եթէ հայութեան քրիստոնէացումը այդ աստիճանի վրա կանգ առնէր, նա ոչ մէկ հիմք կունենար ապրելու: Քրիստոնէութիւնը պիտի ազգայնանար, այսինքն տեղ գրաւէր հայի հոգեկան կեանքում, լինէր կիզաբեռն պետականացումը հայ քաղաքական ղեկավարների գործն էր, կէտը նրա գործի, մտածութեան եւ գգացումի: Եթէ քրիստոնէության նրա ազգայնացումը հայ հոգեւորական-մտաւորականութեան գործը պիտի լինէր: Բայց այդ մեծ գործը կարելի էր կատարել միայն հայ լեզուի միջոցով:

Հայ լեզուն էլ հիմք կարող էր լինել նոր ազգայնութեան, եթէ նա դառնար գրի, գրականութեան լեզու: Այդ արտօնութիւնը ունէին մեզ մօտ յոյն եւ ասորի լեզուները, ուստի եւ հայ լեզուն նրանց հան-

դէպ ստորագրաւ էր. պէտք էր բարձրացնել մեր լեզուն մարդկային լուսագոյն յոյզերը եւ մտքերը քարգմանելու աստիճանին: Գիր ունեցող հայ լեզուի վրա միայն կարող էր կառուցւել քրիստոնէութիւնը: Այս նշանակում է, թէ լեզուի տեսակետից նա պիտի ազգայնանար, դուրս ձգէր յոյն եւ ասորի միջազգայնացած լեզուները, որպէս ներքին հոգեւոր հաղորդակցութեան միջոց եւ բռնէր նրանց տեղը: Օտար լեզուները պիտի լինէին հայ մտաւորականի համար օժանդակ լեզուներ՝ վերահասու լինելու ժամանակի բարձր մշակոյթի պտուղներին:


Լեզուի եւ կրօնի ազգայնացման այս գործը սկսւել էր Արեւելքում շատ առաջ: Նա հանդէս էր դալիս որպէս դաւանական վէճ՝ աթոռների առաջնութեան պայքար, որոնց հետեւանքով՝ Մերձաւոր Արեւելքում քրիստոնէութիւնը շատ վաղ ազգայնացաւ կազմակերպւելով տեղական եկեղեցիներ՝ սիրիական, ղապական, յունական լեզուներով: Հայ եկեղեցու ազգայնացումը եւ հայ լեզուի եկեղեցականացումը այդ ընդհանուր երեւոյթի մէկ արտայայտութիւնն էր: Չորրորդ դարի վերջերից մեր լուսավորչի մտածողները, հոգեւոր եւ աշխարհիկ ղեկավարները զգում են հայ գրի կարիքը եւ իրենց ուժերը նւիրում՝ նրա բաւարարումին: Գիրը մէկ հանրային անհրաժեշտութիւն էր, որովհետեւ հինգերորդ դարի սկզբին հայութիւնը նոյնքան անապահով էր իր պատմամշակութային զարգացման մէջ, որքան չորրորդ դարի սկզբին: Այս անգամ վտանգը գալիս էր յունահռոմէական աշխարհից, որ դառնում էր Բիւզանդիոն, իւրացրել էր քրիստոնէութիւնը, պատրաստել էր այն յունական մշակոյթի վրա, տւել էր նրան իր լեզուն, որը կրօնի միջոցով դարձել էր համաշխարհային, միջազգային լեզու, նոյնացել էր քրիստոնէական արժէքների տարածման հետ: Քրիստոնէութիւնն ինքը Բիւզանդիոնում պահում էր ազգային բնոյթ, յունականանում էր. կայսրներն էին հրաւիրում տիեզերական ժողովները, նրանք էին քրիստոնէայ եկեղեցու պետերը: Աշխարհիկ իշխանութիւնն էր որոշում արեւելեան քրիստոնէութեան դաւանանքը: Յոյն լեզուի, դաւանանքի միջոցով, Բիւզանդիոնի ազդեցութիւնը տարածւում էր իր քաղաքական սահմաններից դուրս:

Չպէտք է մոռանալ որ չորրորդ դարի վերջին տեղի ունեցաւ մեր պատմութեան մեծագոյն դէպքերից մէկը: Պարսկաստանը եւ Բիւզանդիոնը փոխադարձ համաձայնութեամբ Հայաստանը բաժանեցին իրենց մէջ, ըստ որում մեծագոյն մասը՝ քաղաքական եւ կրօնական կենտրոնով մնաց Պարսկաստանին: Արեւելքում երկու նախադրական պետութեանց մէջ խաղաղութիւնը պիտի վերահաստատուէր ի հաշիւ Հայաստանի: Մեր մտածողները այլեւս հայ քաղաքական

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԿԱԶԱՆՁԵԱՆ

ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆ ՄԸ ՀՈՈՄԻ Ս. ՊԵՏՐՈՍ ԵՒ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ Ս. ՀՈՒՓՍԻՄԵ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՆ ՅԱՏԱԿԱԳԻԾԵՐՈՒ ՄԻՋԵԻ

Վաղարշապատի Ս. Հռիփսիմէի տաճարը Հայաստանի հնագոյն կոթողներէն մէկն է: Ազաթանդեղոս կը վկայէ որ ան հիմնաւած է նոյնինքն Ս. Գրիգոր Լուսաւորիչէն, Սրբուհիին եւ իր 32 ընկերուհիներու նահատակած տեղոյն վրայ: Յ18ին Կոմիտաս Կաթողիկոսը հիմնովին վերաշինել կուտայ տաճարը, փոխելով նախորդին յատակադիւծը, որ անշուշտ այն կարեւորութիւնը չունէր ինչ որ կը ներկայացնէ Կոմիտասեան շէնքը:




Նկար 1.— Ս. ՀՈՒՓՍԻՄԵԻ ՏԱՃԱՐԻՆ ՅԱՏԱԿԱԳԻԾԸ:

Կարգ մը հեղինակներ կը կասկածին այս թւականին վրայ, Ս. Հռիփսիմէի վերաշինութիւնը տանելով Ցրդ դարուն: Անոնց պատ-

ճառարանութիւնն այն է, որ այդ շէնքը շատ կատարելատիպ է 7-րդ դարուն համար: Սակայն այս առարկութիւնները անգոր են պատմական անժխտելի փաստերու առջեւ:

Ս. Հռիփսիմէի տաճարը որոշ նմանութիւններ ունի Հռովմի Ս. Պետրոսի տաճարին հետ, որ հիմնաւած է Կոստանդին կայսեր հրամանաւ, առաքելոյն նահատակած տեղը:



Նկար 2.— ՀՈՒՓՍԻ Ս. ՊԵՏՐՈՍ ՏԱՃԱՐԻՆ ՅԱՏԱԿԱԳԻԾԸ:



Միջնաբերդի յատակագծի այն մասերը որ իրագործուած են այժմեան տաճարին մէջ:
Միջնաբերդի չիրականացած գիծերը:
Յաւելումները որ ուրիշ նարտարապետներու կողմէ աւելցուած են Միջնաբերդի յատակագծին:

15-րդ դարուն տաճարը խարխուլ վիճակի մատնաւ ըլլալով, կը ձեռնարկուի իր վերաշինութեանը: Իտալական վերածնունդի մեծագոյն հեղինակները կը մասնակցին այդ գործին. սակայն վճռական դերը կը կատարէ Միքել Անճելօն:

Առաջին ակնարկին իսկ Ս. Հռիփսիմէի եւ Ս. Պետրոսի տաճարներու յատկազօծերուն՝ երեւան կը բերէ տարօրինակ նմանութիւններ։ Երկուքին ալ հիմնական գիծերու մէջ կը նկատուի յունական խաչը եւ քառանկիւն մը։ Սակայն մինչդեռ Ս. Հռիփսիմէի խաչը պարփակուած է քառանկիւնի մէջ, որ հայկական եկեղեցիներու մէջ ընդհանուր երեւոյթ մըն է, — բացառութիւն կը կազմէ Էջմիածնայ վանքը, — Ս. Պետրոսի քառանկիւնը եւ խաչը զիրար կը կտրեն (Տես նկար 3 եւ 4)։




Նկար 3.— Ս. ՀՐԻՓՍԻՄԷԻ ՏԱՃԱՐԻ ՍԿԵՄԱՆ։ Նկար 4.— ՀՐԻՓՍԻՄԷԻ Ս. ՊԵՏՐՈՍԻ ՍԿԵՄԱՆ։

Երկուքն ալ կեդրոնական վայր (ambiente) մը ունին ծածկուած զմբէթներով, եւ չորս երկրորդական վայրեր։ Վերջիններս Ս. Հռիփսիմէի մէջ ծածկուած են երդիքով, իսկ Ս. Պետրոսի տաճարի մէջ՝ զմբէթներով։ Ասկէ զատ երկուքն ալ ունին չորսական abside —ներ։

Էական տարբերութիւնը կը կայանայ Ս. Պետրոսի զմբէթին մէջ, որ չորս առանձին մոյթերու (pilastro) վրայ կը հանգչի, մինչդեռ Ս. Հռիփսիմէի զմբէթը միանգամայն ինքնայատուկ հիմնածք ունի։ Ան կը ծանրանայ տաճարին պատերուն վրա, որոնք հակընդդէմ ուղ-

ղութիւն ունին զմբէթի շրջագծին եւ միացած են իրար հետ չորս երկրորդական կամարներով։ (Տես նկար 5)։



Նկար 5.— Ս. ՀՐԻՓՍԻՄԷԻ ՏԱՃԱՐԻՆ ԿՏՐՈՒԱԾՔԸ, ՈՐ ԿԸ ՅՈՒՅՆԷ ՇԻՆՈՒԹԵԱՆ ՆԵՐՍԻ ՄԱՍԸ։

Մեր մատնանշած նմանութիւնները կը վերաբերին միայն յատկազօծերուն։ Այլապէս Ս. Պետրոսի զմբէթը, որ 42 մէթր տրա-

մագիծ ունի, թեքնիքական շատ աւելի մեծ բարդութիւններ կը ներկայացնէ, քան 11 մէթր տրամագիծ ունեցող դմբէթը Ս. Հռիփսիմէի տաճարին մէջ:

Եթէ ուզէինք մեր համեմատութիւնները քիչ մըն ալ առաջ տանիլ, պիտի ըսէինք.— Եթէ Միքէլանճելօի ծրագրած տաճարը, 137,50 մէթր երկայնութեամբ, կը ներկայանայ իբրեւ ճարտարապետական հսկայ կոթող մը, Կոմիտասեան Ս. Հռիփսիմէն, չնայելով իր պղծտիկութեանը, (ան հազիւ 20 մէթր երկայնութիւն ունի), կը հանդիսանայ արեւստի ամենամաքուր արտայայտութիւն մը իր չափերու ներդաշնակութեամբ:

Ասոր վրա կաւեւնայ հետեւեալ պարագան: Տաճարին դերն է հաւատացեալները ժողովել իր մէջ եւ անոնց հնարաւորութիւն տալ տեսնելու կրօնական արարողութիւնները, որ կը կատարւին Ս. Սեղանին վրա: Ասկէ կը հետեւի, որ տաճար մը իր իդէալական նըպատակին կը համապատասխանէ այն չափով, ինչ չափով որ անոր մէջ քիչ է այն տարածութիւնը, ուրկէ Ս. Սեղանը չի տեսնուիր: Եւ այս նպատակաւ է, որ Ս. Սեղանը բարձր տեղ կը զետեղւի:

Սակայն չինական պատճառներով տաճարներուն եւ եկեղեցիներուն մէջ կը կազմւին մեռած անկիւններ, ուր դռնուղը, մասամբ կամ ամենեւին չի տեսնուիր Ս. Սեղանը: Այս անպատեհութիւնը առաջ կուգայ սիւներու, մոյթերու եւ պատերու դասաւորումէն:

Այս տեսակէտէն զանազան եկեղեցիներ իրարու հետ բաղդատելու համար, կարելի է դիմել հետեւեալ միջոցին. կազմել իւրաքանչիւր եկեղեցիի համար նպատակաւորութեան աստիճանը, եւ իւրար հետ բաղդատել:

Եթէ եկեղեցիի մը այն մակարդակը, որ վերապահած է ժողովուրդին, համարենք Մ. (մակարդակ), այն մասը, ուրկէ տեսանելի է Ս. Սեղանը, համարենք Տ. (տեսանելի), իսկ անոր կառուցւածքի նպատակաւորութեան աստիճանը համարենք Ա. (աստիճան), կառուցւածքի նպատակաւորութիւնը, իւրաքանչիւր եկեղեցիի համար, կարտայայտւի $A = \frac{S}{V}$ յարաբերութեամբ: Այս համեմատութեան մէջ Ա. մէկէն պակաս է կամ առ առաւելն 1-ի հաւասար: Երբ 1-ի հաւասար է, կը նշանակէ թէ կառուցւածքը իր նպատակաւորութեան ամենակատարեալ ձեւը կը ներկայացնէ:

Ըստ ինքեան հասկանալի է, որ բաղդատութիւնը արժէքաւոր կըլլայ երբ ան տեղի ունենայ նմատիպ ճարտարապետական կառուցւածք ունեցող շէնքերու միջեւ, այսինքն երբ basilicale շէնքերը կը բաղդատւին իրարու հետ, termale շէնքերը իրար հետ, եւ այլն:

Այս պարագան աչքի առաջ ունենալով, բաղդատութեան դնենք Ս. Հռիփսիմէի տաճարը իր տիպի քանի մը ուրիշ շինութիւններու հետ, անոր նպատակաւորութեան աստիճանը ցցուն կերպով ի յայտ բերելու համար:

Ս. Հռիփսիմէի	տաճարի աստիճանն է	Ա = 0,89
Տիկորի	»	Ա = 0,82
Ս. Գայիանէի	»	Ա = 0,57
Հռովմի Ս. Պետրոսի	»	Ա = 0,64

Այս թիւերը շատ աւելի պերճախօս են քան ո եւ է ջատագովութիւն:

Ս. Հռիփսիմէի եւ Հռովմի Ս. Պետրոսի տաճարներու միջեւ գոյութիւն ունեցող նմանութիւններէն հետեւցնելու չէ անշուշտ, որ Միքէլանճելօն Հայաստանէն է առած իր ներշնչումը, բայց գոհութեամբ եւ հպարտութեամբ կրնայ լեցւիլ հայու մը սիրտը, մտածելով որ մեր նախնիքները աշխարհիս ամենամեծ հանձարներէն մէկուն յղացումը ի դործ դրած են, թէեւ փոքր համեմատութիւններով, դրեթէ հազար տարիներ անկէ առաջ:

ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՒ ՏԱՐՈՆԻ ԱՇԽԱՐՀԸ

IX

ՓՐԿՈՒԹԵԱՆ ՍՊԱՍՈՒՄՆԵՐՈՒ ԶԱՐՀՈՒՐԱՆՔԸ

Նոյն օրը, երբ մենք ցաք-ցրիւ կը նահանջէինք դէպի Քան լեռան դադաթը, Սասունի յարձակումը սկսած էր: Թնդանօթներու որոտը շատ որոշ կը հասնէր մեզի, որ շարունակուեցաւ երկար ատեն՝ մեր Քան եղած միջոցին: Հարց ծաղեցաւ շատերու մէջ թէ՛ կրնայինք ունէ օգնութիւն հասցնել պաշարւողներուն. բայց ինչո՞վ կամ ի՞նչ ուժերով. որո՞ւ ձգել մեր շուրջը վստացող սարսափահար ժողովուրդը: Պարզ էր, որ բացարձակ անգոր էինք բան մը ընելու, սակայն կարիքն ունէինք մեր խիղճերու հանգստութեան համար, բարձրաձայն արտայայտել, մեր պատրաստակամութիւնը յայտնել իրարու . . . : Ի հարկէ, եթէ ունենայինք գէթ 50 հոգի փորձեալ ազատ մարտիկներ, կրնայինք անհանգստացնել պաշարող թշնամին՝ անոր թիկունքը վտանգելով: Բայց այդ մարտիկներն ուրկէ՞ կրնայինք առնել:

Երկար ատեն ոչ մէկ լուր ունէինք Սասունի կռիւներէն եւ անոնց հետեւանքներէն: Բաւական ժամանակ անցնելէ յետոյ միայն, օր մը լուր հասաւ մեզի, որ Աւրանայ մեր հին հայդուկ Արամը զարնւած է, Քանէն դէպի հարաւ, լեռնաշղթայի մը վրա բնակող քիւրտ գիւղացիներէ: Ենթադրեցինք, որ մերիկները պարտուած են ուրեմն, քանի որ Արամի պէս կարեւոր ուժի մը զարնելը մեր լեռան մօտ ցոյց կուտար, որ ժողովուրդը փախուստի դիմած է:

Մուշէն ալ լուր չունէինք, երբ գիշեր մը ահա այնտեղէն ալ երեւցան չարագուշակ բաներները: Խումբ մըն էր յոգնած, պատառուտած ու անհունօրէն վշտաբեկ: Մեր մօտիկ ընկերներն էին, որոնք Մուշի ժողովուրդին հետ ութ օրէ աւելի չէին կրցած դիմանալ

ղօրքի եւ քիւրտերու գրոհին ու ոմբակոծման եւ տեղի էի տւած: Կը պատմէին Կօտոյի Հաջիի հերոսական կռիւը իր տունէն: Թշնամին երկար դադեցնելէ ետքը, երբ կը տեսնայ, որ ռազմաթերթը ըստ պառեցաւ, տունը կրակի կուտայ, կինը կը գնդակահարէ, ու ինքն ալ, ամհահ առիւծի մը պէս մռնչելով, կիցնայ իւր վերջին գնդակէն: Կը պատմէին հերոսական հաղագիւտ դրւագներու մասին, կատարւած նաեւ ուրիշներու կողմէ, որոնցմէ անկարելի էր ակնկալել նման բան մը: Այս ամենը, սակայն, անգոր էին փրկել ժողովուրդը, որը ի վերջոյ տուներու մէջ ողջ կայրւի, իսկ ռազմաթիւ կիներ ու աղջիկներ բորենիներու ճանկերուն կը յանձնուին . . .

Պատմեցին նաեւ Վարդան Վարդապետի, Նազարէթ Էֆ.ի, Համադասի, երկու Արշակներու, Յարութիւնի եւ ուրիշ ընտիր մտաւորական եւ հասարակական դէմքերու մասին, որոնց հաւաքած, իրարու կապած եւ սուրիներու տակ՝ Խաս-Գիւղէն առաջնորդած ու հոն գնդակահարած կամ ողջ ողջ այրած են:

Աղատուած ընկերները, բոլորն յուզմունքով եւ խոր կսկիծով, իրենց դատնութիւնը կը թափէին իմ եւ, մասնաւորապէս, Սասունի ընկերներու դէմ: Պէտք էր որ ես Մուշէն հեռանայի. գինւորական ուժ մը չէի, բայց բարոյական հեղինակութիւն մըն էի, իբր յեղափոխական գործիչ. կրնայի համախումբ պահել իրենց ուժերը եւ Կօտոյի Հաջիի հետ յաջողութեամբ կազմակերպել դիմադրութիւնը. պէտք էր որ լսէի Սասունի ընկերներու յամառ պահանջը եւ հեռանայի Մուշէն . . . : Այսպէս կը խօսէին ինծի արիւնի եւ բոցերու մէջէն հրաշքով աղատուած այդ քաջերը: Ու ես դիւրիս հակած, խղճահար տկարութեամբ կը զղայի որ, այդ դատապարտութիւնը իրաւացի էր:

Եկողներու մէջէն կը յիշեմ Գաւառեան (Լօլոյի) Տիգրանը, Կօն-տուբաճի Արմենակը, սարաջ եւ դերձակ Յարօնները, Տէր-Չաքարեանը, ուսուցիչ Կոնջոյեան Յոհաննէսը եւ բանակէն այդ օրերը փախած հայ սպա մը՝ Միսաքը (աղգանունը մոռցած եմ):

Անոնք էին որ աւելի մանրամասն եւ ճշգրիտ պատկերացուցին պաշտի ահաւոր ջարդը:

Դիմադրութիւն ցոյց տւած են գլխաւորապէս այն դիւղերը, ուր եղեր էին հայդուկներ, զորօրինակ՝ Աւրանը, Գոմսը, Աղաճանը, Յրօնը, Ղզլաղաջը, Գառնին, Վարդենիսը եւ ուրիշ գիւղեր:

Այս տեղերէն էին, որ քանի մը օրէն երեւցան, չըմբռնուող անհատ փրկւածներ, որոնք կորսնցուցած ամէն ինչ՝ ուրա-կաններու երեւոյթն ունէին:

Իսկ Սասունը ըստ երեւոյթին դեռ ընկճւած չէր բոլորովին: Օր

մը մեզի եկաւ Պուլանդի Մարտիրոս Վարժապետը. օգնութիւն կուգէր. հեղնանք էր կարծես: Թուփերու մէջ հաւաքեցանք, մըտածելու այդ մասին. 8-10 հոգի կը կարծեմ հաղիւ յաջողեցաւ տանիլ իր հետ. աւելորդ էր ի հարկէ, որովհետեւ ճամբան անոնցմէ մեծ մասը ջարդեցաւ, Վարժապետն ալ վերադարձաւ մեր քով:

Օրէ օր կեանքը լեւան ծերայերու մէջ այլեւս անհանդուրժելի կը դառնար: Ժողովուրդը համախուժւած էր ապրելու. ցրեալ էր սար ու ձոր: Ամէն օր կը փոխէինք տեղերնիս: Լեռը ծածկեալ էր տեղ-տեղ մարդահասակ թուփերով. անոնց եւ մեծ ժայռերու խռոչներու մէջ կը պատսպարէինք, որովհետեւ դրեթէ ամէն օր, արշալոյսը բացելուն հետ, մեր լեռները կը պաշարէին Մուսա բէկի աշխրէթներով, որոնք լաշն շրջանակներով շուրջկալ կը կազմակերպէին եւ անընդհատ համազարկեր կը տեղացնէին թիւումներու ուղղութեամբ: Աննպատակ էր այդ, որովհետեւ դիւերները մեր ժողովուրդը ան խոհեմաբար խաբույկեր կը վառէր այս ու այն կողմ՝ արտերէ բերած ցորենը խաբկելու կամ ոմանք՝ իրենց խնայած իւղով եփելու կամ հատիկ շինելու: Գիւրտերը կը դիտէին կրակի վայրերը եւ արշալոյսին այդ կէտերը կը պաշարէին: Մենք ալ, երբ իրիկունները կանցընէինք այդ անտառիկներու եւ ծերայերու մէջէն, կը տեսնէինք մեր շուրջը տասնեակներով հայերու դիակներ, ընկած իրենց օջախներու քով, որոնց վրայի ցնցոտիներն իսկ կողոպտեր էին քիւրտերը:

Մտեղէնի դոյութիւնը մոռցած էինք բոլորովին, ինչպէս նաեւ կաթնեղէնի կամ հացի: Այդ ամենը դեռ հանդուրժելի էին, բայց վերջացած էր նաեւ աղը եւ այդ էր սարսափելին: Գարշահոտած էինք ու հիւանդ ամենքս. մեր բերանը եւ ակոսները այլեւս անօր էին չոր դարի փշրելու եւ ծամելու. այլ անունդ չունէինք: Աղբիւրի պէս բան մը կար փոքրիկ շիթով՝ բայց ո՛ր մէկուն բաւարարէր. կռիւ կատղած ամբոխի, սափորակուի՝ ջուրին չուրջ:

Ամենքը ցրեցան. 8-10 հոգիով մնացի այլեւս: Ժողովուրդը կը հաւէր ամենօրեայ մասնակի ջարդերէ եւ հիւանդութիւններէ: Այդ պայմաններուն մէջ ո՛վ կը մտածէր ուժերու ամփոփման կամ ոեւ է նպատակի համար զանոնք կազմակերպելու մասին: Ամենքը զարհուրելիօրէն յուսահատ՝ անձնական կեանքի պահպանման միջոցներ կը փնտռէին ամէն գնով:

Օգոստոսի մէջ էր կարծեմ, երբ օր մը Քանի լեռը եկան յանկարծ Վարդենիս գիւղի մեր կարեւոր ընկերներէն Մարտիրոսը եւ Յարութիւնը: Ըսին թէ եկած են խորհուրդ ընելու Վարդենիսի շամ-

փերու (եղեղնուտ) մէջ ապաստանած ժողովուրդի փրկութեան մասին: Կուգէին իմանալ, թէ պէտք է Քան գան եւ մեզի միանան, եթէ ոչ փորձէին անցնիլ դէպի ուսական բանակը, որ, իրենց ըսելով, հեռու չալտի ըլլար իրենցմէ:

Ի հարկէ խորհուրդ չուէինք անցնիլ 40 քիլոմետր մուհաճիւրներու շրջաններու մէջէն Քան հասնելու համար, քանի որ մեր վիճակը շատ աւելի ծանր էր. թելադրեցինք իրենց որ փորձեն նախ կապիլ ուսական բանակին հետ, ապա անոնց պաշտպանութեան տակ, ժողովուրդը փոխադրեն անոնց կողմը:

Լաթի մը վրայ նամակ մը պատրաստեցի ուսական բանակի յառաջադաս հայ կամաւորական դունդերուն ուղղւած, աղբիւրով որ ժամ առաջ քանի մը հարիւրեակ ձիաւոր ուժեր զրկեն դռնէ մինչեւ Մեղրադէտ, նախապէս խաբույկներու միջոցով մեզ նշան տալով: Այդ պարագային, մեր պաշտպանութեան տակ, լեռներէն կ'իջեցնէինք ցրեալ ժողովուրդը եւ մուհաճիւրներու մէջէն, թէեւ դոհերով, կըրոնայինք հասնիլ մեր կամաւորներուն:

Վարդենիսի երկու ընկերներն ալ հեռացան մեր փրկութեան յոյսերու թելը իրենց հետ տանելով:

Երկար՝ երկար՝ օրեր, արշալոյսէն մինչեւ վերջալոյս, դիտակոհ հանդիպակաց լեռնաշղթաներուն ուղղած ոեւէ նշանի կը սպասէի...: Օր մը միայն արշալոյսին, նամարեցի, որ Նեմրութի քովէն, Ախլաթէն դէպի դաշտ, կ'իջնէին անընդհատ ահագին փոշիի ամպեր. ուսական զօ՞րքն էր, արդեօք: Հոգեկան աննկարագրելի ուրախութեան, սպասումի եւ յուսախաբութիւններու շատ վայրկեաններ ապրեցանք: Բայց երբ իջած էին լեռներէն, այդ ատեն կըրցանք հաստատել, որ անոնք ուսական բանակին առջեւէն հայածական քիւրտեր էին իրենց սայլերով ու հօտերով, որ սարսափահար աղաղութեամբ կը լեցնէին Մշոյ դաշտը: Այդ ալ կը մխիթարէր եւ յոյս կը ներշնչէր մեզի. կը խորհէինք, թէ ուսական բանակը, ուրեմն, հեռու չէ Ախլաթէն եւ մեր սուրհանդակները կրնան հասիլ մեր կամաւորներուն: Այս անուշ յոյսերով ապրեցանք շաբթ մը օրեր: Մեր յոյսը աւելի թափ առաւ, երբ դիտեցինք Գրգուռ լեռան կրծքին ծուխի ահագին քուլաները. երբ դիտեցինք Գրգուռ լեռի վրայի Գրգուռ հատած էինք, հոն գիւղ մըն էր որ կայրէր: Շատ յետոյ երբ Կովկաս հասած էինք, հոն հասկացանք, որ Վարդենիսի ժողովուրդը, մեր հիշատուրց քաջարի Հասարթի առաջնորդութեամբ, եղեղնուտներէն ելեր եւ անմիտանդ հասեր էր ուսական բանակին: Անդրանիկն է ընդունելը գիրենք: Հասեր էր ուսական բանակին: Անդրանիկն է ընդունելը գիրենք: Կարդացեր է մեր նամակը եւ լսեր մեր վիճակի մասին անոնց բերա-

լեւա չէինք կրնար ծածկել թշնամիներու աչքէն: Կեանքը այնուհետեւ ալ աւելի անտանելի դարձաւ: Մեր ընկերներու մէջ իսկ անհատապէս իրենք զիրենք միայն ազատելու զգացումներ արթնցան եւ միաժամանակ նեղսրտութիւն, կասկած՝ միմիանց հանդէպ: Այդ տեսակէտէն Պօլէի Արշակը (Մճոյի եղբայրը) շատ կը կասկածէր ինծի հետ եղող ընկերներու կողմէ: Կըսէին թէ դաւ մը կը նիւթէ մեզի դէմ: Թէ ինչո՞ւ եւ ի՞նչպէս, չկրցայ հասկնալ: Միայն երբ կը հանդիպէինք իրեն, ժանտ դէմքով եւ թշնամական հայեացքով կը դիտէր իր մօտիկ ընկերները:

Այս մթնոլորտի մէջ, ամենքիս միտքը աւելի տենդագին կաշխատէր. ճար մը գտնել աղտաւելու համար դժոխային կեանքէն: Ոչ մէկ փրկութիւն կար այդ վիճակին մէջ մնալէն: Պէտք էր ուրեմն վերջին ճիգ մը գործ դնել՝ հասնելու ուսումական բանակին: Այս էր ահա մեր բոլորիս մտածումը: Բայց ատիկա անկարելի կը համարուէր: Ի՞նչ պիտի ընէինք մեզի հետ եղած ահագին թուով կիներն ու երեխաները: Այս մտահոգութիւններուն շատ անգամ կը պատասխանէին՝ «Կի՛ն ու երեխայ միշտ կարելի է ունենալ. տղամարդն է որ պէտք է ողջ մնայ, տան օջախը ան պիտի պահէ»՝ այսպէս կը դատէին անոնք: Ու իրարմէ գաղտնի, սահմանը անցնելու պատրաստութիւններ կը տեսնէին՝ առաջնորդներ, ուղեկիցներ կորոյչէին եւ պաշար կը պատրաստէին: Զիս չըջապատող ընկերներէ ոմանք նոյնպէս կաշխատէին այդ ուղղութեամբ եւ միշտ ի հարկէ իրարմէ գաղտնի: Անտարբեր էի դարձած բոլորովին այդ ամենի հանդէպ. ինծի անկարելի կը թւէր հասնիլ անվտանգ ուսումական բանակը, իսկ մեռնիլ ճամբան թէ հոս՝ լեռներու մէջ՝ միեւնոյնը չէ՞ր:

Սեպտեմբերը կը մօտենար եւ ցրտերը սկսած էին: Քարայրի մը մէջ կարճ ժամանակ մը անցուցինք հիւանդ ընկերոջ մը քով, բայց մուհաճիք քիւրտերը հոն ալ փորձեր էին բարձրանալ: Թէեւ փախցուցինք մեր գնդակներով, բայց ստիպւեցանք թողուլ այդ քարայրն ալ:

Անցանք Մառնիկա սարերը: Հոն պիտի հաւաքէինք սահմանն անցնելու նախապատրաստութիւններուն համար:

Գիշերը իջնելուն պէս, Քանի ձորերով սկսանք յառաջանալ դէպի որոշւած հաւաքատեղին: Երբ ձորի խորքը իջած, կուգէինք բարձրանալ լեռան հետեւեալ թեւի վրա, եւ կանցնէինք աւերակ դոմի մը մօտէն, յանկարծ լսեցինք խուլ-աղերսական ու կից-կտուր ձայն մը: Նախ կարծեցինք թէ քիւրտերը թակարդ են լարած մեզի

եւ շղթայի մը ձեւով շարքը երկարեցինք, ու ապա մեզմէ երկու հոգի, խիստ զգոյշ մօտեցան դոմին: Մարող ձայնը կը շարունակէր իր աղերսը հայերէն լեզուով: Պաշարեցինք դոմը, քանի մը հոգի ներս մտան եւ մոմի կտոր մը վառեցին. ցեխոտ յատակին վրա փռւած էր Աւրանայ Արամը . . . : Վիրաւորւած քիւրտերէն, մեր անվեհեր հայդուկը, քալելով կամ սողալով, ահագին ճամբայ էր կտրած, ծածկ մը գտնելու համար եւ միշտ այն յոյսով որ թափառող հայերէն մէկը կրնար այդ կողմերէն անցնիլ ու զինքը գտնել: Երկու վէրք ունէր, մէկը ուսին եւ միւսը՝ կուրծքին: Վէրքերը լայնաբերան էին եւ խոր. անոնց մէջ կոյտերով որդեր կը վխտային . . . Ճանչցաւ մեզ ու լացաւ: Կարծես սրբազան խորանի մը առջեւ՝ լուռ ու մունջ խոնարհած էինք մեր նահատակին դիմաց, որ անտրտունջ մահաւաճ կը սպասէր եւ կարծես երջանիկ էր որ չըջապատւած է իր ընկերներով: Երկար նայեցաւ մեզի կիսախաւարի մէջ վառող իր բոսորային աչքերով տւ մըմնջաց. «Իմ բանս վերջացած է. մի թողնէք զիս այսպէս, սպաննեցէ՛ք ձեր ձեռքով . . .»: Սարսուցինք: Ո՞վ էր որ ձեռք պիտի վերցնէր այս նւիրական կեանքին վրա:

Դուրս եկանք: Կծկւեցանք դոմի դրան քով դարհուրանքով, մոտ-թին մէջ թագնելով մեր հայեացքները, լուռ եւ մահաւան պէս տըխուր: Մեր շարքերէն առաջ եկաւ Արամի փեսան, թրքական նախկին զինուոր, փողաճար Վահանը ու ըսաւ. «Ինծի կիսնայ ազատել Արամը իր տառապանքէն»: Մտաւ ներս: Լսեցինք որ շինջաց Արամին. «Հալալ էրէ ինծի, իմ աղիզ ախպէրս» . . . Տասնոցի երեք հարւած. վերջացաւ . . . Մարմինը ամփոփեցինք դոմի պատին տակ մեր փորած գերեզմանին մէջ ու հեռացանք գլխիկոր: Այսպէս մեռաւ Տարօնի Արամը:

Մեր համախմբման արդիւնքն այն եղաւ, որ Մարտիրոս վարժապետի խումբը մեկնեցաւ դէպի ուսումական բանակ: Նոր յոյս մըն ալ անոր կապեցինք եւ անցանք Շիխձոր: Խոր ձոր մըն էր դէպի Սասուն տանող, որուն յատակը շատ փոքր ու նեղ պուրակ մը կար: Հոն մըտանք եւ չորցած առուի մը մէջ պառկեցանք՝ յոգնաբեկ ու ջախջախւած: Երկիւղի ու վտանգի գաղափարը կորսնցուցած էինք. մեքենայական էին մեր շարժումները, մեքենայական էին եւ մեր միտքերը, որ այլեւս չէին աշխատէր: Գիշերաշրջիկներու նման յամր եւ արձաններու պէս անզգայ ու անտարբեր էինք:

Յորեկ էր, երբ բազմաթիւ հրացաններու որոտը արթնցուց մեզ: Հաշիւ չը տւինք, թէ տուրկ էր, մինչեւ որ գնդակները սկսեցին ծեծել մեր քովերը: Մատնւած էինք, յարձակու՞մ մըն էր, թէ՞ քիւրտերը


զնդակներով կը խուզարկէին պուրակը: Հրաշք էր, որ ոչ մէկիս չի դպաւ տասնեակներով արձակած զնդակներէն եւ ոչ մէկը: Մեր կողմէ՝ ո՛չ մէկ ձայն: Տաս րոպէ հազիւ տեւեց ու ձայները լռեցին: Այդ ատենն էր որ միջոց ունեցանք վեր նայելու: Լեռներու թեւերով ձորը կիջնէր քիւրտերու երկար շարան մը, բայց մեզմէ հեռու էին եւ վտանգը անցած էր:

Գիշերը, երբ թողինք պուրակը եւ բարձրացանք լեռան թեւերուն վրա, հանդիպեցանք Սասունէն եկած երկու երիտասարդներու. սուրհանդակներ էին Ռուբէնէն ղրկւած: Երկրորդ անգամն էր որ կուգային մեզ փնտռելու: Ռուբէնը կը հարցնէր թէ ո՞րջ ենք. եւ կուգէր իմանալ թէ կրնա՞յ մեր քովը իջնել: Սուրհանդակները պատմեցին, որ Սասունի ջարդէն վերջ, Ռուբէնը Փեթարի Մանուկի, Ախոյի, Զոլոյի, Մուշեղի եւ ուրիշ մէկ քանիներու հետ պահուեր է քարանձաւներու մէջ, բայց անկարելի է հոն աւելի երկար մնալ. քիւրտերը որսկան շներու պէս ամէն քար կը հոտոտեն:

Գրեցի որ վան: Քանի մը օրէն եկան անոնք՝ բզբուած ու տառապած:

(Շարունակելի)

Փարիզ



ՓԱՅԼԱԿ ՍԱՆԱՍԱՐ

ԹՈՒՐԿԻԱՅԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Օսմանեան պետութեան ծագումը, զարգացումը եւ մանաւանդ նրկարատեւ գոյութիւնը պատմութեան տարօրինակ երեւոյթներէ մէկը կը կազմէ: Երեւակայել քանակով ու որակով տկար ցեղ մը, որպիսին էր Օսմանցի թուրքերուն ցեղը, որ կըրցաւ Եւրոպայի քթին տակը, անոր կուրծքին վրա իսկ ստեղծել աւատապետական յարատեւ կայսրութիւն մը ու տիրապետել երկար ատեն, նոյն իսկ իրաւնդ մարդ նկատուելէ վերջն ալ, ոգիով, մշակոյթով, թիւով իրմէ դերազանց տարբերու վրա:

Տիրող կարծիքը այն եղած է թէ թուրք ցեղը այս յաջողութիւնը կը պարտի իր մարտական — զինւորական ուժին, իր յանոունը ուղմաւորութեան, մէկ խօսքով առնական իր յատկութիւններուն:

Այս կարծիքը ճշմարտանման ըլլալով հանդերձ, միակողմանի ըլլալէ չի դադրիր ու պէտք ունի լուրջ վերադնահատութեան մը:

Արդարեւ, պատմական բարդ դէպքերու նորագոյն հետազոտութիւնները մեզ կը տանին տարբեր եզրակացութեան մը. այն՝ թէ օսմանցի թուրքերը իրենց անօրինակ ճակատագիրը, իրենց խելացնոր վերելքը ու յետոյ իրենց քաշքշուք բայց յամառ գոյութիւնը կը պարտին, իրենց սեփական արժանիքներէն աւելի ներքին ու արտաքին թոյլատու պարագաներու մեղսակցութեան: Եւ իրենք չէ որ գիտակցաբար ջանացեր են օգտուիլ այդ նպաստաւոր պարագաներէն: Ընդհակառակը: Գրեթէ իրենց կամքէն անկախ, այդ օժանդակ ազդակները եկած են դասաւորելու թուրքին շուրջը, զինքը մղած, զինքը հովանաւորած են. երբեմն զինքը փրկած են ստոյգ մահէ: Իր պատմութեան որոշ պահերուն, թուրքիան նմանած է կիսախարխուլ տան մը, որ հակառակ ամէն հաւանականութեան, կանգուն մնացեր է պարզապէս չնորհիւ իր շուրջը, զիրար հակասող, իրարու հակադրող հոսանքներուն, յենակներուն գոյութեան: Ասիկա բախտաւորութիւն մըն է, որ քիչ ազդերու կամ պետութիւններու վիճակած է:

Եթէ ստույգ է թէ ոչ մի պետութիւն իր պատմութիւնը այլա-
մերժօրէն ինք չի շիներ, այլ աւելի կամ նւազ չափով իր պատմու-
թիւնը կը կրէ, թուրք ժողովուրդի, օսմանեան պետութեան պարա-
գային այս վարկածը աւելի քան այլուր ճշմարիտ է:

Ինչ մ'աւելի մերկացնելով պատմական փաստերը, կրնանք ը-
սել. — Օսմանեան պետութեան պատմութիւնը պատմութիւնը չէ ա-
մենեւին իր մէջ ապրող թուրք տարրին. թուրք տարրին դերը՝ օս-
մանեան պետութեան պատմութեան մէջ կարծւածէն աւելի նոսր,
կրաւորական ու ժխտական եղած է: Ապա ուրեմն ինչ որ կանանենք
օսմանեան պատմութիւն, իր խորքին մէջ պատմութիւնն է աշխար-
հագրական բարդ միջավայրի մը՝ Մերձաւոր Արեւելքի, որ նեղուց-
ներու հանգոյցին շուրջ կը համալսմբէ յառաջաւոր Ասիոյ, Պաւլան-
ներու, Միջերկրականի թնձուկը:

Կը բաւէ այդ երկրամասը երեւակայել իր աշխարհագրական,
ցեղաբանական, մշակութային ու հոգեբանական խառնակ պատկերո-
վը ըմբռնելու համար Օսմանեան կոչող պատմութեան ամբողջ թա-
գուն ու չփոթ ծալքերը: Կը բաւէ խորհիլ այդ երկրամասին շուրջը
եւ ներսը զիրար խաչաձևող շահերուն մրցակցութեան մասին, կա-
րենալ բացատրելու նոյն այդ պատմութեան կարգ մը առեղծւածնե-
րու ամբողջ իմաստը:

Ապա ուրեմն Օսմ. պատմութիւնը չի սահմանափակւիր թուրք
սուլթաններու յաջորդականութեան, պալատական էնթրիկներու,
ճակատամարտներու, դաշնագիրներու խաթամութ տեսարանին մէջ:
Ատիկա մակերեսն է: Եւ դժբախտաբար բազմաթիւ օտար, լուրջ
պատմագիրներ այդ արտաքինը միայն տեսած են: Այդ ճակատին ե-
տին ծածկւած է իրականութիւնը՝ որ միջազգային դիւանագիտա-
կան խոշոր ու բարդ հարց մըն է, ան է միանգամայն պատմութիւ-
նը՝ միջցեղային խուլ բողբոսներու, ընկերային, տնտեսական խը-
մորումներու ու մշակութային անհաշտ ձգտումներու:

Օսմ. պատմութեան այս ներքինները նշմարողներ, վերլուծող-
ներ չեն պակսած անշուշտ: Կը պակսի տիրական գործը: Բայց քննա-
կան-գիտական պատմութեան միակ ճամբան այդ է ուր պիտի յան-
գին անյայտ պատմագէտները:

Մեզ՝ հայերուս, առանձնապէս կը շահագրգռէ անշուշտ Օսմ.
պետական պատմութիւնը, որովհետեւ անիշխանութեան օրերէն
սկսած, հայ ժողովրդի մէկ մեծ մասին բախտը զուգորդւած է անոր
հետ: Հայկական հարցը ժ.ժ. դարուն ցաւոտ վէրքը չէ միայն ու չի
սկսիր, ի հարկէ, Բերլինի համաժողովով: Համը, անպաշտօն ու ե-
ղբրական, թրքահայութեան խնդիրը գոյութիւն ունեցած է ի վա-

ղուց անտի, օսմանեան տիրապետութեան առաջին օրէն սկսած: Մեր
երկիրը եղած է թատերաբեմը օսմ. պատմութեան արիւնոտ անցքե-
րուն ու մերձաւոր կամ հեռւոր դէպքեր միշտ անդրադարձած են
մեր ժողովուրդի կեանքին վրա:

Հակառակ պատմական ցաւագին այդ բախտակցութեան, մեր
գրականութիւնը զուրկ է օսմանեան — թուրք պատմութիւնը ներկա-
յացնող լուրջ ու բազմակողմանի երկերէ: Որքան ինձ ծանօթ է, Պոլ-
սահայ դասագիրքերը անեկթոտային պատմագրոյցներ միայն տը-
լած են: Ռուսահայերէն ինձ ծանօթ է միայն ողբացեալ Եղիշէ Թով-
հեանի համառօտ գործը. «Ներխառնող թուրքիա եւ Հայերը»: Չա-
փազանցած չեմ ըլլար եթէ ըսեմ, թէ ապրած ենք թուրքիա, առանց
խորապէս ճանչնալու պետութեան պատմութիւնը եւ թուրք ժողո-
վրդի կենսագրութիւնը:

Սպասելով այդ ուղղութեամբ երկերուն, աւելորդ չէ, կարծեմ,
դէթ գիմել օտար պատմական ուսումնասիրութիւններուն, որոնք
երբեմն նոր լոյս մը կը սփռեն դէպքերու չփոթ քառսին վրա: Այս
տեսակէտով ուշադրաւ գործ մըն է Գնդապետ Լամուշի գիրքը.
«Թուրքիոյ Պատմութիւնը», *) որ եթէ զուրկ է քննական, վերլու-
ծական այն խորաթափանց մէթոտէն, որու կակնարկէի վերը, բայց
կուտայ օսմանեան պետական պատմութեան համադրական պատկե-
րը, իր ծագումէն մինչեւ ներկայ քեմալական օրերը: (Անցողակի
ըսենք որ գրքի անունի ընտրութիւնը նպատակաւորմար չէ այնքան,
քանի որ իբրեւ գտարին թուրք պետութիւն, ներկայ քեմալական
հանրապետութիւնը մինակ կարելի է նկատել: Նախապէս այն քա-
ղաքական միաւորութիւնը, որուն աւերակներէն ծնաւ արդի Թուր-
քիան, սովորաբար կրած է միշտ Օսմանեան անունը՝ թուրք թէ օտար
պատմիչներու կողմէ:)

Գնդ. Լամուշ եթէ հետեւած է աւանդական մեթոտին, հիմ
բռնելով թուրք սուլթաններու յաջորդականութիւնը, դէպքերու
դրսերեւոյթը, որովհետեւ իր պաշտօնով ու կոչումով ան զուրկ է
պատմագէտի խստապահանջ սխտէմէն: Արեւելեան լեզուներու ու
օրէնսդրութեան մասնագէտ, ան 1904-1913 թւականին ծառայած
է Մակեդոնիա եւ Պոլիս, իբրեւ օսմանեան ժանտարմըրիի վարիչ-
բարեկարգիչ: Ասիկա կը բացատրէ իր կողմնակցութիւնը՝ որոշ դէպ-
քեր դատելու, Երեսոյթները մինչեւ խորը վերլուծել չուզելու իր
ձգտումին մէջ: Այսուհանդերձ, իբրեւ համադրական պատկեր, ար-
ժէք մը ներկայացնելէ անկախաբար, Գնդ. Լամուշ ջանացած է օգ-

*) Colonel Lamouche «Histoire de la Turquie». Ed. Payot.

տազործել մանաւանդ տեղական — անմիջական աղբիւրները, որոնք մինչ ցարդ անտես առնւած են: Իր գիրքը, բացի այդ, շատ լայն տեղ յատկացուցած է ԺԹ. դարու անցքերուն, մանաւանդ Սուլթան Համիտի շրջանէն մինչեւ մեր օրերը յատկանշող եղբերական իրադարձութիւններուն, որոնց երբեմն ակնատես եղած է ինքը հեղինակը:

Գրքին սկիզբը, Ռենէ Փինօն, ծանօթ մասնագէտ արեւելեան հարցերու, ուշադրաւ յառաջարան մը ունի, ուր օսմանեան պատմութեան հարցականը կը բանաձեւէ հետեւեալ տողերով.

« . . . Թուրքերուն գոյութիւնը Վոսթօրի եւ Դանուբի միջեւ, ոչ միայն ջնջեց բիւզանդական կայսրութեան հետ արեւելեան Եւրոպայի ամբողջ քաղաքակրթութիւնը, բայց նաեւ անիկա մեծ պետութեանց քաղաքականութեան բնական ընթացքը իր հունէն շեղեցուց: Մէջտեղ դրեցաւ այս հարցը. — Թուրքերը իբրեւ իսլամ, կրնա՞ն եւրոպական հաւասարակշիւութեան մէկ տարրը ըլլալ եւ տեղ մը գտնել հին Եւրոպան կաղմող աղբերու ընկերութեան մէջ: Ֆրանսական միապետութիւնը առաջինը եղաւ որ հաստատական պատասխան տուաւ այդ հարցին: Ֆրանսուս Ա., Շարլ-Քէնի սպառնալիքին առջեւ, յարմար նկատեց համաձայնութեան դաշինք մը կնքել զանոնի Սուլթան Սուլէյմանի հետ: Հարկը օրէնք չունի: Եւրոպակ. հաւասարակշիւութեան քաղաքականութիւնը վերջնականապէս գերակշռեց խաչակրութեան գաղափարին վրա . . . » (էջ 5-6):

Հարց է թէ այլատարր այդ պետութիւնը կրցա՞ւ խաղալ այդ դերը, կրցա՞ւ պատշաճիլ Եւրոպայի մթնոլորտին. աւելորդ է ըսել, ո՛չ, եւ ահա այդ պատմութեան չարաչուք տոամը:

« . . . Թէ, հակառակ կրկնակի դասերուն, այդ պետութեան քաղաքական բարքերը մնացին վայրագ ու արիւնարբու, փաստ է ատոր 1914-1915 տարիներուն հայ ժողովուրդի կրած սխտէմաթիկ ընաճնջումի ահուկի դրւագը: » (էջ 7)

Ռենէ Փինօն կը հարցնէ այնուհետեւ թէ Մ. Քէմալի յանդուգն բարենորոգչական փորձը պիտի կրնա՞յ թուրք ժողովուրդի հոգին այլափոխել:

« . . . Ատիկա ապագայի գաղտնիք է: Ժամանակը, կըսեն, կը յարգէ այն գործերը, որոնց ինք ալ կը գործակցի . . . »:

Գնդ. Լամուշի գիրքը կըսկսի Թուրքերու ծագումի հարցով: Գրքի ուշադրաւ գլուխներէն մէկն է ասիկա: Կը սահմանագծէ միջին Ասիոյ անոնց նախնական հայրենիքը, Թուրանը, որ օրրանը ըլլալ կը թւի Ուրալո-Ալթայեան մեծ ցեղախումբին: Այս ցեղախումբէն բաժնւած ըլլալ կենթադրելի նախ Թուրքո-Թաքարական ճիւղը,

որ մնացած ու տարածւած է Թուրքաստանի ու Մոնղոլիստանի տափաստաններուն վրա, եւ Ուկրո-Ֆիլիպինական ճիւղը, որ անցած է Ուրալեան լեները եւ տարածւած է Եւրոպայի եւ Սիպերիոյ հիւսիսային կողմերը:

Յայտնի է որ Թուրքո-Թաքարական ճիւղաւորումը տւած է պատմութեան մեծ արշաւախումբերը:

Կասպից եւ Սեւ ծովերուն հիւսիսէն, Վոլկայի վրայէն դէպի Եւրոպա արշաւած են Հոները (Դ. Դար Յ. Ք.), որոնց հետ ազգակցութիւն մը ունենալ կը կարծւի արդի հունգարները: Յետոյ կուգան Բուլկարները (Յ. դար), որոնց մէկ թեւը մնաց Վոլկայի ճիւղերէն Կամայի վրա, Պուլկար մայրաքաղաքով եւ յարեցաւ իսլամութեան, մինչ միւս ճիւղը անցաւ Դանուբը ու երկիրը գրեւորվ հանգերձ խառնուեցաւ սլաւոն տարրերուն, իւրացուց անոնց լեզուն եւ կրօնը:

Գաղթարշաւներու այդ շարքին մէջ կուգան այնուհետեւ Գաւարները (Է. դար), Փէշենէկները (Ժ1 դար), Նուկայները (ԺԳ. դար). այս վերջինները Խրիմի թերակղզիի վրա հիմնած են թաթարական մեծ պետութիւն մը:

Թուրքիստանէն ելած գաղթարշաւներէն ոմանք փոխանակ հիւսիսի ճամբան բռնելու, բռնած են Կասպից ծովու հարաւէն, Իրանի վրայէն անցնող ճանապարհը: Ամենէն յայտնի հոսանքը եղած է ապահովարար Սէլուկեաններու արշաւանքը (ԺԱ. դարուն), որուն մէկ թեւը Իկոնիոմի մէջ պիտի հիմնէր Գոնիայի սուլթանութիւնը կամ Ռումի սուլթանութիւնը. (սահմանակից լինելով Պոսոյ ուրում — յոյն կայսրութեան):

Այս սուլթանութիւնը տեւած է մինչեւ ԺԳ. դարու սկիզբը, ու քայքայւած է ձէնկիկ Խանի ու յաջորդներու մոնղոլ արշաւանքներու առջեւ: Իր քայքայումէն ծնած են տեղական պզտիկ Էմարէթներ կամ խանութիւններ, որոնցմէ մէկն էր Պիլէճիկի եւ Էսկի Շէհրի վրա իշխող Էրթողրուլի խանութիւնը: Այս Էրթողրուլի գաւակը Օսմանէ էր որ 1299-ին ինքզինքը սուլթան պիտի հռչակէր եւ հիմը դնէր օսմանեան կայսրութեան:

Լամուշ այնուհետեւ հետեւելով դասական բաժանումին, կուսումնասիրէ օսմանեան պատմութեան վերելքի, կայունութեան եւ անկումի շրջանները:

Օսմանցի թուրքերու վերելքը կատարւած է զարմանալի արագութեամբ, որուն փուլերն են.

ԺԴ1 դար. — Կելիփոլի նեղուցէն անցք. Գոսսովայի բախտորոշ ճակատամարտը. Պալքաններու զրաւում. (Թիմուրէնկի ար-

շաւանքը պահ մը կը կասեցնէ այս ծաւալումը ժե. դարու սկիզբը) :

ԺԵ. դար — Պոլսոյ գրաւում. (1453) 1— Պալքաններու ամբողջ ջացում եւ գրաւում Անատոլիի :

ԺԶ. դար — Սուլթանի, Եգիպտոսի գրաւում — Խալիֆայութեան իւրացում — Պետութեան ներքին վերակազմութիւնը :

Լամուշ կը բացատրէ թուրքերու արագ դարգացումը գլխաւորաբար Բիւզանդիոնի եւ պալքանեան պետութիւններու ներքին փտախտով, կրօնական, արքունական տարակարծութիւններով, որով աւելի չկրցան միացեալ ճակատ մը կազմել :

Գիրքը մանրամասն գլուխ մը յատկացուցած է Գանունի Սուլթան Սուլէյմանի, (1520—1566) որուն օրով կայսրութիւնը կը հասնի իր ուժի եւ հմայքի գագաթնակէտին : Իր օրով կը կնքուի Փրանքոթրքական բարեկամութիւնը, համաձայնութիւն Ֆրանսուա Ա.ի հետ եւ Բաբիքիւլսոյի միջոցաւ առանձնաշնորհը :

Այս քաբիթիւլասիոններու ծագումին, դարգացումին, ընդլայնումին մասին Լամուշի գիրքը կուտայ տեղին մանրամասնութիւններ : ԺԵ. եւ ԺԶ. դարերը Օսմանեան պետութեան անկումի շրջանը կը կազմեն, ժե. դարուն այդ անկումը թաւազուր շարունակելով հանդերձ բարենորոգումի ճիգերով կը փորձուի կասեցնելու քայքայումը :

Գնդ. Լամուշի գիրքը կը զգացնէ ընթերցողին այդ քայքայումին պատճառները : Ներքնապէս, տիրող տարրը անկարող ու անընդունակ էր վարելու իր տարողութենէն վեր ընդարձակ երկրամաս մը, խայտաբղէտ՝ իր բնակչութեամբ : Վարչական ապիկարութիւնը ծնունդ կուտար շարաշահութիւններու : Ինչ որ կեդրոնը չկրցաւ ընել խելքով ու օրէնքով, փորձեց գլուխ հանել ուժով, բռնութեամբ : Հրահրեցան ցեղային—կրօնական կիրքեր. թալան եւ ջարդ նկատուեցան վարչական սխտէմ : Պետական մեքենան կազմալուծուեցաւ արթնցաւ հպտակ տարրերու ազգային գիտակցութիւնը :

Այդ ներքին օրկանական պատճառներէն զտու կը զօրանար ատոխճանարար արտաքին ճնշումը : Ռուսական վայրէջքը մանաւանդ ամբողջ ժԶ. եւ ԺԹ դարերուն կրծեց ու ցնցեց Օսմանեան հիւանդ օրկանիզմը :

Ապահովաբար ժե. դարը Օսմանեան պատմութեան ամենէն տրամաթիկ շրջանը կը կազմեն : Թուրքիա կը ներկայանայ երկիր մը, որ «հիւանդ մարդ» անունով մինակ կարելի կըլլայ որակել : Սահմաններէն ներս ազգային տեւական խմորումներ, բարենորոգչական ամուլ, անբաւարար ձեռնարկներ, իր շուրջ եւրոպական դիւանադի-

տութեան շահանդեր եւ խուլ մրցակցութիւնը : Ու եթէ ամբողջ ժե. դարուն, մինչեւ մեր օրերը Օսմանեան կայսրութիւնը կրնայ տեւել ու մնալ, ատիկա կը պարտի, ինչպէս յայտնի է Աւստրո-Ռուս, Անգլո-Ռուս, Գերմանո-Անգլիական մրցակցութեանց :

Թուրքիոյ քաղաքական եւ ընկերային վիճակը ժԶ դարու վերջը :

Առաջին բարենորոգումներ Սէլիմ Գ.ի օրով. Մահմուդ Բ.ի շրջան (1808—1839) (Ազգային ըմբոստութիւններ — Եգիպտոսի հարց — Ռուս-թրքական պատերազմ 1828. բանակի բարենորոգում) :

Ապտիւլ Մէճիտ (1839—1861). Թանդիմաթ. Խրիմի պատերազմ :

Ապրիւլ-Ադիլ (1861—1876) բարենորոգումներու կիրարկում :

Ապրիւլ-Համիտ. (1876—1909) Արեւելեան հարցը՝ իր բարդ ու մերկ այժմէականութեամբը :

Եւրոպական միջամտութիւն — Յեղափոխութիւն. Սահմանադրութիւն (1904—1908) :

Պալքանեան պատերազմներ .

Թուրքիան մեծ պատերազմի ընթացքին :

Նոր Թուրքիան :

Աւելորդ է ըսել, հայ ընթերցող մը մասնաւորապէս կը շահագորդուի Համիտի դահակալութենէն ի վեր անցնող շրջանը, որուն յատկացուցած է հեղինակը կենդանի էջեր. մասնաւորապէս շահեկան է 1908ի Օսմանեան սահմանադրութեան հռչակումը կանխող դէպքերու պատմականը. Մակեդոնական հարցի ամենէն վառ օրերը, որ յանդեցան Միւրջլթէկի համաձայնութեան Աւստրիոյ եւ Ռուսիոյ միջեւ, ըստ ըրում մակեդոնական երեք վիլայէթներ (Սալոնիք, Մանասթըր, Գոսսովա) կը դառնին ու կը դրին եւրոպական բարեկարգիչ յանձնաժողովի մը հողածութեան տակ : Այս մարմնի պաշտօնը պիտի ըլլար վարչական բարեկարգութիւն ու ժանտարմըրի վերակազմութիւն : Այդ երեք վիլայէթները պիտի ունենային ինքնուրոյն պիւտճէ :

Գրքի հեղինակը անդամակցած է ահաւասիկ այդ յանձնաժողովին եւ իրը այդ ի վիճակի եղած է հետեւելու Ռումելիի ներքին, զինուորական խմորումներուն, որոնք պիտի պայթէին Ռեվալի տեսակցութենէն անմիջապէս վերջը (ինչպէս ծանօթ է Անգլիոյ թագաւորը եւ ցարը 1908 Յունիս 9 եւ 10ին, Ռեվալի առջեւ տեսակցութիւն մը ունեցան, ուր համաձայնեցան, կըսէի, ի միջի այլոց, Թուրքիոյ մասին) : Սերանիկի զինուորական ընդվզումը եւ Օսմանեան Սահմանադրութեան հռչակումը տեղի ունեցաւ այդ տեսակցութեան վաղայաջորդ օրերուն : (1908 Յունիս 24. Օսմանեան գաւուրը Էսասիի Սահմանադրութեան հռչակման օր) :

Որքան ալ որ Գնդ. Լամուշ իր գրքին մէկ հինգերորդ մասը, մօտ 86-90 մեծ էջեր յատկացուցած է Համիտէն ասդին Օսմանեան պատմութեան փոթորկոտ շրջանին, բայց բնականաբար իր ամփոփումը կը մնայ շատ հարեւանցի ու անկատար: Դէպքերը իրենց բարդ ծալքերով կարելի ունին բազմակողմանի ու մանրակրկիտ վերլուծման մը, որ կը պակսի խնդրոյ առարկայ գրքին:

Նախապէս ակնարկած էի նաեւ հեղինակի որոշ կողմնապահութիւնը, որով ան զգուշացած է որոշ երեւոյթներ ներկայացնելու իրենց բովանդակ մերկութեամբ: Այդ մասին միակ օրինակ մը կը բաւէ մատնանշելու հեղինակի տրամադրութիւնը:

Ահա թէ ինչ տողերով ան բաւականացած է տալու հայկական տեղահանութեան ամբողջ ողբերգութիւնը:

Մեծ պատերազմի կովկասեան ճակտի դրւագները յիշելէ վերջ կ'աւելցնէ.

« . . . Կերեւի թէ Օսմանեան իշխանութիւնները ուզած ըլլան օգտուելու դէպքերէն, մասնաւորաբար որոշ տարրերու՝ ռուս բանակին տւած աջակցութենէն՝ բնաջնջելու համար ամբողջութեամբ Փոքր Ասիոյ վիլայէթներու հայ բնակչութիւնը: Հայերը, կին եւ տղայ միասին ըլլալով, փոխադրեցան զանգւածով մինչեւ արաբական վիլայէթներու սահմանները, ուր տեղւորեցան կեդրոնացումի կայաններու մէջ: Մահացումը ահուելի եղաւ, որքան կայաններու մէջ, ուր համաճարակը կը տիրապետէր, նոյնքան ճամբու ընթացքին ուր մինչեւ այսօր, գաղթի եւ դադարներու շաւիղը զձեռն է մարդկային ոսկորներու ահուելի կոյտերով: Զօրավար Լիման Ֆօն Զանտերս կը դիտէ որ Բ. զօրաբանակի կեցած երկրամասը ամայացած էր ու կը պարզէ անապատի մը երեւոյթը: Առանց չքմեղելու այս համարողկային արարքները, ան կը ջանայ զանոնք վերագրելու ստորադաս պաշտօնեաներու, որոնք վայրագօրէն չափազանցած էին իրենց ստացած հրամանները. » (էջ 365):

Այս մէջբերումը ի յայտ կը բերէ արդէն հեղինակի մօտ պաշտօնական վերապահ մտայնութիւն մը, որ գրքին վերջին էջերուն վրա երեւան կուգայ արդէն իր բացայայտ թրքասիրութեամբ:

Պատմաբանէ աւելի դիւանագէտի վայել այս ողին չի սահմանափակեր սակայն գրքին ինքնուրոյն նպատակը, որ է տալ թուրք պետութեան պատմական համայնապատկերը: Դէպքերու արտաքին դասաւորումը ունենալէ յետոյ իրադեկ ընթերցող մը ի վիճակի է այնուհետեւ մտնելու անոնց պատճառաբանութեան խորը:

Գիրքը օժտւած է ճոխ ու բազմակողմանի գրացանկով մը, ուր հետաքրքիր ընթերցողը գիւրութեամբ կրնայ գտնել աղբիւրներ նիւ-

թի վերաբերեալ պատմական, քաղաքական, տնտեսական, վիճակագրական կամ օրէնսդրական բոլոր մնրամասնութիւններու մասին:

Հինգ քարտէսներ, որոնք կը ներկայացնեն Օսմանեան պետութեան սահմաններուն բաժանումները կարեւոր դարաշրջաններու պահուն, ինչպէս ԺԶ. դարուն, ԺԸ դարուն, Բերլինի դաշնագրէն վերջը, Եւրոպական Թուրքիան 1800էն մինչեւ 1913 եւ, վերջապէս, արդի Թուրքիան, կը գիւրացնեն ընթերցումը:

Գնդ. Լամուշի «Թուրքիոյ Պատմութիւնը»՝ իր նիւթը սպառելէ շատ հեռու գործ մը լինելով հանդերձ, շահեկան ու լուրջ երկ մը, է անպայման:

Փալիզ

ՓԱՅԼԱԿ ՍԱՆԱՍԱՐ

ԱՐՇԱԿ ՍԱՖՐԱՍՏԵԱՆ

ՔՍԵՆՈՖՈՆԻ ՈՒՂԵԳԻԹԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՋՈՎ

Հայ պարբերական մամուլին մէջ «ՎԷՄ»-ը եղաւ առաջինը հրատարակելու մի գիտական քննադատութիւն վերողբեալ մակդիր կըրող իմ ուսումնասիրութեան մասին: Հին Հայաստանի պատմութեան տեսակէտէն յոյժ հետաքրքրական է նիւթը: Արեւմուտքի բոլոր մեծ երկիրներէ մէջ բարձրագոյն կըթուլթեան անբաժանելի մասը կը կազմեն 10,000 յոյն վարձկանների արշաւը դէպի Բարեւոն, եւ ապա անոնց ողիսական նահանջը Քիւրտիստանի եւ Հայաստանի միջով առ Սեւ Ծովը: Արեւմտեան ազգերէ աւելի մեղ պէտք է հետաքրքրէ Քսենոֆոնի Անաքսախսն, որովհետեւ անոր բովանդակած որոշ մանրամասնութիւնքը հին Հայաստանի մասին անգնահատելի լոյս կը սփռեն այլապէս մեղ անծանօթ մի շրջանի վրա. այն է Ե. դարու ըսկիզբները Ք. Ա.:

Պ. Յ. Զ(աւրեան)ի քննադատութիւնը *) ըստ ամենայնի լուսաբանող եւ շահեկան է: Նախանջ Բիւրուց-ի հրամանատարը՝ Քսենոֆոն մեղ կուտայ որոշ տեղեկութիւններ Հայաստանի մէջ իր տեսածների եւ լսածների մասին: Մենք կարող ենք բանաւորապէս ընդլայնել այդ տեղեկութիւնները մեր պատմութեան նմանօրինակ հանդամանքներով, եւ վերականգնել ծանօթ դարաշրջանի հայ ժողովրդի վիճակը՝ փաստացի վիճարանութիւններով: Պատմաքննական եւ բանասիրական լուրջ աշխատանք պահանջող գործ է: Դրա համար անհրաժեշտ է դասական կըթուլթիւն եւ հին յունարէն լեզուի ծանօթութիւն: Պայմաններ գորս լիապէս կը լրացնէ պ. Յ. Զաւրեան:

Այստեղ եւս պէտք է անեմ մի քանի բնագրական նկատողութիւններ պ. Յ. Զաւրեանի գրախօսականի մասին՝ ապագային հաւանական թիւրիմացութիւններ կանխելու համար: Մի էական կէտ, որի վրա գրած են խնդիրն ուսումնասիրող եւրոպացի եւ ամերիկացի գիտնականներ, Անաքսախս-ի մի տողն է. այսինքն LV 4. 3:

*) Տես «ՎԷՄ», 1935 թ., թիւ 1.

Բնագրերից ոմանց մէջ այդ տողի մեխրի (մինչեւ) բառը դործածւած է երեք դրեթէ նոյնիմաստ, բայց եւ այնպէս քերականական որոշ զանազանութիւններով: Բառը կրնայ առնել թէ իբրեւ մակըայ եւ թէ իբրեւ նախադրութիւն: Մեծ հեղինակութիւն համարւած երկու գիտնականներ, Rehdantz եւ Nall, վերեւ յիշած տողում մեխրի ընդունում են որպէս չաղկապ եւ թարգմանում են so long as, until. այսինքն մինչեւ որ նրանք (յոյներ) անցան Տիգրիս գետի ակունքների շուրջը:

Այս տողերը գրելու լոպէսին ձեռքիս տակ են 24 հեղինակութիւններ ամէն լեզուներով, թէ Անաքսախս-ի բնագիրը եւ թէ թարգմանութիւններ: Գրեթէ ամենքն ալ այդ հասուածը թարգմանել են ըստ վերնոյն: Մի քանիսը շուրջ կամ շուրջով բառի կողքին զետեղել են հարցական նշան: Իմ կարծիքով Քսենոֆոնի արտայայտութեան դժւարութիւնը ծագել է այն բանէն, որ հէնց ինք հելլէն հրամանատարը առահով չէր թէ ինչպէս պէտք էր նկարագրել իր դիրքը գետի վերաբերմամբ: Խնդրոյ առարկայ տեղն է Քուֆրայի եւ Զէվիասօրի միջոցը, ուր Շիրվան - Սու զանազան ճիւղերով կը հոսի դէպի Քէսէր-Սու: Շիրվան-Սու կը դայ հիւսիս-արեւելքէն բաղմաթիւ ձորակների միջով եւ ոլորապտոյտ դնացքով: Առանց ունենալու տեղական ստոյգ ծանօթութիւն, դժւարին է ըսել թէ որոշ կէտի վրա հոսող առակը գետի ափն է, թէ մի այլ վտակ, զոր կտրած անցած էինք կէս ժամ առաջ: Ըստ իմ ուսումնասիրութեան, յոյները անցնելէ յետոյ Կենտրիտէս (Բոհտան - Սու) եւ Սղերդն ի վեր առաջանալով՝ երբ հասան Քուֆրա, փոխանակ շարունակելու իրենց ճանապարհը Քէսէր-Սու եւ Բիտլիս-Չայն ի վեր, հետեւեցան Շիրվան - Սու-ի ընթացքին, կարծելով որ այդ էր բուն Տիգրիսը: Որովհետեւ երկու բնական օթեւանները թէ Քուֆրա եւ թէ Զէվիասօր, բաւական հեռու են Քէսէր-Սու-ի ափերէն, եւ աւելի մօտ Շիրվան-Սու-ի զանազան ճիւղերին:

Շիրվանի զաւառէն դէպի Խիզան տանող ճանապարհը կանցնի էրուն ձորի միջով, որ ունի մօտ 18 մղոն երկայնութիւն: Էրունի հարաւային ըլուրներէն կը հոսի բաւական սոււար մի ջուր, զոր Բոհտա գետի հիւսիսը երկարող հովիտների մէջ շրջան ընելէ յետոյ Քուֆրայէն հեռու կը թափի Քէսէր-Սու: Սա էլ կը կոչուի Քուֆրա-Չայ: 1908-ի յունւարին Սղերդ քաղաքէն կը վերադառնայի դէպի Բիտլիս: Ճանապարհի առաջին մասում ձիւն չկար: Աղձնեաց աշխարհի այդ մասը ձմեռնային անձրեւների շրջան է: Այդ պատճառաւ ցելը շատ խոր էր: Նախապէս այդ մարդերէն անցած էի մի քանի անգամ: Մութ գիւղերին կորսնցուցի ճանապարհը: Ինձ ուղեկցող տեղակ.

ոստիկանը Քիւֆրա-Չայը շիրթեց Շիրվան-Սուլի հետ, եւ այդ պատճառաւ երկու ժամ աւելի թափառեցանք մինչեւ որ դտանք գիշերաւ-յին օթեւանը ի Ձէվիասօր: Յիշեցի այս անձնական փորձառութիւնը ապացուցանելու համար, թէ այդ ջրառատ հովիտներէ մէջ որչափ դժւար է գտնել «Տիգրիսի ակունքը»:

Պ. Ջաւրեան բոլորովին կը սխալի կարծելով, որ ես փոխած եմ յունարէն բնագիրը՝ ուղեգիծը յարմարեցնելու համար իմ տեսակետին: Ընդհակառակն, ես քննել եմ միակ հնարաւորութիւնը՝ համաձայն եւրոպական հեղինակաւոր թարգմանիչների մեկնութեան: Եւրոպական առաջնակարգ մասնագէտներէ ոմանք արդէն յայտնել են իրենց համամտութիւնը իմ առաջարկած ուղեգծին: Petermanns «Geographische Mittheilungen»- ուում (Ապրիլ 1935, էջ 126) Պրոֆ. Օրբուհումէր խոստովանում է, որ յոյները ոչինչ գիտէին Հայաստանի մասին, իսկ ներկայ Արեւմուտքը շատ քիչ աւելին. իբրեւ ապացոյց կը յիշէ նոյնիսկ սպայակոյտների անբաւական քարտէզները: Նա կը յաւելու, որ հայ հեղինակը միայն կարող է լաւ ճանաչել իր սեպհական երկիրը եւ մեկնարանէ Անքարայի: «Wiener Zeitschrift für die Kunde des Morgenlandes» - ի ներկայ տարւոյս Բ. պրակին մէջ (էջ 265-266) յայտնի արեւելագէտ Կ. Մլախըր գրած է մի հոյակապ դրախտական, յայտնելով իր հաւանութիւնը իմ առաջարկած լուծման: Երկարատևութեամբ էջերով Պրոֆ. Լէյման-Հաուպտ կը կարծէր լուծած լինել հարցը: Սակայն, ինչպէս ասում է Մլախըր, իմ փորձը դրել է հարցի լուծման մի նոր եւ աւելի համոզիչ առաջարկ: Պ. Ջաւրեան կը յանձնարարէ Տելեբոաս անունը բացատրել հնչաբանական սկզբունքով: Հելլէնները գրեթէ բոլոր օտարականները կանաւնէին բարբարոս: Գործնական կեանքի մէջ այդ բառը կը նշանակէր ոչ միայն հելլէն մշակոյթէն եւ օրէնքէն դուրս գտնուող օտարականներ, այլ եւ կը բովանդակէր մի տեսակ արհամարհանքի, ինչպէս անգլ. ֆարիյն բառը մինչեւ վերջին ժամանակները: Ուրեմն, Քսենոփոնի համար օտար անուններ մատչելի էին այնչափով, ինչ չափով որ կարելի է նրանք մերձեցնել մի ո եւ է հելլէնական անուն: Այդպիսի հանդամանքների մէջ հնչաբանական կանոններ շատ քիչ դեր կրնան կատարել գիւրացնելու լուծումը առաջադրւած խնդրին: Ո եւ է կասկած չի կարող լինել, որ Տելեբոաս գետի անունով Քսենոփոն կակնարկէ Տրպատունեաց տանուտէրութեան գաւառին եւ գետին: Ուրեմն, յոյները յառաջացան Շիրվան գետն ի վեր դէպի Խիզան, Մոկը եւ ապա Տրպատունիք՝ Վանայ ծովու հարաւ-արեւելեան անկիւնին:

Եւրոպացի գիտնականներ Տելեբոասը նոյնացրած են Տարօնի գաւառի Գարա-Սուլի հետ: Եթէ յոյներ անցած լինէին Տարօնով, ապահովաբար Քսենոփոն պիտի յիշէր մի այլ անուն: Ահա թէ ինչո՞ւ: Ըստ Տարօնի ժողովրդի սովորութեան Գարա-Սուլի հայկ. անունն է Մեղրագետ: Չորրորդ տառը քակներեւօրէն արդիւնք է ժողովրդական ստուգարանութեան: Գետին հին-հայկական անունն է Մեղ: (Տես Անանիա Շիրակացի. տպ. Սուքրեան, էջ 31. նաեւ Հիւրշմանի Altarmenische Ortsnamen. էջ 323, ու Մարկուարտի Südarmanien und die Tigrisquellen, էջ 68, եւ մանաւանդ էջ 203-204 հոյակապ համեմատութիւնները): Մեր լեզւին մէջ լծորդ տառերն են յ եւ դ. ուրեմն եւ նախահնչեւրոպական հայերէնի մէջ անունն էր հաւանաբար Մել: Այժմ խառտի սեպագրերը հին-հայկական տեղանուններն, ինչպէս նաեւ Հայաստանի պատմութիւնը ետ կը տանին մինչեւ 1500 Ք. Ա.: Եւ իսկապէս ալ իմիջ Թորրէր այդ սեպագրերէն թարգմանած է խառտի թագաւոր Մուրշիլ Բ.-ի եւ Աչչի-Խայասա (Բարձր-Տուրուբերան) երկրի թագաւոր Աննիայի միջեւ կնքւած դաշնագիրը (1345-1320 Ք. Ա.): Այդ դաշնագրին մէջ իբրեւ սահման երկու պետութեանց յիշւած է Մալա գետը, զոր առնչութեամբ անդր յիշւած այլ անուններին եւ տեղագրական մանրամասներով, նոյնացուցած եմ Մեղրագետին հետ: Այդ դաշնագրին մէջ հիանալի կերպով ի յայտ կուգան հին հայկ. սրբավայրերն ու պատմական քաղաքները Եկեղեաց դաւառէն մինչեւ Տարօն եւ Վանայ ծով: Եթէ Անանիա Շիրակացու կամ Մ. Խորինացու ժամանակ պահւած էր Մեղ գետաունը, անհնարին է որ նա գոյութիւն չունենար նաեւ Քսենոփոնի ժամանակ:

Ինչպէս մինչեւ այսօր, այնչափ ուժեղ էր նահանգային հայրենասիրութիւնը մեր նախահայրերի մէջ, որ անոնք դժւար կը հրաժարէին հին անուններէ:

Արդէն բաւական հեռացայ նիւթէն: Նմանօրինակ մանրամասներով կարելի է լուսարանել պ. Ջաւրեանի յարուցած միւս խնդիրները:

Արդէն կը պատրաստեմ մի լիակատար ուսումնասիրութիւն Քսենոփոնի ուղեգծի մասին մեր լեզուով, ձօնելու Հայաստանում նորերս կազմակերպւած Հայ Աշխարհագրական Ընկերութեան:

Լոնդոն



ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ Պ. Յ. Զ.-Ի ԿՈՂՄԻՑ. «Վէմ»-ի խմբագրութեան առաջարկութեամբ կցում եմ պ. Սաֆրաստեանի յօդւածին

ներկայ հակիրճ առարկութիւնը, թէեւ պէտք է ասեմ, որ ես հակառակ եմ քննադատական դիտողութիւնների առթիւ բանակուիլ յարուցանելու ձեւին:

Պ. Սափրաստեանը, իր ամելով, շատ լաւ ծանօթ է Հայաստանի այն մասին, որտեղից անցել են Քսենոֆոնի յոյները, եւ ես իմ գրախօսականի մէջ առանձնապէս ընդգծել եմ այդ պարագան: Պ. Սափրաստեանը շատ լաւ գիտէ, որ հին Հայաստանի աշխարհագրական անունների խնդիրը հիանալի կերպով մշակւած է մի շարք ակնանւոր գիտնականների կողմից (Հիւրշման, Մարքուարտ, Հոնիգման եւ մասամբ, սլրոֆ. Ն. Ադոնց) եւ այս փաստը ըստ ամենայնի հեշտացնում է աշխարհագրական ճշտումների գործը. հարցը միայն ձեւի մէջ է: Մեր վէճը պ. Սափրաստեանի հետ, եթէ միայն եղածը կարելի է համարել վէճ, աւելի մեթոտի վէճ է:

Իր աշխատանքին ձեռնարկելիս, պ. Սափրաստեանը ունեցել է 24 ուսումնասիրութիւն տւեալ հարցի մասին, 25-րդն էլ պէտք է հաշւել Քսենոֆոնի գրքի բնագիրը, որը, ըստ երեւոյթին, պ. Սափրաստեանը կարդում է յունարէն: Հակաճառելով ինձ՝ պ. Սափրաստեանը բաւական երկար խօսում է «մեխրի» բառի մասին, որ թարգմանում է «so long as»: Եթէ նա ուշադրութեամբ կարդացած լինէր գրախօսականը, կը տեսնէր, անշուշտ, որ ես էլ այդ բառը թարգմանել եմ նոյն իմաստով՝ «մինչեւ»: Վիճելին ո՛չ թէ այդ բառն է, այլ *hypererhomaï* *) բայը, որ ես թարգմանել եմ «կտրելին Տիգրիս գետի ափունքները», իսկ պ. Սափրաստեանը՝ «they (had) passed beyond (?) the sources of the river Tigris»: Ճիշտ է, ուսումնասիրողներից ոմանք ներկայ դէպքում, այս բառին տալիս են «մօտից անցնելու» իմաստ, բայց նախ դնում են հարցական նշան, ասել է բոլորովին վստահ չեն, երկրորդ՝ «մօտից անցնել» հասկանում են ճանապարհը նախկին ուղղութեամբ շարունակելու ասումով, որ տւեալ դէպքում նշանակում է՝ շարժւիլ դէպի հիւսիս. ուսումնասիրողներից ոչ մէկը այդ բայը չի առնում թեքելու, ուղղութիւնը փոխելու իմաստով:

Սակայն, պ. Սափրաստեանը անպատճառ ուզում է, որ յոյները դէպի հիւսիս տանող եւ բոլորի կողմից ընդունւած ճանապարհից դարձած լինին արեւելեան ուղղութեամբ: Իր այդ ցանկութիւնը հիմնաւորելու համար նա շատ ինքնատիպ բացատրութիւն է առաջ բերում: Դուրս է գալիս, որ հիւսիսի ճանապարհը դէպի արեւելք փո-

*) Բայը բառարաններում այս բառը քարգմանւած է *to come or go out over, pass over*.

խելիս յոյն զօրավարները առաջնորդւել են «ճանապարհի բնաղղով»՝ աւելի ճիշտ, «ձիւռ բնաղղով»՝ *hore sense* բայց զգալով, որ միայն «ձիւռ բնաղղը» բաւական չէ, պ. Սափրաստեանը առաջ է բերում եւ մի ուրիշ ոչ պակաս քմահաճ հիմնաւորում: Դեռ Հիւրշմանը Վանի հարաւ-արեւելեան եզերքին տեղաւորել էր Տրպատունիք նախարարութիւնը, որ իր անունը ստացել էր Տրպատունիք գաւառից եւ գետից (այժմ Խոշարսու): Այս «բարբարոս» հնչիւնը, պ. Սափրաստեանի կարծիքով չէր կարող իւրացնել Քսենոֆոնը, ուստի եւ փոխարինել էր Հերոդոտից (V, 59) առած Տելէբոս բառով, որ անունն էր Կապրի կղզու համանուն գետի: Պ. Սափրաստեանի կարծիքով, Քսենոֆոնը այդ փոփոխութիւնը կատարել էր շնորհիւ իր մտաւոր բարձր զարգացման: Մեզ թւում է, ընդհակառակը, որ հէնց նոյն այդ բարձր զարգացումը թոյլ չափի տար Քսենոֆոնին Վանի մօտ գտնւող մի գետ կոչել Կապրի կղզու գետի անունով: Քսենոֆոնը կարող էր իր ականջին խորթ հնչող բառը դրել աղջատւած, բայց կեղծել՝ հազիւ թէ, թէկուզ այդ «կեղծիքը» ապագային եւ հեշտացնէր պ. Սափրաստեանի գործը:

Քսենոֆոնի վերադրւած թեթեւամտութիւնը ստիպել է պ. Սափրաստեանին բռնութիւն գործ դնել Քսենոֆոնի բնագրի վերաբերմամբ, եւ այդ ամենը յանուն ի՞նչ նպատակի՝ ինձ համար մընում է անհասկանալի: Դժբախտաբար, իր պատասխանով էլ, պ. Սափրաստեանը չի կարողացել փարատել իմ կասկածը: *)

Յ. Զ.

*) Պ. Սափրաստեանը իր յօդւածին կցել է եւ մի փարսէս, որ ցայց է տալիս յայնքի անցած մամապարիք արեւելեան ուղղութեամբ: Հստ այդ փարսէսի, յայնքի կտրած մամապարիք 107 մմգլ՝ մղոմ է կամ 172 կիլոմէտր: Քսենոֆոնի հաշուով այդ մամապարիք հաւասար էր 17 փարսալիս, այսինքն՝ ամենալաւ դէպքում, 75 կիլոմէտրի: Հապա ո՞ւր է մամապարիքի մնացած մասը:

ՅՈՎԱԿ ՍՏԵՓԱՆԵԱՆ

Անդրանիկը Սիւնեաց Երկրում

Ա.

ՆԱԽԻՋԵԻԱՆԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Ինչպէս յայտնի է, 1918 թ. մայիսի վերջերին, Անդրանիկը, առանց Ղարաբաղի ճակատամարտին մասնակցելու ու բողոքելով Բաթումի դաշնագրի դէմ, իր զորամասով թողեց Հայաստանը եւ արշաւեց դէպի Պարսկաստան՝ նպատակ ունենալով միանալ անգլիացիներին։ Յայտնի է նաեւ, որ այդ արշաւանքը վերջացաւ անյաջողութեամբ։ Անդրանիկը խոյր մօտեց, տաճիկների ճնշման տակ, նահանջեց դէպի Զուլֆա եւ Արաքսը կտրելով՝ բանակ դրեց Նախիջևանի շրջանի գիւղերում։

Անդրանիկի մօտենալը լսելով, յուլիս 11-ին*), Բիստ գիւղին է գալիս Զանգեզուրի Աղզային խորհուրդի պատերազ Արշակ Շիրինեանը՝ հրաւիրելու համար Անդրանիկին իր զորամասով անցնել Զանգեզուր։ Այդ օրերին Ղարաբաղի եւ Զանգեզուրի հայկական շրջանները բացառիկ վիճակ էին ապրում։ Մէկ կողմից Բաղուր ուղղութեամբ դէպի Նւրա յառաջանում էին բոլշևիկները, միւս կողմից տաճիկները Գանձակին տիրելուց յետոյ՝ ձգտում էին արշաւել Բաղուր վրա։ Բաղուրի հայ կուսակցների մեծ մասը զարաբաղցի հայեր էին, որոնց հետ աշխատում էին հաղորդակցութեան մէջ մտնել զարաբաղցի։ Այդ օրերին, եթէ յաջողէր Բաղուն կապել Ղարաբաղի հետ, թիւրքերի թիկունքին մեծ հարւած կը հասցէր եւ հայոց համար մեծ ռազմական խարխիս կը ստեղծէր։

Սակայն Նախիջևանի դրութիւնը աւելի լուրջ էր, քանի որ տաճիկները աւելի սպառնական էին այդ ուղղութեամբ, ուստի Անդրանիկն աւելի անհրաժեշտ էր գտնում մնալ այդ շրջանում։ Նրա այդ որոշումը զուտ ռազմական տեսակէտից ճիշդ էր, քանի որ, թշնամուն զբաղեցնելով Նախիջևանում՝ հնարաւորութիւն էր տալիս Զանգեզուրի հայութեանը թիկունքում ապահով ապրելու։

*) Ժամանակագրութիւնը նոր տաճարով է։

Հանգուցեալ Արշակ Շիրինեանը վերադարձաւ ձեռնունայն, իսկ Անդրանիկը յուլիս 13-ին Ապրակունիսի վանքում խորհրդակցութիւն ունեցաւ Նախիջևանից եկած Աղզային խորհրդի եւ Զինւորական Մարմնի լիազօրների հետ։ Երեւանից ստացած մի հեռագրի համաձայն, տաճիկական երկու զնդեր իրենց թնդանօթներով Շահթախտի վրայով յառաջանում էին դէպի Պարսկաստան, իսկ Երեւանից եկողները պատմում էին, թէ Թիֆլիզում տաճիկների եւ զերմանացիների միջեւ իբր թէ երեք օր ընդհարում է տեղի ունեցել եւ վերջը զերմանացիք քշել են տաճիկներին։

Ապրակունիսի ժողովը կարեւոր որոշումներ հանեց։ Յուլիս 14-ին Անդրանիկի ստորագրութեամբ յայտարարութիւններ լոյս տեսան հայերէն եւ ռուսերէն լեզուներով, որոնց բովանդակութիւնը հետեւեալն էր։

Ա. Այս թաւանից սկսած Անդրանիկը իր զօրքերով ռուսական կենտրոնական կառավարութեան մասն է կազմում եւ ենթարկւում է նրան։

Բ. Համաձայն Բրեստ-Լիտովսկի դաշնագրի՝ Նախիջևանի շրջանը յայտարարւում է Ռուսաստանի անբաժան մասը։

Գ. Զինաթափում շրջանի ազգաբնակչութեան, առանց ազդի խնդրութեան։

Դ. Շրջանում յայտարարւում է զինւորական դրութիւն եւ ամբողջ իշխանութիւնը պատկանում է զօրավար Անդրանիկին, մինչեւ ռուսական կենտրոնական կառավարութեան հետ կապուել։

Այս յայտարարութիւնից բացի ձեռք են առնւում միջոցներ՝ ըստեղծելու համար տեղական վարչութիւն, սովորական դատարան, զաղթականական մարմին, փոխադրութեան միջոցներ, նաեւ զինւորական կարգապահութեան համար հրտարակւում է օրէնք եւ հաստատւում է զաշտային դատարան։

Նախիջևանի շրջանի հայ երիտասարդութիւնը պէտք է զօրահաւաքի ենթարկէր եւ ունենար առնւադն 4000 զինւած ոյժ, որի հետ միասին Հարաւոր Զօրամասը պէտք է դործէր Անդրանիկի ընդհանուր հրամանատարութեան տակ։

ԲԺ. Բօնապարտեանը գնում է Կզնուտ գիւղը, որպէսզի անթեւ հեռագրով վերոյիշեալ կէտերը հաղորդէ խորհրդային իշխանութեան Կովկասի արտակարգ կոմիսար Ստեփան Շահումեանին, որ այդ ժամանակ գտնւում էր Բաղու։ Հետագայում իմացանք, որ Բաղուում ստացւել էր այդ հաղորդագրութիւնը։ Սակայն, թշնամին ժամանակ չտւեց կազմակերպելու. տաճիկները արդէն Շահթախտումն էին եւ օրէց օր սպառում էին։ Անհրաժեշտ էր նախ եւ առաջ շրջա-

նի աղգարնակութեան զինաթափումը կատարել, որպէսզի չէզոքացէր թիկունքի վտանգը: Զինաթափութեան առաջարկութիւն-հրամանը զրկւեցաւ Նախիջևանի թուրք խաներին, որոնք զանգաղեցան եւ պատասխանեցին, թէ ժողովուրդը իրենց չի լսում. պարզ է, որ պէտք էր գիտել բռնութեան: Այդ նպատակով Ա. գումարտակը՝ մեկնեց Ղազանչիի ուղղութեամբ, լեռնային շրջանի թրքական զիւղերը զինաթափ անելով անցնելու Նախիջևան եւ միանալու գլխաւոր զօրամասին, որ դաշտի զիւղերը զինաթափելով՝ պիտի մտնէր Նախիջևան:

Յուլիս 15-ին լուր է հասնում, որ տաճիկները ուժեր են կեդրոնացրել պարսկական Զուլֆայում. առևտական Զուլֆայում հայերը ունէին դաշտային թնդանօթ եւ ուղղամթերք: Անդրանիկը հրահանգ է ուղարկում, որ զիմադրեն թշնամուն եւ մինչեւ վերջը պաշտպանեն Զուլֆան ու կամուրջը:

Զինաթափութեան դժարին գործը սկսեց յուլիս 16-ից. շրջանի գլխաւոր եւ ուժեղ զիւղերն էին՝ Յայջիմ, Նեհրամը եւ Ջախիմ, որոնց մէջ կային տաճիկ հրահանգիչներ, թնդանօթ եւ մեծ քանակութեամբ զինւած տեղական կուռղներ: Յայջիմ արդէն ընկել էր, հերթը հասել էր Նեհրամին, որից յետոյ մնում էր Ջախիմ: Զօրամասը կենտրոնացաւ Կզնուտում, որից հինգ վերստի վրա է գտնւում Նեհրամը:

Դէպքերն այնպէս շուտ վրա հասան, որ տեղական զօրահաւաքը զուլիս բերելու ժամանակ չեղաւ եւ 4000 զինուորի փոխարէն միայն 100-200 կուռղ հանդէս եկան: Նեհրամը զինաթափման առաջարկին պատասխանեց խրամառներից կրակով: Քիչ յետոյ էլ սկսեցին թըշնամու երկու թնդանօթները ուժակոծել մերոնց զիրքերը: Գիւղը պաշարւում է եւ սկսում է կանոնաւոր կռիւր: Թէպէտ թուրքերի զիրքերն ամուր էին, բայց հայերը կարողացել էին արդէն դրաւել զիւղի կէսը: Թշնամին յուսահատ փորձում է յետ քաշւել՝ պայթեցրնելով ուղղամթերքի պահեստը եւ շարունակում է յուսահատ դիմադրութիւնը:

Օրը շուտ է, յուլիս 17-ը: Զինուորներն իրենց զիրքերի մէջ սաստիկ նեղւում են ծարաւից եւ շոգից: Կուռղները յոգնած են եւ անօթի: Կուռղնութիւն քաջասիրտ կանայք սկսում են ջուր փոխադրել զիրքերը՝ ծարաւ զինուորների համար: Գիշերը զօրամասը վերադառնում է Կզնուտ, փոքրաթիւ ուժեր թողնելով Նեհրամի շուրջը: Նախիջևանից լուր է հասնում, թէ այնտեղ թուրքերը կրակ են բաց արել հայերի վրա:

Յուլիս 18-ին կռիւր բորբոքւում է եւ Զուլֆայի շրջանակներում:

զօրամասից ձիաւորների մի հարիւրեակ մեկնում է այնտեղ. Նախիջևանի մէջ եւս կռիւր շարունակւում է: Թուրքերը ցանկանում են դրաւել զօրանոցները՝ հայերին պէտք է օգնական ուժեր զրկել:

Յուլիս 19-ին զիմադրութիւնը Զուլֆայի ուղղութեամբ շարունակւում է, իսկ Անդրանիկը դաշտային թնդանօթներով սաստիկ ուժակոծելով Նեհրամը՝ շտապում է Նախիջևանի օգնութեան: Տաճիկները թնդանօթներով ուժակոծում էին հայկական զիրքերը եւ քաղաք մտնելու վրա էին, երբ հասնում է հարւածող զօրամասը՝ թնդանօթներն ուղղելով դէպի Նախիջևան: Զօրամասը Եարմաչէն անցնելով՝ զիրք է բռնում քաղաքի եւ զիւղի մէջտեղ գտնուող առուի փոսի եւ պարտէզների մէջ: Տաճիկները գործ էին ածում 12 թնդանօթներ եւ շատ զնդացիներ: Այլ կողմից օգնութեան էր հասել առաջին գումարտակը, մօտենում է քաղաքին, բայց չկարողանալով զիմանալ թշնամու կրակին՝ յետ էր քաշւել: Բուն զօրամասի հետ զնացող երկու հարիւրեակ ձիաւորներն էլ հետեւած առաջին գումարտակին: Երրորդ գումարտակի կողմից տեղի ունեցած անխոհեմ մի շարժում պատճառ եղաւ թշնամու քաջակերութեան. զօրամասն այնուամենայնիւ մինչեւ զիւղերւան ժամը տասը մնաց՝ ուժակոծելով տաճիկական հրետանին եւ թրքական թաղը: Տաճիկներն էլ սխալմամբ՝ հայկականի փոխարէն թրքական թաղն էին ուժակոծում:

Հարւածող զօրամասը այդ ժամանակ ունէր երեք լեռնային եւ մէկ դաշտային թնդանօթ: Քաղաքը դրաւել էր թշնամին, նախ քան զօրամասի քաղաք մտնելը եւ այդ պատճառով գաղթականութեան ծայրը ուղղւեց դէպի Կզնուտ եւ Ապրակունիս: Զօրամասն եւս սկսեց յետ քաշւել եւ կէս զիւղեր էր, երբ հասաւ Կզնուտ. թշնամին հետզհետէ սաստկացնում էր իր հետապնդումը. նա թուով եւ տեխնիկայով գերազանցում էր մերոնց: Հէնց նոյն օրն երեկոյեան թիւրքերը դրաւեցին եւ Զուլֆան, որտեղի գաղթականութիւնը եւս խառնւեցաւ Նախիջևանի եւ տաճիկահայ գաղթականութեանը: Կզնուտի բնակիչներն եւս գաղթեցին, երբ զօրամասը դուրս եկաւ այնտեղից: Կապը առաջին գումարտակի հետ կտրւեց: Յուլիս 20-ին զօրամասը քաշւեց Ապրակունիս: Առաջին գումարտակը հասել էր Ղազանչի, որ նոյնպէս գաղթեց Ապրակունիսի հետ միասին: Հնարաւոր չէ գիտեանալ, թէ Նախիջևանի շրջանի այդ հարուստ եւ բարեկեցիկ բազմամարդ հայութիւնից ինչքանը կորաւ, ինչքանը մնաց եւ ինչքան հարստութիւն ու կեանք փճացաւ:

Գաղթականութիւնը եւ զինուորները մեծ դժարութիւններով հաւաքւում են Քիստ. Նախիջևանի գաղթականներն արդէն հասել էին Փարաղաշտ: Զօրամասի հետ է նաեւ Գողթնի հայութեան ղեկավար

Աշոտ Մելիք-Մուսեանը: Գաղթականութիւնը տեղաւորուած է Բիստում, ուր դիմադրելու շատ յարմարութիւններ կային: Տեղական ուժերը մնում են այդտեղ, իսկ հարւածող զօրամասը պէտք է անցնէր Ձանգեզուր:

Բ.

ԶԱՆԳԵԶՈՒՐՈՒՄ

Յուլիս 23-ին Անդրանիկը որոշեց անցնել Սիսիան-Ձանգեզուր, որ լեռնոտ շրջան է եւ շատ ցորեն չունի: Զինւորական կարգապահութիւնը թուլցել էր. զինւորներին ազատելու եւ գաղթական-զինւորութեան վերջ դնելու նպատակով որոշեց կատարել մասնաւոր զօրացում, քանի որ հաց ստանալու ժամանակ հարիւր զինւոր էր ներկայանում, իսկ կուրի ժամանակ հազիւ տասը:

Անդրանիկը ի լուր ամենի, յայտարարեց, թէ Չօրամասի զինւորները ազատ են. դէպի Ղափան-Ձանգեզուր գնալու համար մի քանի ճանապարհներ կան. մէկը Ալահի գիւղի միջով տանում է Գեղ-լայ ձորի մօտով Ղափան, միւսը Նասրէյ հայկական գիւղով գնում է դէպի Օլաճի ձորը, որտեղից էլ Ղափան, իսկ երրորդ ճանապարհը՝ էրզնայի վերելով, Ռամիս հայկական գիւղով տանում է դարձեալ Ղափան: Այս ճանապարհներից ամենահեշտն է առաջինը, երկրորդը թէպէտ բաւականին դժուար է, բայց աւելի ապահով է, մինչդեռ երրորդը հեռու է Բիստից: Գաղթականութեան եւ զինւորների մի մասը հեշտ ճամբան ընկնէ, բայց լեռան դադաթը բարձրանալով՝ խաշնարած թուրքերի կողմից կրակի ենթարկւեց եւ բաւականաչափ կոտորուած ունենալով վերադարձաւ ապա ուղեւորեց դէպի Ղափան երկրորդ ճամբով: Ժողովրդի մի մասը մնաց Բիստ, Փարակա, Ռամիս եւ Յընա գիւղերում՝ Գողթանի շրջանում:

Ինքը Անդրանիկը իւր զօրամասով, ինչպէս եւ տաճկահայ ու նախիջեւանցի գաղթականութեան մեծ մասը ընտրեց երկրորդ ճամբան եւ յաջող կերպով անցաւ Գաբուշըղը, եւ հասաւ վերին Ղափանի գիւղերը:

Քաջարան հայ գիւղում հաւաքուած են թուրքական գիւղերի ներկայացուցիչները եւ ներկայանում են Անդրանիկին՝ յայտնելով իրենց անկեղծ բարեկամութիւնը դէպի հայերը: Ներկայացուցիչները Անդրանիկի հետ ճամբորդում են մինչեւ Հանդ հայկական գիւղը, ուր եւ գիշերում են:

:Պէտք է ասել, որ շրջանի բոլոր թրքական գիւղերը բարեկամական վերաբերմունք ցոյց տւին թէ Չօրամասին եւ թէ եկող գաղթա-

կանութեանը. եթէ դա թուրքերի կողմից քաղաքագիտութիւն էր, յամենայն դէպս խելացի եւ կշռադատուած քայլ էր:

Այնուհետեւ Չօրամասն անցաւ Դաւիթ Բէկի բերդի (Բաղաբերդ) մօտով. ճանապարհին թուրք գիւղացիները մի եղ ուղեցին մորթել Անդրանիկի ոտների առաջ, բայց նա չթողեց. թուրքերը նրան հերասիրեցին կարագով եւ մեղրով: Երեկոյեան զօրամասը արդէն Ղափանի պղնձահանքերումն էր, Ղաթարի գործարաններում: Յուլիս 26-ին մնում է Ղաթարի հանքերումն եւ պարէնաւորում է Ազգային խորհրդի միջոցներով:

Յուլիս 27-ին հետզհետէ հասնում են բանակից յետ մնացած զինւորները, այլ եւ գաղթականները, բոլորն էլ յոգնած, փոշոտած, անօթի եւ սեւացած, շատերը հիւանդ, ուժաստատ. . . Մեծ կենդանութիւն էր ստացել այդ օրերին Ղափանի շուկան. մի պատառ հաց կամ մի աման մածուն ձեռք բերելու համար ծախում էին հագուստ, դրաստ, կթան անասուն, զէնք, զարդեր եւ այլն: Կրկին Արշակ Շիրինեանը, - Ձանգեզուրի այդ անվեհեր գործիչը - եկել էր Ղաթար՝ Անդրանիկին Գորիս հրաւիրելու, խոստանալով ամէն բանով օժանդակել Չօրամասին:

Օգոստոս 2-ին Անդրանիկը եւ Չօրամասը Ղափանից մեկնում են դէպի Գորիս: Տաթևի ճանապարհով: Գորիսի ժողովուրդը եւ Ազգային խորհուրդը մեծ հանդիսաւորութեամբ դիմաւորում են ազգային հերոսին:

Օգոստ. 4-ից մինչեւ 13-ը լքման եւ անորոշութեան օրեր էին: Գորիսի շուկան եռուղեով մէջ էր. գաղթականներն ու զինւորները գրեթէ անօթի եւ առանց դրամի՝ ծառերի խակ պտուղներն էին ուտում, բանջարանոցների գետնախնձորները հանում եփում, արտերի հասկերն էին քաղում, աղանձում. . . Ձանգեզուրցի հայը սովոր էր նման երեւոյթի եւ յաճախ գէնքի էր դիմում պաշտպանելու համար իր ստացւածքը: Գիշեր ու ցերեկ երկուստեք հրացանաձուլութիւն, նոյն իսկ սպանութիւններ կատարւեցին, մինչեւ որ երկու կողմերն էլ հասկացան նոր ստեղծւած պայմանները եւ հաշտեցին իրար հետ:

Այստեղից զինւած գաղթականներից ոմանք անցնում են դադանի ճանապարհներով դէպի Շուշի, շատերը՝ Սիսիան եւ Երեւան: Օգոստոս 13-ին Չօրամասի զինւորները կարգով շարւեցան Գորիսի հրապարակում, ուր նրանց փօսք ասաց Անդրանիկը: Նա ասաց, թէ ով ուզում է կարող է գնալ Երեւան, սակայն տեղումը մնացողը պէտք է ենթարկւի զինւորական խիստ կարգապահութեան, մնացողը պէտք է անգամ ընդ միշտ որոշէ իր գաղթական քչով բաւականանայ եւ մի անգամ ընդ միշտ որոշէ իր գաղթական

Թիկունքում. արչաւանքի նախընթաց երեկոյեան տեղական հետեւակ ուժերով յաջողութեամբ գրաւեցինք Քաչալ Դաղի դաղաթը: Միւս օրը արչալոյսին կռիւն բորբոքեց: Թիկունքից մենք յաջողութեամբ խփում էինք քոչւորներին եւ նահանջողներին, բայց նրանց կրակը մեզ չէր բռնում, որովհետեւ նրանք ձորումն էին, մենք դադարեցինք: Աւաղակաբարոյ թիւրքերը, որոնք 1905 թ. խիստ մեծ նեղութիւն էին տուել Չանգեղուրի ու Սիսիանի հայութեանը, ըստ պանել էին դանձակեցի աննման մարտիկ եւ դաղափարական գործիչ Ստեփան Ստեփանեանին (Ռուբէն), գլուխը կտրել եւ ցից էին հանել, այժմ լաւ պատիժն ստացան. նրանք նախ քաշւեցին իրենց գիւղերը, ապա փախան լեռները: Անդրանիկի զօրամասը մնաց բաց դաշտում, պատմական Ուչ-Թափալարում:

Աղուդիի եւ Վաղուտիի ասպատակութիւններն արդելք էին հանդիսացել ժամանակին, որ Շուշու եւ Գանձակի գնդերին պատկանող երկու դաշտային թնդանօթները Սիսիանից փոխադրեն Գորիս: Հարւածող Չօրամասի դէպի Սիսիան շարժելուց օգտուելով եւ յուսալով որ ճանապարհը բացած կը լինի, այդ թնդանօթները սասունցի գնդի զինւորների հետ խճուղիով ուղեւորեցին դէպի Գորիս, բայց թուրքական Շաքի եւ Ղալաշուղ գիւղերը դիմադրեցին, եւ պէտք եղաւ այդ գիւղերն էլ ուժաւորել. բնակիչները փախան ետլաղները: Այս արչաւանքի հետեւանքն այն եղաւ, որ դաղթականութիւնը բուն Չանգեղուրից հնարաւորութիւն ստացաւ տեղափոխելու Սիսիան եւ մեծ մասամբ տեղաւորեց հէնց յիշւած թրքական լքած գիւղերում, օգտուելով թուրքերի տներից եւ նրանց թողնւած ուտեստեղէններից: Այդ տաճկահայ դաղթականներն էին, որ ամիսների ընթացքում ապահովեցին խճուղու անցուղարձը:

Օգոստոս 27-ի երեկոյեան պարզեց, որ երրորդ դումարտակի հրամանատար Բոնասարտեանը եւ ձիաւոր հարիւրեակի պետ Ջէրէջին Սիսիան անցնելու փոխարէն՝ մեկնել են Ղափանի վրայով դէպի Մեղրի, Մուսամբար-Թաւրիզի վրայով անդլիացիներին միաեալու նպատակով: Հարւածող զօրամասը դիչերով թուրքական գիւղերում, օգոստ. 30-ին դուրս է գալիս Անգեղակոթ հայկական մեծ գիւղը, որ Սիսիանի կենտրոնն է:

Օգոստ. 31-ին պատմական Անգեղակոթումն ենք, այնտեղ, ուր մի ժամանակ առեղծւածային Իսրայէլ Օրին դաղանի ժողովներ էր անում: Գիւղը լեցուն է զօրքերով, որոնց մեծ մասը ցանկանում է անցնել Երեւան հետեւեալ պատճառաբանութիւններով. —

ա) Առանց պետական օժանդակութեան, առանց ուտեստի, դը-

րամի, ռազմամթերքի՝ անհնար է Չօրամասը պահել. տեղական միջոցները չառ աղքատիկ են:

բ) Չանգեղուրը համաձայն հայ-թիւրքական դաշնագրի մնում է Աղլրէջանին. հետեւապէս տաճիկները չպէտք է հանդուրժեն, որ այդ տեղ զօրամասը մնայ. արդէն լուրեր են շրջում, որ կարճ ժամանակից յետոյ թիւրք եւ հայ մի յանձնախումբ պէտք է գայ այդ կողմերը՝ վերջնականապէս սահմանները ճշտելու համար եւ եթէ այդ պարագային Չօրամասը Չանգեղուրում մնացած լինի՝ ընդհարումներ տեղի կունենան, որ ցանկալի չէ: Մեր յոգնած եւ լքած զինւորները ի վիճակի չեն երկար կռիւ մղելու, մանաւանդ որ մերիկ են եւ կիսաբազմ:

գ) Քաղաքական տեսակէտով Չօրամասի անկախ գործունէութիւնը վատ կանգրադառնայ հայ եւ թիւրք յարաբերութեան վրա, մանաւանդ այնպիսի ժամանակ, երբ Երեւանի կառավարութեան դուրսը մաղից է կախւած. այդ պարագային Չօրամասի ղեկավարները չեն կարող ազատել ապագայ պատասխանատուութիւնից:

(Փակադծերի մէջ առեմ, որ այս եւ նման փաստացի վկայութիւնները, թեթեւ սրբազրուութիւններով, առաջ եմ բերում «Հայկական առանձին Հարւածող Չօրամասը» գրքից, տպւած՝ 1921 թ. Բոստոնում: Այդ գիրքը կաղւած է Անդրանիկի օրագրից, որ մեր իսկ աչքերի առաջ գրի է առել Անդրանիկի քարտուղար Եղիշէ Քաջունին, լուսանկարչական ճշտութեամբ):

Վերոյիշեալ առարկութիւնները ճարտար լեզուով եւ առողջ դատողութեամբ փչում էր ինքը Անդրանիկը՝ տալով հետեւեալ կտրուկ պատասխանը:

ա) Իրենք հրամանատարները եւ զինւորները Չօրամասի ուտեստի եւ պահելու մասին մտածելիք չունին. այդ բոլորի հոգսն ինքն է իր վրա առնում եւ կապահովէ ամէն կերպ, մանաւանդ որ տեղական ժողովուրդը տրամադիր է ամէն զոհողութեան, միայն թէ Չօրամասը մնայ:

բ) Չօրամասի դուրսը կամ բացակայութիւնը արդելք չի կարող լինել, որ տաճիկները Երեւանի դէմ պատերազմ յայտարարեն, եթէ կարողանան, ընդհակառակը, Չօրամասի գործունէութիւնը թերեւս աւելի վերապահ դարձնէ թիւրքերին այդպիսի քայլի դիմելու: Երբ թիւրքերը գրաւեն Բաղուն, չպէտք է ուշացնեն Ղարաբաղ-Չանգեղուրի վրա գալու, ապա եւ Երեւանի վրա յարձակելու, որի անկախութեան հետ նրանք ժամանակաւորապէս են հաշտուել:


գ) Միւս կողմից, Չանգեղուրն ու Սիսիանը ունին շատ մեծ յարմարութիւններ ինքնապաշտպանութեան համար. ժողովուրդը տրա-

մաղիր չէ ենթարկւելու թիւրքերին եւ կռիւ է ուղում. դժւարը մինչեւ մէկ ամիսը կամ ամիս ու կէսն է, որից յետոյ ճանապարհները փակւելու են ձիւնով եւ որ եւ է լուրջ զինուորական գործողութիւն անկարելի է դառնալու մինչեւ Գարուն, իսկ մինչ այն անսպասան փոփոխութիւն տեղի կունենայ ի նպաստ մեզ, որովհետեւ Դաշնակիցները պէտք է յաղթեն եւ Գերմանիան չարաչար սլարուելու է: Այս պերճախօս փաստարանութիւնից յետոյ, այնուամենայնիւ Զորամասի շատ հրամանատարներ որոշեցին հեռանալ: Լուր հասաւ այդ օրը, թէ Սասունի գնդի տասնապետ Թուֆնակին սպանել են Գիւմրի-Գժաճորի հայերը:

Սեպտ. 1-ին մեկնեց 2500 հոգով մշեցի Սմբատը՝ լքելով Անդրանիկին. նրա հետ գնացին կարեւոր տղաներ եւ խմբապետ-հրամանատարներ: Հարւածող Զորամասը քանդւեց. հեռացողները հաւաքեցին մալախանների Բղարչայ գիւղը, որտեղից կաղմակերպւած մտան Դարալագեազ, ուր սահմանի վրա յաջողութեամբ կուեցին թրքական Զուլ գիւղի հետ: Հարւածող Զորամասը, որ Գորիսից գուրս էր եկել մօտ 4000 հոգով, վերածւեց 1500 հոգու, որոնք մնացին հաւատարիմ Անդրանիկին մինչեւ վերջը. հեռացան գրեթէ բոլոր փորձւած խմբապետ-հրամանատարները:

Թաւրիզ

(Շարունակելի)



Հայ - Հայկական Բանակցութիւնները

Պատմութեան մէջ յաճախ չեն պատահում այսպիսի տարօրինակ դէպքեր, որ մի ազգի տարբեր հատւածներ իրար հետ բանակցեն բոլորովին անկախ պետութիւնների նման: Մենք այդ օրինակն էլ տըւինք: Ստորեւ հրատարակող վաւերագրերը — Հ. Հ. կառավարութեան եւ Ազգային Պատերազմութեան ներկայացուցիչների բանակցութեանց արձանագրութիւնները՝ հայոց նորագոյն պատմութեան ամենատխուր էջերից մէկն են յատկանշում:

Ինչպէս յայտնի է, Հայաստանի անկախութեան շրջանում Փարիզում կային հայկական երկու պատերազմութիւններ. մէկը՝ Ազգային Պատերազմութիւնը, բխած Արեւմտահայ Համագումարից՝ իրեն համարում էր թիւրքահայոց ներկայացուցչութիւն եւ դէպի Հայաստանի պետութիւնն ու կառավարութիւնը վերաբերում էր իբրեւ արտաքին ոյժ, միւսը՝ Հայաստանի Հանրապետութեան Պատերազմութիւնը՝ ուղարկւած Հայաստանի կառավարութիւնից, որ թէեւ ենթակայ էր վերջինիս, բայց շնորհիւ մի շարք պայմանների՝ օգտուում էր լայն իրաւունքներով: Այդ երկու պատերազմութիւնների յարաբերութիւնները լաւ չէին. արտաքնապէս քաղաքավարի ու սիրալիր, ինչպէս վայել է իրենց արժանապատուութեան դիտակից դիւանագէտներին՝ ներքին սուր հակամարտութեան մէջ էին, չասելու համար թշնամութեան:

Պատերազմութիւնների յարաբերութիւնները աանձնապէս լարւեցին, մանաւանդ, 1919 թ. Մայիս 28-ից յետոյ, երբ Երեւանում տեղի ունեցաւ Հայաստանի անկախութեան ու միութեան հանդիսաւոր յայտարարութիւնը եւ 12 արեւմտահայ պատգամաւորների ընդունելութիւնը Հայաստանի Ասրհրդի կազմի մէջ: Այդ դէպքը այնքան ապօրինի ու վրդովեցուցիչ թւաց Ազգ. Պատերազմութեան, որ Պօղոս Նուպար փաշան մի պահ նոյնիսկ սպառնաց հրապարակային բողոք բարձրացնել: Սակայն, ի վերջոյ, աւելի պաղարիւն եւ բանիմաց մարդկանց միջամտութեամբ, կարելի եղաւ մեղմել փաշայի

զայրոյթը, եւ երկու պատւիրակութիւններ ժիջեւ սկսեցին բանակ-
ցութիւններ, որոնք տեւեցին բաւական երկար. բանակցութիւնների
առարկայ եղաւ Ամբողջական Հայաստանի Կառավարութեան, Պար-
լամենտի եւ Պատւիրակութեան կողմութեան հարցը: Եւ ստացեց
հետեւեալ արդիւնքը:— *)

Պօղոս Նուպարը պահանջում էր կազմել —

- 1) Միացեալ Պարլամենտ. կէսը ռուսահայ, կէսը՝ տաճկահայ:
- 2) Միացեալ Ժամանակաւոր կառավարութիւն. կէսը տաճկահայ,
կէսը՝ ռուսահայ:
- 3) Կառավարութեան կազմի տաճկահայ անդամները նշանակու-
են Պօղոս Նուպարի Պատւիրակութեան կողմից. ռուսահայ անդամ-
ները՝ Հայաստանի ներկայ կառավարութիւնից:
- 4) Նախարարական պաշտօնների բաժանումը. կատարել փոխա-
դարձ համաձայնութեամբ, բայց նախարարապետը պէտք է լինի Պօ-
ղոս Նուպարը՝ մնալով նաեւ Միացեալ Պատւիրակութեան նախա-
դահ:
- 5) Արտաքին գործոց նախարարը պէտք է լինի ոչ-դաշնակցա-
կան:
- 6) Զինւորական նախարարը պէտք է լինի ոչ-դաշնակցական եւ
նշանակել երկու կողմերի ընդհանուր համաձայնութեամբ:
- 7) Քանի որ նախարարապետը պիտի ապրի Պարիզում, նրան Ե-
րեւանում պէտք է նշանակել փոխանորդ:
- 8) Ժամանակաւոր կառավարութիւնը կազմելուց յետոյ, ներ-
կայ սարլամենտին պիտի տրւի անորոշ ժամանակով դադար, մինչեւ
որ գումարւի միացեալ Պարլամենտը:
- 9) Տաճկահայերի պարլամենտական ընտրութեան ձեւը պէտք է
մշակել փոխադարձ համաձայնութեամբ եւ իսկոյն պէտք է անցնել
ընտրութիւններին:
- 10) Միացեալ Պատւիրակութիւնը պէտք է կազմել Փարիզում,
փոխադարձ համաձայնութեամբ, չորս-չորս կամ երեք-երեք ամէն
կողմից: Տաճկահայ անդամներին կը նշանակէ Պօղոս Նուպարը, իսկ
միւս կողմինը՝ կառավարութիւնը:
- 11) Պօղոս Նուպարի նշանակած անդամները անփոփոխելի են, եւ
կառավարութիւնն իրաւունք չպիտի ունենայ հրաժարեցնել նրանց
մինչեւ հայկական հարցի լուծումը:

*) Ս. Վրացեան, «Բանակցութիւններ Ազգ. Պատւիրակութեան եւ Հայաստանի
Հանրապետութեան միջեւ», 1920, Պոսթըն, էջ 8-11.

12) Նոր Պատւիրակութեան նախագահ լինելու է Պօղոս Նուպարը
եւ ամբողջապէս պատասխանատու պիտի լինի միացեալ կառավա-
րութեան առջեւ. չստ խնդիրներ նա պիտի լուծէ ըստ իր հայեցողու-
թեան, առանց կառավարութեան կամքը առնելու:

Հայաստանի Հանրապետութեան Պատւիրակութիւնն ընդունում
էր, որ՝

- 1). Կառավարութիւնն ու Պարլամենտը կազմելին կէս առ կէս՝
տաճկահայերից եւ ռուսահայերից:
- 2). Նախարարապետը պէտք է ապրի Հայաստանում եւ ոչ Փա-
րիզում, հետեւաբար Պօղոս Նուպար չի կարող այդ պաշտօնն ստան-
նել:
- 3). Զինւորական նախարարը պէտք է լինի չէզոք անձնաւորու-
թիւն, ինչպէս մինչեւ այսօր եղել է. արտաքին գործոցը՝ ներկայ
կառավարութիւնից կը նշանակել:
- 4). Երկու պատւիրակութիւնները կը ձուլեն Պօղոս Նուպարի
գլխաւորութեամբ, սակայն Միացեալ Պատւիրակութիւնը պէտք է
զործէ կառավարութեան հրահանգներով եւ պատասխանատու է կա-
ռավարութեան առջեւ:
- 5). Նոր Պատւիրակութեան տաճկահայ անդամները կարող են
նշանակել Պօղոս Նուպարի կողմից, բայց մի անգամ որ Պատւիրա-
կութիւնը կազմւեց, այլեւս ենթակայ է կառավարութեան:
- 6). Յանկալի է նոր Պատւիրակութիւնը կազմել երեք հոգուց —
նախագահ՝ Պօղոս Նուպար, անդամներ՝ մէկ դաշնակցական եւ մէկ
ոչ-դաշնակցական:

Իրաւական հիմքը այդ բանակցութեանց Ազգային Պատւիրակու-
թեան այն տեսակէտն էր, թէ Թիւրքահայաստանի խնդիրը Հայաս-
տանի Հանրապետութիւնից բոլորովին տարբեր եւ Հայաստանի կա-
ռավարութեան չվերաբերող խնդիր էր: Թիւրքահայոց միակ իրաւա-
սու եւ լիազօր ներկայացուցչութիւնը ինքը Ազգային Պատւիրակու-
թիւնն էր, հետեւաբար Մայիս 28-ի յայտարարութիւնը «Արարատ-
եան Հայաստանի» կառավարութեան կողմից կոպիտ ոտնձգութիւն
էր եւ անհարկի միջամտութիւն թիւրքահայոց գործերին: Եւ ահա
որպէսզի որոշ եւ վերջնական հասկացողութեան մի եզր գտնւի, Փա-
րիզից Երեւան ուղարկեց յատուկ մի առաքելութիւն Պ. Վ. Թէքէ-
եանի գլխաւորութեամբ:

Գործնականում սակայն այս իրաւական սկզբունքը խախտում
էր. մինչ բանակցութիւնների հիմքը ըստ երեւոյթին ազգային-հատ-
ւածական ընդոյթ էր կրում՝ Թիւրքահայ-ռուսահայ, Երեւան ուղար-
կող պատգամաւորութիւնը եւ, ինչպէս հետագային կը տեսնենք,

նաեւ Երեւանի կառավարութեան ներկայացւած պահանջները աւելի կուսակցական գունաւորում ունէին: Նախ առաքելութեան կազմը — երկու թիւրքահայերի կողքին դրւած էին երկու ռուսահայեր, այն էլ շատ շեշտւած հասարակական-կուսակցական գործիչներ, որոնք թիֆլիս նստած՝ կատաղի պայքարի մէջ էին Հայաստանի կառավարութեան դէմ: Եթէ Ազգ. Պատւիրակութիւնը զուտ արեւմտահայոց կազմակերպութիւն էր եւ բանակցութիւնները տեղի պիտի ունենային ազգային երկու հատւածների միջեւ, այդ դէպքում Ազգային Պատւիրակութեան առաքելութիւնը միայն արեւմտահայերից բաղկացած պիտի լինէր:

Միւս կողմից, առաքելութիւնը կազմւած էր նեղ կուսակցական սկզբունքով. թիւրքահայերից առնւած էին երկու ռամկավարներ, ռուսահայերից՝ երկու ժողովրդականներ, որ ասել է՝ նոյնպէս ռամկավարներ: Ուրիշ խօսքով, առաքելութիւնը իր կազմով արեւմտահայկական ներկայացուցչութիւն չէր, այլեւ կուսակցական մի մարմին — անհաշտ հակառակորդ ա՛յն կուսակցութեան, որ Հայաստանում իշխանութեան գլուխ էր դնում եւ որի հետ Ազգ. Պատւիրակութիւնը ուզում էր բանակցութիւններ վարել:

Անկողմնակալ ընթերցողի համար պարզ է, որ Ազգ. Պատւիրակութեան ցուցանակի տակ ռամկավար-ժողովրդական կազմակերպութիւններն էին գնում Երեւան՝ իշխանութեան նւաճման ծրագրով: Պօղոս փաշայի դիրքի ամենատեղի կողմն էր այս. նա թոյլ էր տւել, որ իրեն շեղեն ազգային-հատուածական հողից եւ դարձնեն կուսակցական-հատուածական նպատակների դրօշակիր: Ուստի իր գոյութեան իրաւական հիմքը՝ նա, առանց զգալու, խախտում էր եւ իրական հիմքերը: Եւ այսպիսով արդէն սկզբից իսկ դատապարտւած էր ձախողանքի:

Երեւանում դրութիւնը այդպէս էլ ըմբռնեց, թէ՛ Փարիզից եկողները ոչ թէ ազգն են ներկայացնում, այլ որոշ կուսակցութիւններ: Եւ այդ երկու պատճառով. նախ՝ որովհետեւ Հայաստանում եւ Կովկասում ապրող արեւմտահայերը փաստօրէն ենթակալ չէին Ազգ. Պատւիրակութեան տեսչութեան եւ իրաւականօրէն ու իրականօրէն կապւած էին Հայաստանի Հանրապետութեան հետ: Մայիս 28ի ակտը հանդիսաւոր նւիրագործումն էր այդ փաստի: Ուրեմն լաւագոյն դէպքում, Ազգ. Պատւիրակութիւնը կարող էր խօսել թիւրքահայութեան մէկ մասի անունից:

Միւս կողմից, եթէ Ազգ. Պատւիրակութիւնը համազգային բանակցութիւնների էր ձեռնարկում, ինչո՞ւ նրա ուղարկւած առաքելութիւնը բաղկացած էր միայն մէկ հոսանքի ներկայացուցիչներից:

չէ՞ր որ Արեւմտ. Համագումարին մասնակցել էին եւ ուրիշ կուսակցութեան անդամներ. չէ՞ որ, վերջապէս, Ազգ. Պատւիրակութեան մէջ կային ռամկավարներից զատ եւ ուրիշ տարրեր: Միայն մէկ կուսակցութեան պատկանող եւ այն էլ բացառապէս հակադաշնակցական տարրեր մտցնելով առաքելութեան կազմի մէջ՝ Պօղոս Նուպարը չէր ընդգծում, որ բանակցութիւնները կրում են կուսակցական բնոյթ, այսինքն՝ նրա առաքելները գնում են բանակցելու Հ. Յ. Դաշնակցութեան հետ:

Եթէ այս ենթադրութիւնը ճիշտ էր, այն ժամանակ բոլորովին անտեղի էր ժողովրդակ. կուսակցութեան պարագլուխներ Ս. Յարութիւնեանի եւ Ա. Մխիթարեանի ներկայութիւնը առաքելութեան մէջ: Ժողովրդ. կուսակցութիւնը նոր էր աղմուկ-ժխտող դուրս եկել կառավարութիւնից, բոյկոտ յայտարարել խորհրդարանական ընտրութիւններին եւ բուլեւերիկներին յատուկ յախուռն միջոցներով պայքարում էր Հայաստանի իշխանութեան դէմ: Այդ պայքարի ոգին ու ներշնչողն էր Փարիզից Միք. Պապանջանեանը, մի գործիչ, որ Հայաստանի կառավարութիւնից ստացած լինելով իր մանդատը՝ անցել էր սակայն Ազգ. Պատւիրակ. եան կողմը: Իսկ Կովկասում գործնական պայքարի ղեկավարը Սամ. Յարութիւնեանն էր՝ Հայաստանի նախկին նախարարը, որ այժմ իր հակառակութիւնը Հայաստանի կառավարութեան հասցրել էր այնտեղ, որ հնարաւոր էր համարում օգտագործել օտար աղբեղութիւններ մեր ներքին պայքարի մէջ:

Այս հիմունքներով եւ այսպիսի առաքելութեամբ սկսող բանակցութիւնները, բնական կերպով Երեւանում հասկացւեցին իբրեւ կուսակցական բանակցութիւններ, այդ պատճառով էլ կառավարութեան կողմից նախնական ձեւական պայմանները լրացնելուց յետոյ՝ գործը յանձնեց կուսակցութիւններին: Փաստօրէն մի կողմից բանակցում էին Հ. Յ. Դաշնակցութեան, միւս կողմից՝ ռամկավար եւ ժողովրդական կուսակցութիւնների ներկայացուցիչները: Զեւականօրէն համապատասխան կողմերն ունէին Ազգ. Պատւիրակութիւնից եւ Հ. Հ. Կառավարութիւնից լիազօրաւորներ. իրապէս՝ մէկ կողմը խօսում էր իբրեւ ռամկավար ու ժողովրդական, միւս կողմը՝ որպէս դաշնակցական:

Բանակցող կողմերի ներկայացուցիչներն էին. — Ազգ. Պատւիրակութեան առաքելութիւն՝ Վ. Թէքեան (նախագահ), Սամ. Յարութիւնեան, Ն. Տէր-Ստեփանեան, Ա. Մխիթարեան. Հայաստանի կառավարութեան պատգամաւորներ՝ Ս. Վրացեան (նախագահ),

Շաւ. Միսաքեան, Մարտ. Յարութիւնեան: Երկու կողմի համաձայնութեամբ քարտուղարութիւն էր անում Յ. Գոչարեանը:

Բանակցութիւններն սկսեցին 1919 թ. Հոկտ. 29-ին եւ, որոշ ընդհատումով, վերջացան 1920 թ. Մարտ 25-ին:

Մի նիստ եւս տեղի ունեցաւ Ազգ. Պատուիրակութեան լիազօր Ս. Յարութիւնեանի եւ Հ. Հ. Կառավարութեան ներկայացուցիչ Ս. Վրացեանի մասնակցութեամբ, որով վերջնական հաշւեյարդարի ենթարկեցին այդ նմանը չունեցող բանակցութիւնները, որոնց ամբողջական եւ բանակցողների կողմից պաշտօնապէս ստորագրւած արձանագրութիւններն են որ հրատարակւում են ստորեւ:

Այս բանակցութիւնների շուրջ ժամանակին շատ կրքոտ խօսքեր եղան. այսօր էլ դեռ նրանք բոլորովին գուրկ չեն այժմէականութիւնից, թէեւ, ըստ էութեան, արդէն դարձած են պատմութիւն: Յանուն անաչառութեան, «Վէմ»ը պատրաստ է տեղ տալու եւ բանակցող կողմերի ներկայացուցիչների լուսաբանութիւններին կամ յուշերին: Մասնաւորապէս, փափաքելի է, լսել Պ. Վ. Թէքէեանին եւ Ն. Տէր-Ստեփանեանին, որոնց գրութիւնները պատրաստ ենք հրատարակելու «Վէմ»ի էջերում:

ԽՄԲ.

ԲԱՆԱԿՑՈՒԹԻՆՆԵՐ ԱԶԳ. ՊԱՏԻՐԱԿՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՅՐԱԾ
ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ, ՊԱՐԼԱՄԵՆՏԻ ԵՒ ՊԱՏԻՐԱԿՈՒԹԵԱՆ
ԿԱԶՄՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԵՐՄԱՐ

Արձանագրութիւն I.

Հոկտեմբերի 29-ին, առաւօտեան ժամի 12-ին, Հայաստանի Հանրապետութեան վարչապետ Ալ. Խատիսեանի հրաւերով տեղի ունեցաւ Ազգ. Պատուիրակութեան ներկայացուցիչներ պ. պ. Վ. Թէքէեանի, Ն. Տէր-Ստեփանեանի եւ Ս. Յարութիւնեանի եւ իր կողմից ներկայացած պ. պ. Ս. Վրացեանի, Մ. Յարութիւնեանի եւ Շ. Միսաքեանի միջեւ սկսող բանակցութիւնների առաջին նիստը:

Վարչապետ. — Պ. Վարչապետը բացեց նիստը հետեւեալ ճառով.

« Պարոններ, ողջունելով ձեզ, այստեղ հաւաքւածներդ, ես նախեառաջ պէտք է բացատրեմ ներկայ ժողովի նպատակը: Հայաստանի կառավարութիւնը ստացել է Հայոց Ազգ. Պատուիրակութեան նախագահ Պողոս փաշա Նուպարից տեղեկագրութիւն այն մասին, որ Փարիզում գումարւած Ազգ. Համագումարը, ինչպէս նաեւ Ազգ. Պատուիրակութիւնը, ձգտելով յաջողացնել Միացեալ Հայ.

Պատուիրակութեան եւ Միացեալ Հայաստանի կառավարութեան եւ Պարլամէնտի ստեղծումը, ուղարկում է այստեղ՝ Երեւան յատուկ պատգամաւորութիւն՝ բաղկացած պ. պ. Վ. Թէքէեանից, Նշան Տէր-Ստեփանեանից, որոնց այստեղ միանում է, Պատուիրակութեան որոշմամբ, Սամսոն Յարութիւնեանը: Ես ողջունում եմ այս անձանց դաշուստը, ինչպէս նաեւ այն նպատակը, որի համար նրանք եկել են: Հայաստանի կառավարութիւնը ինքը լիազօրութիւն չունի տալ այս կամ այն պատասխանը այն առաջարկութիւններին, որոնք տրեցին նրան այս Պատուիրակութեան կողմից: Ուստի նա յանձնեց այդ առաջարկութիւնները այն մարմիններին, որոնց վստահութեամբ եւ լիազօրութեամբ կառավարութիւնը գոյութիւն ունի, գործում է եւ ընդունում է որոշումներ: Ես պատիւ ունեմ յայտնելու, ինչպէս այստեղ եկած պատգամաւորութեանը, այնպէս եւ այստեղ գտնուող պ. պ. Ս. Վրացեանին, Մ. Յարութիւնեանին եւ Շ. Միսաքեանին, որ այն որոշումները, որոնց կը յանգի յիշեալ վեց անձանց միացեալ խորհրդակցութիւնը, կառավարութիւնը համարում է իր համար պարտաւորեցուցիչ եւ անպայման գործադրութեան ենթակայ: Այն որոշումների մասին, որոնք կընդունեն այդ խորհրդակցութեան մէջ, ես, յանուն կառավարութեան, պաշտօնական նամակով ուղարկած Ազգ. Պատուիրակութեան պատուիրակների ձեռքով կը տեղեկացնեմ Պատուիրակութեանը: Միեւնոյն ժամանակ՝ ես, հիմնելով իմ ունեցած տեղեկութիւնների վրա, կարող եմ յայտնել այստեղ, որ նոյն որոշումը կընդունի նաեւ Հայաստանի Խորհրդարանի կողմից: Ես հրաւիրում եմ խորհրդակցութեան անդամներին դիմել համերաշխ աշխատութեան, որի հետեւանքը պիտի լինի համաձայնութիւն կայացնելը: Ողջունում եմ իմ կողմից նաեւ պ. պ. Ս. Վրացեանին, Մ. Յարութիւնեանին եւ Շ. Միսաքեանին: Առաջարկում եմ սկսել ձեր պարապմունքները, սահմանելով հերթական նախագահութիւն պ. պ. Թէքէեանի/ եւ Վրացեանի կողմից եւ հրաւիրելով քարտուղար փոխադարձ համաձայնութեամբ:

Վ. Թէքէեան. — Պատասխանելով Ազգ. Պատուիրակութեան ներկայացուցիչների կողմից, նախ շնորհակալութիւն յայտնեց պ. Վարչապետի սիրալիք խօսքերի համար եւ յետոյ աւելացրեց, որ իրենք եւս տողորւած են միեւնոյն զգացումներով եւ ունին նոյն տրամադրութիւնները իրենց յանձնւած փափուկ գործը փոխադարձ համաձայնութեամբ գլուխ հանելու մասին: Մենք հաւատացած ենք, յարեց նա, որ մեզ հետ բանակցող ներկայացուցիչները, նոյնպէս ինչպէս մենք, ուրիշ նպատակ չունին սկսելով այս բանակցութեանց, բայց եթէ մի եւ անկախ, ամբողջացած Հայաստանի կազմութիւնը, ապա-

հովուի լաւագոյն երաշխիքներով: Ամբողջ հայ ժողովուրդը աւելնկառոյց կը սպասէ այն կարեւոր ակտին, որ կատարւելու է այսօր եւ ինքն ու իր ընկերները լրիւ յոյս ունին, որ այդ ակտը կը կատարւի:

Ս. Վրացեան. — Մենք էլ եկել ենք միեւնոյն զգացումներով տողորած: Մեր ցանկութիւնն էլ է շուտով իրականացած տեսնել հայ ժողովուրդի բոլոր հատւածների միութիւնն ու Հայաստանի ամբողջացման գործը: Ողջունելով ձեր գալուստը եւ ներկայ խորհրդակցութիւնը՝ մենք յոյս ունենք, որ կը կարողանանք գտնել ընդհանուր լեզու եւ կը համաձայնենք այն հարցերի վերաբերմամբ, որոնց համար հաւաքւել ենք այսօր:

Խորհրդակցութիւնը ընդունեց նախագահութեան վերաբերմամբ առաջարկած եղանակը եւ քարտուղարի սլաշտօնով որոշեց հրաւիրել պ. Յակովբ Գոչարեանին:

Առաջին նիստի նախագահութիւնը ստանձնեց պ. Վ. Թէքէեան: Դրանից յետոյ պ. Թէքէեանը կարդաց Ազգ. Պատւիրակութեան կողմից ներկայացւած առաջարկութիւնները: Ժողովականների կողմից եղան հարցումներ զանազան կէտերի մասին, որոնց վերաբերմամբ տրեցին բացատրութիւններ:

Առաջարկութիւնների ընդունելու յետաձգեց յաջորդ նիստին:

Ստորագրութիւն երկու կողմերի ներկայացուցիչների,
Ա. Խատիսեանի եւ Յ. Քոչարեանի:

Ծրագիր Հայ Ազգային Պատւիրակութեան ամբողջական Հայաստանի վարչական առժամեայ կազմի մասին

Անդրկովկասեան Հայաստանի մէջ ներկայիս իրականացուց (de facto) գոյութիւն ունեցող Հայ Հանրապետական Կառավարութեան եւ նախկին Օսմանեան Հայաստանի հայերը ներկայացնող Ազգային Պատւիրակութեան միջեւ կը կնքուի համաձայնութիւն մը հետեւեալ հիմունքներու վրա:

Ա. ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ

1. Կը կազմուի Առժամեայ կառավարութիւն մը, որու Նախարարական Խորհուրդը կը բաղկանայ 9-13 անդամներէ:

2. Նախարարական Խորհուրդին մէջ կը մտնեն 4-6 արեւելահայ եւ 4-6 արեւմտահայ նախարարներ, իւրաքանչիւր կողմին համար հա-

ւասար քուլ. Պատերազմական Նախարարի անձնատուութիւնը այս նկատողութենէն դուրս կը մնայ:

3. Նախարարական Խորհուրդը նոյնպէս կէս առ կէս կը կազմուի՝ առաջին կէսը դաշնակցական եւ երկրորդ կէսը ժողովրդական եւ ռամկավար անդամներէն: Պատերազմական Նախարարը անկուսակցական է եւ կանւանի երկու կողմերու համաձայնութիւնովը:

4. Վարչապետը կըլլայ արեւմտահայ մը, որ կը ներկայացուի Ազգ. Պատւիրակութեան կողմէ. Հանրապետութեան ներկայ Խորհրդարանը կը վաւերացնէ անոր Վարչապետի պաշտօնը:

5. Ըստ որում Վարչապետը Փարիզ կը մնայ իբրեւ նախագահ Խաղաղութեան Համաժողովին մեր Հայկական Պատւիրակութեան, Նախարարական Խորհուրդին մէջ իր անձնատուութիւնը հաշի կառուելի, քի, հատւածի եւ հոսանքի տեսակետներէն:

6. Վարչապետին Փարիզ մնալուն պատճառաւ, Հանրապետութեան ներկայ Խորհրդարանը կընտրէ դեր-վարչապետ մը (վիս-պրէ-վիդան), ով եւ ինչ հատւածէ ու հոսանքէ որ ինքը ուզէ: Դեր-վարչապետին ներկայացուցած հատւածն ու հոսանքը հաշի կառուելի Նախարարական Խորհուրդի կէս առ կէսի կազմին մէջ:

7. Նախարարական միւս քղաքականները կը բաշխուին կողմերու փոխադարձ համաձայնութեամբը: Անոնց յատկացումը կը մտնէ կնքելիք վարչական համաձայնագրի մէջ:

8. Եթէ ու եւ պատճառով Նախարար մը պակսի, իր յաջորդը կը նշանակուի միեւնոյն հատւածէն եւ հոսանքէն եւ միեւնոյն եղանակով, որով նշանակւած էր պակսող անդամը:

9. Նախարարական Խորհուրդի անդամներուն մէջ Դաշնակցական հոսանքի պատկանող կէս մասը կը նշանակուի ներկայ Խորհրդարանի մէջ մեծամասնութիւն կազմող նոյն կուսակցութեան բաժինէն (*Փրաքսիօն*), կամ ուրիշ ուրիշ պատասխանատու մարմինէ մը՝ թէ արեւելահայ եւ թէ արեւմտահայ դաշնակցական նախարարներու վերաբերմամբ. գալով միւս կէսը կազմող մասին՝ անոնցմէ արեւմտահայ նախարարները կը ներկայացուին Ազգային Պատւիրակութեան կողմէ եւ արեւելահայ նախարարները՝ ժողովրդական կուսակցութեան պատասխանատու մարմին կողմէ:

10. Նախարարական Խորհուրդը արտաքին թէ ներքին քաղաքականութեան վերաբերեալ եւ բացառիկ կարեւորութիւն ունեցող որոշումներ տալու ժամանակ՝ ինչպէս պատերազմի յայտարարութիւն եւ հաշտութեան կնքում, խորհրդարանական ընտրութիւններ, ընկերային բարեփոխումներ եւ այլն՝ կը փնտռէ բոլոր անդամներու

թիւին վրա 7-ի՝ եթէ 9 է այդ թիւը, եւ 10-ի՝ եթէ 13 է, մեծամասնութիւնը:

11. Եթէ Նախարարական հորհուրդը պէտք ունենայ հրահանգներ տալու Պատուիրակութեան, այդ հրահանգները փութարկած կը համարին միայն այն ժամանակ, երբ նախարարներու երկու-երրորդը միաբանած են՝ որոշման վրա: Այս պարագային կը դիմւի նաեւ արտասահման կամ աշխարհ բացակայ գտնուող Վարչապետին եւ ուրիշ նախարարներու ձայնին:

Բ. ՊԱՏԻՒՐԱԿՈՒԹԻՒՆ

1. Ամբողջական Հայաստանի Միացեալ Կառավարութիւնը կունենայ միակ Պատուիրակութիւն մը, որ կը ներկայացնէ Հայ ազգը հաղութեան Համաժողովին մօտ:

2. Պատուիրակութիւնը կը բաղկանայ 7 անդամէ, որոնց 4-ը արեւմտահայ եւ 3-ը արեւելահայ:

3. Պատուիրակութեան նախագահն է Հանրապետութեան Կառավարութեան Վարչապետը:

4. Պատուիրակութեան կազմին մէջ՝ մէկ կողմէ Դաշնակցական Կուսակցութիւնը եւ միւս կողմէ ոչ-դաշնակցականները ներկայացւած կըլլան հաւասար թւով, այսինքն 3 առ 3. Նախագահ Վարչապետը, իբրեւ անկուսակցական դուրս կը մնայ ուժերու այս յարաբերութեան:

5. Պատուիրակութիւնը, նման կառավարութեան, կը մնայ անփոփոխելի մինչեւ Ամբողջական Հայաստանի հորհրդարանի գումարումը: Անդամներու պակասման պարագային՝ անոնց յաջորդները կորուշին նոյն հատւածէն եւ հոսանքէն եւ նոյն եղանակով, ինչպէս եղած էր պակասած անդամին համար:

6. Պատուիրակութեան արեւմտահայ անդամները կառնին Արեւմտահայ Ազգային Համագումարին կողմէ ընտրւած ներկայ Ազգային Պատուիրակութեան անդամներուն մէջէն՝ պահելով հոն ներկայացւած հոսանքներուն համեմատութիւնը. այն է՝ 2 ոչ-դաշնակցական եւ մի դաշնակցական. ի փոխարէն 3 արեւելահայ անդամները կորուշին Հանրապետութեան ներկայ հորհրդարանի կողմէ. այսպէս՝ 2 դաշնակցական եւ մի ժողովրդական. սոյն վերջինը կընտրուի եւ ցոյց կը տրուի ժողովրդական Կուսակցութեան պատասխանատու մարմինին կողմէ:

7. Պատուիրակութիւնը լայն իրաւասութիւն կունենայ բանակցելու Համաձայնական Պետութեանց եւ հաղադութեան Համաժողովին

հետ եւ հետապնդելու՝ Համաժողովին ներկայացւած Յիշատակագրին սահմաններուն մէջ՝ հայկական դատի լուծումը:

8. Պատուիրակութիւնը ինքը կը նշանակէ, երբ պէտք ըլլայ, վերոյիշեալ պետութեանց մօտ Հայաստանի դեսպանները: Եթէ Կառավարութիւնը պէտք գգայ նոյն պետութեանց մօտ ֆաղափական առաքելութիւններ դրկելու, նախապէս կը ստանայ այդ մասին Պատուիրակութեան հաւանութիւնը:

Կ. Պատուիրակութիւնը, նման կառավարութեան, իր գործունեութեան համար պատասխանատու է Ամբողջական Հայաստանի հորհրդարանին:

Գ. ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

1. Հանրապետութեան ներկայ հորհրդարանը սոյն համաձայնագիրը վաւերացնելէ ետք, երբ անոր հիման վրա կազմւած նոր Առժամանակեայ Կառավարութիւնը կը ձեռնարկէ իր պաշտօնին, ինքզինքն լուծւած կը հռչակէ, տալով իր օրէնսդրական իրաւունքները Առժամանակեայ Կառավարութեան եւ պարտք դնելով անոր վրա շուտով մշակել ընտրութեանց հրահանգը եւ ընտրել տալ Ամբողջական Հայաստանի հորհրդարանը:

2. Ամբողջական Հայաստանի հորհրդարանը, որը իսկապէս Նախա-հորհրդարան (Pres-Parlement) մըն է, կը գործէ մինչեւ Սահմանադիր Ժողովի (Constituent) գումարումը, որ միմիայն կարելի է հայկական դատին լուծումէն եւ հայկական հողամասերու գրաւումէն ետք:

3. հորհրդարանը կը բաղկանայ ընդամենը 80 անդամէ, որոնց կէսը կընտրեն արեւմտահայերը եւ միւս կէսը՝ Արեւելեան Հայաստանի ժողովուրդը:

4. Նկատելով, որ Թրքահայաստանը գրաււած չէ տակաւին, եւ արեւմտահայ ժողովուրդը մեծ մասամբ երկրէն դուրս կը գտնուի, արեւմտահայոց մասին ընտրութիւնները կը կատարուին երկրի մէջ եւ աշխարհ գտնուող բոլոր արեւմտահայերու կողմէ, ուր որ հնար է: Արտասահմանի մէջ փութարկող արեւմտահայերը այսպէսով յանձնառու եղած կը նկատուին, ինչպէս պէտք է յայտարարուի կանխաւ, Հայաստանի ֆաղափացիներ դառնալու:

5. հորհրդարանը օրինաւորապէս իր առաջին նիստը կը գումարէ երբ ընտրւած արեւմտահայ ներկայացուցիչներու առնուազն երեք-չորրորդը եւ Արեւելեան Հայաստանի ներկայացուցիչներուն նոյնպէս երեք-չորրորդը հաւաքւած ըլլան:

Դ. ՎԱԽԵՐԱՑՈՒՄ ԵՒ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ ՆԵՐԿԱՅ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ

Ներկայ համաձայնագիրը այժմուս հոգիարարանին կողմէ վաւերացել է երկու կողմի լիազօրութեամբ ստորագրութիւնը ստանալէ ետք՝ կը ստանայ օրէնքի ոյժ եւ կը հրատարակուի:

Հրատարակութիւնը կը կատարուի բանաձեւով մը, որուն մէջ կը շեշտուի թէ նախկին Թրքահայաստանն է, որ կազմած է իր կառավարութիւնը եւ անոր միացած է Անգլիկովկասի մէջ իրականապէս (de facto) գոյութիւն ունեցող Արեւելեան Հայաստանի Անկախ Հանրապետութիւնը, թէ երեսներ ընդունած է իբրեւ առժամեայ մայրաքաղաք եւ թէ Ամբողջական Հայաստանի վերջնական մայրաքաղաքը պիտի ըլլայ նախապէս Թուրքիոյ մաս կազմող Հայաստանի քաղաքներէն մին:

Վ. ԹԵՔԵՆԱՆ

(Շարունակելի)

Երեւան, 21 Հոկտեմբեր 1919

ՀԻՆ ԹՈՒՂԹԵՐ

III

ՇԻՐՎԱՆՋԱԴԵՒԻ ՆԱՄԱԿԸ ՊՈԼՍԻ ՄԱՍՈՒԼԻՆ

Նամակ խմբագրութեան

Մեր երիտասարդ քանքարաւոր բանաստեղծ Ա. Եարճանեանի բարութեան շնորհովն է, որ այսօր Պօլսից ստացայ «Արեւելք»-ի, «Ժամանակ»-ի եւ «Մանգոլմէի Էֆքեար»-ի այն համարները, ուր զետեղուած են քննական յօդուածներ Արէլեան-Արմէնեան թատերախումբի առաջին ներկայացման եւ իմ «Պատուի Համար» պիեսի մասին:

Խորապէս զգացուած եմ այն ջերմ ընդունելութիւնից, որին արժանացել է իմ համեստ բեմական երկը Կ. Պօլսի հայ հասարակութեան եւ մամուլի կողմից:

Մինչամայն ոգեւորութեամբ կարդացի յայտնի վիպասան Գրիգոր Զոհրաբի նուրբ, խորը հոգեբանական յօդուածը, 52-րդ թիկնաթոռի, պ. Արամ Անտոնեանի եւ պ. Գ. Թ.-ի խաղաղաւ տողերը, սլափառելի դերասան Մնակեանի հմուտ դիտողութիւնները եւ հումօրիստ Արփիարի սրամիտ ակնարկները:

Կարդացի եւ զգացի, որ իմ դրէշը չափազանց տկար է մի քանի տողով արտայայտելու ուրախութեանս եւ երախտագիտութեանս չափը Պօլսի մամուլին, քննադատներին եւ մանաւանդ հասարակութեան:

Անձամբ ինձ համար թանկ է այդ գնահատութիւնը այն պատճառով, որ ես միշտ մեր տաճկահայ եղբայրներին համարել եմ եւրոպացիներ իրանց գրականական - գեղարուեստական անաչառ պահանջներին եւ մանաւանդ քննադատական վայելուչ եւ կիրթ եղանակի համար: Զեղնում է որ նկատվում է Փրանսիացու նրբազգացութիւնը եւ գերմանացու անկախութիւնը անհատական միտումներից եւ նախապաշարումներից: Երջանիկ պիտի համարի իրան Արէլեան-Արմէնեան խումբը, որ այսօր մի այդպիսի չրջանումն է: «Ես կը վերադարձնեմ Բագուի Կուլտուրական Միութեանը ստացածս նը-

պատրեւ եւ չուտ չեմ վերադառնալ Կովկաս», գրում է ինձ իւր վերջին նամակում Յով. Արէլեանը:

Հասկանալի է: Գրականութիւն, թատրոն, գեղարուեստ էն նուրբ ծաղիկներն են, որոնք պահանջում են ամենաքնքոյշ վերաբերմունք: Մի կոսովտ հսկում, լինի այն նախանձ թէ անկրթութիւն, կարող է թառամեցնել նրանց: Եւ ես անսահման ուրախ եմ, որ մեր տաճկահայ եղբայրները այդչափ նրբազգաց են արտիստի եւ գրագէտի, թատրոնի եւ գրականութեան անձնասիրութեան նկատմամբ: Միայն այդպիսի մի խրախուսիչ շրջանում կարող է ազատ շունչ քաշել գեղեցիկն ծառայողը . . . : Այս հիման վրայ ես թոյլ եմ տալիս ինձ ամբողջ հոգով բողբոջելու պ. Գրիգոր Զոհրաբի հետեւեալ տողերի դէմ.

« Յաւեցայ միայն, որ ուսահայերը թատերական ասպարէզին վրայ ալ գերզանցութիւնը խլեցին մեր ձեռքէն, անիրաւնե՛րը »:

Ոչ, անիրաւը դուք էք, յարգելի արուեստակից: Ռուսահայերը չեն խլել եւ չեն կարող խլել ձեզնից ոչ մի գերազանցութիւն: Եթէ տաճկահայը իւր կեանքի սոսկալի օրերին կարողացել է տալ մեզ մի շարք նշանաւոր տաղանդներ, որոնցով հիանում ենք մենք ուսահայերս եւ որոնց մէջ դուք առաջնակարգ տեղ ունիք, ապա կարելի է երեւակայել, թէ այսուհետեւ նրա հոգին, որ այժմ ազատ է կապանքներից, որպիսի հսկայական թփուլներ պիտի դործի: Զէ՞ որ Պօլիսն էր, որ տուեց ուսահայ թատրոնի լաւագոյն դարձերը եւ առաջին ինքնուրոյն բեմական երկերը. . . : Եւ ես համոզուած եմ, որ շատ մօտիկ է այն ժամանակը. երբ Պօլիսը կողարկի ուսահային փոխադարձ այցելութեան աւելի ընտիր խում, աւելի ընտիր բեմական ինքնուրոյն երկերով. . .

Բարի եղէք ընդունելու յարգանքներիս հաւաստին

Պարիզ

ՇԻՐՎԱՆԶԱԴԷ

22 Դեկտեմբեր 1908 թ.

IV

ՇԻՐՎԱՆԶԱԴԷԻ ՆԱՄԱԿԸ Պ. Ա. ԱՆՏՈՆԵԱՆԻՆ

Սիրելի արքեստակից!

Պատիւ ունեցայ ստանալ Ձեր երկու նամակը: Առաջին նամակի առթիւ դժարանում եմ Ձեզ գոհացում տալ, վասն զի, դժբախտա-

բար, չունիմ Ձեր պահանջած լուսանկարները: Միակ լուսանկարս անցեալ տարի Պարիզ դուրս բերուածն է, որ տպուեց «Գեղունու» վերջին թւի մէջ եւ որի քլիշէն մեր սիրելի Տ. Կամսարականի քով է: Այսօր գրեցի նրան, որ քլիշէն ուղարկէ Ձեզ:

Անչափ ուրախացրեց ինձ Ձեր երկրորդ նամակը: Տաճկահայ այդչափ նշանաւոր գրողների ուղարկութիւնը դէպի նւաստս ինձ համար մի անգնահատելի պսակ է: Սպասում եմ անհամբեր ձեր ժողովածուին եւ ոչ միայն ես, այլ եւ շատ շատերը: Եթէ կարողանայիք մինչեւ այժմ լոյս ընծայել, մեծ քանակութեամբ վաճառուած կը լինէր, գոնէ Կովկասում: Բոլոր գրավաճառները հետաքրքրւած են: Աշխատեցէք դոնէ մինչեւ յօբելանի օրը հասցնել:

Անտիպ բան չունիմ ուղարկելու: Հոգեկանս էլ այնքան դէժ է, որ դրիչ շարժել չը դիտեմ: Բացի այդ, շատ աւելի դնահատելի կը լինի «Ժողովածուն», եթէ լոյս տեսնի առանց իմ որ եւ է մասնակցութեան: Իմ ձայնը ձեր սքանչելի համերգի մէջ կարող է հնչալ դիսսոնանս:

Կը խնդրէի, որ «Մշակի» եւ առհասարակ իմ հակառակորդների մասին բան չը լինէր «Ժողովածուի» մէջ: Մի այդպիսի սքանչելի գրականական երկ թողէք մնայ իր արժանի բարձրութեան վրայ: 18 նշանաւոր տաճկահայ հեղինակների միաձայն համակրանքը դէպի ինձ կարօտ չէ որ եւ է բնակուի, ես անսահման պարծենում եմ ձեր ուղարկութեամբ: Աւելի մեծ պատիժ չէին կարող սպասել իմ հակառակորդները:

Իմ գրքերը Կ. Պօլսից շատ են պահանջում, բայց պահանջում են առանց գրամի: Ահա 15 տարի է, որ ես կօմիսիոնով ոչ մի գրավաճառանոցի գիրք չեմ տալիս: Շատ եմ կորցրել, շատ: Այժմ ես զիջում եմ անգամ մինչեւ 30 % արժէքից, բայց կանխիկ դրամով: Պարենցն էլ խնդրել էր, մերժեցի: Արդ, եթէ Ձեր յիշած գրավաճառը պէտք ունի իմ երկերին, թող պահանջի որքան կամենում է, ես կը զեղջեմ 35 %, ճանապարհի ծախքն էլ ինձ վրայ վերցնելով:

Յարգանքներս հաղորդեցէք մեր այն բոլոր արհեստակիցներին, որոնք ինձ պատիւ են արել «Ժողովածուին» մասնակցելով:

Սիրալիր բարեւներով

ՇԻՐՎԱՆԶԱԴԷ

V

ՇԻՐՎԱՆՁԱԴԵՅԻ ՆԱՄԱԿԸ Պ. Տ. ԿԱՄՍԱՐԱԿԱՆԻՆ

2 Ապրիլ, 1911, Թիֆլիս.

Սիրելի Տիգրան

Ահա առաջիկ ուղարկում եմ մի քանի տող ոսկե մատենանումը տեղադրելու համար: Յուսով եմ, որ անշնորհքութեան շատ էլ խիստ չես վերաբերել: Ո՞ւր է, որ քո չափ պերճագիր լինէի: Նամակիս վերջում յիշած անունները ըստ արժանաւորութեան տեղադրելը քեզ եմ թողնում: Հարցրու Անտոնեանին, եթէ անունները մոռացել եմ, թող մտցնի: Քո յօդուածը «Արամբի» մասին յիշում եմ, որ «Արեւելքում» էր: Այսպէ՞ս է: Եթէ ոչ — փոխիր:

Յանձնաժողովը կուղարկէ քեզ քսան օրինակ հրաւէր յորելեանի, հասցէները նրան յայտնի են, ուստի բարի եղիր 19 գրականների անունները գրել եւ ուղարկել իրանց փոստով: Սակայն այս մասին կը գրէ քեզ պ. Մելիքեանը:

Անտոնեանին շնորհակալական գրել եմ վաղուց:

Յարգանքներս ամուսնոյդ:

ՔՈ ՇԻՐՎԱՆ

VI

14/27 Մայիսի 1911 Թիֆլիս:

Յարգելի Պրն. Անտոնեան

Մայիսի 1-ին գրած Ձեր նամակն ստացայ եւ իսկոյն եւ եթ իսկուցի թումանեանի հետ: Նա մեղաւոր ճանաչեց իրան, որ չի պատասխանել Ձեր նամակներին, բայց ասաց, որ օր օրի վրայ սպասում է «Հորիզոնի» գործերի կարգադրելուն որպէս զի պատասխանէ գրամով: Իսկ գործերը տակաւին կաղմակերպման փիճակի մէջ են եւ այս օրերս ստիպողաբար պիտի վերջանան, վասն զի Մելիքեան ամսոյս վերջին գնում է արտասահման: Առաջիկայ շաբաթ գրամարկղը փող կը մտնէ, եւ առաջիկաների թւում դուք եւս կը ըստանաք Ձեր վարձը: Անհանգստանալու եւ վշտանալու հիմք ունիք,

բայց համբերեցէ՛ք մի քանի օր եւս, ինչպէս համբերում են միւս աշխատակիցները: Ապահովութեան լուրը ճիշդ է: Ինքը պ. Մելիքեան տալիս է 15,000 ռ. խոստանալով դռնել 10,000 ռ.: Միւս հըրատարակիչները տալիս են 15,000, խոստանալով դռնել շոյնպէս 10,000 ռ.: որպէս զի լրացնեն 50,000 ռ.: Մելիքեանը պայման է դրել, որ «Հորիզոնի» դեկը լինի չորս գրողներին ձեռքում՝ Աղայեանի, Թումանեանի, Լէօի եւ իմ եւ այս պայմանով է միայն գումարը տալիս: Հետեւաբար, ես մնում եմ աշխատակից եւ մէկը խմբագիրներից — տողավճարով թէ ամսականով — այդ յայտնի չէ տակաւին:

Խաժակի գրածը մեզ չը դարձացրեց: Նա կարող էր աւելի վատ հայտնել մեզ, որովհետեւ «Հորիզոնի» խմբագրութիւնը նրան դուրս է վաճառել, հասկացնելով, որ նա այլեւս ոտ չը պիտի դնի այնտեղ: Դա մի անսպասուած է: Gonjati անձնաւորութիւն է, քիչ մը էլ յիմար: Մի ժամանակ (1905-ից մինչեւ 1909 թ.) այդ մարդիկ ասպարէզի տէրերն էին, այժմ քչեւ են . . . եւ ճարհատեալ անկիւններից հատ-հատ փամփուշտներ են արձակում: Բայց անգոր են եւ խեղճ: Չարժէ նրանց արհամարհանքի անդամ արժանացնել:

Յօրելեանիս մասին տեղեկութիւններ էք հարցնում: Ահա ինչ-որ գիտեմ: Թիֆլիսում տօնուերու է 22 Մայիսի (3 Յունիսի) երեկոյեան թատրոնում: Այդ երեկոյ կը լինի թեթեւ ներկայացում, յետոյ ապօթէօյ, շնորհաւորումներ, ուղերձներ եւ այլն: Հետեւեալ օրը կը կայանայ այգիներում ճաշկերոյթ: Նոյն օրը դիշերը պիտի ուղեւորւեն Բազու: Յաջորդ երեկոյ Բազում կլինի նոյն հանդէսը, սպա հետեւեալ օրը բանկէ: Մի օր կը հանգստանամ, յետոյ կը վերադառնամ Թիֆլիս, Հաւարբար կոչուած հայաբնակ մասը քաղաքի որոշել է առանձին տօնել ամսոյս 30ին: Կովկասի բոլոր քաղաքներում եւ աւաններում տօնել է կամ տօնուած է: Բարոյական կողմից շատ դոհ եմ, ինչ կը լինի նիւթականը — դեռ չը գիտեմ:

Այս բոլորը գրեցի Ձեզ բարեկամաբար, խնդրեմ մամուլին չը տաք: Ձեր հատորը շատ ուշացաւ: Ես Յունիսի 10-12 ին գնալու եմ ամարանոց ընտանիքիս հետ: Հասցէս կը տամ, այնտեղ կուղարկէք:

Մի դադարէք, շարունակեցէ՛ք թղթակցել «Հորիզոնին», վստահ եղէ՛ք, որ Ձեր վարձը կը ստանաք: Շնորհակալութիւն ձեր յօդուածի համար հատորի վերաբերմամբ: Հիանալի էր: Ձեր նամակները կարդացում եմ մեծ հետաքրքրութեամբ:

Սիրալիւր բարեւներով,
ՇԻՐՎԱՆՁԱԴԵՅԻ

Յ. Գ. Եթէ կարելի է հատորից կուղարկէք ինձ 100 օր. պայմանով միայն, որ փոխարէնը ստանաք իմ գրքերից տեղւոյդ գրա-

վաճառներին տալու համար, որ ծախսեն յօդուտ հատորի հրատարակութեան: Եթէ այս պայմանը հաճելի է Ձեզ, կրնաք 200 օր. ուղարկել, դարձեալ փոխարէնը իմ դրքերն ստանալով:

VII

ՇԻՐՎԱՆՁԱԴԵՒԻ ՆԱՄԱԿԸ Պ. Տ. ԿԱՄՍԱՐԱԿԱՆԻՆ

Սիրելի բարեկամ

Տիգրան Կամսարական

Պօլսաքնակ մի բարեկամիս մասնաւոր նամակից տեղեկացայ, որ իմ թրքահայ եղբայրակիցները մտադիր են հրատարակել մի ժողովածու, որ ամբողջովին պիտի նւիրուած լինի իմ գրական երեսնամեայ գործունէութեանը:

Հրատարակութեան նախաձեռնողն ու ղեկավարը դու ես: Բարեկամս իւր նամակում թուում է այն մեծարդոյ հեղինակների անունները, որոնք սիրալոյսով բարեհաճել են մասնակցել հրատարակելիք մատենանում:

Տասնեւինը խոշորագոյն գրական դէմքեր — թրքահայ ժամանակակից գեղեցիկ գրականութեան բոլոր ներկայացուցիչները:

Մի այդպիսի անսպասելի և անդնահատելի բարեկամական ցոյց քո և քո ընկերների կողմից անսահման ուրախացնելով և յուզելով հանդերձ ձեռնում է ինձ անասելի նեղ գրութեան մէջ: Ես չափ և չափ հեռու եմ, իմ գրական գործունէութիւնը այդ տեսակ բարձր պատիւ արժանի համարելու մտքից: Հաւատա, սիրելի բարեկամ, որ կեղծ համեստութեան զգացումը չէ, որ ինձ թելադրում է այս խօսքերը, այլ ինքն անկեղծութիւնը, որին դաւաճանելը քաղաքակրթութեան վկայական համարողներից չեմ:

Հետեւաբար թոյլ տուր ինձ, սիրելի բարեկամ, կանխաւ ասելու, որ ձեր անդնահատելի նւէրն ընդունելու եմ ոչ իբրեւ անձնական պարգեւ, այլ իբրեւ սիրոյ և յարգանքի մի ցոյց ուստահայ գրականութեանը իր թրքահայ քրոջից:

Ինքն ըստ ինքեան արդէն մեծ պատիւ է ինձ համար, որ ներկայ գեպքում ես պիտի լինեմ միջնորդ փոխադարձ բարեկամութեան աստատահայ և արեւելահայ մտաւորականութիւնների մէջ: Եւ անսահման պիտի պարծենամ, որ թրքահայի կապանքները խորտակելուց յետոյ առաջինն ինձ է վիճակուում այդ բարձր դերը գրականութեան ասպարիզում:

Այս տեսակէտից միայն յայտնելով քեզ և քո տասնութները ընկերներին ջերմ երախտագիտութիւնս, համարձակուում եմ ուստահայ

գրականութեան կողմից մատուցանել խորին շնորհակալութիւն իւր աւագ քրոջը:

Ինչ վերաբերում է իմ անձնականին, ես վաղուց արդէն բարոյապէս վարձատրուած եմ համարում ինձ իմ թրքահայ եղբայրակիցներին:

Իբրեւ ուստահայ գեղեցիկ գրականութեան մի համեստ մշակ եթէ կեանքումս ունեցել եմ երջանիկ յիշատակներ, որոնք գինովցւել են ինձ, կարող եմ համարձակօրէն ասել, որ նրանց խոշորագոյն մասը պարտական եմ իմ թրքահայ եղբայրակիցներին:

Ներքիւ, սիրելի բարեկամս, որ այստեղ նախ եւ առաջ պիտի շօշափեմ քո համեստութեան զգացումը: Դու էիր, Տիգրան, որ սրանից մօտ քառօրե դար առաջ խրախուսեցիր իմ առաջին թոյլ քայլերը գրական ասպարիզում, գեղարեստագէտիդ սքանչելի ոճով դըրաւորելով իմ «Արամբին» «Արեւելքի» էջերում: Երբէ՛ք, երբէ՛ք չեմ մոռանալ այդ խրախուսանքը, որ բոլորում էր «Վարժապետի աղջիկ» քանքարաւոր վէպի պատանի հեղինակիդ անկեղծ, անկաշառ, վարկուուն հոգու և կրակոտ սրտի խորքերից:

Այնուհետեւ ես արժանացայ թրքահայ մամուլի և ընթերցողների շոյիչ ուշադրութեանը: Եւ եթէ իմ գրական ճակատագիրը որոշել կշեռքի մէջ թեւի վրայ սկզբից և եթ ծանրացած էր ուստահայ մամուլի չկամութիւնը, միւսի վրայ համարձակօրէն բարձրացաւ թրքահայ եղբայրակիցների անկեղծ համակրանքը: Եւ այդ մանաւանդ թանկ էր ինձ համար այն պատճառով, որ Պօլիսը աւելի մօտիկ է Եւրոպային, քան Թիֆլիսը . . . : Եւ այժմ երբ իմ ուսերը յոգնել են երեսնամեայ անընդհատ տառապանքներից, խորին հաճոյքով և երախտագիտութեամբ եմ մտաբերում այն փրկարար վայրկեանները, որ պարգեւել են ինձ իմ թրքահայ եղբայրակիցները:

Անցան տարիներ, տխուր տարիներ, և ես չէի մոռացում ձեր կողմից, չը նայելով ձեր դաժան քաղաքական կացութեանը, երբ կախաղանի արժանի յանցանք էր համարում կարմիր Սուլթանը ուստահայ կեանքի և գրականութեան մասին խօսելը թրքահայ լրագրներում:

Բայց ահա փչեց, վերջապէս, աղատութեան հովը, ծանր մրդձաւանջն անցաւ, թրքահայ կեանքից ընկան շղթաները: Մտաւորականութիւնը շունչ առաւ և մէկն առաջիններից ուստահայ հեղինակների մէջ, որոնք արժանացան ձեր ոգեւորմանը, բաղդ ունեցայ լինելու ես: Պարիզ էի, երբ ստացայ լրագրների մի մեծ կապոց: Երջանիկ

վայրկեաններ: Այն ի՛նչ ողբերգութիւն էր, որ օտարութեան մէջ պաշարեց ինձ, երբ բաց արի այդ նւիրական կապոյցը եւ կարգացի Զոհրարի, Հրանտի, Արամ Անտօնեանի, Փաեանի, Զիֆթէ-Սարա-Փի, Մեղքոն Կիւրճեանի, Երուխանի, Պարթեւեանի, Ալիիարի եւ այլ թրջահայ խոշոր դէմքերի յուզիչ յօգուածները իմ բնական երկերի մասին:

Այն երկերի, որոնց վերաբերմամբ այստեղ, Թիֆլիսում հայ հասարակութիւնը ունեւիքով էր դուրս բերել ուստահայ լրագրների բերանից մի քանի ներողամիտ խօսքեր:

Իսկ այնտեղ, Պարիզում, վաղուց արդէն ես երախտապարտ էի մեր բարեկամ նրբամիտ բանաստեղծ եւ ընտիր ճաշակի տէր Արշակ Զօբանեանի խրախուսանքներին . . . :

Ահա այն արբեցուցիչ վայրկեանները, որոնց ես պարտական եմ իմ թրջահայ եղբայրակիցներին:

Այժմ ձեր երկար տարիների սէրը դէպի ուստահայ դրականութիւնը ընդհանրապէս եւ դէպի ինձ մասնաւորապէս ամփոփում էք մի մատենանի մէջ, որ կը լինի մէկը լաւագոյն վարձատրութիւններէից իմ երեսնամեայ տառապանքների:

ՔՈ ՇԻՐՎԱՆՁԱԴԷ



ԱՆՑԵԱԼՔ

I

ԱՂԱՍԻ ԽԱՆՁԵԱՆ

Յուլիս 9-ին ինքնասպանութեամբ վերջ է տւել իր կեանքին Հայաստանի կոմունիստական կուսակցութեան առաջին քարտուղար Աղասի Խանջեանը:

Ծնւել է 1901 թւին Վանում: Սկզբնական կրթութիւնը ստացել է նոյն քաղաքի կեդրոնական դպրոցում: 1915-ին, իր ընտանիքի հետ միասին, միանալով գաղթականների կարաւանին, ընկնում է էջմիածին եւ ընդունւում է Գէորգեան ձեմարանը, որտեղից փոխադրւում է Երեւանի թեմական դպրոցը, որի դասընթացքն եւ աւարտում է, լրացնելով իր միջնակարգ կրթութիւնը: Դեռ ձեմարանում եղած ժամանակ, Ա. Խանջեանը յարում է աշակերտական այն խմբակին, որը տարւած էր բոլշեւիկեան գաղափարներով (Միկոյեան, Արտ. Ստամբոլցեան եւ այլն): 1917-ին, Ղուկաս Ղուկասեանի, Արմենակ Բուդաղեանի եւ ուրիշների հետ միասին կազմակերպւում է Երեւանում երիտասարդակ. բոլշեւիկեան «Սպարտակ» միութիւնը, որ զբաղւում էր համայնապարական քարոզչութեամբ եւ երբեմն էլ «թուղցիկեր» էր բաց թողնում Հանրապետական Հայաստանի կառավարութեան դէմ: 1919-1920 թ.թ., երբ Երեւանում եւ Հայաստանի միւս շրջաններում կազմակերպւում են կոմունիստական բջիջներ ու կոմիտէներ, Խանջեանը, որպէս Երեւանի կազմակերպութեան անդամ, եռանդուն մասնակցութիւն է բերում կուսակցական աշխատանքներին: 1920 թ. մայիսեան ապստամբութեան ժամանակ նա բանտարկւում է միւս բոլշեւիկների հետ միասին: Հայաստանի խորհրդայնացումից յետոյ դառնում է Հայկոմկուսի Կենտկոմի անդամ եւ Երեւանի Կոմիտէի քարտուղար: Այդ պաշտօնի մէջ նա երկար չէ մնում եւ 1921 թւի յուլիսին ուղարկւում է Ռուսաստան «ուսանելու» Սվերդլովի անւան «Համալսարանում»:

«Գիտութեան զբանիտը կրծելու» համար շատ ժամանակ չէ յատկացնում Ա. Խանջեանը եւ մէկ տարի յետոյ նորից նւիրում է գործ-

նական աշխատանքի, դառնալով Լենինգրադի (Պետերբուրգի) կազմակերպութեան Վերորդի ուսկոմի (չըջանային կոմիտէի) անդամ-պրոպ (աղետացիայի եւ պրոպագանդի) բաժնի վարիչ: Այդ ժամանակ կոմիտեի ներսում եւ մասնաւորապէս Լենինգրադի կազմակերպութեան մէջ տեղի են ունենում կարեւոր անցուղարձեր, որոնք մեծապէս ազդում են Խանջեանի հետագայ քարիւտի վրա: 1923-24 թվականի ընդլրմադրական շարժումը ճնշելուց անմիջապէս յետոյ, կոմիտեի ներսում ծաւալում է այսպէս կոչւած նոր օպոզիցիան, որի ղեկավարներն են հանդիսանում Զինովիեւը եւ Կամենեւը: Պետերբուրգի կազմակերպութիւնը, որի գլուխն էր կանգած Զինովիէւը, դառնում է նոր ընդլրմադրութեան կեդրոնական օճախը: Թէ քաղաքի եւ թէ մարզի բոլոր կուսակազմակերպութիւնները եւ կուսակցական ղեկավար գործիչներ յարում են նոր օպոզիցիային: Միայն մի 2-3 հոգի, այն էլ երկրորդ կարգի գործիչներից, մնում են հաւատարիմ Ստալինին: Սրանց մէջ ամենից շատ աչքի է ընկնում Ա. Խանջեանը, որ նորեկուկին յատուկ եռանդով, պայքարում է զինովիեւականների հակայ բանակի դէմ եւ պաշտպան է կանգնում Ստալինին: Մօտ երկու տարի տեւող այս պայքարի մէջ, ինչպէս յայտնի է, յաղթող է հանդիսանում Ստալինի խմբակը: Զինովիեւը, Կամենեւը եւ սրանց հետ բլօք կազմած Տրոցկին քշւում են Կենտրոնական կոմիտէից եւ հետագային աքսորւում: Մաքրագործման ու վերակառուցման են ենթարկւում նաեւ այն բոլոր կազմակերպութիւնները, որոնք անցել էին նոր օպոզիցիայի կողմը: Եւ սրանց թւում առաջին հերթին՝ Պետերբուրգի կազմակերպութիւնը: Ստալինը Կովկասից Լենինգրադ է փոխադրում այդ նպատակով իր ամենավստահելի կողմնակիցներից Ս. Կիրովին, որին եւ յանձնում է Պետերբուրգի ամբողջ շրջանի ղեկավարութիւնը: Կիրովը իրեն յանձնած գործը յաջողութեամբ գլուխ հանելու համար, ղեկում է այն սակաւաթիւ կոմունիստների օժանդակութեանը, որոնք մնացել էին հաւատարիմ Ստալինին եւ լաւ ճանաչում էին Պետերբուրգի ընդլրմադիրներին: Այդ հաւատարմներից էր, ինչպէս ասացինք, Խանջեանը, որը դառնում է Կիրովի ամենատիրական գործակիցը եւ միեւնոյն ժամանակ անձնական մտերիմ բարեկամը: (Խանջեանը ամուսնացած էր Կիրովի կնոջ քրոջ հետ): Մինչեւ 1928 թիւը Ա. Խանջեանը մնում է Պետերբուրգում, վերջին շրջանում աշխատելով քաղաքի Մոսկովսկոյ Նարվսկոյ թաղամասի կուսկոմիտէի մէջ, որպէս կազմակերպական-հրահանգչական բաժնի վարիչ:

1928 թիւին, Ստալինի հրահանգով նա կարգւում է Հայաստանի կոմունիստական կուսակցութեան կենտրոնական կոմիտէի բ. քար-

տուղար: Այդ պաշտօնի գլուխ է անցնում այն պահին, երբ հերթական էր դարձել նաեւ Հայկոմիտեի մաքրագործման խնդիրը: Տեւական պայքարից յետոյ, Հայ կոմունիստների ձախակողմեան խմբակը, բաղկացած մեծ մասամբ անյայտ ու աննշան երիտասարդներից, կարողացել էր Անդրկովկ. երկրային կոմիտէի (Թիֆլիզ) թեւադրանքով ու գործօն օժանդակութեամբ «ներքին յեղաշրջում» առաջացնել Հայկոմիտեի մէջ եւ փոխել հին ղեկավարութիւնը (կենտկոմի քարտուղարութիւնը): Այդ թիւին (1928 թ.) կայացած կենտկոմի 3-րդ պլէնումը (կենտրոնական կոմիտէի լիազումար նիստը), բանադրանքի ենթարկելով Աշոտ Յովհաննիսեանին ու նրա գլխաւորած քարտուղարութեան միւս անդամներին եւ յայտարարելով նրանց վարած տուղարութեան միւս անդամներին եւ յայտարարելով նրանց վարած տուղարութիւնը «աջ-նացիոնալիստական», «ընտրել էր» կուսակցութեան նոր ղեկավարութիւն, որի մէջ առաջին քարտուղարի պաշտօնին էր կանչւած Հայկազ Կոստանեանը, իսկ երկրորդ քարտուղար էր նշանակւած Աղասի Խանջեանը: Այս երկուսի վրա պարտականութիւն էր դրւած մաքրել կուսակցութիւնը այն բոլոր տարրերից, որոնք անհաճելի էին Թիֆլիզի համար: Այդ առաքելութիւնը նոր ղեկավարութիւնը կատարում է մեծ եռանդով: Հայ հին կոմունիստները, որոնք նախկին գործունէութեան, ձեռք բերած կարիքի եւ անձնական այլ ունակութիւնների շնորհիւ, կարող էին մըրցակիցներ հանդիսանալ Անդրերկոմում ու Անդրկովկ. կառավարութեան մէջ նստած վրացիների համար, յայտարարւում են «սպեցիֆիկներ» (հայ մենչեւիկներ) ու նացիոնալիստներ եւ մէկը միւսի յետեւից, հեռացւում են պաշտօններից ու քշւում Ռուսաստան: Ասպարէզը մնում է երիտասարդ ձախերին, որոնց մէջ Ա. Խանջեանը շուտով զրաււում է առաջին տեղը: Թէեւ Կենտկոմի բ. քարտուղար, բայց փաստօրէն նա է վարում բոլոր գործերը Հայաստան գալու իր առաջին մէկ օրից սկսած: 1929 թիւի յունւար 20-ին բացւում է Հայկոմիտեի 3-րդ համագումարը, որը բոլեւեիկեան պատմութեան մէջ է անցնում որպէս «դասակարգային անհաշտ պայքարի ծաւալման, կուսակց. կազմակերպութիւնների բոլշեւիզացիայի, նախկին ղեկավարութեան աջ օպորտունիստական եւ նացիոնալ-ուկրոնիստական սխալների ուղղման, տրոցկիստական օպոզիցիային ջախջախիչ հարւած տուող նշանակալից համագումար»: Այս համագումարի որդեգրւած նոր քաղաքականութեան ամենաեռանդուն կիրառողն է լինում Ա. Խանջեանը: Նոյն տարւոյ վերջին եւ 1930-ի սկզբին սկսւում է համատարած կոլեկտիււացման շարժումը, որին ի պատասխան դեղացիները մորթում են իրենց անասունները, հրաժարւում ցանք կա-

տարեկուց եւ մի քանի շրջաններում նոյնիսկ դիմում ապստամբութեան: Երբ պէտք է զգացուում նահանջի ճամբան բռնել, Ստալինը հրատարակում է իր յայտնի նամակը («Գլխապառայ յաջողութիւններին հետեւանալ») եւ «կոլխոզային քեալլադէօդութիւններին» մեղքը դրում է տեղական գործիչներին վրա: Դրանից յետոյ ամենուրեք փոփոխուում են ղեկավար մարմինների կազմը (փաստօրէն միայն առաջին քարտուղարները) եւ Հայաստանում Կենտկոմի առաջին քարտուղար է դառնում Ա. Խանջեանը Դրիմ տեղափոխւած Հ. Կոստանեանի փոխարէն:

Դառնալով միահեծան տէր Հայաստանում, Խանջեանը է՛լ աւելի է սրում իր պայքարը «աջ օպորտունիստների», ու «ձախ տրոցկիստների» դէմ: Ընդդիմութեան իւրաքանչիւր մէկ արտայայտութիւն նա ճնշում է անխնայ, կանգ չառնելով ոչ մէկ միջոցի առաջ: Ա. Խանջեանը հալածում է ոչ միայն կոմկուսից դուրս գտնուող հին մտաւորականներին, ոչ միայն հին բոլշևիկներին, այլ նաեւ իր երէկւայ ընկերներին: Վեց տարւայ իր քարտուղարութեան ընթացքում նա 10-ից աւելի օգնականներ է (բ. քարտուղար) փոխում եւ մի քանի տասնեակ մարդիկ իր անմիջական շրջապատից քշում է Հայաստանից: Այս ամենը նա կարողանում է կատարել շնորհիւ Ստալինի ու նրա անդրկովկասեան գործակալների մօտ ունեցած անսահման վստահութեան: Ուշադրաւ է, որ իր ողբերգական մահւան նախօրեակին՝ Խանջեանն ամենամեծ սթափ ունէր անդրկովկասեան իր պաշտօնակիցների շարքում: Մինչդեռ վերջին վեց տարւայ ընթացքում մի քանի անգամներ փոփոխութեան են ենթարկւում թէ՛ Վրաստանի ու Ադրբեջանի կենտկոմների եւ թէ՛ Անդրերկրի առաջին քարտուղարները, հայկոմկուսի առաջին քարտուղարը մնում է անփոփոխ:

Սխալ կլինէր բացատրել այս ամենը միայն նրա այն ծառայութեամբ, որ մատուցել էր Ստալինին Պետերբուրգում: Խանջեանը իր պաշտօնի վրա էր պահւում նաեւ այն պատճառով, որ անշեղօրէն կիրառում էր Հայաստանում «ստալինեան գիծ»: Այդ գիծը վերաբերում էր քաղաքական, տնտեսական եւ մշակութային մարդերին: Քաղաքական մարդում «ստալինեան գիծը» պարտադրում էր ենթարկւել ազգային հարցի լուծման այն ձեւին, որ տեւէր Մոսկւան, ստեղծելով Անդրկովկ. Ֆեդերացիան եւ նրա կազմում այսօրւայ Սորհրդային Հայաստանը՝ կրճատւած սահմաններով ու կրճատւած իրաւունքներով: Տնտեսական մարդում պահանջւում էր ձեռք քաշել «ինքնամփոփ» եւ «ունիվերսալ» տնտեսութիւն ստեղծելու «նացիոնալիստական» ծրագրից ու դարկ տալ Հայաստանում միայն այն կուլտուրա-

ների մշակմանը, որոնք անհրաժեշտ են Ռուսաստանին՝ տնտեսական անկախութիւն ձեռք բերելու համար: Եւ, վերջապէս, մշակութային մարդում ստալինեան գիծը պահանջւում էր որպէսզի հայ մշակոյթը զարգանայ ոչ թէ ազգային այլ միջազգային կամ պրոլետարական ուղիներով, այսինքն ոչ թէ համազգային արժէքներ կերտի, այլ ծառայի կոմկուսի ընթացիկ քաղաքականութեան յաջող կիրառման, մասնաւորապէս շինարարական ասպարէզում (սոցիալիզմի կառուցում):

Ա. Խանջեանը, իր քարտուղարութեան ամբողջ ընթացքում, հետեւեց անշեղօրէն յիշեալ ուղեգծին: Նրա նւիրածութիւնն ու եռանդը գնահատեց իր մեծեր կողմից եւ այդ գնահատանքի մէկ արտայայտութիւնը եղաւ Լենինեան շքանշանը, որ նա ստացաւ անցեալ տարի Դեկտեմբերի 20-ին Մոսկւայում: Իր ձեռք բերած դիրքն ու համբաւը նա պահեց մինչեւ վերջին ժամանակները, երբ Համամիութենական կոմկուսի Կենտր. Կոմիտէի լիազօմար նիստի (1-4 յունիս) կողմից ընդունւած նոր Սահմանադրութեան նախագծի եւ մասնաւորապէս Ադրկովկասեան Դաշնակցութեան վերացման հարցի շուրջը խոր տարակարծութիւններ ունեցաւ կուսակցութեան ղեկավար շրջանների հետ եւ դրա հետեւանքով դրեց այնպիսի մի վիճակի մէջ, որ ստիպւած եղաւ վերջ տալ իր կեանքին: Մեզ պակսում են Խանջեանի կատարած այդ անօրինակ քայլի մանրամասնութիւնները: Այսքանը գիտենք միայն, որ Մոսկւան ու Թիֆլիզը նրա այդ քայլը համարեցին «գաւաճանական մի հարւած՝ Կոմկուսի թիկունքին ուղղւած»: Դրա համար նրանք ունեն, անշուշտ, բաւականաչափ պատճառներ . . .

Ա. Խ.

II

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԱՐԵՆԵԱՆ

Յուլիս 1-ին երեւանում վախճանւել է հայ բեմի մեծատաղանդ դերասան Յովհաննէս Արեւեանը:


Ծնւել է 1865 թւին Շամախի քաղաքում: 1873-ի երկրաշարժից յետոյ Արեւեանը ընտանիքի հետ տեղափոխւում է Բաքու եւ մտնում է ուսանողական դպրոց (ռուսական երկրորդական վարժարան), որի դասընթացքը սակայն չի աւարտում: 1881 թ. մասնակցում է Թիֆլիզի Բազու եկած հայ դերասանական խմբի ներկայացումներին: Հետեւեալ տարին 17-ամեայ պատանի Արեւեանը մտնում է Գոնչարովի ռուսական խումբը, որպէս բեմայարդար, դերասան եւ տնտեսական գործերի վարիչի օգնական: 1886 թ. տեղափոխւում է Թիֆ-

լիզ, կովկասահայերի մտաւոր կենտրոնը, բայց այնտեղ մշտական թատերախումբ չգտնելով, մտնում է դարձեալ մի ուսումնական խումբ, որը խաղում էր ե՛ւ դրամա, ե՛ւ օպերա: Նոյն թւին Ռուսաստանի քաղաքներում կատարած իր արտիստական պտոյտներից Թիֆլիզ է վերադառնում հուշակաւոր Պ. Աղամեանը եւ կազմում է հայկական մի թատերախումբ, որին անդամակցում են Տէր-Դաւթեանը, Գ. եւ Ս. Զմչկեան ամուսինները եւ Թիֆլիզում եղած մի քանի այլ դերասանները հետ միասին նաեւ Յ. Աբելեանը: 1887-ին այս խումբը, մի շարք ներկայացումներ տալուց յետոյ, քայքայւում է. Պ. Աղամեանն ուրից մեկնում է Ռուսաստան, իսկ Յ. Աբելեանը՝ Բագու, որտեղ մասնակցում է ուսումնական խմբի ներկայացումներին: 1888-ին Աբելեանը կազմում է իր թատերախումբը Բագուում՝ հայերէն ներկայացումներ տալու համար, սակայն նիւթական դժւարութիւնների է հանդիպում եւ հազիւ մէկ թատերաշրջան բոլորած՝ ցրւում է իր խումբը եւ գնում է Մոսկւա (1889)՝ ծանօթանալու ուսումնական թատրոնին եւ ժամանակակից թատերգութեան:

1891-ին Թիֆլիզում, դերասան Գէորգ Պետրոսեանի ղեկավարութեամբ կազմակերպւում է մի հայ թատերախումբ, որի մէջ են մտնում, բացի Պետրոսեանից, Սիրանոյշը, Տէր-Դաւթեանը, Թուրեանը, Աբելեանը, Արմենեանը, Արշ. Յարութիւնեանը եւ ուրիշները: Այստեղից սկսւում է Աբելեանի գործունէութեան համար մի նոր շրջան, երբ նա ամբողջովին ներկւում է հայ բեմին եւ սկսում է խաղալ միայն հայ թատրոնում: Պ. Աղամեանի մահից յետոյ, Յ. Աբելեանը դառնում է թատերական խմբերի ղեկավար դէմքը՝ թէ՛ իբրեւ կազմակերպիչ եւ թէ՛ իբրեւ ռեժիսոր-դերասան:

1899-ին նա գնում է Եւրոպա, ծանօթանալու այնտեղի թատրոնական աշխարհին: Նա լինում է Փարիզում, Լոնդոնում, Բերլինում, Վիեննայում եւ հետեւում է այնտեղի բեմագրութիւններին ու անւանի դերասաններին խաղին:

1902 թ. Թիֆլիզում հիմնւում է Հայոց Դրամատիկական Ընկերութիւնը, որ իր շուրջն է հաւաքում դերասանական լաւագոյն ուժերին, մշակում է խաղացանկ իւրաքանչիւր եղանակի համար եւ ստանձնում է, առհասարակ, սիստեմատիկ ներկայացումներ կազմակերպելու պատասխանատու գործը: Աբելեանը դառնում է Դրամատիկական Ընկերութեան խմբում առաջաւոր դերասանը եւ հինգ թատերաշրջան գործում է այնտեղ, մէջ ընդ մէջ տանելով եւ ռեժիսորի դժւարին պարտականութիւնը:



Վաստակաւոր դերասան Յ. ԱԲԵԼԵԱՆ

փոխարինելու հայ բեմում մինչև 90-ական թվականների վերջը իշխող կեղծ դասական, ուսմանտրիակա և կենցաղային դպրոցներին: Յ. Արեւելանի մահով հայ բեմը կորցնում է մի մեծատաղանդ դերասան, որի նմանը այսօր չունի հայ թատրոնը:

Ա. Խ.

III


ԲԱԲԳԵՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ (ԿԻԻԼԵՍԵՐԵԱՆ)

Կիրիլիոյ տարազեր կաթողիկոսարանի՝ Անթիլիասի մէջ յունիսի 9-ին վախճանած է «աթոռակից» կաթողիկոս Բաբգէն Ա.

Իր մասին, իբր կաթողիկոս՝ չափ քան չունինք ըսելիք, որովհետեւ եթէ ունեցաւ օգտակար գործունէութիւն մը, այն ալ Անթիլիասի չորս պատերէն ներս եղաւ միայն: Անկէ դուրս ան՝ ոչ միայն օգտակար չեղաւ այլ տխուր յիշատակներ միայն թողուց դժբախտաբար:

Սակայն, մինչ այդ, Բաբգէն վարդապետը, ապա նաեւ եպիսկոպոսը, իր համեստ դիրքերուն մէջ, բազմադիւն գործունէութիւն մը ունեցաւ, իբր կորովի եւ ժողովրդանէր առաջնորդ եւ մանաւանդ իբր գրչի մարդ ու բանասէր:

Ծնած էր Այնթապ 1868-ին: Իր նախնական կրթութիւնը կը ստանայ իր ծննդավայրին մէջ, ուրկէ կանցնի Երուսաղէմ, «Ժառանգաւորաց» դպրոցը, կուսակրօն դառնալու նպատակով: Դժգոհ՝ Երուսաղէմի վտիտ ուսումէն, կերթայ Արմաշ եւ քանի մը տարի հոն ուսանելէ յետոյ, 1895-ին կը լրացնէ Դպրեվանքի դասընթացքը, Ջաւէն, Սմբատ, Մաշթոց, Թորգոմ եւն. ընկերներու հետ միասին: 1897-ին ձանիկ կը դրկւի իբր առաջն. տեղապահ: 1889-ին Մուշ կը մեկնի իբրեւ ընդհ. վանահայր վանքերու եւ առաջն. տեղապահ: Ամենէն լուսաւոր եւ գեղեցիկ շրջանն էր այդ՝ Բաբգէն վարդապետի գործունէութեան: Խիլախ՝ հայ ժողովրդի շահերու պաշտպանութեան գործին մէջ եւ միաժամանակ պրպտող ու բանիմաց բանասէր մը եղաւ ան, որ ուսումնասիրեց Տարօն աշխարհի պատմական կրթողները, վայրերը եւ ձեռագիր յիշատակարանները, որոնց արդիւնքն են իր բանասիրական բաղմաթիւ աշխատանքները, որոնք լոյս տեսած են ժամանակի զանազան պարբերաթերթերու եւ իր խմբագրած (1905-6) Լոյս, Տաւրոս, Սիւնի շաբաթաթերթներու ինչպէս նաեւ «Հանդէս Ամսօրեայ»ի, եւ «Բանասէր»ի մէջ:



ՇՆՈՐՀԱՋԱՐԻ Տ. Յ. ԲԱԲԳԵՆ Ա. ԿԱԹՈՒՂԻԿՈՍ
ՄԵՐՔՐ ՏԱՆՆ ԿՐԻԿՈՅ


Ունի առանձին գործեր եւս, ինչպէս «Կիլիկիա», «Ծովք», «Կո-
լոտ Յովհաննէս պատրիարք», «Նղիշէ» եւ «Յիշատակարան Պատմա-
ճեան Գրիգոր Պատրիարքի»։ Նղիշէի պատմութեան մասին աշխա-
տութիւնը, իր աւարտական թէզն է եղած, որ 1898-ին արժանացած է
Սահակ-Մեսրոպեան մրցանակին։

Տարօնի առաջնորդական պաշտօնի մէջ, ան արդարացիօրէն կը
վայելէր ժողովուրդին յարգանքը։ Եռանդուն ու յանդուգն, իր հօտի
իրաւունքներու պաշտպանութեան ատեն, ան ենթարկեցաւ հալա-
ծանքներու եւ բանտարկութեան ու աքաղանջաւ Պոլիս։ Հոն գտնւած
ատեն Տրապիզոնի ասպա Մարաշի առաջնորդ կընտրւի, բայց կառա-
վարութիւնը թոյլ չի տար Պոլիսէն հեռանալու։

Նշխարապետութեան կը հրաւիրւի էջմիածնէն 1909-ին։ Պատե-
րազմի սկիզբին կը գտնէր Փարիզ, ուրկէ կը մեկնի Ամերիկա եւ հոն
ժամանակ մը առաջնորդ. տեղապահ կըլլայ։ 1927-ին կը դառնայ Ե-
րուսաղէմ, իբր ուսուցիչ Ժառանգաւորացի եւ խմբագիր «Սիոն»-ի։

1930-ին Սահակ Բ. Կաթողիկոսի հաճութեամբ կընտրւի աթո-
ռակից կաթողիկոս։ Արմաշի Օրմանեան եւ Դուրեան հոսանքներու
եւ դաստիարակութեան տարբերութիւններու մէջ, Օրմանեան մը-
տայնութեան կը պատկանէր Բարդէնը։ Իրապաշտ էր եւ քիչ մը ա-
րեւելեան հոգեբանութեան ու գործունէութեան ձեւերու հետեւող։

Վ.



ԿԵԱՆՔ ԵՒ ՄՇԱԿՈՅԹ

ՍԱՅԵԱԹ ՆՈՎԱՅԻ ՄԱՀԻԱՆ ՇՈՒՐՋԸ

Քանի գնում աւելանում է հետաքրքրութիւնը Սայեաթ Նովայի հանդէպ: Այս տարւայ սկզբում տեղի ունեցաւ Երեւանում նոյնիսկ «Սայեաթ-Նովայի-տութեան կոնֆերանս», որտեղ մի շարք գեկոյցներ կարդացւեցան հայ մեծ երգչի ստեղծագործութեան ու կեանքի մասին: Հայկական արտասահմանը նոյնպէս իր բաժինն ունի այս կարգի աշխատանքների մէջ: «Վէմ»-ը, ինչպէս յիշում են մեր ընթերցողները, տպագրեց այ. Յ. Զաւրեանի մի ընդարձակ ուսումնասիրութիւնը, որտեղ հանգամանօքն շօշափում են Սայեաթ Նովայի կեանքի ու գործի հետ կապ ունեցող համարեա բոլոր խնդիրները: Դրանց կարգին ամենից շատ վիճելի են երգչի մահւան հարցն է: Բնական մահով է մեռել նա, թէ սպանել է թիֆլիզում Աղա-Մահմադ խանի զօրքերի կողմից – ահա այն հիմնական հարցը, որի շուրջը մեծ տարակարծութիւններ կան թէ հայ եւ թէ վրացի բանասերների միջեւ:

Յ. Զաւրեանը, պարզելով այդ տարակարծութիւնների էութիւնը, հակում է այն գիտնականների կողմը, (Գ. Լեւնիսէ, Լ. Մելիքեթբեք) որոնց կարծիքով Սայեաթ Նովան ոչ թէ սպանել է Աղա Մահմադ խանի կազմակերպած կոտորածի ժամանակ, (1795 թ.) այլ մեռել է դրանից մի քանի տարի յետոյ (1801 թ.) իր բնական մահով: «Վէմ»-ի Զ. գրքում նա մէջ է բերել այն բոլոր

փաստարկութիւնները, որոնք խօսում են յօգուտ վերոյիշեալ թէզի: «Պրոբլեմ-ին Գրականութիւն» հանդէսի այս տարւայ թիւ 1-ում, Գ. Ասատուրը, անդրադառնալով Սայեաթ Նովայի մահւան հարցին, դէմ է արտայայտում Գ. Լեւնիսէի, Լ. Մելիքեթբեքի եւ Յ. Զաւրեանի պաշտպանած վերոյիշեալ տեսակետին եւ վերադառնում է Գ. Ալիբեյ-դեանի առաջադրած եւ մինչեւ վերջին ժամանակներս բոլոր հետազոտողների կողմից ընդունւած այն կարծիքին, թէ Սայեաթ Նովան նահատակել է Աղա Մահմադ խանի զօրքերի ձեռքով:

Գ. Ասատուրի յօդւածը մի պատասխան է այն դասախօսութեան, որ կարդացել է պրոֆ. Լ. Մելիքեթբեքը Վերսալի գրողների Միութեան հայկական սեկցիայում եւ որի մէջ, կրկնելով իր ու Գ. Լեւնիսէի առաջադրած փաստերը, աւելացնում է նոր տեղեւոր ի պաշտպանութիւն իրենց վարկածի: Այդ հին փաստերի ու նոր տեղեւորների հերքումով է զբաղւում Գ. Ասատուրը «Պրոբլեմ-ին Գրականութիւն» հանդէսում տպագրած իր բանավեճային բնոյթ կրող գրութեամբ:

Հետեւելով «քայլ առ քայլ Լ. Մելիքեթբեքին», Գ. Ասատուրը ամենից առաջ ուղղում է իր առարկութիւնները այն «միակ աղբիւրի» դէմ, որտեղ կայ ուղղակի յիշատակութիւն Սայեաթ Նովայի 1801 թ. մեռնելու մասին: Այդ

աղբիւրը, որի վրա եւ յենում են Գ. Լեւնիսէն ու Լ. Մելիքեթբեքը, Պատմ. ինստիտուտի (1809-1875) «Գեորգի ԺԳ. Թաղաւորի կեանքը» վրացերէն լեզուով գրած աշխատութիւնն է, որի մէջ գրւած է թէ Սայեաթ Նովան մեռել է 1801 թ.ին: Բայց ինստիտուտն, – գրում է Գ. Ասատուրը, – ժամանակակից չէ Սայեաթ Նովայի եւ նրա վերոյիշեալ տեղեկութիւնը նա «լսել է» իր հօրից՝ Իգնատիոս Բախանայից, որի հանդէպ չի կարելի նոյն վստահութիւնն ունենալ ինչոր ինստիտուտ: Ամենայն հաւանականութեամբ, – ասում է Գ. Ասատուրը, – «Իգնատիոս Բախանան ոչ տեսել է, ոչ գիտէ Ս. Նովային, այլ հաղորդել է որիշներէից լսած ինչ որ հետաւոր «սուկութներ» (ըսի ըսանք՝ Ա. Խ.) երիտասարդ Ս. Նովայի վերաբերեալ կցկերտուր տեղեկութիւններ»: Դրանցից է, ի միջի այլոց, իրականութեան չհամապատասխանող այն տեղեկութիւնը, թէ «Ս. Նովան հայ էր եւ ասում էր հայերին», որ տեղ է գտել ինստիտուտ գրքում: «Մի՞թէ կարելի է, – բացառանշում է Գ. Ասատուրը, – այս երրորդական եւ չորրորդական աղբիւրներից ստացած անցողակի եւ ի միջի այլոց տեղեկութիւնները համեմատել այն տեղեկութիւնների հետ, որ գալիս են անմիջական աղբիւրներից՝ Ս. Նովայի թաղման նիւթայի եղանակից եւ անց էին կացրած անախիդի մաղի միջով մի այնպիսի բարեխիղճ եւ մեծ երուցիցիայով օժտւած անձնաւորութեան կողմից, ինչպիսին էր Գ. Ալիբեյդեանը, որի ականաւոր աշխատութեան միակ եւ միակ նպատակն է Ս. Նովայի գործերի եւ կեանքի ուսումնասիրութիւնը»:

Երկրորդ աղբիւրը, որտեղ կայ զերաւոր յիշատակութիւն Սայեաթ Նովայի մահւան մասին եւ որը նոյնպէս տարակարծութիւնների տեղիք է տալիս, բանաստեղծի որդի Օհան (Իվան) Սէյիդովի ժողովածուի մէջ եղած հայերէն երգերից մէկի («Պարսիկ զրննաց բուրբու-

լի մօղ») տակ դրւած վրացերէն լեզուով գրւած հետեւեալ ծանօթութիւնն է. «այս մուխամբազը Սայեաթ Նովան յօրինեց, որ Շահը պէտք է գայ մեծ ժըխորով նրա գերեզմանի վրա: Այս է պատճառը, որ նրան մաս-մաս արին»:

Այս ծանօթութեան վրա յենելով, Գ. Ասատուրը դեռեւս 1903 թ.ին «Ազգագրական Հանդէս»-ում տպած իր մէկ յօդւածով այն եզրակացութեան է յանգել, որ Սայեաթ Նովայի որդու իսկ վկայութեամբ բանաստեղծը ոչ թէ իր բնական մահով է մեռել, այլ մաս-մաս է արւել:

Լ. Մելիքեթբեքը, տարբեր ձեւով բարգմանելով վերոյիշեալ ծանօթութիւնը, «այլ իմաստ» դնում նրա մէջ:

Յ. Զաւրեանը, մատնանշելով որ Օհանի գրածին հակասում են այլ աղբիւրներում («Կալմաստը») եղած տեղեկութիւնները, գրում է, որ «Օհանի յայտնած կարծիքի պատճառը, քերեւս յայտնած կարծիքի պատճառը, թերեւս այն էր, որ 19-րդ դարու 20-ական թրւականներին, երբ Օհանը գրի էր առնում հօր տաղերը, արդէն Պետերբուրգ էր հասել Սայեաթ Նովայի նահատակութեան մասին թիֆլիզում ստեղծւած գեղեցիկ աւանդութիւնը: Այդ աւանդութիւնը շոյում էր Օհանի ինքնասիրութիւնը, եւ նա վախճելով, կարծես պատահաբար, բաւական տնորոշ ձեւով, ընդամենը մէկ անգամ միայն յիշում է իր Գաւթարի մէջ: Հաստատ կերպով նա չէր կարող արձանագրել հօր սպանւած լինելը պարսիկներից, քանի որ արքայադուրիները, որոնց համար նա գրի էր առնում երգերը, շատ լաւ ծանօթ էին Սայեաթ Նովայի մահւան պարագաներին» («Վէմ», Զ., էջ 52):

Գ. Ասատուրը, պնդելով իր կատարած բարգմանութեան ճշգրտութեան վրա եւ հերքելով Լ. Մելիքեթբեքի առարկութիւնները, յայտնում է, որ ինչպէս էլ որ բարգմանի խնդրոյ առարկայ պարբերութիւնը, Օհանի տւած ծանօթութեան իմաստը չի փոխւում եւ «Սա-

յեաք Նովի գերեզմանը մնում է (նշանակում է՝ սպասում է) շահի գալուն, ասելով հեղինակն ըստ Օհանի գուշակում է, որ նա իր մանը պիտի գտնի (մաս-մաս պիտի լինի) շահի կողմից։ Եւ Օհանն ակնարկում է, որ այդ գուշակութիւնը կատարւեց»։

Ինչ վերաբերում է Օհանի ակնարկներով խօսելուն, դրանից Գ. Ասատուրը բոլորովին տարբեր եզրակացութիւններ է հանում։ «Իսկ թէ ինչու — գրում է նա, — Օհանն իր մատենում միայն ակնարկներով է խօսում իր հօր եղբրակամ մահւան մասին եւ որոշ չի գրում, որ նա սպանւել է այսինչ քաղաքին, այսինչ-այսինչ մարդուց, պատճառն այն է, որ այդ հանգամանքն Օհանի ժամանակւայ մարդկանց համար նորութիւն չէր, ամենին յայտնի էր, մինչեւ անգամ Թէյմուրազ արքայազնին, որի համար նա կազմում էր մատենը։ Օհանը գլխի չէր կարող ընկնել, որ հարիւր տարի նրանից յետոյ կյայտնւեն Գ. Լեոնիդէի եւ Լ. Մելիքսէթեքի մահն գործին անտեղեկ մարդիկ, որոնց համար պարզ չի լինի այն, ինչ որ պարզ էր իր ժամանակի մարդկանց համար . . .»։

Սայեաք Նովայի մահւան քաղաքն ու հանգամանքները պարզելու համար, հետազոտողները դիմում են նաեւ այն աղբիւրներին որոնք նկարագրում են Թիֆլիզի տեքուսը, սակայն չեն յիշատակում, որ Սայեաք Նովան կամ Ստեփանոս վարպետը (Սայեաք Նովայի անունը հոգեւորական դառնալուց յետոյ) սպանւել է այդ օրերին։ Այսպէս, օրինակ, աշուղ Շամչի Մելքոն իր նշանակալից գրքում մէջ ասում է. «Վարդապետներ կոտորեցին, լէշեր էր ածած տէրտէրի»։ Մէկ ուրիշը՝ Սեբոբ Գրիշը պատմում է. «Ի կուսակրօն վարդապետացն զմահս սրախողխող անէին, գոմանս իբրեւ զգառն զենւին եւ զմանս գերեալ վանաւին»։ Այդ վարդապետներից ոչ մէկի անունը չեն տալիս ոչ Շամչի Մելքոն եւ ոչ էլ Սեբոբ Գրիշը։ Այս

վերջինս յիշատակում է միայն մի փահայի՝ Տէր Գրիգոր Տէր Շմառնեանի անունը։

Գ. Լեոնիդէն եւ Լ. Մելիքսէթեքը վերալիշեալն ի նկատի ունենալով գալիս են այն եզրակացութեան, որ Սայեաք Նովան չկար սպանւածների մէջ։ Գ. Ասատուրը այս տրամաբանութիւնը համարում է տարօրինակ։ Եթէ վերալիշեալ հեղինակները, — ասում է նա, — տալին նահատակւած միւս վարդապետների անունը եւ դրանց քուտ չլինէր Ստեփանոս անունը (Սայեաք Նովան), այդ դէպքում թերեւս կարելի էր եզրակացրնել, որ Ս. Նովան չի սպանւել։ Բայց քանի որ վարդապետների սպանութեան փաստը հաստատելով, նրանք ու եւ է անուն չեն յիշատակում, դրանից աւելի շատ կարելի է միայն եզրակացնել, որ Ստեփանոս վարդապետը (Սայեաք Նովան) կարող էր լինել այդ նահատակների քուտը։

Կայ նաեւ մի ուրիշ աղբիւր՝ Դաւիթ արքայազնի «Նիւթեր վրաստանի պատմութեան» գրածը, որի մէջ Թիֆլիզի գրաւման նիւթած էջերում հեղինակը խօսում է ֆաղափ մօտ եղած նակատատարտի մասին եւ յիշատակում է նահատակւածների քուտ իր երկու կրօնակիցների անունը, որոնցից մէկը սարկաւագ, եւ ասպա աւելացնում է «եւ ուրիշ շատ մարդ եւ կին, ինչպէս վրացիք, նոյնպէս եւ հայեր»։ Այս աղբիւրն եւս տրամագծօրէն միմեանց հակառակ եզրակացութիւնների հիմք է ծառայում երկու կողմերի համար։ Գ. Լեոնիդէն եւ Լ. Մելիքսէթեքը դրա հիման վրա գալիս են այն եզրակացութեան, որ Սայեաք Նովան չի նահատակւել Թիֆլիզի գրաւման ժամանակ, հակառակ դէպքում, ասում են նրանք, անհնարին էր, որ Դաւիթ արքայազն չյիշատակէր այդ մասին։

Գ. Ասատուրը առարկում է վերալիշեալ եզրակացութեան դէմ։ Դաւիթ արքայազն, — գրում է նա, — չտալիս է

միայն այն անձանց անունները, որոնք նրա համար հետաքրքրական էին. մնացածներն ամփոփում են նրա «շատ մարդ եւ կին» խօսքերի մէջ։ Բացի այդ, կայ նաեւ մի այլ բացատրութիւն աւայն, թէ ինչու արքայազն Դաւիթն ու միւսները չեն յիշատակում Ս. Նովայի անունը սպանւածների քուտ։ Խնդիրն այն է, — ասում է Գ. Ասատուր, — որ «Սայեաք Նովան իր կեանքի վերջին տարիներում այլեւս այն նշանաւոր երգիչ երաժիշտը չէ, որը մի ժամանակ խելահամ էր անում լսողներին, այլ նախկին շուքը, հմայքը կորցրած մի մոռացւած, զառամեալ, «աննշան / կրօնաւոր», ինչպէս որակում է նրան Գ. Ալվեղեանը, եւ այսպիսով կորչում էր ուրիշ աննշան եւ «շատ մարդկանց եւ կանանց» միջեւ։ Եթէ նա այն ժամանակ լինէր աւելի խոշոր անձնաւորութիւն, ինչպիսին էր, օրինակ, գերի տարւած Հաղպատի առաջնորդ Դաւիթ եպիսկոպոս Թալիդարեանը, ի հարկէ, պատմիչներից գոնէ մէկը կ'յիշատակէր նրա անունը»։

Սայեաք Նովայի մասին տեղեկութիւններ կան նաեւ վրաց իւրեք (Իոան) արքայազնի 1798-1826՝ քաղաքներում գրած «Կալմաստք» գրքում։ Այս խառնաբաղեւ բովանդակութիւն ունեցող աշխատութեան մէջ, ի միջի այլոց, բերւած են մի քանի ճամբորդական, գեղարեստօրէն մշակւած էպիգրամներ, որոնց գլխաւոր հերոսն է մի ուն խելաշրթն իրիկ եւ միւս կողմից, նրա ժամանակւայ աչքի ընկնող զանազան անձնաւորութիւններ, որոնց քուտ Սանահինցի Սողոմոն Արդուրեանը եւ Սայեաք Նովան։ «Կալմաստք»-ի մէջ նկարագրւած են խելաշրթնի հացկերոյթները Սանահինում եւ Հաղպատի վանքում, Սայեաք Նովայի երգն ու նազը եւ այլն, որ տեղի են ունեցել Աղա Մահմադ խանի արշաւանքի յետոյ։ Լ. Մելիքսէթեքը յենեւելով այս գրքի վրա, ապացուցւած է համարում այն փաստը, որ Սայեաք

Նովան դեռ ողջ է եղել 1800 թ-ի աշնանը։

Գ. Ասատուրը անբոյլատրելի է համարում պատմաբանի համար ստուգումներ կատարել մի այնպիսի աղբիւրի հիման վրա, ինչպիսին է «Կալմաստք»-ն։ Այս գիրքը, — ասում է նա, — այնպիսի վաւերագիր է, ինչպէս օրինակ, Շիրվանզադէի «Կեանքի բովից» աշխատութիւնը, որի մէջ դէպքերի մանրամասնութիւնները, ստույգ ժամանակը, խօսակցութեան նշուածքները չեն պահպանւած։ «Կալմաստք»-ն իբրեւ լուրջ աղբիւր ընդունել չի կարելի ներկայ դէպքում։

Լ. Մելիքսէթեքի վերջին եւ ամենաուժեղ փաստը, որի դէմ նոյնպէս առարկում է Գ. Ասատուրը, հետեւեալն է։ — Սեբոբ Գրիշի պատմութեան մէջ կան յիշատակարաններ, ուր 1796-98 թ.թ. ներքոյ յիշւած է Հաղպատի միաբան Տէր-Ստեփանը։ Լ. Մելիքսէթեքը կարծում է, որ այդ Տէր-Ստեփանը Սայեաք Նովան է, որն եւ գրել է այդ յիշատակարանները։ Այստեղից ուրեմն պարզւում է, որ 1796-98 թ-ին (Աղա-Մահմադ խանի արշաւանքի յետոյ) բանաստեղծը դեռ ողջ է եղել։

«Բայց ինչի՞ց իմացեց, — բացառւում է Գ. Ասատուրը, — որ այդ Տէր-Ստեփանը Ս. Նովան է. միթէ՞ ամէն Տէր-Ստեփան Ս. Նովա պիտի լինի եւ միթէ՞ բացի Ս. Նովայից ուրիշ Տէր Ստեփան չկար հայ տէրտէրներով առատ Թիֆլիզում»։ Շարունակութեան մէջ նա յիշեցնում է, որ Ս. Նովայի հոգեւորական անունը Ստեփան չէր, այլ Ստեփանոս եւ որ նա ամէն տեղ իր մինչեւ այժմ յայտնի յիշատակարանների մէջ իրեն անուանում է Ստեփանոս։ Բացի այդ, յիշեալ Տէր-Ստեփանի յիշատակարաններից չի երեւում թէ նրա հեղինակը Հաղպատի միաբան է։ Գ. Ասատուրը ցոյց է տալիս, որ այդ Տէր-Ստեփանը Թիֆլիզի ֆահանայ է եղել եւ որ եւ կայ չո-

նի Ստեփաննոս Վարդապետի կամ Սա-
յեաք Նովայի հետ:

Եզրակացնելով. Գ. Ասատուրը յայ-
տարաբար է, որ «պրոֆ. Մելիֆսէ-
բէգի փորձերը նոր բան ասելու Ս. Նո-
վայի մահւան մասին շատ են անյա-
ջող . . .» եւ որ իր ուժի մէջ է մնում

«ամէնփից ընդունած ճշմարտութիւնը»,
այսինքն որ 1795 թ. սեպտեմբեր ամսին
Սայեաք Նովան սպանել է Թիֆլիզում,
մեծ բերդի եկեղեցու բակում եւ քաղ-
ւել նոյն եկեղեցու հիւսիսային փոքր
դրան առաջ:

Ա. Խ.

ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՐԿՈՒ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒ 100-ԱՄԵԱԿԸ

Օգոստոս 16-ին Վենետիկի Միսի-
թարեանները եւ Մուրատ-Ռաֆայէլեանի
հախիկին սաները տօնած են Մուրատ-
Ռաֆայէլեան վարժարանի հիմնադրու-
թեան հարիւրամեայ տարեդարձը:

Հազարգիւտ տօն մըն է այս որ չը
պիտի պարփակուէր միայն Ս. Ղազարի
կղզեակին մէջ: Այս դպրոցը մէկ դարի
ընթացքին ունեցած է խոշոր մշակու-
թային նշանակութիւն եւ անոր յորել-
եանը համագային նշանակութիւն ու-
նի: Մուրատ-Ռաֆայէլեան վարժարանը
տաւած է բազմաթիւ վաստակաւոր գոր-
ծիչներ հայ կրթութեան, մշակոյթին եւ
հանրային միւս ասպարէզներուն:

Անոր շուրջ բոլորած են եղեր գի-
տութեան եւ ազգ. բանասիրութեան նը-
ւիրած տիտաններ - Ալիշան, Հիւր-
միւզ, Տաշեան, Ինճիմեան, Ալվազեան
եւ այլ բազմաթիւ դէմքեր, որոնց շուր-
ջին եւ ազդեցութեան տակ դաստիարակ-
ւած են սերունդներ:

Հնդկահայ բարերարներու այս նը-
ւերները անգնահատելի բարիք եղած է
մանաւանդ արեւմտահայութեան:

ՎԻՃԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԽՈՐՀՐԳԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Խորհրդ. Հայաստանի մշակութային
նախարար վրա ուղարկու գեղարվեստ
տեղի ունենում: Գարնան հետ միասին
սկսած շարժումը, որի նպատակն էր
«ստեղծագործական բուռն վիճարանու-
թիւններով» (գիտելութիւն) եւ ինքնա-

Այս տարի տօնեցաւ մանւ մէկ դա-
րի պատմութիւն ունեցող Թաւրիզի Ա-
րամեան դպրոցի յորելեանը:

Եթէ նկատի ունենանք հին Պարս-
կաստանի յետամնացութիւնը եւ բարո-
յական ու միջակայն այն ծանր պայ-
մանները, որոնց մէջ կապրէր պարսկա-
հայը, Արամեան դպրոցի 100 տարւան
կեանքը կը ներկայանայ մեզ որպէս հե-
րոսական լուր ու յամառ պայքարի մի
շրջան, որի նշանակութիւնը խիստ մեծ
է:

Կովկաստեայ եւ պարսկահայ ըն-
տիր, յառաջողէմ եւ ազատական մտա-
ւորական սերունդէն շատերը իրենց կո-
րովը, գիտութիւնը եւ ջանքերը դրած
են այդ դպրոցի յարատեւութեան եւ
մանաւանդ արդիացման վրա: Թաւրիզի
դպրոցը փրկարար դեր է կատարած ի-
րանահայութեան համար:

«Վէմ»-ի խմբագրութիւնը սրտագին
կողջունէ արեւելի եւ արեւմուտի այս
երկու վերջերան մշակութային օջախնե-
րու 100-ամեայ յորելեանները:

Վ. Փ.

Բնագիտութեան լայն ծաւալումով
վերացնել գրականութեան եւ արեւստ-
ների մէջ նկատուող «փորձալիստական,
նատուրալիստական եւ այլ կարգի սը-
խալները», ամառը, ծանօթ իրադար-
ձութիւնների (Ա. Խանջեանի ինքնա-

պանութիւն) հետեւանում, յանգել է
մի նոր արշաւանքի ընդդէմ հայ մը-
շակոյթի եւ մշակութային գործիչնե-
րի: Այս յանկարծակի «շրջադարձի»
մանրամասնութիւնները դեռ պակաս
են, ուստի եւ այդ մասին արտայայտ-
ւելը յետաձգելով միւս անգամայ,
առաջմ կանգ կառնենք միայն «գիտ-
ելութիւն» (վիճարանութիւնների) վրա:

«Գիտելութիւն» Հայաստանում ծա-
ւալել է ոչ թէ հայ գրողների եւ ար-
ւեստագետների նախաձեռնութեամբ,
այլ Մոսկւայի տաւած ազդանշանի հետե-
ւանում: Այս տարւայ յունարին Կոմ-
կուսի Կեդրոնակ. օրգան «Պրաւդա»-ի
մէջ հրատարակեցան խմբագրական
յօդաւանք, որոնցով մատնանշոււմ էին
գրականութեան եւ արեւստների մէջ
թոյլ տրուած մի շարք սխալներ ու քե-
րութիւններ, որոնց շուտափոյթ վե-
րացման ահազանք էր տալիս Մոսկւա-
յի պաշտօնաթերթը: Ռուս գրագետնե-
րի Միութիւնը անմիջապէս համապա-
տասխան եզրակացութիւն հանեց «Պը-
րաւդա»-ի «այդ հոչակաւոր յօդաւ-
ների ցուցմունքներից ու դրոյթներից»
եւ սկիզբը դրաւ վիճարանական ժողով-
ների, որոնց նպատակն էր կազմակեր-
պել պայքար ֆորմալիզմի ու նատու-
րալիզմի դէմ:

Խորհրդային միւս երկրների կարգին՝
Մոսկւայի օրինակին հետեւեց մանւ
Հայաստանը: Ապրիլ 26-ին, երեսնում
սկսում է «մեր գրականութեան մէջ
արտայայտուած փորձալիզմի, նատու-
րալիզմի եւ այլ կարգի սխալներին ու
քերութիւններին նկատուող դիմադրու-
թիւնը» բաց է մնում Կենտկոմի ներ-
կայացուցիչ Յ. Պողոսեանը, որից յե-
տոյ «Հայաստանի խորհրդ. գրողների
առաջին համագումարից յետոյ մեր
գրականութեան անցած ճանապարհի
մասին» մի ընդարձակ գեղացումով
հանդէս է գալիս Հայաստանի խորհրդ-
դային գրողների Միութեան նախագահ

եւ արեւստի վարչութեան պետ Դրաս-
տամատ Սիմոնեանը:

Իր ելոյթի մէջ յայտնելով, որ պար-
տականութիւն ունի «գեղացելու մեր
գրականութեան մասին այն առումով,
որով բնարկոււմ են խորհրդային ար-
ւեստի եւ գրականութեան հարցերը
լայնածաւալ խորհրդ. Միութեան բո-
լոր ծայրերում», Դր. Սիմոնեանը ճշը-
դում է ժողովի նպատակը, յայտարա-
րելով, որ «մենք հաւաքուել ենք բանա-
վիճելու այն մասին, թէ ինչ կարգի
քերութիւններով է տառապում մեր
գրականութիւնը, նպատակ ունենալով
ծաւալում պայքար սկսել այդ քերու-
թիւնների դէմ եւ առաջին հերթին
փորձալիզմի ու նատուրալիզմի ար-
տայայտութիւնների դէմ» («Գրակ.
Թերթ», Բ. 12):

Նախքան վերոյիշեալ «արտայայտու-
թիւններին» անցնելը, գեղացանող բը-
նորոշում է ֆորմալիզմ եւ նատուրա-
լիզմ հասկացողութիւնները: Ֆորմա-
լիզմը, (ձեւապաշտութիւն), - ասում
է նա, - գրական մի ուղղութիւն է, որ
հանդէս է եկել անցեալ դարի վերջին
հառորդում եւրոպական արեւստի եւ
գրականութեան մէջ, որպէս ռեակցիա
(հակադեցութիւն) ընդդէմ ռալիզմի
(իրապաշտութեան) ու նատուրալիզմի
(բնապաշտութիւն): Գեղարւեստական
երկի մէջ փորձալիստները արժէա-
ւորում են միայն այն կողմը, թէ
պատկերած երեւոյթը կամ առարկան
ինչպէս են ձեւաւորած: Նրանք իրա-
կանութեան ճիշդ վերարտադրութեան
սկզբունքին հակադրում են ինքնուրոյն
ինքնաբաւ ձեւաւորման սկզբունքը:
Արեւստը, ըստ փորձալիստների, մի-
ջալայրի արդիւնք չէ եւ ոչ էլ հանրա-
յին ազդակ, այլ «արեւստը արեւստի
համար է»: Գեղարւեստական է միայն
ձեւաւորումը, իսկ ձեւաւորման եմբա-
կայ միջոց, պատկերող առարկան հա-
կադեղարւեստական է: «Ֆորմալիզմը,

– գեկուցանողի կարծիքով, – բուր-
ժուական հասարակութեան նշխարն
ընդամենը իդէալոգիական (գաղափարա-
բանական) արտայայտութիւնն է արեւս-
տի բնագիտութեան»:

Նատուրալիզմի բնորոշումը Դր. Սի-
մոնեանը տալիս է, մեկնելով Էմիլ Զո-
լայի ձեռնարկութիւններից: Զոլան, –
ասում է գեկուցանողը, – գրականու-
թեան համար առաջադրում էր երեք
հիմնական չափանիշ՝ գիտականութիւն,
խոսքայայտականութիւն (օրեկտիւն –
բիւն) եւ համամարդկային մշտնադու-
րիւն: Ռեալիզմի (իրականութեան)
հետեւողը փառաբանական տեսանկիւնով
է մշակում մշտնադուրեանը, միեւնոյն
նատուրալիստը մտնում է նրան գի-
տական, բնութեանը (nature) մօտ լի-
նելու նպատակով: Զոլայի կարծիքով
ախտաբանութիւնը (pathologie) եւ բը-
նախոսութիւնը (physiologie) պէտք է
մուտք գործեն գրականութեան մէջ եւ
հարստացնեն գրականութեան *թեմանե-
րը*: Գրականութեան առաջ գիտական
խնդիրներն ղեկավարում են իր
կողմնակիցները պահանջում էին բնա-
խոսութեան մեքոսներով ուսումնասի-
րել մարդկային կրֆերն ու գագուս-
ները եւ երեւոյթները նկարագրել այն-
պիսի մշտնադուրեանով, ինչպէս այդ ա-
նուն է բնախոսութիւնը իր փորձերի
ժամանակ: Առաջնորդելով վերոյիշեալ
ընթացումներով, Զոլան առաջադրում
էր արեւստի ապագադականութեան
սկզբունքը: «Ես, – ասում է Զոլան, –
փառաբանական կարգերի արժէքաւորում
հարցը չեմ գնահատում, ես չեմ կամե-
նում որ եւ է փառաբանութիւն կամ
կրֆն պաշտպանել: Իմ նկարած պատ-
կերը իրականութեան մի կտորի պարզ
վերլուծութիւնն է, այնպէս, ինչպէս
որ ես կայ»:

Տալով փորձաքննի եւ նատուրալիզ-
մի վերոյիշեալ բնորոշումները, Դր.
Սիմոնեանը դրանց հակադրում է

ցիալիստական *ռեալիզմի* ուղղութիւնը,
որով զարգանում է խորհրդային բոլոր
երկիրների, ինչպէս նաեւ Հայաստանի
գրականութիւնը: Սոցիալիստական ռե-
ալիզմը, որպէս ստեղծագործական մե-
քոք, տարբերում է բուրժուական
ռեալիզմից նրանով, որ իրականութիւնը
վերարտադրում է պրոլետարիատի գա-
ղափարախօսութեան համաձայն: Բուր-
ժուական ռեալիստը կանգնած է բուր-
ժուական կարգերի պահպանման տե-
սակետի վրա, միեւնոյն սոցիալիստա-
կան ռեալիզմի մեքոքով ստեղծագոր-
ծող խորհրդային գրողների նպատակն
է տապալել այդ կարգերը եւ գրակա-
նութիւնը ի սպաս դնել սոցիալիզմի
կառուցման գործին:

Գրականութեան հարցերին ներառած
գիտականութեան, – ասում է Դր. Սիմոնե-
անը, – նպատակ ունի պարզելու, թէ
գրողների համագումարից յետոյ, Հա-
յաստանի գրականութեան զարգացումը
ընթացե՞լ է, արդե՞տ, ամբողջովին
սոցիալիստական ռեալիզմի ուղիներով,
թէ՞ եմքարկել է նաեւ խորք ուղղու-
թիւնների ազդեցութեանը:

Այս հարցին պատասխանելու համար՝
գեկուցանողը մի ընդհանուր ակնարկ է
գցում Հայաստանի գրականութեան
զարգացման «յետահամագումարեան շըր-
ջանի» վրա: Նա նախեւառաջ արձանա-
գրում է, որ Հայաստանի «գրականու-
թիւնը, ընդհանուր առմամբ, սկսել է
վերելք տալով»: Մասնաւորապէս ար-
ձակը, որ մինչեւ համագումար յետ էր
մնում բանաստեղծութիւնից, զգալի
յառաջադիւնութիւն է արել: Մասնա-
նշուած շրջանում լոյս են տեսել մի
շարք գործեր, որոնցից գեկուցանողը
յիշատակում է՝ Մ. Արմէնի «Հեղեղի
Աղբիւրը», Ս. Զարեանի «Մի կեանքի
պատմութիւնը», Զ. Եսայեանի «Մի կե-
տարի Պարտէզները», Ա. Բակունցի
«Նորայրութեան ընկուզենիները», Սի-
րասի «Զգրած Օրէնքը», Վ. Թորո-

վեցի «Յովնաթան որդի Երեմիայի»
վէպը, «Աղանձները» եւ «Հրկիզած
Թղթերը», Արագիի «Արձակ պոէմները»
եւ այլն:

Անցնելով ֆերբադական գրականու-
թեան (պոէզիային), Դր. Սիմոնեանը
արձանագրում է, որ չնայած յետա-
մագումարեան շրջանում լոյս են տե-
սել Ա. Վշտունու, Ն. Զարեանի, Գ.
Սարեանի, Վ. Նարեցի, Սոյ. Տարոն-
յու բանաստեղծութիւնների ժողովա-
ծուները, սակայն դրանց մէջ ամփոփ-
ւած ոտանավորների մեծ մասը գրած է
նախկին շրջանում:

Մինչդեռ որոշ արձակ գրածներ ի-
րաւում են տալիս մասնաւորապէս, որ
արձակագիրները «լրջօրէն բռնել են
վէպի ստեղծագործական ուղին», «պո-
էտները համագումարից յետոյ չուին
մեր այսօրայ խնդիրներին ներառ-
բանաստեղծական մեծաշունչ գործեր»:

Շատ աւելի վատ է թատերական գրա-
կանութեան վիճակը: Հակառակ նրան,
որ յայտարարել է երկու մրցանակ եւ
թատերական որոշ գործեր արժանացել
են մրցանակի, «այնուամենայնիւ դրա-
մատուրգիան զգալիօրէն յետ է մնում
թէ՛ պոէզիայից եւ թէ՛ արձակից»:

Գալով վերոյիշեալ գրական երկերի
ներքին արժէքին, Դր. Սիմոնեանը ար-
ձանագրում է հետեւեալ հիմնական
թերութիւնը: «Արձակի ասպարէզում,
– ասում է նա, – թեմատիկայի տեսա-
սակետից վեր չի հանում մեր սոցիա-
լիստական շինարարութեան, անդա-
սակարգ հասարակութեան համար մըդ-
ուղ պայքարը, չեն տիպականացում,
չեն փանդակում մեր այսօրայ հե-
րոսները»: «Մեր գրականութիւնը,
ինչպէս համագումարից առաջ, այնպէս
էլ համագումարից յետոյ մեզ չուեց
մեր ժամանակաշրջանն ապագայող,
մեր կեանքի հերոսական (հերոսական
դրագները) եւ հերոսներին պատկերող
բարձր արակի երկեր»: Ուշագրաւ մի

երեւոյթ: Երբ գրողները իրենց ներքեւ
ստանում են նախաբանիկեան շրջանից,
նրանք շատ աւելի յաջող գործեր են
տալիս, քան այն դէպքում, երբ ըս-
տիպած են «արտացոլել զանգուածների
պայքարը սոցիալիզմի համար»: Եւ այս
պատճառով էլ Հայաստանի գրականու-
թեան «բարձր արակի» երկերը նրանք
են, – յայտարարում է Դր. Սիմոնեա-
նը, – որոնք «պատկերում են մեր հին
կեանքը», ինչպէս օրինակ, Եղիշէ Զա-
րեանի «Երկիր Նայիրի», Ակսել Բա-
կունցի «Գորիս եւ Կեօրիս», Մկրտիչ
Արմէնի «Հեղեղի Աղբիւրը», Սո. Զոր-
եանի «Մի կեանքի պատմութիւնը» եւ
այլն: Դրա հակառակ, Ալագանի «Ին-
դուստրիալ վէպ» տալու փորձը («Վաթ-
սուներդը հորիզոնում») պէտք է հա-
մարել անյաջող, ինչպէս եւ Նայիրի
Զարեանի այն մի փանի պոէմները, որ-
տեղ նա ջանացել է կերտել յեղափո-
խական անձնուէր կամուրջատ աղջկայ՝
Հրանուշի, կոլտնոսական կարգերի
յադրանակի համար պայքարող Ալեք-
սանի եւ անձնագոհարար սոցիալիստա-
կան սեփականութիւնը պաշտպանող
Սաֆո Միկիմեանի տիպերը:

Անցնելով Հայաստանի գրականու-
թեան մէջ նկատուած փորձաքննական
եւ *նատուրալիստական* սխալներին,
Դր. Սիմոնեանը արձանագրում է, որ
«մեզանում չկան ձեռնարկած փոր-
մալիստներ ու նատուրալիստներ եւ
փորմալիստական ու նատուրալիստա-
կան սխալները մեր գրողների ստեղ-
ծագործութիւններում որպէ՛ չեն կազ-
մում», բայց եւ այնպէս մի շարք եր-
կեր գերծ չեն այդ կարգի սխալներից ու
թերութիւններից: Փորմալիստական սը-
խալներ կան Ե. Զարեանի, Ա. Վշտու-
նու, Մ. Արմէնի, Գ. Սարեանի, Ա.
Բակունցի, Ս. Տարոնցու եւ ուրիշների
ստեղծագործութիւնների մէջ, իսկ նա-
տուրալիստական կարգի թերութիւն-
ներ՝ Դ. Դեմիրճեանի, Ն. Զարեանի,

Վ. Թորոքենցի, Սիրասի եւ ուրիշների որոշ երկերում:

Լեզվի հարցում, մասնավորապես, նշկատում են «ամենադատօրէն օգուելու» առանձին փաստեր «արեւմտահայ գրողներից: Օրինակ, Վ. Նորենցը, Ս. Տարոնցին եւ մասամբ Ալազանը «մեխանիկաբար» օգուում են Միսաֆ Մեծարենցի, Դանիէլ Վարուժանի սիմվոլիստական պատկերներից, խրքին լեզվից: Անհնաատ վերաբերմամբ դէպի այդ բանաստեղծների ոմն ու լեզուն, դէպի նրանց ստեղծագործութիւնը, առանձնապէս զգալի է որոշ երկտասարդ եւ սկսմակ գրողների գրածքներում:

Գրականութեան գաղափարական սայբաբումները, ինչպէս եւ փորձալիստական ու նատուրալիստական բերութիւնները երբեմն բխում են նիւթին ոչ ճիշդ մօտենալուց: Այս կարգի «սայբաբողների» բնի է պատկանում Ե. Զարենցը: Բնորոշ է, որ Դր. Սիւնեանը, որը դեռեւս մէկ տարի առաջ, Մոսկւայում տեղի ունեցած ժողովում, սպառնալիքներ էր կարդում Զարենցի գլխին, համարելով նրան «դասակարգային բշտամու գաղափարական դիրքերի արտայայտիչը», այսօր արդէն նրան այլ կերպ է անւանում, քան «մեր մեծ բանաստեղծը» եւ իր քննադատութիւնները համեմատ է ամէն անգամ հատընտիր գովաբանութիւններով: «Բարձր գեղարւեստականութեամբ» փորձելով տալ մեր ժողովրդի դարաւոր անցեալի պատմական գնահատութիւնը, Ե. Զարենցը, — աւսում է Դր. Սիւնեանը, — իր «Գիւրգէնապարհի» աշխատութեան որոշ գործերի մէջ «յանգեց սխալ կերակարգութեան»: Օրինակ, «Մահահ տեսիլ» երկում նա «մեր ժողովրդի դարաւոր անցեալ պատմութեան մէջ միայն այդ պատմութեան մի կողմն է վերցրել» եւ այդ պատճառով էլ յիշեալ երկը «զրկել է պատմութեան ռեալիստական

վերաբառադրութիւնից»: Խորհրդ. Հայաստանի 15-րդ տարեդարձին նւիրած նրա բանաստեղծութիւնը «խոշոր քայլ է՝ տալու մեր ժողովրդի անցեալի ճիշդ գնահատումը դասակարգային պայքարի հայեցակէտից: Նիւթի մշակման ոչ ճիշդ մօտեցումը հեղինակին կարող է ձգել փորձալիստական կերպերի մէջ»:

Ֆորմալիստական սխալ է գործել նա եւ Ս. Տարոնցին իր «Սայեաթ Նովա» քերականով, ինչպէս նաեւ Ազատ Վըտունին իր «Երգ կենսի գիւտ մասին» եւ «Երգ մեր երկրի աղէկան» ոտանաւորներով: Դրանք «վերացական, անբովանդակ բանաստեղծութիւններ են, գրած հեղինակի ձեռնամուկ կերպերի մղումով»:

Գ. Սարեանի «Հրաժեշտ աղբատու թէն» ոտանաւորը նոյնպէս չի լրացնում «սոցիալիստական ռեալիզմի» պահանջները: Նրա մէջ «բացակայում է այն միտքը, որ մեր երկրում աղբատուութիւնը վերանում է պայքարի միջոցով: Այդ ոտանաւորը գրելիս, հեղինակը չի մօտեցել աղբատուութեան գնահատութեանը դասակարգային պայքարի տեսակէտից, ուստի եւ «Հրաժեշտ աղբատուութեան» ոտանաւորը զրկել է մեր ժամանակաշրջանի իդէական կնիքը կրելուց»:

Ֆորմալիստական գրածք է նաեւ Վ. Թորոքենցի «Գարուն, Գարուն, Գարուն» արձակ բանաստեղծութիւնը, որտեղ «նիւթի մշակման ձեռնամուկ կերպը վարագուրել եւ նսեմացրել է բովանդակութիւնը»:

Աւագ գրողների սխալներից գերծէնն նաեւ երկտասարդ բանաստեղծները, որոնցից մի քանիսի «գործերը անբովանդակ ներբողներ են՝ նւիրած մեր նախայեղափոխական շրջանի բանաստեղծներին»:

Վերջապէս փորձալիստական եւ նատուրալիստական սխալների ու աղբ-

ցութիւնների խնդրում յանգնած ունեն նաեւ գրական քննադատները, որոնք «ժամանակին չեն յայտնաբերել» այդ սխալները ու չեն պայքարել այդ աղբացութիւնների դէմ:

Ահաւասիկ Հայաստանի խորհրդային գրականութեան այն «հանգուցային հարցերը», որ «դիսպուտի քննութեան» է դրել Գրողների Միութեան նախագահ Դր. Սիւնեանը: Ինչպէս ասացինք, գրականութեան նւիրած վիճարանութիւնները, սկսելով ապրիլի 26-ին, շարունակել են մինչեւ յունիս: Հայաստանի համարեա բոլոր գրողները մասնակցել են այդ «դիսպուտին», բացառութեամբ Ե. Զարենցի, որ մի նամակով, ուղղած ժողովի նախագահին, յայտնել է, թէ «հիւանդութեան պատճառով հնարաւորութիւն չունի օրգանական մասնակցութիւն ունենալու դիսպուտի աշխատանքներին» եւ ցանկութիւն է յայտնել, որ «դիսպուտը ընթանայ սկզբնական քարձր մակարդակի վրա եւ երեւան բերի մեր գրականութեան մէջ արտայայտած ամէն կարգի սխալներն ու սայբաբումները»: Միւս գրողների ունեցած եւ յայտնելի բովանդակութիւնը, դժբախտաբար, դեռեւս չէ հրատարակւած: «Գրական Թերթ»-ը, յայտնում է, որ ամբողջ վիճարանութիւնները լոյս են տեսնելու «Խորհրդային Գրականութիւն» հանդէսի հետեւեալ գրքում, բայց ստեղծւած նոր պայմաններում հազիւ թէ այդ տեղի ունենայ:

«Գրական Թերթ»-ը մայիս 30-ի քննում, ամփոփելով գրական հարցերին նւիրած վիճարանութիւնների արդիւնքը, հետեւեալն է գրում. «Դիսպուտին արձանագործ մեր որոշ գրողների յետամնացութիւնը, սոցիալիստական շինարարութեան առօրեայից կտրւածութիւնը, որոշակի փախուստը դէպի անցեալի աւելի «անվնաս» ու «լիրիկական» անկիւնները, գրականութեան

ու գրողների քայլ կապը ժողովրդական ամենալայն զանգածների հետ, մեր օրերի նշանաւոր հերոսների հաւաքական տիպի պակասը՝ մեր գրականութեան մէջ եւ բազմաթիւ այլ խնդիրներ: Դիսպուտին երեւան հանեց մեր գրականութեան մէջ եղած փորձալիստական, նատուրալիստական եւ այլ կարգի սխալները: Երեւան բերեցին նախնական սխալները մեր առանձին գրողների ստեղծագործութիւններում: Դիսպուտին արձանագրեց, որ նախնական յանախ որպէս արտայայտելու միջոց ընտրում է նոյն փորձալիզմն ու նատուրալիզմը»:

«Դիսպուտային ընթացքում հանդէս եկած մեր արականոր գրողների ճշգրտ մեծամասնութիւնը, ինքնաբերական ստեղծագործութեան պայմաններում երեւան հանեց մեր գրականութեան եւ իրենց ստեղծագործութեան սխալներն ու բերութիւնները: Ճիշդ է, եղան առանձին գրողներ, որոնք ինքնաբերական ստեղծագործութիւնները փոխարինեցին անառնող ինքնագովութեամբ, իսկ որոշ ընկերներ փորձ արին իրենց առանձին գործերը «գոնելով», սահել իրենց ստեղծագործութիւնների հիմնական բերութիւնների վրայով: Դիսպուտին սուր քննատուութեան ենթարկեց թէ՛ առաջին եւ թէ՛ երկրորդ կարգի ընկերների սխալ մօտեցումը եւ ինքնաբերական տուրքեան կրակի տակ առաւ նրանց ստեղծագործական սխալները»:

Թէ այս եզրափակումից եւ թէ Դր. Սիւնեանի գեկոյցի մէջ զարգացրած հիմնական տեսակէտներից պարզ երեւում է, որ գրական դիսպուտային նշկատումն է եղել յետ դարձնել գրականութեան զարգացման ընթացքը այն համեմատական ազատ ուղիից, որի վրա նա դրեց Մոսկւայի 1932 թ-ի որոշման շնորհիւ:

Ա. Խ.

ԳԻՐՔ ԵՒ ՄԱՄՈՒԼ

«ՆՈՐ ԳԻՐ» ԵՒ «ՆՈՐ ԷՋ» պարբերականները.

Երկուստեքն էլ սկսման գրողներու երկու պարբերականներ են առնալ, որոնցմէ մէկը Ամերիկա, միւսը՝ Պարսկաստան կը հրատարակուի:

Անկախ իրենց բովանդակութենէն, երկուքը միտքարական է եւ յուսատու: Մեր նորահաս սերունդը, կը փորձէ համալսումը եւ հաւաքականօրէն իջնալ գրական մարգարտութիւն վրա:

Նման փորձ մը, քանի մը տարի առաջ, ըրին Ֆրանսայի երկուստեքն գրողները «Մէնս» պարբերաբերով, որ սակայն երկար կեանք չունեցաւ, շնորհիւ գործին գլուխը գտնուող տարամերժ, կեղծարարական եւ մամուլային մեծ յաւակնութիւններով լեցուն քանի մը անձերու:

Վերի երկու պարբերականները աւելի համեստ են (քէն «Նոր Էջ»-ի արիւնք վարիչները նոր յաւակնութիւններով մէջտեղ ելան) եւ աւելի բնականօրէն զարգացման ուղիի վրա են կանգնած:

«Նոր-Գիր»-ի շուրջ հաւաքած ուժերը աւելի հասուն գեղարվեստական երկեր են տալով. որոնք հոգիներ են, որոնք չեն խորշիւր կեանքի առօրեայ դառնութիւնները պատկերել եւ կուտան պոետիկ դրացներ, լեցուն տխուր հեղանակով, քաջիծով ու առանց գունաւորման: Անոնք կը մօտենան գեղարվեստին հաւատարմի ջերմեանդութեամբ ու զգուշաւոր շարժումով: Ահա նախնիկեան մը, որ երգիծանքը քաջիծին հետ խառնած՝ լի զգացումով ու ջերմութեամբ կուտայ «կեանքէն արտաբաններու» դիմագիծը:

Շնորհալի գրողներու խումբ մըն է, որ կը գննի որոնել եւ գտնել իրական գեղարվեստական երկի ուղին եւ ընթա-

նալ անով: Ու իրենց պարբերաբերութիւն առաջին երեսը առած է Տոլստոյի նշանաբանը — արեւտը պիտի ծառայէ կեանքին, կեանքը պիտի է պատկերել ճշգրիտ, գեղեցիկ ու վսեմ. սիրել ու հաւատալ եւ բարեխղճօրէն վերաբերիլ մշակելի միւսին:

«Նոր Էջ»-ի մէջ, դժբախտաբար չափէն աւելի տեղ տալով են չափածոյ գրածներու, որոնք իբրեւ, կը կորսնցնեն իրենց նշանակութիւնը եւ արժէքը, ներկայ գրական-գեղարվեստական պահանջներու տեսակէտէն:

Թէեւ ժողովածուն կը հրատարակուի բնաշխարհէն դուրս, բայց եւ այնպէս զգալի է անոր մօտիկութիւնը հայրենիքին եւ հարազատ ժողովուրդին: Բոլոր գրողներն ալ այդ մթնոլորտի մէջ է որ կապրին ու կը շնչեն, մի համագամբ, որ դժբախտաբար կը բացակայի «Նոր Գիր»-ին մէջ:

Գնահատելի է Ռ. Բենի մէկ պատմութեամբ, քիչ մը բարոյախօսական, որ սակայն գեղարվեստականօրէն կուտայ «Ներքին ձայնին» խղիւղ դիրք մարդուն կեանքին մէջ:

Ֆալեանը գիւղը, անոր օջախը, աւանդութիւնները կը սիրէ եւ առանձին ջերմութեամբ ու հարազատութեամբ կը պատկերացնէ հայ գիւղը:

Գեռ անշուշտ շատ բան կը պակսի քէն «Նոր Գիր»-ի եւ մամուլային «Նոր Էջ»-ի երկուստեքն գրողներուն, — պատկերներու կառուցումով, տիպերու ամբողջականութեան եւ, վերջապէս, լեզուի տեսակէտէն, — բայց եւ այնպէս երկու պոետիկ գաղափարական խմբակներ են, որոնք շնորհիւ ունին եւ մամուլային լրջութիւն իրենց ձեռնարկին նկատմամբ: Փ.

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

Ա. ՍԱՐՈՒԽԱՆ, «Ֆիրդուսի եւ Մովսէս Խորենացի»

Saroukhan, - Firdowci et l'influence iranienne dans la littérature georgienne.

Սարուխանի այս գիրքը, գրած երկու լեզուով, առաջին վարկետեմին մի քիչ տարօրինակ տպաւորութիւն է քաղնում: Նրա երկու մասի մէջ էլ կայ բաւականաչափ միւս, որ քեմայի հետ ուղղակի առնչութիւն չունի: Այսպէս, օրինակ, հայերէն մասում մենք գտնում ենք մի շարք դատողութիւններ երեւանում հրատարակւած Ֆիրդուսի ժողովածուի մասին, դիտողութիւններ փառիգի Ազգային մատենադարանում կազմակերպւած ցուցահանդէսի վերաբերեալ, յիշողութիւններ հեղինակի 1922 թ. լեռնագրադում եւ Մոսկուայում ապրած օրերից, եւ այս կարգի ուրիշ այլ միւսքեր, որոնք ինքն ըստ ինքեան շատ հետաքրքրական են, բայց գրքի բուն քեմային չեն վերաբերում: Ֆրանսերէն մասում կան յաւելումներ, որոնց մէջ հեղինակը խօսում է վրացական գրքերի գիտի եւ կրօնական գրականութեան մասին:

Մի կողմ դնելով այդ յաւելեալ միւսքը, դիմեմք գրքի հիմնական բովանդակութեան: Ա. Սարուխանը սահմանափակել է իր հետազոտութիւնը միայն Մովսէս Խորենացիով: Հայ միւս մատենագիրներն ու հայ ժողովրդական վէպը նա ի նկատի չէ ունեցել եւ ջանացել է միայն պարզել այն հարցը, քէ ինչ ազդեցութիւն է ունեցել իրանական վէպը Խորենացու պատմութեան վրա: Պէտք է մատնանշել, որ այդ հարցը բազմաթիւ

անգամներ բնութեան է ենթարկւել հայագետների կողմից եւ այդ պատճառով էլ Ա. Սարուխանը չի կարողացել շատ նոր բան ասել այդ ուղղութեամբ: Նա, ի միջի այլոց, բնութեան է ենթարկում այն հարցը, քէ երբ է գրած Խորենացու պատմութիւնը եւ գալիս է այն եզրակացութեան, որ այդ 7-րդ դարուց աւելի շուտ չէր կարող լինել: Դժբախտաբար հեղինակը մոռացել է ասելու, որ նայն խնդրով զբաղւել են մի շարք ուրիշ գիտնականներ, ինչպէս օրինակ, Խալաթբեկը, Մառը, Սո. Մալխասեանը եւ վերջապէս Ն. Աղոնցը, որը 35 տարի առաջ վերջնականապէս ապացուցել է, որ Խորենացու պատմութիւնը գրած է 7-րդ դարուց ոչ շուտ եւ հաւանօրէն դրանից էլ ուշ:

Ֆրանսերէն մասում Ա. Սարուխանը, ինչպէս ասացինք, երկու յաւելածներ է գետնադրել, որոնց մէջ խօսում է վրացական աշխարհի գիտի եւ կրօնական գրականութեան մասին: Թէեւ այդ միւսքը գրքի բուն քեմայի հետ անմիջական կապ չունի, բայց եւ այնպէս երկու դիտողութիւններ անհրաժեշտ են համարում անել: Ցայտնելով որ վրացական գրքերի գիտը կատարել է Մեսրոպը Կորիւնի հետ միասին, Ա. Սարուխանը, հետեւելով P. Pecters-ին, պնդում է, որ Կորիւնը վրացի է եղել եւ աւելացնում է, որ մամուլային ապացույցներ այդ մասին նա բերել է իր

«Վրաստան եւ հայերը» աշխատութեան մէջ, որ լոյս է տեսնելու մօտ ժամանակներս: Քանի դեռ այդ ապացոյցները չեն ներկայացւած ու չեն ստուգւած, Ա. Սարուխանի պնդումը կարելի մասին մնում է տարակուսելի:

Նրկրորդ դիտողութիւնը վերաբերում է Բուլղարիայի բաղեղոնական վանքի հիմնադիր եւ բաղեղոնական դաւանանքին պատկանող հայագգի Գրիգոր Բակուրեանին: Վանքի կանոնադրութեան մէջ, որ կազմել է եւ հայերէն ստորագրել Բակուրեանը, ասւած է, որ վանքում յայտնաբերուած չեն կարող, իսկ միւսներէն արտօնուած է միայն նրանց մուտքը, ովքեր գիտեն վերացեալներն: Այս տեղից հեղինակը եզրակացնում է, որ Բակուրեանը վրաց ժողովրդի շերտ կողմնակիցներից է եղել: Ա. Սարուխանը ներկայ դէպքում տրամաբանական սխալ է գործում: Խնդիրն այն է, որ Բակուրեանը վանք ընդունուողների առջ պայման չէ դրել որ նրանք վրաց ազգին պատկանին, այլ պահանջել է միայն որ վրացերէն գիտնան եւ այդ արել է այն պատճառով, որ արտօնելով հանդերձ հայերին վանքի միաբան դառնալու – եւ հայերի քիւր այդ վանքում քիչ չէր – նա կամեցել է արգիլել, որ վանք մտնի հայերէն հակաբաղեղոնական գրականութիւն, որ կարող էր գայրակցեցնել միաբաններին:

Այսօր շատ շեղումներից յետոյ, դառնալով վերջապէս իր նիւթին, Ա. Սարուխանը այլեւս առանձին ցանկութիւն չէ ցուցաբերում լրջօրէն գրադուրու իրեն առաջադրած հիմնական հարցով – իրանական ազդեցութիւնը վրացական գրականութեան վրա – եւ սահմանափակում է միայն «Բնօճեղոնի» հեղինակ Ռուստավելու մի քանի նախորդների անուններով: Ա. Սարուխանը տալիս է պոէմի ընդհանուր բովանդակութիւնը եւ Ռուստավելու վրա ունեցած ֆիրդուսու ազդեցութեան իր ասպացոյց բերում է այն փաստը, որ

Ռուստավելու պոէմի հերոսը՝ Թարիւլը կրում է իր ուսերին ընծաներ, իսկ Շահնամի հերոս Ռուստեմը՝ վագրի մորթ եւ որ Ռուստավելու պոէմի բոլոր գործող անձինք մահմեդականներ են: Հասկանալի է որ իբր ապացոյցներ չեն կարող ընդունուիլ պ. Սարուխանի ոչ առաջին եւ ոչ էլ նրկրորդ դիտողութիւնը, որովհետեւ քէ՛ Շահնամէն եւ քէ՛ Բնօճեղոնը չունին մասնաշատուկ մահմեդական դրոշմ: Այդ կարելի է ասել մանաւանդ Բնօճեղոնի համար, որի մէջ Մուհամէդի անունը ընդամենը մէկ անգամ է յիշատակուում:

Ռուստավելու պոէմը հանդիսանում է ամենալաւ ապացոյցը իրանական ազդեցութեան՝ վրաց գրականութեան վրա: Այդ պոէմի մէջ ամէն ինչ պարսկական է՝ գործող անձինք, նրանց հոգեբանութիւնը, միջավայրը, վերջապէս դէպքերի նկարագրութիւնը: Ինքը՝ Ռուստավելին յայտնում է, որ միայն ոտամառքի է վերածել պարսկական պոէմը, որ արդէն գոյութիւն ունէր վրացերէն արձակ քարգմանութեամբ:

Վրաց գրականութեան վրա քոչած իրանական ազդեցութեան ուրիշ հետեւեր, ըստ նրկրորդի, այլեւս չի գտնում Ա. Սարուխանը, որովհետեւ, Ռուստավելու պոէմի համառօտ տեսութիւնն անելուց յետոյ, նա, օգտուելով պրոֆ. Մելիքսէթբեկի յօդւածով («Գեղարւեստ». 1921 թ. քիւ 7), տալիս է անունները մի քանի հայերի, որոնց գրած տեղը վրաց գրականութեան մէջ այնքան էլ անկարելի չէ: Մինչդեռ իրանական ազդեցութիւնը վրաց գրականութեան վրա, որ սկսել էր Ամիրան-Գեղեցմի մասին եղած արձակ վէպով, շարունակւում է մինչեւ 18-րդ դարը, որից յետոյ միայն լոյս են տեսնում գրական մի քանի նրկեր ազգային բովանդակութեամբ:

Անթիւ են վրաց գրականութեան մէջ քարգմանութիւնները եւ փոխառութիւնները պարսիկ բանաստեղծներից: Այդ բոլոր մեծ գտնում ենք քէ առաջնա-

կարգ քերթողներ ինչպէս Ֆիրդուսին ու Նիզամին եւ քէ մի բաւականին երկար շարք նրկրորդական բանաստեղծներից: Սրանց գործերը օրինակ են ծառայել վրացական պոէմների ու վէպերի համար եւ այդ բոլոր նրկերը խոստովել են պ. Սարուխանի ուշադրութիւն:

նից:

Հակառակ յաճախ կրկնուող շեղումներին ու շարադրութեան անմիաձուլութեան պ. Սարուխանի գիրքը տալիս է հայ-փրանսական ընթերցողին բազմաթիւ նոր եւ հետաքրքրական տեղեկութիւններ:

Յ. Զ.

ԱՐՄԱՆ ԿՈԹԻԿԵԱՆ, «Ֆիրդուսի թուսի եւ իր Շահնամէն»

1936 Փարիզ.

1934 թ.ին իրանը տօնեց իր ամենամեծ բանաստեղծի՝ Ֆիրդուսու ծննդեան հազարամեակը: Ամբողջ բաղաֆակիրք աշխարհը արձագնգ տաւ այդ յարելեանին, հրատարակելով բանաստեղծի ստեղծագործութեան նիւրած մի շարք ուսումնասիրութիւններ ու մեծագործութիւններ: Մենք հայերս, որ դարեր շարունակ ապրել ենք պարսիկների հետ ընդհանուր կեանքով եւ այսօր էլ բարի դրացիական յարաբերութիւններ ունենք իրանեան ազգի հետ, չէինք կարող անտարբեր մնալ վերայիշեալ խոշոր իրադարձութեան հանդէպ: Եւ յիշելի, նաեւ հայ գրականութեան մէջ լոյս են տեսնում Ֆիրդուսուն նիւրած մի քանի աշխատութիւններ, որոնց կարգին է պատկանում նաեւ պ. Ա. Կոթիկեանի գիրքը: Հեղինակն իր յառաջաբանի մէջ յայտնում է, որ «հետո է մասնագիտական լրիւ գործ մը կատարած ըլլալու յաւակութեամբ» եւ որ իրեն «առաջնորդողը եղած է պարսկապէս, նիւթին վերաբերեալ, օգտակարութեան դոյզն բաժին մը բերելու գաղափարը»:

Աշխատութեան առաջին գլխում, որ կրում է «Հին Պարսկաստանը եւ իր ճշգրտութիւնը» վերնագիրը, հեղինակը տալիս է պարսիկ ժողովրդի եւ նրա մշակութային զարգացման համառօտ պատմութիւնը: Ուր էջի մէջ այսպիսի մի ընդարձակ նիւթ սեղմելու փորձը

չէր կարող յաջողութեամբ պսակել, եւ Ա. Կոթիկեանի պատմական ակնարկը չափեց աւելի ընդհանուր բնոյթ է կրում եւ որոշ տեղերում նայնիսկ անհամագեցուցիչ է:

Նրկրորդ գլուխը – Ֆիրդուսի եւ իր կեանքը – ամենաշարժուն է այս գրքում: Հեղինակը լայնօրէն օգտագործել է հռչակաւոր Mohl-ի կողմից այնքան գեղեցիկ կերպով գրւած Ֆիրդուսու կենսագրութիւնը, որի հետեւանքով եւ այս գլուխը կարդացում է մեծ հաճոյքով:

Նրկրորդ գլուխը կոչւում է «Շահնամէն» եւ իր ազգի բերքը: Ա. Կոթիկեանը այստեղ, ի միջի այլոց, շօշափում է պարսկական տաղաչափութեան հարցը եւ տալիս է ոտամառքների չափի մասին իր սեփական տեսութիւնը, որը, պիտի խոստովանեմ, ինձ համար այնքան էլ պարզ չէ: Այս գլխում նա տալիս է նաեւ «Շահնամէն»-ի հետեւեալ գնահատանքը. «Շահնամէն արժէքը, – գրում է Ա. Կոթիկեանը, – պէտք է կապել անոր պատմագրական ճշտութեան հետ, այլ անոր բանաստեղծական հզօր շունչին եւ ներքին փիլիսոփայութեան հետ»:

Անհրաժեշտ ենք համարում մատնանշել հեղինակի մի շատ սքամիտ դիտողութիւնը: Ինչպէս յայտնի է, Ֆիրդուսու պոէմը լիքն է ասպետների եւ աւատական իշխանների կեանքից առ-

նըւած պատկերներով: Բանաստեղծը իր շերտազական ողջ կարողութիւնները ի սպաս է դրել նկարագրելու այդ ասպետների ու աւատական իշխանների իդէալական յատկութիւնները եւ կարծես թէ աչքի թողի է արել ժողովուրդը: Բայց դրանով մէկտեղ, «Ֆիրդավսին մոցրել է իր պեւմի մէջ ժողովրդի ապստամբութեան դրագը ընդդէմ Զոհակի, մի ապստամբութիւն, որի զեկավարողն է մի հասարակ երկարագործ: «Ֆիրդավսին կը նկատէ, գրում է Ա. Կոբիկեանը, - որ յեղափոխութեան անիւը դարձնողը ժողովրդական զանգուածն է, աշխատանք տարրը: Արաբական լուծի տակ հեծեծող Պարսկաստանի ազատագրման դժարին գործը ան կատարել կուտայ ոչ թէ պալատական կամ վերին դասի միջոցաւ՝ այլ երկարագործ Բավէի նման համեստ աշխատանքի մը ձեռքով, որ կը խմորէ ամբողջ ժողովուրդը, մէկ մարդու պէս ոտքի կանգնեցնելու համար գայն»:

Այս դիտողութիւնը էլ անյի արժէքաւոր է դառնում երբ ի նկատի ենք առնում հետեւեալը: - Պարսկաստանը, մինչ ազատագրական շարժումները, «Շահնամէ»-ի մէջ միշտ գտնուում էր

հերոսներ, որոնք հանդիսանում էին ազգային կեանքի հերոսների համար խդէալ եւ օրինակ եւ այդ այն ժամանակ, երբ երկրում տիրում էին աւատական կարգեր ու իշխում էին այնտեղ արիստոկրատները: Այդ հին Պարսկաստանում Բավէի մասին եղած էպիկոսը, հակառակ որ գեղարեստական տեսակէտից յաջողագոյններից մէկն է, առանձին ուշադրութեան չէր արժանանում, եւ ինքը Բավէն էլ հերոս չէր համարում: Բայց ահա վրահն հասնում ազատագրական շարժումները եւ Շահնամէի երկրագործ Բավէն դառնում է սիրելի հերոս, որի անունով է կոչւում նոյնիսկ այն ամագիրը, որ հրատարակում էին պարսիկ տարագիրները Բերլինում:

Գրքի բ. մասում հեղինակը տալիս է «Շահնամէ»-ից երկու բարգամանութիւններ՝ *Երզնիծանք ուղղած Մահ-մուղ շահի*, եւ մի կտոր Զամշիդի վերաբերեալ էպիկոսից: Առաջին բարգամանութիւնը, որ կատարւած է արձակով, շատ յաջող է, երկրորդը, որ չափածոյ է, մի քիչ ծանր է, բերես սխալ ընտրած 16 վանկանի չափի պատճառով:

Յ. Զ.

ՍՏԱՑԻԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. Բասմաջեան - *Հայկական ընդհ. դրամադիտութիւն. Վենետիկ.*

Գէորգ Դարփի - *Սիւաուշ եւ Սուտարէ. Թէհրան.*

L. Guerdan - Tigran Yergate, Paris

Մ. Նուպարեան - Արցունքը. *սղերգութիւն. Փարիզ.*

Esther van Loo - Méroujan Barsamian, Paris.

Հ. Անէմեան - *Պատմութիւն Թաւրիզի Արամեան Ազգ. դպրոցի (100-ամեակին առթիւ).*

Գ. Գեղարքունի - *Հին Հայ բանաստեղծութիւնը. Գողթան երգեր. Սոֆիա.*

Կ. Մեհեան - Պոստիկ Մեղիք (նորավէպեր). *Սեւանիկ.*

ՊԱՐԵՐԱԿԱՆՆԵՐ

«Հայրենիք» - ամսագիր. Յուլիս, 0-գոստոս. Բոստոն.

«Հայ-Բոյժ» - Բիւ 22. Փարիզ.

«Կեանք եւ արեւոտ» - Բիւ 6.

«Նոր Գիր» - Բիւ 4,5. Նիւ Եորկ.

«Նոր Հասկեր» - Բիւ 17-18. Թէհրան.

«Հանդէս ամսօրեայ» - Բիւ 1-3. Վիւննա.

«Կանթեղ» - Բիւ 9-10. Բոստոն.

«Massis» Բիւ 5 - Լոնդոն.

«Սիւն» - Բիւ 6,7. Երուսաղէմ.


«Հայաստանի Կոչնակ» - Բիւ 27.

«Նոր էջ» (Ժողովածու Իրանահայ Երիտասարդ գրողների) - Բիւ 2. Թէհրան.

«Հասկեր» - 6-7-8 միացեալ Բիւ. Անքիլիս.

Կը խնդրի բոլոր օրաբերքերէն եւ պարբերաբերքերէն ծանուցանել իւրաքանչիւր անգամ «Վէմ»-ի հերթական թիւի ստացումը:

Բարեկամ բերքերուն կը խնդրենք դնել նաեւ հերթական «Վէմ»-երու բովանդակութիւնը:



Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք

ԱՄՍԱԳԻՐ

Տարեկան 5 դուար
Վեցամսեայ 3 ,,
ՀԱՅՐԵՆԻՔ ԱՄՍԱԳԻՐ ԵՒ ՕՐԱԹԵՐԹ
ՄԻԱՍԻՆ

Տարեկան 10 դուար
Վեցամսեայ 5 ,,
Հասցէ՝

13-15 Shawmut st.

BOSTON MASS (U.S.A.)

Ա Ս Պ Ա Ր Է Զ

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

Ամերիկա, տարեկան, 1.50 դուար
Արտասահման 2.00 ,,
Հասցէ՝

"ASBAREZ" P. O. Box 865

Fresno, Calif., U. S. A.

Ա Զ Ա Տ Խ Օ Ս Ք

ՕՐԱԹԵՐԹ

Բուլղարիա՝ տարեկան 550 լեւ
Բուլղարիա՝ վեցամսեայ 300 լեւ
Ամերիկա՝ տարեկան 6 դու.
Ուրիշ երկիրներ՝ տարեկան 150 ֆր.

Հասցէ՝

45, Bld. M. Louiza,

Sofia, (Bulgarie)

Ա Լ Ի Ք

ԵՐԿՕՐԵԱՅ ԹԵՐԹ

Տարեկան 85 դիալ
Վեց ամիսը՝ 45 դիալ
Արտասահման

Տարեկան 170 ֆր. ֆր.
Հասցէ՝

"ALIK", Impr. Moderne
Khiabane Posthané, Teheran
(Iran)

Յ Ո Ւ Ս Ա Ք Ե Ր

ՕՐԱԹԵՐԹ

Եգիպտոս, տարեկան, 150 եգ. դի.

,, վեցամսեայ, 80 ,,

Արտասահման, տարեկան, 40 շիլինգ

,, վեցամսեայ 20 ,,

Հասցէ՝

"Houssaper", B. P. 868

Le CAIRE (EGYPTE)

Մ Ե Ղ Ո Ւ

Երգիծական Շաբաթաբերք

Ներքին՝ տարեկան 100 լեւ

,, վեցամսեայ 50 լեւ

Ամերիկա Տարեկան 2 դուար

Արտասահման Տարեկան 30 ֆրանկ

Հասցէ՝

K. Kaladjian

B. P. 444, Sofia, (Bulgarie).

Հ Ո Ր Ի Զ Ո Ն

ՕՐԱԹԵՐԹ

Ներքին՝ տարեկան 300 տր.

Արտասահման՝ տարեկան 150 ֆր.

Հասցէ՝

Rue Mitropoleos, 14.

Salonique, (Grece)

Ս Ի Ո Ն

ԱՄՍԱԳԻՐ

Տարեկան 6 անգլ. շիլինգ կամ 1.50 դու.

Հասցէ՝

Patriarcat Arménien, Jérusalem
(Palestine)

Բ Ա Զ Մ Ա Վ Է Պ

ԱՄՍԱԳԻՐ

Տարեկան 3.50 դուար

Հասցէ՝

"Pazmaveb", St. Lazar, Venise
(Italie)

Ա Ր Մ Ե Ն Ի Ա

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

Արտասահման, տարեկան, 3 դուար

Արժանքին, տարեկան, 6 ֆեսո

,, վեցամսեայ, 3.50 ,,

Հասցէ՝

"ARMENIA" Canning 1087,

Buenas-Aires, (Argentine)

Ներքին՝ վեցամսեայ 150 տր

Ներքին՝ եռամսեայ 80 տր.

Արտասահման՝ վեցամսեայ 80 ֆր.

Ն Ո Ր Օ Ր

ՕՐԱԹԵՐԹ

Յուճաստան, տարեկան, 420 տր.

,, վեցամսեայ 210 ,,

Եւրոպա, տարեկան, 135 ֆր.

,, վեցամսեայ 80 ,,

Ամերիկա, տարեկան, 8.00 դուար

,, վեցամսեայ, 4.50 ,,

Հասցէ՝

"NorOr", 20-A, Rue Vouli.

ATHÈNES (GRÈCE)

Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք

ՕՐԱԹԵՐԹ

Տարեկան 6 դուար

Վեցամսեայ 3 ,,

Նամսեայ 2 ,,

Հասցէ՝

Hairenik Press, 13-15 Shawmut st.

BOSTON-MASS (U.S.A.)

Ա Զ Դ Ա Կ

ՕՐԱԹԵՐԹ

Սիրիա՝ տարեկան 550 ս. դ.

Սիրիա՝ վեցամսեայ 300 ս. դ.

Արտասահման՝ տարեկան 7 դուար

Արտասահման՝ վեցամսեայ 4 դուար

Հասցէ՝

"Aztag". B. P. 587 Beyrouth
(Liban)

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ

ԱՄՍԱԳԻՐ

Տարեկան 5 դուար

Հասցէ՝

"Handes Amsorya", 4, Mechitharistengasse, Vienne
(Autriche) VII

Ա Ր Ա Զ

ԵՌՕՐԵԱՅ ԹԵՐԹ

Տարեկան 500 լեյ

Հասցէ՝

"ARAZ" Str. Campul Mosilor,
No 2. Bucarest, (Roumanie)

Մ Ա Ս Ի Ս

Տարեգիրք հմբ. Արմեն Սեւան
1935 թ. Բ. Տարի

288 էջ, բազմակողմանի բովանդակու-
թեամբ, պատկերազարդ, մաքուր տիպ:
Գին՝ 100 լեւ կամ 30 ֆր. ֆր.

Գինել՝ Վեյլեյ, 21, Սոֆիա

Կարելի է ստանալ «Վեյլեյ»-ի միջոցով:

ԳՐԱՏՈՒՆ ՀՐԱՆՏ-ՍԱՄՈՒԷԼ

51, Rue Monsieur-le-Prince, Paris VIe

Chèque postal: Paris 1278-35. Tel: Danton 88-65.

Փարիզի մտաւորական կեդրոնին մէջ հաստատուած այս Գրատու-
նը օրը օրին կը ստանայ Հայաստանի եւ գաղութներու բոլոր հրատա-
րակութիւնները: Բացի հայերէնէ, ունի ֆրանսերէն եւ այլ օտար
լեզուներով գիրքերու ֆոյս մթերք: Աշխարհի բոլոր կողմերէն հասած
ապացրամքները կը գործադրէ խղճամիտ կերպով: Ունի արդիական
կազմատուն:

Գործառնութիւնները՝ կանխիկ դրամով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՎԱՀՅՆ ՄԻՆԱԽՈՐԵԱՆ.— Արեւիքի օրեր	1
ՏՕՔԹ. ՎԱՀՐԱՄ Յ. ԹՈՐԳՈՄԵԱՆ.— Յուշատետրէս	20
ԳԱՌՆԻԿ ԳԻՒԶԱԼԵԱՆ.— Մեծ Յոբելեանի առթիւ	25
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԿԱԶԱՆՁԵԱՆ.— Համեմատութիւն մը Հոռմի Ս. Պետրոս եւ Վաղարշապատի Ս. Հռիփսիմէ եկեղեցիներուն յատկացիւթեան միջեւ	38
Վ. ՓԱՓԱՋԵԱՆ.— Համաշխ. պատերազմը եւ Տարօնի աշխարհը	44
ՓԱՅԼԱԿ ՍԱՆԱՍԱՐ.— Թուրքիոյ պատմութիւնը	55
ԱՐ. ՍԱՖՐԱՍՏԵԱՆ.— Քսենոֆոնի ուղեգիծը Հայաստանի միջով	64
ՅՈՎԱԿ ՍՏԵՓԱՆԵԱՆ.— Անդրանիկը Սիւնեաց երկրում	70
ՀԱՅ-ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ	81
ՀԻՆ ԹՈՒՂԹԵՐ.— Շիրվանգաղէի մամակները	93
ԱՆՅԵԱԼՔ.— Աղասի Խանգեան, Ա. Խ.— Յովհաննէս Արեւեան, Ա. Խ.— Բարգէն Կաթուղիկոս (Կիւլէսէրեան), Վ.	101
ԿԵԱՆՔ ԵՒ ՄՇԱԿՈՅԹ.— Սայեաք Նովայի մահեալ շուրջը, Ա. Խ.— Հայ Կրթակ. երկու հիմնարկներու 100-ամեակը, Վ. Փ.— Վիճաբանութիւններ խորհրդահայ գրականութեան մասին, Ա. Խ.	110
ԳԻՐՔ ԵՒ ՄԱՄՈՒԼ.— «Նոր Գիր» եւ «Նոր Էջ» պարբերակ. Փ.	120
ԳՐԱԽՕՍԱԿԱՆ.— Ա. Սարուխան, «Ֆիլոսոփիա եւ Մովսէս Խորենացի», Յ. Զ.— Արման Կոթիկեան, «Ֆիլոսոփիա Թուսի եւ իր Շահնամէն», Յ. Զ.	121
ՅԱԻԵԼԻԱՆ.— Վահրամ Եպ. Մանկունի, «Գէորգ Դ. եւ իր Ժամանակը»	209

ՆՈՐ ՏԱՐԻԱՅ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ամերիկա, Բրիտ. Կայսրութիւն, Եգիպտոս, Իտալիա՝ տարեկան 70 ֆրանք
 Ֆրանսա եւ մնացեալ երկիրները, տարեկան՝ 60 ֆրանք
 Ռումանիա, Բուլղարիա, Յունաստան Սիւրիա, եւ Պարսկաստան՝ , , 50 ֆրանք
 ՆԱԽՈՐԴ ՏԱՐԻՆԵՐԻ ԻՐԱՔԱՆՁԻՐ ՏԱՐԻՈՅ 6 ԳԻՐՔԸ՝ 25 Ֆր.
 Հասցէ՝ մամակների, դրամի, յօդածների եւ ուրիշ ամէն տեսակ առաքումների համար.—

S. VRATZIAN — 13, Rue des Platanes, Cité Jardins de Plessis-Robinson (S.)

Gérant: V. Hampartzoumian

Խնդիր նոր էր եւ դժուարութիւն մեծ ընդառաջէր:

Տնտեսական տագնապն, Հայոց Թուրքիոյ, ձմեռնային եղանակն ու հեռաւորութիւնը վայրաց ընդ դժուարութեանց երթեւեկութեանց, թո՛ղ զտարածամութիւնն, ծանրացուցին զվիճակն:

Ի Տեղապահութեան մերում վիճակուեցաւ մեզ դարմանել զսոյն զայս խնդիր:

Ի միոյ կողմանէ ի դադտնի մտերմական յարաբերութիւնը ընդ Տ. Գէորգ Արքեպիսկոպոսի Սուրենեանց Կաթ. Տեղապահի Ս. Էջմիածնի, եւ ի միւսէ մեք աստ ի Կ. Պոլիս միջոցաւ ռուսական դեսպանի եւ Սուրենեանց անդ ի Ս. Էջմիածին բացաւ զբանակցութիւնս եռանդեամբ, եւ կարգադրեցաւ զխնդիրը տալով թոյլատրել 1) արտաքուստ կարգել զներկայացուցիչս եւ 2) տալ զերկուս ձայնս պատգամաւորաց յորժամ հարկն պահանջիցէ:

Ռուս կառավարութիւն կարծէր, զի Դաշնակցական կառակցութիւնն դաւադրէր ի զադտնի, որպէս երեւեցաւ ի բանից ռուս. դեսպանի, եւ մեք միամտեցուցաւ զնա:

Իսկ յայսմ նուազի Երեսփ. Ժողով ոչ ընտրեաց զընտրելիս, եւ իբրեւ մի ի վիճակաց Հայոց Թուրքիոյ կարգեաց զպատգամաւորս երկուս, հոգեւոր եւ աշխարհական, վիճելով եւ պատուիրելով տալ զքուէսն զոր փափաքի Ազգն Հայոց ընտրել ի կաթ. եւ որպէս եկեղ. Համազումար Ժողովն Կ. Պոլսոյ արտայայտեաց ոչ տալ քուէ յանուն Տ. Մաղաքիա Արքեպիսկոպոսի Օրմանեան, նոյնպէս պատուիրեաց Երեսփ. Ժողովն պատգամաւորաց Կ. Պոլսոյ, իսկ Երեսփ. Ժողով ստուար մեծամասնութեամբ յանձնարարէր նաեւ չտալ քուէ յանուն Տ. Նղիշէ Արքեպիսկոպոսի Դուրեան երբեմն Պատրիարքի, որպէս եւ կարեւորագոյն մասն Հայոց Ռուսիոյ ստել ատէին զնա բացի Դաշնակցականաց, որ եւ պառակտեալ էին:

Եւ ընտրեցաւ Տ. Գէորգ Արքեպ. Սուրենեանց ի Կաթուղիկոս, առաւելութեամբ միոյ քուէի, եւ երկրորդ ընտրելի եղեւ Տ. Նղիշէ Արքեպ. Դուրեան: Մի մասն Արմաշական Միաբանից էր ի կողմն Տ. Մաղաքիա Արքեպիսկոպոսի Օրմանեան, եւ մեծամասնութիւնն ընդ Դաշնակցականաց էր ի նպաստ Արքեպիսկոպոս Դուրեանի:

Արդ ուշադիրք կարեն զիտել ի գրելոցս ցայս վայր, զի Երեսփ. Ժողով քանիցս յարոյց զադմուկ մեծ, կազմեաց զյանձնաժողովս եւ ետ զորոշմունս, որք ոչ համաձայնէին միմեանց, ըստ ընտրական սկզբանց եւ ըստ միջազգային իրաւանց, բացակայ էր ներդաշնակութիւնն, զորոցս ոչ գիտէր զինչ առնէր:

Իսկ ռուսական ցարական պետութիւն հետեւէր միւսմ ուղղութեան մինչեւ ցվերջն, ընդ պատրուակաւ պաշտպանելոյ զտրամա-

դրութիւնս Պալատէնիոյ 1836-ի խորին ճշդապահութեամբ, միանգամայն ջանայր խանդարել եւ ոչնչացուցանել զմիջադպարին իրաւունս, մանաւանդ զԱզգային Սահմանադրութիւն Հայոց Թուրքիոյ եւ զԵրեսփ. Ժողով: Սինոդ Ս. Էջմիածնի եւ Հայք Ռուսիոյ յաճախ էին ի կողմն Հայոց Թուրքիոյ եւ Ազգ. Սահմանադրութեան, եւ գործէին զգուշութեամբ եւ խոհեմութեամբ՝ ոչ ունին տուեալ ոռոսական թելադրութեանց, մաղնիսացեալ յաճախ ի հրապուրիչ համբաւոց ընտրելաց, երկուցեալ միանգամայն յԱզգային երկպառակութեանց, մանաւանդ եւ ոռոսահայք պէտս ունէին աջակցութեան Թուրքահայոց ընդդէմ մեքենայութեանց եւ ձուլիչ ուղղութեանց եւ նպատակաց Ռուսաց:

Ապաքէն իրաւացի էին դիտողութիւնք Ռուսաց սակա 45 եւ 46 վիճակաց ընդդէմ վեց վիճակաց ոռոսահայոց, թող զպարսկաստանեայս, զհնդկաստանեայս եւ զայլս զաղթականութիւնս: Իրաւացի էր նոյնպէս, զի անձնիւր վիճակ ուղղակի մասնակցեացի ընտրութեան Կաթողիկոսի ամենայն Հայոց ի Ս. Էջմիածնի, նախ քան զհաստատութիւն Ազգ. Սահմանադրութեան հաստատեալ զօրով Պալատէնիա, յետ որոյ Պատրիարքարան Հայոց Կ. Պոլսոյ ոչ համանման ընթացիւք եւ տգիտութեամբ, եթէ ոչ միամտութեամբ, բանայ զգրուես վիճաբանութեանց սկսեալ ի 1842 թուականէ, ի 1859ամէ եւ այլն: Քաղաքական անցքն ոչ սակաւ խանդարէին զընթացս պատրիարքարանի:

Ի վերայ այսր ամենայնի իրաւացի էին քննադատութիւնք եւ բողոք Պատրիարքարանի եւ Հայոց Հնդկաստանեայց ըստ մեծի մասին, եւ մնայ ապագային ցուցանել զարդիւնս կարեւորս ըստ իրաւասութեանց Կաթ. իշխանութեան, սակա Կաթ. Խորհրդարանի, արտաքին եւ ներքին յարաբերութեանց, Առաջնորդական ընտրութեանց եւ այլոց, այլոց:

Զարդիս յաջողութիւնք են ի նպատակ Ռուսաց, որք մանաւանդ բազմօք սեղմեցին յաւուրս Խրիմեանի զայլ եւ այլ իրաւասութիւնս եւ ստորացուցին յոյժ յոյժ:

ԳԼՈՒԽ Խ.

ՅԱՂԱԳՍ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ Տ. ԳԵՈՐԳԱՅ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ
Ի ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄ. ՀԱՅՈՑ

Մինչ Տ. Գեորգ Արքեպ. զբաղեալ էր յոյժ եւ հետեւէր զցայգ եւ զցերեկ ի կառուցանել եւ ամբողջացուցանել զչինութիւն Ս. Աստուածածին եկեղեցւոյ Հայոց Պրուսայոյ, Միաբանութիւն Մայր Աթոռոյ

եւ Սինոդ Ս. Էջմիածնի պարապէր ի դործս ընտրութեան Կաթողիկոսի, եւ Պատրիարքարան Հայոց Կ. Պոլսոյ ընդ Ազգ. Երեսփ. Ընդհ. Ժողովոյ յուղէր եռանդուն իմն ոգեւորութեամբ եւ յառաջ վարէր զինդիրս եթէ վերաքննութեան Պալատէնիոյ 1836-ի եւ եթէ մասնակցութեան իւրոյ եւ իրաւանց Հայոց Թուրքիոյ ի դործս Կաթ. ընտրութեան:

Ոչ թերանայր եւ ոռոս. Դեսպանատուն Կ. Պոլսոյ ի ջանս իւր եւ ի մեքենայութիւնս: Վարձէր զյրապիւրս, տայր հրատարակել զյօդուածս եւ զստորակս առանձինս ի պաշտպանութիւն Պալատէնիոյ եւ ոռոսական շահուց:

Զայսու միջոցաւ եւ յետ կատարման վերջնական քուէարկութեան Երեսփ. Ընդհ. Ժողովոյ Կ. Պոլսոյ սակա եռանուն ցանկի եւ ընտրելեացն (յօդոստոսի), պատրուակեալ դեսպան Իկնաթիէվ զօրավարի տեսանել զլեւոն Ողիմպեան (Գէշիշ-Թաղը) եկն յատկապէս ի Պրուսա ի 1-ն Սեպտեմբերի (1866) յաւուր Հինգշաբթու, ելեալ նախ ի Կէմլէիկ «Թաման» անուն երկկայմեան շոգենաւա դեսպանատան, եւ ապա անտի էջ ընդ ցամաք եւ իջեւանեցաւ ի պանդոկի (hospէլ) ի Միսկինէր: Գողցես ծպտեալ էր:

Ընդ երէկս էր ժամ 11,30՝ զնաց Տ. Գեորգ Արքեպ. առ նա առ ի շնորհաւորել զգալուստն ի Պրուսա: Եւ տեւեաց տեսակցութիւն սոցոս եւ խօսակցութիւն իբր երկու ժամ, թարգմանութեամբ պ. Յարութիւնի (Բասդալ) Օրադեան երիտասարդի Պրուսացւոյ ի գաղղ. լեզու: Վերադարձաւ ի Վանս (յԱռաջնորդարան) յերկրորդ ժամու առաջին պահու գիշերոյ: Զանայր Դեսպանն հրապուրել զՏ. Գեորգ Արքեպ. ն, որ եւ վարէր ընդ նմա խորագիտութեամբ:

Ի յաջորդ աւուր յՈւրբաթու, ի նմին իսկ ժամու, փոխանակեաց վսեմ. Իկնաթիէվ Դեսպանն զփոխադարձ այցելութիւն առ Տ. Գեորգ Արքեպ. ն, որ զիմաւորեաց զնա եկեղեցական հանդիսիւ եւ երգօք զպրաց, առաջնորդեալ տարաւ ի Ս. Եկեղեցի, ուր արար զաղօթս եւ զբարեմաղթութիւնս վասն կենաց Աղեքսանդր Բ. Կայսեր Ռուսաց եւ վասն Դեսպանի նորին պ. Իկնաթիէվ զօրավարի: Ներկայ էին հայ իշխանք եւ խուռն բազմութիւն ժողովողեան: Ապա ի միասին ելին Տ. Գեորգ եւ Դեսպանն նովին հանդիսիւ ի Վանս-յԱռաջնորդարան:

Յետ հիւրասիրական յարգանաց եւ սակաւատեւ խօսակցութեան վերադարձաւ պ. Իկնաթիէվ ի բնակարան իւր՝ ելեալ ընդ մեծ դուռն վանուց եւ անցեալ ի միջոյ երգեցիկ զպրաց եւ խուռն բազմութեան Հայոց:

Ետ նա զայցելութիւնս առ Կոնստանդնուպոլսի փաշայ եւ առ ոմանս ան-
ձինս նշանաւորս, ընկալաւ զփոխադարձ այցելութիւնս, եւ ի նորոյ
պատրուակեալ զխառնակութիւն Եղանակի ընդ անձնական տկարու-
թեան իւրոյ՝ առանց ելանելոյ յստորոտս անգամ Ողիմպեան լեւրին,
ի Միաշաբաթեոջ վաղ քան ընդ առաւօտ ել եւ մեկնեցաւ ի Պրուսայէ
առ ի վերադառնալ ի Կ. Պոլիս:

Խնդիրն Կաթ. ընտրութեան էր գլխաւոր առիթ գալստեան զօ-
րավարի ի Պրուսա եւ երկարատեւ խօսակցութեանն ի պանդոկի, յո-
րում զողջես լրտեսէր եւ քննէր պ. Իկնաթիէվ զխորագէտն Գէորգ,
գուցէ ըստ յանձնարարութեան Կեդր. Կառավարութեան, եւ ջան
կալաւ առնուլ զխոստմունս նպաստաւորս:

Հարկ է փակադձեւ աստէն եւ գայս, զի յորժամ Տ. Գէորգ Ար-
քեպիսկոսոսն գտանէր աստ ի Կ. Պոլիս յամի Տն. 1865, եկն եհաս-
գոյժ վախճանի Տ. Մատթէոս կաթողիկոսի Ամ. Հայոց, եւ անմի-
ջապէս սկսաւ խնդիր հրատապ եւ կրքալից վիճաբանութեանց վերա-
քննութեան Պալատէնիոյ, խառն ընդ անձնական զսրովանաց եւ զըր-
պարտութեանց, եթէ ի լրագիրս եւ եթէ ի պաշտօնական շրջանս ազ-
գայինս: Ոմանք պնդէին յետաձգել զընտրութիւնն կաթողիկոսական
մինչեւ աւարտեսցի խնդիրն Պալատէնիոյ համաձայնութեամբ ուր-
սական կառավարութեան: Իսկ, Տ. Գէորգ Արքեպ. յորդորէր գան-
հեղատեալ հակառակորդս ի խոհեմութիւն եւ ի շրջահայեցողութիւն,
տալ կատարել նախ զընտրութիւնն կաթողիկոսական եւ ասպա ի ձեռն
նորընտիր կաթողիկոսի, իբրեւ վաւերական եւ իսկական միջնորդի,
ջանալ հետեւիլ եւ ի վերաքննութիւն Պալատէնիոյ, որոյ վասն զըր-
բրեանց զթշնամութիւնս ոմանց եւ զկասկածանս ընդդէմ իւր:

Պարագլուխը հակառակորդաց երեւէին կրաւորական Մկրտիչ
Վրդ. Խրիմեան, Մարկոս Աղաբէգեան, Կարապետ Իւթիւճեան՝ խմ-
բագրապետն «Մասիս» լրագրոյ, Քրիստոստոսը Ղազարոսեան եւ
Ստեփան Փափազեան, որք տքնէին եւ թելագրէին զցայգ եւ զցերեկ
ընդդէմ Գէորգայ, բանիւ բերանոյ թէ հրատարակութեամբ: Էին
նոքա անձինք հրապարակականք եւ բերանք այլոց ոչ սակաւ հակա-
ռակորդաց դարանելոց ի գաղտնի յայլ եւ այլ դիմակս մտեալ: Թո՛ղ
յիշել զաննպատ հրատարակութիւնս:

Շարունակեսցուք զգործ ընտրութեան Կաթողիկոսի:

Մինչ այս մինչ այն՝ եհաս ահա սահմանեալ ժամանակ եւ օր ըն-
տրութեան նորոյ Կաթողիկոսի ի Մայր Աթոռոջ ի Ս. Էջմիածնի որ
ի 17-ն Սեպտեմբերի:

Ազգ. Երեսփ. Ընդհ. Ժողով Հայոց Թուրքիոյ յետ երկարատեւ

եւ բուն վիճաբանութեանց եւ գործողութեանց, զառաջինն լեալ
յետ հաստատութեան Ազգ. Սահմանարութեան, սահմանեալ էր զե-
ղանակ մասնակցութեան իւրոյ եւ իրաւասութեան եւ կատարեալ էր
զընտրութիւն եռանուն ցանկի կաթ. ընտրելեաց յ2-ն Օգոստոսի,
յորս էր ընտրելի առաջին Տ. Գէորգ Արքեպ., երկրորդ՝ Տ. Եսայի
Արքեպ. Պատրիարք Ս. Երուսաղէմի, եւ երրորդն՝ Տ. Իգնատիոս
Արքեպ.: Առաջնորդ թեմակալ վիճակին Վասպուրականի: Զոր եւ
Արքեպ.՝ Առաջնորդ թեմակալ վիճակին Վասպուրականի: Զոր եւ
հաղորդեալ էր Տ. Պօղոս Արքեպ. Պատրիարք Կ. Պոլսոյ կարեւորա-
գոյն գրութեամբք յանուն Սինոդի, ի ձեռն երկուց պատգամաւորացն
իւրոց Տ. Ներսէս Եպս. Վարժապետեան եւ պ. Յակոբայ Նորա-
տունկեան, հանդերձ հրահանգօք պաշտօնականօք տուելովքն վերջ-
նոց:

Արդ հասեալ եւ այսոցիկ պատգամաւորաց ի Ս. Էջմիածին, որ-
պէս եւ այլոցն վիճակաց եւ կողմանց պատգամաւորաց ի դիմաց Ռու-
սաստանեայց եւ Պարսկաստանեայց ընդ Հնդկաստանեայց, ձեռնար-
կեցին ի նախնական խորհրդակցութեանս եւ ի պատրաստութեանս
ընդ Սինոդի եւ ընդ այլոց պաշտօնակցաց՝ կազմեալ բաց ի նախնա-
կան խորհրդակցութեանց՝ յերիս օրինասահման ժողովս:

Ամփոփենք աստ զանուանս անդամոց Համազգային Կաթ. ընտր.
Ժողովոյ:

ԱՆԴԱՄՔ ՍԻՆՕԴԻ.—

Ա.— Գէորգ Արքեպիսկ.	Վեհապետեան, Տեղակալ.
Բ.— Յովհաննէս —	Ասլանեան
Գ.— Գրիգոր —	Յովբեան
Դ.— Գէորգ —	Մկրտչեան
Ե.— Յովհաննէս —	Արշարունի, եւ պատգամաւոր ի դիմաց թեմակալի Պարսկաստանի եւ Հնդկաստանի
Զ.— Թադէոս Վրդպ.	Զինական
Է.— Պօղոս —	Տէր Մարգարեան
Ը.— Գրիգոր —	Մուշեղեան

Ի ԳԻՄԱՑ ՄԻԱՌԱՆՈՒԹԵԱՆ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ.—

Թ.— Արէլ Արքեպիսկ.	Մխիթարեան
Ժ.— Գրիգոր —	Իսահակեան
ԺԱ.— Գրիգոր Եպիսկոպ.	Սազինեան
ԺԲ.— Յովհաննէս Վրդպ.	Տէր Յարութիւնեան
ԺԳ.— Սարգիս —	Տէր Գասպարեան

ԺԴ. — Կարապետ — Տէր Գալստեան
ԺԵ. — Գրիգոր — Աղափիրեան

Ի ԴԻՄԱՅ ՀԱՅՈՑ ԹՈՒՐԻՔԻՈՅ ԵՒ ՎԻՃԱԿԱՑՆ. —

ԺԶ. — Ներսէս Եպիսկ. Վարժապետեան
ԺԷ. — Պ. Յակոբ Նորատունկեան

Ի ԴԻՄԱՅ ՀԱՅՈՑ ՌՈՒՍԱՍՏԱՆԵԱՅՑ ԵՒ ՎԻՃԱԿԱՑՆ. —

ԺԸ. — Մատթէոս Արքեպ. Վեհապետեան, Թեմակալ, Աստրա-
խանու.

ԺԹ. — Պ. Սարգիս Եղիայեանց, Աստրախանու.

Ի. — Մակար Արքեպ., Թեմակալ, Տփլիսեաց

ԻԱ. — Պ. Յովհաննէս Ղայթմազեան, Տփլիսեաց.

ԻԲ. — Սարգիս Արքեպ. Զալալեան, Թեմակալ, Սիւնեաց
— Ղարապաղու.

ԻԳ. — Յովսէփ Բէկ Մէլիք-Շահնազարեան, Սիւնեաց — Ղա-
րապաղու.

ԻԴ. — Մկրտիչ Արքեպ. Բաբամեան, փոխ-Թեմակալ, Ե-
րեւանու.

ԻԵ. — Արսէն Սուլթան Գեղամեան, Երեւանու.

ԻԶ. — Դանիէլ Արքեպ. Շահնազարեան, Շամախու.

ԻԷ. — Յակոբ աւագ քահ. Տէր Կարապետեան (առ պակասու-
թեան Առաջնորդի), Աստրախանու.

ԻԸ. — Տատուր խան Սէթ-Պանեան, Աստրախանու.

ԻԹ. — Ստեփաննոս Սամուէլեան, Վաղարշապատցի, Ի
զիմաց Ժողովրդեան Հայոց Պարս -
կաստանի եւ Հնդկաստանի.

Բացակայ մնացին եւ յատուկ զրութեամբ յանուն Սինոդի,

Լ. — Եղիազար Արքեպ. Կարապետեան կառավարէին Նոր
Նախիջևանու եւ Պեսարապիտի.

ԼԱ. — Կարապետ Մարգարեան Հայրապետեանց, աշխարհ.
պատգամաւոր Ն. Նախիջևանու.

ԼԲ. — Բժիշկ Դաւիթ Ուստումեան, աշխարհ. պատգամաւոր
Շամախու ուր յանձնէ Սինոդի զիւր
ձայն, չկարացեալ դալ անձամբ սակա
տարափոխիկ հիւանդութեանն:

Ըստ զրութեան փոխարքայի որ Ի 20-ն Օգոստոս ընդ համարաւ
204, էր Պետական Ներկայացուցիչ — պատգամաւոր Պ. Զիլիայէվ

(Համաձայն տրամադրութեանց Պալատէնիոյ):

Ընտրելի Եպիսկոպոսունքն որոշեալ էին կանխաւ, ըստ Պալա-
տէնիական նորամուտ սովորութեանց, առանց քուէարկութեան.

Մատթէոս Արքեպ. Աստրախանու

Գէորգ Արքեպ. Տեղակալ

Մակար Արքեպ. Տփլիսեաց, եւ

Սարգիս Արքեպ. Ղարապաղու

Գէորգ Արքեպ. Պրուսայու

Եսայի Արքեպ. Երուսաղէմի, եւ

Իգնատիոս Արքեպ. Վասպուրականի

Ի Ռուսաստանեայց.

Ի Թուրքահայոց.

Առիթ բարեպառեհ համարիմք յաւելուլ աստանօր Ի տեղեկու-
թիւն պատմական զարարողութիւնս ինչ եւ զսովորութիւնս կաթ.
ընտրութեան՝ կցեալ ընդ հնոցն եւ զնոր սովորութիւնս օտարոտիս եւ
Պալատէնիական:

Յօրէ անտի հաստատութեան Պալատէնիոյ կատարի եւ լրանայ
ընտրութիւն կաթողիկոսական յերիս աւուրս ընդ այսմ կարգի, մինչ
Ի հնումն եւ ըստ նախնականին կատարէր առ հասարակ Ի միում ա-
ւուր՝ եթէ ոչ էին հակառակութիւնք, վէճք, անհամաձայնութիւնք
եւ այլն:

Յառաջնում աւուր հարկ է կատարել հանդերձ Ս. Պատարագաւ
զպաշտօն Հոգեհանգստեան վասն հանգուցեալ Հայրապետի, ըստ նո-
րոյ սովորութեան՝ երգմենցոցանել զաշխարհական պատգամաւորս
սակս կատարելոյ զընտրութիւն կաթ. անաչառութեամբ իմն եւ ան-
չահանդուրթեամբ, եւ զկնի Ս. Պատարագի զյատուկ Մաղթանս
(մօլէպիմ) վասն Յարին:

Յերկրորդում աւուր, յետ արձակման առաւօտեան ժամերդու-
թեան եւ Ս. Պատարագի (եթէ օր տօնական իցէ կամ պատշաճ տեսա-
նիցեն), զնեն զաթոռս՝ զնստարանս եւ զգրասեղանս Ի ներքս Ի տա-
ճարի Ի հանդիպակաց երկուս կարգս, սկսեալ յարեւմտեան մեծ դը-
րանէ մինչեւ ցՍ. Սեղանն Իջման, հրաւիրեն զհամայն անղամս եւ
զիրաւասուս Համազգային Կաթ. Ընտր. Ժողովոյ Ի Ժողով Ի Մայր
տաճարի, եւ փակեալ զգրունս, այր իւրաքանչիւր կանգնի յիւրում
տեղով ըստ կարգի աստիճանի Աթոռոց, Վիճակաց եւ պատուոյն,
եւ ըստ կարգին որոշելոյ Ի Կաթ. Տեղապահէ, որ է Նախագահ Ժո-
ղովոյ եւ նստի յԱթոռ, առաջ Ի իջման Սեղանոյ, որ եւ ասէ զ«Հայր
մեր», եւ մաղթանք «Զգործս ձեռաց մերոց ուղիղ արա». յետ սովո-
րական Սաղմոսից եւ աղօթից կանոնելոց՝ նստին յիւրաքանչիւր տե-

ղիս, նախ եկեղեցականք եւ ասպա աշխարհականք, եւ եթէ ոչ իցեն պէտք նորոց բանակցութեանց, բանախօսութեանց եւ վիճարանութեանց, որոշեն փութով զկաթ. չոքս ընտրելիս ձեռամբարձ քուէիւք, կամ ձայնատուութեամբ յոտին, եւ կամ ստորագրեալ զառանձին թերթս յատկացեալս յանուն իւրաքանչիւրոցն ընտրելի եպիսկոպոսաց, եւ աւարտի ժողովն յետ ստորագրելոյ զարձանագրութիւն ԸՆՏՐԵԼԵԱՅՆ ԶՈՐԻՑ:

Մոռացաք ասել, զի յերկուս կողմունս Տեղապահի նստեն ներկայացուցիչ Եպիսկոպոսունք կամ Վարդապետք Ս. Երուսաղէմի եւ Կ. Պոլսոյ: Իսկ պետական ներկայացուցիչն եւ Պրօկուրօր Սինօդի ի ձախակողմն ի յետկոյս պատգամաւորաց շուրջ զղիւսական սեղանով:

Յերրորդում աւուր, պատրաստեալ զաթոռս եւ զայլս, արարեալ զաղօթս՝ որպէս յերկրորդում աւուր, կազմի ժողովն Համազգային, յորում ներկայ լինին զարձեալ պետական ներկայացուցիչ եւ Պրօկուրօր Սինօդի, ըստ տրամադրութեանց Պալատէնիոյ, եւ յետ ատենական իմն թեթեւ գործողութեանց ձեռնարկեն անդամք ի կաթ. ընտրութիւն, ստորագրեալ ի վերայ ուրոյն ուրոյն ընտրական թերթից իւրաքանչիւր ընտրելեացն չորից, եւ որ ի չորոց անձանց ընտրելեաց ստանայ զմեծամասնութիւն քուէից, հռչակի Կաթուղիկոս ամենայն Հայոց, որում յաւերուն ռուսահպատակք, համաձայն քուէիցն առաւելագունից, զերկրորդ ընտրելի ըստ Պալատէնիոյ:

Արդ, ըստ այսմ կարգի եւ սովորութեան, յերրորդում աւուր ի 17-ն Սեպտեմբերի կատարեալ եւ լրացուցեալ Համազգային Կաթ. Ընտր. ժողովոյ զընտրութիւն Կաթուղիկոսի ամ. Հայոց, Տ. Գեորգ Արքեպս. Պրուսայու ամենաբարձակ իմն առաւելութեամբ քուէից ընդ ստորագրութեամբ անդամոցն ստանայ զձայն կամ զքուէս հարիւր յիսուն եւ երեք (153) ըստ պատգամաւորաց թուրքահայոց եւ գիարիւր տասնեւութ (118) ըստ Սինօդի՝ տուեալ թուրքահայոց զիմնըստն ձայնս (ըստ 45 Վիճակաց) փոխանակ 130 ձայնից ըստ 65 Վիճակաց, որոյ վասն բռնամայր ռուսական կառավարութիւն ի վերայ Սինօդի, եթէ ըստ կանդիտայական դրութեան եւ եթէ ըստ քուէից թուրքահայոց:

Այսպէս ուրեմն ընտրուեցաւ Տ. Գեորգ Արքեպիսկոպոս Պրուսայու, երբեմն Պատրիարք Կ. Պոլսոյ, ի ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ամ. Հայոց:

Ի լրումն պալատէնիական-ռուսական զեղծմանց եւ հակառակ արդար բողոքանաց եւ մերժման պատգամաւորացն Հայոց Թուրքիոյ՝ Սինօդ բռնադատեալ էր եւ յաւել զընտրութիւն երկրորդ ընտրելոյ

ընդ անուամբ եւ պատրուակաւ ԿԱՆԴԻԿԱՏԻ, եւ Տ. Մատթէոս Արքեպս. Աստրախանու ընկալաւ զ28 քուէս Սինօդականաց՝ Միաբանից եւ Վիճակացն Ռուսաստանեայց եւ եթ:

Յետ որոյ կազմեցաւ սովորական արձանագրութիւն վերջնական ընտրութեան օրինակ զայս.

« Ի 17 Սեպտեմբերի 1866 ամի ժողովն Սրբազան Արքեպիսկոպոսաց, Եպիսկոպոսաց, բարձրապատիւ Վարդապետաց եւ աւանաւոր « աշխարհական պատգամաւորաց ի Վիճակացն Ռուսաստանի եւ Տաճկաստանի (մոռանայ զՊարսկաստան եւ զՀնդկաստան), գումարեալ « լոց ի Տաճարի Սրբոյ Էջմիածնի վասն ընտրութեան ծայրագոյն « Պատրիարք Կաթուղիկոսի ամ. Հայոց բացեալ ի սոյն թիւ զատեալ « նակալութիւն իւր առ ի գործ ընտրութեան Կաթուղիկոսի ամ. Հայոց կանոնաւորեալն կարգաւ, ուր եւ ընկերացեալ զանուանս աւանաւոր Արքեպիսկոպոսաց եւ Եպիսկոպոսաց ի սահմանս Ռուսաց, « Թուրքիոյ եւ Պարսից գտանելոց, եւ յետ պատշաճականս ամին իրի « ատենախօսութեանց, կայացաւ ընտրութիւն չորից ընտրելեաց « (կանդիդատաց) յաստիճան (°) Կաթուղիկոսութեան, որք են՝ « Գեորգ Արքեպիսկոպոս Պրուսայու նախկին Պատրիարք Կ. Պոլսոյ, « Եսայի Արքեպիսկոպոս այժմեան Պատրիարք Երուսաղէմայ, Մատթէոս Արքեպիսկոպոս վիճակաւոր Առաջնորդ Աստրախանայ եւ Իզ « նատիոս Արքեպիսկոպոս Վասպուրականի, որոց վասն եւ կազմեցան « ուրոյն ուրոյն ընտրական թերթք ընդ ստորագրութեամբ ան « զամոց ժողովոյն, եւ յետ այնր համաձայնութեամբ ժողովոյն ար « ժանի եղեն կոչման աւագագոյն (°) ընտրելեաց (կանդիտատաց) « երկուքն ի նոցանէ, բարձր սրբազան Գեորգ Արքեպիսկոպոս Պրուսայու եւ Մատթէոս Արքեպիսկոպոս վիճակաւորն Աստրախանայ « Հայոց, ըստ առաւելութեան ձայնից, տուելոց յօգուտ նոցա. վասն « որոյ ժողովն եկեղեցականաց եւ աշխարհականաց ՍԱՀՄԱՆԵԱՑ « զսոյն զայս ընտրութիւնէ վեհափառ Պատրիարք Կաթուղիկոսի Ազ « դիս եւ կանդիտատիւն անցուցանել յօրագիր, եւ վաւերացուցեալ « ընդ ստորագրութեամբ համայն անդամոց ժողովոյն, յանձնել Սին « օդին Սրբոյ Էջմիածնի առնել զկախեալն յինքնէ տնօրինութիւն, « որպէս պատշաճն է, ըստ օրէնսդրեալ կարգին»:

(Ստորագրութիւնք համայն անդամոց ժողովոյ).

« Ես՝ պատգամաւոր ի դիմաց համայն եկեղեցականաց ամենայն վիճակացն (°) Ս. Էջմիածնի, եւ Կաթուղիկոսութեանցն Սսոյ եւ Աղթամարայ, եւ Պատրիարքութեանն Սրբոյ Երուսաղէմի, ըստ հրահանգին տուելոյ ինձ յԱզգային ժողովոյ Պատրիարքութեանն (°)

Կ. Պոլսոյ, ընտրեցի Կաթողիկոս ամ. Հայոց եւ Ծայրագոյն Պատրիարք Համազգական Մայր Աթոռոյ Արարատեան Սրբոյ Էջմիածնի՝ զամենապատիւ զՏէր Տէր Գէորգ Սրբազան Արքեպիսկոպոսն Պրուսայոյ, եւ ոչ զոր կանգնեալս :

« Ներսէս Եղիսիակոպ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ. »

« Նոյնպէս եւ ես պատգամաւորս ի դիմաց ամ. Ժողովրդականաց վերոյիշատակեալ վիճակաց Կայսերութեան Տաճկաստանի ընտրեցի Կաթողիկոս զՏէր Գէորգ Սրբազան Արքեպիսկոպոսն Պրուսայոյ, եւ ոչ զոր կանգնեալս :

« ՅԱԿՈԲ Պ. ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆՑ »

« Պատգամաւոր Ղարաբաղոյ՝ ՅՈՎՍԷՓ ԲԷԿ ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐ-ԵԱՆՑ »

« Պատգամաւոր Երեւանոյ Հայոց վիճակի ՊՕՐՈՒՋԻԿ ԱՐՄԵՆ ՍՈՒԼԹԱՆ ԳԵՂԱՄԵԱՆՑ. »

« Պատգամաւոր վիճակին Վրաստանի եւ Իմէրէթիոյ ԱՏԱՏՍԿԻ ՍՈՎԵՏՆԻԿ Յ. ՂԱՅԹՄԱԶԵԱՆՑ »

« Պատգամաւոր Ասորախանայ վիճակի ԿՕԼԼԵԺՍԿԻ ԱՄԵՍՕՐ ՍԱՐԳԻՍ ԿՕԿՉԱՅԵԱՆ »

« Պատգամաւոր Պարսկաստանի եւ Հնդկաստանի Հայոց ԿՕԼԼԵԺՍԿԻ ՍԵԿՐԵՏԱՐ ՍՏԵՓԱՆՆՈՍ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ »

« Պատգամաւոր վիճակի Ատրպատականի Հայոց ՍՈՒՐՀԱՆԿ ԱՌԱՋԻՆ ԱՍՏԻՃԱՆԻ ԵՒ ԱՌՈՒԴԱՆԻ ԾԱՏՈՒՐ ԽԱՆ ՍԷԹ-ԽԱՆ-ԵԱՆ, »

« Պատգամաւոր ի կողմանէ Հոգեւորականութեան Հայոց Ատրպատականի ՏԵՐ ՅԱԿՈՎԲ ԱԽԱԳ ԲԱՀԱՆԱՅ ՏԵՐ-ԿԱՐԱՊԵՏԵԱՆ, »

« Պատգամաւոր ի կողմանէ Միաբանութեան Ս. Էջմիածնի ԳՐԻԳՈՐ ՎՐԴ. ԱՂԱՓԻՐԵԱՆՑ, »

« Անդամ Սինդիկատի ՍՐԺ. Էջմիածնի ԳՐԻԳՈՐ ՎՐԴ. ՄՈՒՇԵԼԵԱՆՑ, »

« Պատգամաւոր ի կողմանէ Միաբանութեան Սրբոյ Էջմիածնի ԿԱՐԱՊԵՏ ՎՐԴ. ՏԵՐ ԳԱԼՍՏԵԱՆՑ, »

« Պատգամաւոր ի դիմաց Միաբանից Էջմիածնի ՍԱՐԳԻՍ ՎՐԴ. »

« Անդամ Սինդիկատի ՊՕՂՈՍ ՎՐԴ. ՏԵՐ ՄԱՐԳԱՐԵԱՆ, »

« Անդամ Սինդիկատի ԹԱԴԵՆՍ ՎԱՐԴԱՊԵՏ, »

« Պատգամաւոր ի կողմանէ Միաբանութեան Սրբոյ Էջմիածնի ՅՈՎՀԱՆՆԵՍ ՎՐԴ. ՏԵՐ-ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ, »

« Պատգամաւոր ի կողմանէ Միաբանութեան Սրբոյ Էջմիածնի ԳՐԻԳՈՐ Եղիսիակոպ ՍԱԳԻՆԵԱՆ, »

« Պատգամաւոր ի կողմանէ Հայոց Հոգեւորականաց Երեւանայ Թեմի ՄԿՐՏԻՉ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ, »

« Պատգամաւոր ի կողմանէ Միաբանութեան Էջմիածնի ԱՐԷԼ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ, »

« Պատգամաւոր ի կողմանէ Միաբանութեան Սրբոյ Էջմիածնի ԳՐԻԳՈՐ ԱՐՔԵՊՍ. ԻՍԱՀԱԿԵԱՆՑ, ԵՐԵՒԱՆՑԻ, »

« Պատգամաւոր Հոգեւորականութեան Հայոց Ասպահանու եւ Հնդկաստանի, անդամ Սինդիկատի ՅՈՎՀԱՆՆԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐՇԱՐՈՒՆԻ, »

« Անդամ Սինդիկատի ԳՐԻԳՈՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ, »

« Անդամ Սինդիկատի ԳՐԻԳՈՐ ԱՐՔԵՊՍ. ՅՈՎԲԵԱՆՑ, »

« Անդամ Սինդիկատի ՅՈՎՀԱՆՆԵՍ ԱՐՔԵՊՍ. ԱՍԼԱՆԵԱՆՑ, »

« Պատգամաւոր Հոգեւորականաց Հայոց Արձախու ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱՐԳԻՍ, »

« Պատգամաւոր ի դիմաց Հայոց Հոգեւորականաց Վրաստանի ՄԱԿԱՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ, »

« Տեղակալ Ատենապետի Սինդիկատի ԳՐԻԳՈՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՎԵՀԱՊԵՏԵԱՆՑ, »

« Պատգամաւոր ի կողմանէ Հայոց Հոգեւորականաց Ասորախանայ Թեմի ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՏԹԵՆՍ, »

(Ստորագրութիւն Պրօկուրօրի (°) ԿԱՐԱՊԵՏ ՎԱՍԱԿՈՎ, »

(Ստորագրութիւն Ատենապետի Սինդիկատի ՍՈՒՔԻԱՍ ԹԱՂԻԱՆՈՍ-ԵԱՆՑ: »

Յետ այսորիկ եւ ի սմին իսկ աւուր կազմէ Սինդիկատն իմն գեկուցմամբ զօրագրութիւն, եւ գրեալ ըստ այնմ զթուղթ իբր ի տեղեկաբեր յանուն փոխարքայական կառավարութեան Կովկասոյ՝ առաքէ ի Թիֆլիզ ի ձեռս երկից յատուկ պատգամաւորացն, այս է Գրիգոր Եպիսկ. Սաղինեանց, Պարոնայիցն Յովհաննու Ղայթմազեանց Թիֆլիզեցոյ եւ Յովսէփ Բէգի Մելիք Շահնազարեան Շուշեցոյ՝ ամփոփեալ եւ հաղորեալ ըստ կարգին զգործս եւ զտեղեկութիւնս ընտրութեան Կաթողիկոսի ամ. Հայոց, եւ խնդրէ վաւերացուցանել զընտրութիւնն կայսերական հրովարտակաւ ըստ տրամադրութեան օրինաց :

Յետ ամսոց ինչ ընկալաւ Սինդիկատն զպաշտօնաթուղթ փոխարքային որ ի 29էն Դեկտեմբերի (1866) ընդ համարաւ 301, որով հաղորդէր զի ՎԷՏ. Կայսրն Ռուսաց վաւերացոյց զընտրութիւն Տ. Գէորգ Արքեպիսկոպոսի ի Կաթողիկոս ամ. Հայոց, եւ փութացաւ տնօրինել եւ հանդիսաւոր իմն եղանակաւ եւ սովորական կարգաւ բառնայ զսեւ

աւուր զականակուռ խաչ վեղարի հանդերձ առանձին հրովարտա-
կաւ :

Վասնորոյ յերեսներորդ աւուր ամսեանն Նոյեմբերի ներկայաց-
եալ պաշտօնապէս Պ. Ֆալքէդ Ռուսական Հիւպատոսի Պրոքսայու հա-
մագգեստութեամբ՝ հաղորդեաց Նորին Սրբութեան նորընտիր Կաթողիկոսի ամ. Հայոց պաշտօնական հեռագիր Իկնաթիէ վճարաւորի ռու-
սական Դեսպանի Կ. Պոլսոյ որ վասն վաւերացուցանելոյ Աղեքսանդր
Կայսեր զընտրութիւն իւր ի ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ամ. Հայոց, եւ ջերմե-
ռանդութեամբ իմն եւ խորին յարգանք շնորհաւորեաց զկաթողիկո-
սական պաշտօն Նորին Սրբութեան կրկնակի քան զսովորականն,
համբուրեալ զԱջ նորին Սրբութեան :

Եւ յետ այսորիկ եւ ի լրանալ ամսեանն Դեկտեմբերի յաճախեցին
աստի եւ անտի, ի հեռաւորաց եւ ի մերձաւորաց, յօտարազեաց եւ
ի մերայնոց հեռագիրք եւ նամականի առ ի շնորհաւորել զՏ. Գէորգ
Կաթողիկոս՝ խառնեալ զուրախակցութիւնս եւ զմաղթանս իւրեանց :
Որոց փոխանակէր զշնորհակալութիւն եւ զօրհնութիւն :

Բազումք ուրախանային, եւ սակաւք ոմանք տրտմէին, գուցէ առ
հակառակութեան : Էին անձինք, որք ներքին համոզմամբ ունէին
զյոռետես զգացմունս ընդդէմ ձեռնհասութեան Գէորգայ :

ԳԼՈՒԽ ԽԱ.

ՅԱՂԱԳՍ ՅԻՇԱՏԱԿՈՒԹԵԱՆ ԱՆՈՒԱՆ ՆՈՐԸՆՏԻՐ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

Ոչ դժուարին լիցի ստուգել յազգային եւ յեկեղեցական պատ-
մութիւնս մեր, որպէս աւանդէ եւ Կանոն Օծման Կաթողիկոսի, զի
օրէն է եւ նուիրական ճանաչել եւ պաշտել զոր ընտրէ համահաճու-
թեամբ Ազգ եւ Եկեղեցի Հայաստանեայց ի Կաթողիկոս, զոր եւ
հաստատէ եւ նուիրաւործէ օծմամբ սրբալոյս Միւռոնի ի Հոգին սբ. :
Յետ որոյ եւ անմիջապէս սկիզբն լինի որպէս յիշատակութեան ան-
ուան Կաթողիկոսի նորոյ, նոյնպէս գրէ Հոգեւոր Տէրն եւ զՀայրա-
պետական անդրանիկ կոնդակ-թուղթ օրհնութեան առ ամենայն
Հայս :

Ապաքէն ոչ է վայրապար այսպիսի կանոն եւ օրէն օծման ըստ
կրօնական եւ ըստ ազգային նշանակութեան, առանց որոյ համարի
ընտրեալն յաւատ ԱՆՈՒԱՆԵԱՒ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ, միանգամայն զրկի
իրաւանց դասակցութեան ի շարս օրինաւոր Կաթողիկոսաց եթէ
կանխիցէ վախճան կենացն, որպէս պատահեալ է եւ ի վերջին դարս՝

Սահակայ Ահագին կոչեցելոյ (1756-9), Յովսէփայ Արղութեանց
(1800-1), եւ Ներսիսի Վարժապետեան (1884) :

Արղարեւ ոչ պակասեցան օրինակք եւ զեղծմունք, եւ ոչ պակա-
սեցին յետ այսորիկ, եթէ ըստ համազգային կաթողիկոսական ըն-
տրութեան, եթէ ըստ յիշատակութեան եւ եթէ ըստ զրկելոյ ոմանց
օտարոտի իմն բռնութեամբք ի կաթողիկոսական իշխանութենէ՝
մերթ ի շնորհս արտաքին միջամտութեանց, այլ սակայն ոչ դադա-
րեցին երբեք օրինակքն ի կրելոյ զրացարձակ դրոշմն զեղծմանց, եւ
զեղծումն է եւ լիցի միշտ զեղծումն *) :

Ապա ուրեմն ոչ համարեսցի ի զեղծմունս նորամուտ սովորու-
թիւնք յիշատակութեան սկսեալ յԱշտարակեցւոյ եւ գործադրեալ ի
տղիտաց եւ ի ներկայումս յեկեղեցիս Հայաստանեայց յետ հաստա-
տելոյ Օգոստ. Կայսեր Ռուսաց զնորընտիր Կաթողիկոս արքունա-
կան հրովարտակաւ. իբր զի միակ պայման է եւ կայսերական վաւե-
րացումն յաւատ եւ միայն նուիրաւործէ զԱՍՏԻՃԱՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ,
որպէս հարաւոր իմն բռնանայ յայսպիսիս եւ պալատէնեայն 1836 ա-
մի, որում տկարութեամբ իմն հետեւի Սինօք Էջմիածնի, ըստ որում
է տեսանել եւ յընտրութեան Տ. Գէորգայ Կաթողիկոսի, զորմէ հա-
մառօտեցաք ի նախընթաց Գլխով :

Վասն որոյ ոչ տարապարտ համարեմք հետազօտել յատկապէս
եւ զայս խնդիր :

Որպէս յաւուրս հարազատ Հարստութեանց, նոյնպէս յաւուրս
Վերջին անիշխանութեան Հայաստանեայց՝ միանգամայն զկնի տե-
ղափոխման Հայրապետական Աթոռոյ եւ իշխանութեան ի Կիլիկիոյ
յափօթման Հայրապետական Աթոռոյ եւ իշխանութեան ի Վաղարշապատ, ոչ պակա-
յաշխարհ Արարատեան ի Ս. Էջմիածին ի Վաղարշապատ, ոչ պակա-

*) Տ. Ներսէս ընտրեալ Կաթ. Աշտարակեցի բռնացեալ ի վերայ Սինօքի եւ առ
նշին՝ գրեալ գործաւոր դիտողութիւնս եւ գկանոնական առարկութիւնս նորա, մինչ
գտանել ի Պետերբուրգ մայրաքաղաքի. եւ յիշատակել գանուն իւր յեկեղեցիս
(1842-43), որում աջակցեցաւ ի Սինօքի Պրօկուրօր Քարաւանց, եւ այսպէս ե-
ղի սկզբնապատճառ զեղծման յիշատակութեան յառաջ քան զօծումն : Այսպէս ու-
րեմն, երկուցեալ Սինօքի նաեւ ի սպառնալեաց ռուսական կառավարութեան, որ-
պէս եւ զփաստս առքիւ Ներսիսի Աշտարակեցւոյ, եւ միջամտութեամբ Պրօկուրօ-
րի, շարունակեաց եւ շարունակէ զյիշատակութիւնս անուանց Կաթողիկոսաց ցայ-
սօր (Տեսնել ի «Տ. Ներսէս Աշտարակեցի» ի Կ. Կոստանպոլսէ, յերեսս 11-25, տպ.
սօր (Տեսնել ի «Տ. Ներսէս Աշտարակեցի» ի Կ. Կոստանպոլսէ) : Թուի մեզ, զի Պատրիարք Արքեպիսկոպոս Հայոց Տ.
1909, յԱղեքսանդրապոլ) : Թուի մեզ, զի Պատրիարք Արքեպիսկոպոս Հայոց Երուսաղէմի սակա յիշա-
տակութեան անուան Ներսիսի, որում ըստ արժանոյն եւ լիովին կշռէ զպատասխա-
նի Տ. Զաքարիա Արքեպիսկոպոսն :

սեղան երբեք քմահաճ գործողութիւնք եւ ապօրինաւորութիւնք եթէ յընտրութիւնս Կաթողիկոսաց եւ եթէ ըստ յիշատակութեանց եւ ուսմանց սովորութեանց, հանդերձ՝ աշխուժեմ, ընդդէմ որոց տկարանային Ազգ եւ Եկեղեցի Հայաստանեայց պաշտպանել զդարաւոր եւ զնուիրական կանոնս եւ զաւանդութիւնս, տկարանային եւ Հայրապետք, մանաւանդ ի վերջին դարս, թէեւ զնէին յաճախ զկանոնս եւ զպատուէրս հանդերձ բանադրանօք, որպէս է տեսանել զօրինակս ինչ եւ զփաստս ի կանոնս Տ. Աղեքսանդր Կաթողիկոսի Կ. Պոլսեցւոյ (1754) եւ Տ. Յակոբայ Կաթողիկոսի Շամախեցւոյ (1759-1763):

Արդ առ համառօտութեան ամփոփեալ մեր ի վերջին դարս եւեթ, օրինակեմք ահա զոր դրէ Հոգեւոր Տ. Աղեքսանդր Կաթողիկոս Ղարաղաշ իբր ի կանոն.

« Նախ Հայրապետ մերոյն Ազգի որ ի Սր. Էջմիածին՝ եթէ հա-
« մահաւանութեամբ բոլոր Ազգիս մերոյ եղիցի ընտրեցեալ եւ ի յԱ-
« թոռ Հայրապետութեան նստեալ, եւ լինիցի ի հաւատս ուղղափառ՝
« միաբնադաւան, եւ ոչ երկաբնադաւան եւ հերձուածօղ, ի դործս
« բարի, ի հասակս կատարեալ, ի գիտութիւնս լրացեալ, ի վարս
« պարկեշտ, ի բարս քաղցր եւ խոնարհ, տնարար, եղբայրասէր,
« մարդաշահ, օրինապահ, երկիւղած, աննախանձ, արդարադատ,
« անակնառու, անկարգ եւ արտուղի մարդկանց սաստիչ եւ յանդիմա-
« նիչ, եւ ըստ ամենայնի կարգաւոր եւ չափաճանաչ, զայնպիսին որ
« ունի դամենայն առաքինութիւնս եւ օրինաւոր խորհրդով պսակե-
« ցեալ է ըստ հոգւոյ ընդ Հարսին լուսոյ եւ Մօրս պանծալոյ Կա-
« թողիկէ եկեղեցւոյ մերոյ Հայկազնոյ, ոչ է բնաւ օրէնք ընկենուլ
« ի յԱթոռոյն եւ մեկնել զնա ի հոգեւոր եւ յաստուածադոյզ հարսնէ
« եկեղեցւոյ սրբոյ, ըստ որում պսակեցեալ եւ կապակցեալ է օրինօք,
« եւ զայլ ոմն փեսայ առնել այսմ հարսին՝ որոյ այրն տակաւ կեն-
« դանի գոլով. ուստի ահա կնքեմ կանոնօք եւ փակեմ բանադրանօք,
« զի յայսմ հետէ բանադրու արանց տեղի մի՛ տացի, չարալեզու
« զրպարտողաց ունկն մի՛ դիցի եւ Հայրապետափոխութիւն երբեք
« բնաւ մի՛ լիցի. քանզի աստի վնասք բաղումք ծնանին հոգւոց եւ
« մարմնոց, եւ մանաւանդ ստացածոցն Սրբոց Աթոռոց: Ապա ու-
« բեմն ոչք համարձակեցին եւ յանդգնեցին եւ զայսպիսի անօրէնու-
« թիւնս գործեցին՝ ոչ վասն յանցաւորութեանն Հայրապետին, այլ
« զի ինքեանք ի նմանէ երբեմն յանդիմանեցեալ են եւ լինին սակս
« արտուղի զնացից իւրեանց, վասն այնորիկ զոխս ունեցին ի սիրտս
« իւրեանց եւ զնախանձ առ ի լրացուցանելոյ՝ վատարանեալ եւ զըր-
« պարտեալ ընկեացեն զՀայրապետն: Ամէն ասեմ, այնպիսիքն՝ թէ

Բաժանորդ կարելի է գրել հետեւեալ տեղերը. —
Ֆրանսա՝ Լ. Գեւորեան, 17, Rue Damesme, Paris.

Ն. Կակոսեան, (Մարտէլի եւ շրջակայքի ընդհ. գործակալ)
49, Rue Nationale, Marseille.

Յունաստան՝ «Նոր Օր», 20-A, Rue Vouli, Athènes.

Կիպրոս՝ Յ. Մահալեան, Arasta St. No. 1, Nicosia.

Բուլղարիա՝ Գ. Հալաճեան, K. Haladjian, B. P. 444, Sofia.

Ռումանիա՝ Ե. Սարգսեան,

Typ "Astoria", 14, Str. Pictor Luchian, Bucarest.

Եգիպտոս՝ Գ. Միսիթաբեան, խմբագր. «Յուսարեք»-ի.

B. P. 868, Le Caire.

Եթովպիա՝ Յ. Գ. Պուրսապեան, Hirna.

Պաղեստին, վահան Կետիկեան, Haret-el-Nasara. Jerusalem.

Լիբանան, Գառնիկ Գիւլպալեան,

Collège Arménien 127, rue Vadi Abou Jemil, Beyrouth.

Սիրիա՝ Յ. Սիմոնի, B. P. 310, Alep.

,, Ս. Պոյաճեան, B. P. 321, Damas.

Իրաք՝ Մ. Սոսոեան, South Gate Badaveen, 27-1, Bagdad.

Իրան՝ Խ. Մելքոնեան, Թաւրիզ:

,, Ա. Գէորգեան (Խաղիստանի ընդհ. գործակալ),

Թեհրան՝ Ար. Խոջայեան,

A. Khodjayan. Magasin «Khochnoud», Avenue Lalezar, Téhéran.

Սպահան — Ջուղա՝ Թաղ. Թաղէոսեան

Հիւս. Ամերիկայի ընդհ. գործակալ՝ Յ. Կորոյեան,

K. Gopoian, 359 W. 28th St. New York, N. Y., (U. S. A.).

Հարաւ. Ամերիկա՝ Եղ. Խաչերեան, Canning 1245, Buenos-Aires

» » Ար. Գալստեան,

Rua 25 de Março, 262 São Paulo (Brésil).


«Յ Ա Ռ Ա Ջ»

ՕՐԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Խմբագիր՝ ՇԱԽԱՐԾ ՄԻՍԱԲԵԱՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ	Տարեկան	Վեցամսեայ	Յեամսեայ
Ֆրանսա եւ Գաղութներ	140 ֆրանք	70 ֆրանք	35 ֆրանք
Նեպոլիս, Եգիպտոս, Զիցերիս, Խալիս	250 ֆրանք	130 ֆրանք	
Ռուսի Երկիրներ	200 ֆրանք	100 ֆրանք	
Ամերիկա	200 ֆրանք	100 ֆրանք	

ՀԱՍՏԷ. — 17, Rue Damesme, Paris XIII



Imp. ARTISTIQUE, — 42, Rue de la Jonquière, PARIS (17^e)